

**ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ**

**ԲԱ՛Ց ԴՈՒՌԸ ՍՐՏԻԴ,  
ՅԻՍՈՒՍ ԿԸ ՍՊԱՍԷ**

**ՀԱԼԷՊ  
2006**

**ՁՕՆ**

**ՏԱՌԱՊԱԿՈՐ ՏԻՐԱՄԱՅՐ**

**ԼՈՒՍԻՆ ՄԵԼՈՑԵԱՆԻՆ**

**ԾՆՆԴԵԱՆ 60 ԱՄԵԱԿԻՆ**

**ՈՐԴԻԱԿԱՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ**

## ՔՐԻՍՏՈՍ ԻՆՔՆ Է ԵԹԷ-ՆԵՐՈՒԴ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Եթէ երբեք սիրտիդ մէջ կը զգաս դատարկութիւն մը եւ կ'ուզես լեցնել զանիկա, եկո՛ւր Աստուծոյ, որ օր մը յայտարարեց. «Միթէ երկինքն ու երկիրը լեցնողը ես չե՞մ» (Եր 23.24): Երկինքն ու երկիրը լեցնողը քե՛զ ալ կրնայ լեցնել: Աստուած պիտի չպարպուի եթէ քեզ լեցնէ: Աստուած պիտի չաղբատանայ եթէ քեզի տայ: Բա՛ց ձեռքերդ Աստուծոյ առջեւ եւ Աստուած զանոնք առատութեամբ պիտի լեցնէ (Յոբ 12.6): Բա՛ց բերանդ Աստուծոյ առջեւ եւ Աստուած զանիկա ամբողջութեամբ պիտի լեցնէ (Սղ 81.10): Բա՛ց սիրտդ Աստուծոյ առջեւ եւ Աստուած զանիկա իր Սուրբ Հոգիին զօրութեամբ եւ արիութեամբ պիտի ողողէ (Միք 3.8):

Եթէ հոգեւոր ծարաւ մը ունիս եւ կ'ուզես զանիկա յագեցնել, եկո՛ւր Անոր որ ըսաւ. «Ով որ ծարաւ է՝ թող ինծի գայ եւ խմէ», եւ ան «կենսատու ջուրի գետեր» պիտի բղխեցնէ սիրտէդ (Յե 7.37-38): Քրիստոսի եկող մարդը կը նմանի առատահոս գետի մը ափին տնկուած ծառի մը, որ առատօրէն եւ մնայուն կերպով կ'ոռոգուի: Քրիստոս իրեն դարձող մարդը պիտի «առաջնորդէ կեանքի աղբիւրի կենսատու ջուրին» (Յյտ 7.17), պիտի առաջնորդէ «հանդարտ ջուրերու ֆոյ» (Սղ 23.2): Զմմանի՛նք անոնց, որոնք կը թողուն կեանքի ջուրին աղբիւրը՝ զԱստուած, եւ իրենց համար գուրբեր կը փորեն, ծակոտ գուրբեր, որոնք չեն կրնար ջուր պահել իրենց մէջ (Եր 2.13):

Եթէ անօթի ես եւ կշտանալ կը ցանկաս, եկո՛ւր Անոր որ ինքզինք ներկայացուց իբրեւ «կեանքի հացը» (Յե 6.48), անոր, որ քեզի հետ միասին ընթրել կ'ուզէ. «Անոր հետ պիտի ընթրեմ, ան ալ՝ ինծի հետ» (Յյտ 3.20): Մի՛ իյնար սովորական հացին ետեւէն միայն, այլ միաժամանակ հետապնդէ ա՛յն Հացը, որ կեանք կու տայ քեզի եւ համայն աշխարհին (Յե 6.51): Նիւթական հաց խնդրելէդ առաջ, նախ խնդրէ որ Աստուծոյ արքայութիւնը գայ եւ աշխատէ իր կամքը կատարել, եւ Աստուած նիւթական հացը աւելիով պիտի տայ քեզի (Մտ 6.33):

Եթէ մեղքը սգաւոր դարձուցած է քեզ, եկո՛ւր անոր, որ կ'ըսէ. «Ե՛ս եմ, ե՛ս եմ, որ ձեզ կը միտքարեմ» (Ես 51.12): Աստուծմէ զատ ո՛չ ոք կրնայ մեղքի պատճառած սուգը փարատել, ո՛չ ոք կրնայ կոտրած սիրտը բժշկել: Աստուած ի՛նքն է որ «սիրտով կոտրածները կը բշխէ» (Սղ 147.3): Աստուած ի՛նքն է «որ բոլոր իյնալու վրայ եղողները կը կանգնեցնէ» (Սղ 145.14): Ի՛նքն է «որ կը միտքարէ սրտաբեկները» (Բ.Կր 7.6): Ի՛նքն է որ կ'ազատէ (Սղ 50.15, Բ.Օր 20.4, Կղ 1.13): Ի՛նքն է որ «ամէն աչքէ արցունքը պիտի սրբէ» (Ես 25.8 Հմմտ Յյտ 7.17, 21.4): Ի՛նքն է որ մեր վերքերը կը փաթթէ (Ովս 6.1, Յոբ 5.18): Ի՛նքն է որ մեր հոգին կը սիրէ եւ մեզ ապականութեան գուրբէն կը փրկէ եւ մեր բոլոր մեղքերը իր կոնակին ետեւ կը նետէ (Ես 38.17):

Եթէ կը տառապիս եւ քեզ հասկցող մը կը փնտռես, դիմէ՛ Աստուծոյ որ սիրտիդ մէջի եղածը գիտէ ու քեզ շատ լաւ կը հասկնայ (Առ 24.12):

Միթե կարելի՞ քան է որ քեզ ստեղծողը քեզ չգիտնայ ու չհասկնայ (Ես 29.16): Քեզ հասկցողը միայն քեզի կրնայ օգնել: Կեանքի ի՛նչ պայմաններէ ալ անցնիս, մէկ բան շատ լաւ գիտցիր, որ Քրիստոս ի՛նքն ալ նոյն եւ աւելի ծանր պայմաններէ անցաւ. Քրիստոս աղփատութիւն ալ տեսաւ, անօթութիւն ալ տեսաւ, հալածանքներու հանդիպեցաւ, մերժուեցաւ, վտարուեցաւ, դատուեցաւ, ծաղրուեցաւ, ծեծուեցաւ, ապտակուեցաւ, նախատուեցաւ, անարգուեցաւ եւ այս բոլորէն ետք, խաչին վրայ գամուեցաւ եւ իր մահկանացուն կնկեց: Քանի որ Տէրը այս բոլորէն անցաւ, եւ քանի որ *«չարչարուելով փորձուեցաւ, կրնայ օգնել փորձութեան մէջ եղողներուն»* (Եբր 2.18):

Եթէ իրաւագրկուած ես ու չես կրնար բողոքել, հարստահարուած ես ու չես կրնար ձայնդ լսելի դարձնել, եթէ դատդ պաշտպանող մը կ'որոնես ու չես գտներ, յիշէ որ Աստուած խոստացած է այդ պաշտպանութիւնը ըսելով. *«Ահա ես քու դատիդ պաշտպան պիտի կանգնիմ»* (Եր 51.36): Դատդ չես կորսնցնէր երբ Դատաւորը ի՛նքն է դատիդ ջատագովը (Եր 50.34): Աստուծոյ ամենակարողութիւնը քու յաղթանակիդ գրաւականն է:

Եթէ կը փնտռես անկեղծ բարեկամ մը, նշմարիտ ընկեր մը, քեզ ամբողջ իր սիրտով սիրող մը, եւ քեզի համար մեռնելու պատրաստ եղող մը, Քրիստոսէ գատ ուրիշ ո՛չ ոքի կրնաս երթալ: Քրիստոս քու բարեկամդ է (Յհ 15.14), քու եղբայրդ է (Եբր 2.11-12), քեզ իր անձին պէս սիրողն է (Յհ 13.34), քեզի համար զոհուողն է (Յհ 15.13, Հո 5.8), քու հայրդ է (Եբր 2.13), քու Փրկիչդ է (Յհ 4.42, Բ.Տմ 1.10, Տիտ 3.6), քու առաջնորդդ է (Գրծ 5.31), քու Աստուածդ է (Տիտ 2.13) եւ քեզի սպասողն է. *«Ահա ես դրան առջեւ եմ ու կը բաղիսեմ»*:

Ի վերջոյ, եթէ կը փափաքես որ սերդ Աստուծոյ եւ նմանիդ հանդէպ անի, լայնօրէն բա՛ց սիրտդ Քրիստոսի սիրոյն առջեւ, որպէսզի Քրիստոս բնակի սիրտիդ մէջ եւ հոն բորբոքէ կատարեալ աստուածսիրութեան ու կատարեալ մարդասիրութեան հուրը: Եթէ Քրիստոս դառնայ բնակիչը սիրտիդ, հոնկէ ուրիշ բան չի կրնար բղիթիլ եթէ ոչ սեր ու սրբութիւն, գութ ու կարեկցութիւն: Քրիստոս իր սիրտին նման սի՛րտ կու տայ քեզի եւ իր հոգիին նման հոգի՛ կու տայ քեզի, եթէ երբեք սիրտդ բանաս իր առջեւ եւ զինք հրաւիրես որ իր կեանքը ապրի կեանքիդ մէջ:

Քրիստոս որ սիրտիդ բացուիլը կ'ուզէ, բնա՛ւ իր սիրտը պիտի չփակէ առջեւդ: Քու մեղքերդ պատճառ պիտի չըլլան որ ան քեզ մերժէ իր սիրտին մէջ ընդունիլ: *«Ինձի եկողը պիտի չմերժեմ»* (Յհ 6.37): Ասիկա իր խոստումն է քեզի: Ան *«իր խոստումներուն հաւատարիմ է»* (Ա.Պո 4.19): Ան մեղքերդ պիտի չչարէ աչքերուդ դիմաց երբ իրեն դառնաս: Ի՛նք որ քու մեղքերուդ համար վիրաւորուեցաւ (Ես 53.5), քեզ պիտի չվիրաւորէ քու մեղքերուդ համար: Ան քու մեղքերդ իր կրնակին ետեւ պիտի նետէ (Ես 38.17), զանոնք ամպի պէս պիտի փարատէ (Ես 44.22) եւ ալ բնա՛ւ զանոնք պիտի չյիշէ (Եզ 18.22): Ան մեղաւորդ յիշող բայց մեղքդ մոռցող Աստուած է: Փա՛նք իրեն, յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

## «Ա.ՀԱ. ԵՄ ԴՐԱՆ ԱՌՋԵԻ ԵՄ ՈՒ ԿԸ ԲԱՂԽԵՄ»

«Ահա ես դրան առջեւ եմ ու կը բաղիսեմ: Եթէ մէկը իմ ձայնս լսէ եւ դուռը բանայ՝ ներս պիտի մտնեմ եւ անոր հետ պիտի ընթրեմ, ան ալ՝ ինձի հետ» (Յյտ 3.20): Սիրելի՛ ընթերցող, քեզմով հետաքրքրուող եւ քեզ անհունօրէն սիրող Փրկիչիդ հրաւերն է քեզի ուղղուած՝ բանալ սիրտիդ դուռը իր առջեւ: Երկինքին Իշխանն է կանգնած երկրաւորէն իշխուածիդ սիրտին դրան առջեւ: Թագաւորդ է որ իր քաջարար ձեռքը կ'երկարէ ապստամբ հոգիիդ: Մարդկութեան շամբան է որ նամբայ կ'որոնէ մուտք գործելու սիրտէդ ներս: Աշխարհի Կերակուրն է որ արտօնութիւն կը խնդրէ կերակրելու քաղցած հոգիդ:

### Քրիստոսի պատրաստակամութիւնը մեզ փրկելու

«Ահա...»: Առաջին բանն իսկ մեզի կարեւոր բան մը կը ստրվեցնէ որ մեր ուշադրութենէն պէտք է վրիպի: Ի՞նչ արդեօք: «Ահա...» բառը ցոյց կու տայ Քրիստոսի պատրաստակամութիւնն ու փափաքը մեզ փրկելու: «Ահա...» բառով կարծէ՛ք Յիսուս ըսել կ'ուզէ. «Ահաւասիկ ես հո՛ւ եմ, ձեր կողմին եմ, ձեր սիրտերուն մօտիկ եմ, եւ պատրաստ եմ մուտք գործելու ձեր սիրտերէն ներս եւ ձեզ առաջնորդելու հոգեւոր յեղափոխութեան»: «Ահա ես...» բառերով, Քրիստոս իր ներկայութիւնն է որ կը յայտարարէ եւ կ'ապացուցանէ: Ան բացակայ չէ մեր կեանքերէն: «Ահա...» ան ներկայ է մեր կեանքերուն մէջ (Մտ 28.20): Ան անգիւտ Աստուած մը չէ: Ան գտնուող Աստուած է, համաձայն Եսայի բառերուն. «Տէ՛րը փնտնեցէ՛ք, քանի որ անիկա կը գտնուի» (Ես 55.6):

Մեզմէ քանի՞նք Սաստուծոյ նման կրնան ըսել. «Ահա ես...»: Քանի՞նք Դաւիթի նման կրնան ըսել. «Սիրտս պատրաստ է, ո՛վ Աստուած, սիրտս պատրաստ է» (Սղ 57.7): Աստուած չի մտներ մեր սիրտերէն ներս երբ մեր սիրտերը պատրաստ չեն ըսելու «Ահա ես...»: Աստուած պատրաստակամ սիրտեր կը փնտռէ: Աստուած պատրաստ է ինքզինք շնորհելու բոլոր անոնց՝ որոնք պատրաստ են իր շնորհքը ընդունելու: Աստուած մի՛շտ պատրաստ է: Դրան առջեւ կայնած ըլլալը իր պատրաստ եւ պատրաստակամ ըլլալն է որ կ'արտայայտէ: Կարելի չէ պատկերացնել որ Աստուած պատրաստ չըլլայ մեզ ընդունելու երբ իրեն դիմենք: Կարելի չէ երեւակայել որ Աստուծոյ գանգ եւ ան մեզի ըսէ. «Անյարմար ժամու մը եկա՛ք: Հիմա շատ զբաղած եմ եւ չեմ կրնար ձեզ ընդունիլ»: Ան մարդէն գատ ուրիշ բանով մը չի զբաղիր: Անոր «զբաղմունքը» մե՛նք ենք: Ան մեր փրկութեամբ զբաղած Աստուած է:

Աստուծոյ ամենօրեայ «գործը» կորսուած հոգիները փրկութեան առաջնորդելն է: Աստուած երբե՛ք պիտի չթողու իր այս գործը եւ ուրիշ գործով մը զբաղի: Աստուած մնայուն կերպով իր ծառաները կը դրկէ աշխարհի չորս կողմերը ապրող մարդոց, որպէսզի անոնց ըսեն. «Ամէն

ինչ կազմ ու պատրաստ է. հրամանեցէ՛ք հարսանիքի» (Մտ 22.4, 8): Այստեղ հարսանիքը խորհրդանշել է փրկութեան: Փրկութիւնը մի՛շտ պատրաստ է շնորհուելու ոեւէ մարդու որ դարձի կու գայ Աստուծոյ: Փրկութիւն բառին հոմանիշ է *արքայութիւն* բառը: Ե՞րբ պատրաստուեցաւ արքայութիւնը: Մտաթէնս աւետարանիչ կը պատասխանէ ըսելով. «*Արքայութիւնը... աշխարհի սկիզբէն պատրաստուած է*» (Մտ 25.34): Ահա՛ թէ ինչպէս, Աստուծո՞ւ մի՛շտ պատրաստ եղած է եւ մի՛շտ պատրաստ է:

## Աստուծո՞ւ անձնապէս կը հետապնդէ մեր փրկութիւնը

«*Ահա ես...*»: Այո՛, Տէրը ի՛նքն է սիրտիդ դուռը բաղխողը եւ ո՛չ թէ ուրիշ մէկը: Տէրը ի՛նքն է ներս գալ ուզողը եւ ո՛չ թէ ուրիշ մէկը: Տէրը ի՛նքն է քեզի ընթրիք խոստացողը եւ ո՛չ թէ ուրիշ մէկը: Հրեշտակ մը կամ հրեշտակապետ մը չէ սիրտիդ դրան առջեւ կանգնողն ու գայն բաղխողը, այլ Անձ մը, որուն կը ծառայեն հրեշտակներն ու հրեշտակապետները (Մտ 4.11): Մարգարէ մը կամ մարգարէի մը որդին չէ սիրտիդ դուռը բաղխողը, այլ Մէկը, որ հանդիսացաւ լրումը մարգարէներուն մարգարէութեանց: Առաքեալ մը չէ սիրտիդ դուռը թակողը, այլ Ան, որ առաքեալներուն ցամբով եւ Սուրբ Հոգիին միջոցաւ ամբողջ աշխարհին պիտի ծանուցուէր եւ հոչակուէր իբրեւ փրկութեան մէկ եւ միակ ցանապարհ:

«*Ահա ես...*»: Այդ «ես»ը ցոյց կու տայ երկու բան. *անաջին*.– որ Աստուծո՞ւ ինք անձա՛մբ կը հետապնդէ մեր փրկութիւնը: Ան մեր փրկութիւնը ուրիշին չի վստահիր: Աստուծո՞ւ գատ ո՛չ ոք կրնայ փրկել մարդ արարածը: Սաղմոսագիրն ալ նոյն բանը կը հաստատէ երբ կ'ըսէ. «*Մէկը բնաւ չի՛ կրնար փրկել իր եղբայրը, ո՛չ ալ անոր փրկանքը Աստուծոյ հատուցանել*» (Սղ 49.7): Տակաւին, ո՛չ միայն չենք կրնար փրկել մեր եղբայրները, այլ նաեւ մենք զմեզ ալ չենք կրնար փրկել, ահա թէ ինչո՛ւ Եթան կ'ըսէ. «*Ո՞վ է այն մարդը, որ կրնայ ապրիլ եւ երբեք մահ չտեսնել եւ իր անձը դժոխքին ձեռքէն կրնայ փրկել*» (Սղ 89.48): Քրիստոսէ գատ ո՛չ ոք կրնայ մեզ փրկել յաւիտեանական մահէն եւ դժոխքէն, որովհետեւ Քրիստոսէ գատ ո՛չ ոք «*մահուան ու դժոխքի բանալիները*» իր ձեռքին մէջ ունի (Յյտ 1.18): Մեզ կրնայ փրկել ա՛ն միայն, որ մեր մեղքերը կրնայ սրբել, իսկ արարածներուս մեղքերը կրնան սրբուիլ Արարիչին արիւնով միայն (Ա.Պտ 1.19, Ա.Յհ 1.7, Յյտ 1.5, Հո 5.9):

*Երկրորդ*.– Այդ «ես»ը ցոյց կու տայ, որ Աստուծո՞ւ ի՛նքն է մեր փրկութեան աշխատանքին նախաձեռնողը: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «*Աստուծո՞ւ մեզի հանդէպ իր սէրը յայտնեց անով՝ որ երբ տակաւին մեր մեղքերուն մէջ էինք՝ Քրիստոս մեզի համար մեռաւ*» (Հո 5.8): Քրիստոս, մեղքին դէմ մղած մեր պայքարը տեսնելով չէր որ երկինքէն երկիր եկաւ:

Մեր խնդրանքին ընդառաջելով չէր որ մարմնացաւ ու մարդացաւ: Աստուած դէպի երկիր նայեցաւ երբ ո՛չ ոք դէպի երկինք կը նայէր: Հետաքրքրուեցաւ մեզմով երբ մեզմէ ո՛չ ոք կը հետաքրքրուէր իրմով: Այցելեց մարդկութեան երբ ո՛չ ոք կը սպասէր իր այցելութեան: Աստուած սէր է (Ա.Յհ 4.8): Իսկ սէրը մի՛շտ կը նախաձեռնէ:

### Քրիստոս մեր օգուտին համար է որ մեզի գալ կ'ուզէ

«*Ահա ես դրան առջեւ եմ ու կը բաղիսեմ*»: Քրիստոս չի՛ նմանիր մուրացկանի մը, որ քեզմէ բան մը առնելու համար է որ սիրտիդ դուռը կը բաղիսէ եւ ո՛չ ալ կը նմանի ընկերի մը, որ իր անձնական շահի համար է որ քեզի կու գայ: Քրիստոս քու օգտիդ համար է որ քեզի գալ կ'ուզէ: Քիչ է թիւը այն մարդոց որոնք քու օգտիդ համար է որ քեզի կը մօտենան: Քրիստոս այդ քիչերէն է: Սիրտիդ դուռը մի՛ փակեր քեզի բարիք ընել Ուզողին առջեւ (Եր 32.41): Մի՛ վիրաւորեր հոգիիդ վերքերը իր սեփական վերքերով Բժշկողը (Ես 53.5): Մի՛ փորձեր փախչիլ Բժիշկէդ: Մի՛ տրտնջան անոր դէմ: Մի՛ դաւաճաներ գանիկա: Որքա՛ն կը ցաւի Քրիստոսի սիրտը երբ կը դաւաճանուի իր արեան գինը եղող իր սիրելիներէն: Տաւդ Փարատողին ցաւցնողը մի՛ ըլլար:

### Քրիստոս՝ փակ դրան առջեւ

«*Դրան առջեւ եմ ու կը բաղիսեմ*»: Պարզ է որ այստեղ Քրիստոս կը խօսի մեղքի բանալիով փակուած դուռի մը մասին: Եթէ երբեք դուռը փակ չըլլար, Քրիստոս պէտք պիտի չունենար կանգնելու դրան առջեւ եւ գանիկա բաղիսելու: Քրիստոս որ դուռն է հաւատացեալներուն (Յհ 10.7), հիմա ի՛ր կարգին կը սպասէ սիրտիդ դրան քով: Մի՛ փակեր սիրտիդ դուռը Մեծ Դուռին դիմաց: Մի՛ փակեր սիրտիդ դուռը սիրտիդ սիրով յագեցնալ եւ սիրտդ սիրով յագեցնել փափաքող Աստուծոյ դիմաց (Սղ 107.9): Քրիստոս ի՛նքն է փրկութեանդ դուռը, ի՛նքն է երջանկութեանդ դուռը, ի՛նքն է քեզ յաւերժ ուրախութեան առաջնորդող դուռը: Ան որ ըսաւ. «*Խնդրեցէ՛ք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի*» (Մտ 7.7), հիմա ի՛ր կարգին կը խնդրէ քեզմէ, որ սիրտդ տաս իրեն (Առ 23.26): Պատրաստ ես իր խնդրանքը կատարելու: Քրիստոս պատրաստ ըլլալու կոչ մը չէ՞ր որ ուղղեց երբ ըսաւ. «*Պատրաստ եղէ՛ք... որպէսզի երբ տէրը գայ եւ դուռը զարնէ՛՜ անմիջապէս բանա՛ք դուռը*» (Ղկ 12.35–36):

Դուռն ալ անմիջապէս դուռը բացողներէ՞ն ես թէ դուռը բանալու գործողութիւնը ձգձգողներէն: Բաներ կան որ կարելի է յետաձգել իսկ բաներ ալ կան որ կարելի չէ յետաձգել: Ապաշխարութիւնը անյետաձգելի է: Ապաշխարութեան յետաձգումը Սատանային մղումով միայն կ'ըլլայ: Անհամար է թիւը այն մարդոց որոնք յետաձգած են իրենց ապաշխարութիւնը եւ անհետ կորսուած են: Մեզմէ ո՞վ է այն մարդը որ

երբ իմանայ թէ մահացու հիւանդութեամբ մը վարակուած է, բժիշկի երթալու գործը կը ձգտէ: Ինչպէս մահացու հիւանդութեամբ բռնուած մարդը բժիշկի կը վագէ, այնպէս ալ մեղքի սէրէն բռնուած մարդը պէտք է իսկոյն Քրիստոսի դառնայ, քանի որ մեղքն ալ մահացու է (Ս.Կր 15.56):

### Պատրաստ ըլլալ դուռը բանալու Տանտիրոջ առջեւ

Քրիստոս վերեւ յիշուած իր խօսքով. *«Պատրաստ եղէ՛ք... որպէսզի երբ տէրը գայ եւ դուռը զարնէ՛ անմիջապէս բանա՛ք դուռը»*, իր տանտիրութիւնն է որ կը հոչակէ: Ինչպէս իր տիրոջ հանգամանքը չճանչցող ծառան կը հեռացուի իր պաշտօնէն, այնպէս ալ Քրիստոսի Տէր ըլլալուն հանգամանքը չճանչցող մարդուն ձեռքէն պիտի խլուի յաւիտեանական կեանքին պարգեւը: Մեզմէ ո՞վ պիտի չբարկանար իր ծառային եթէ երբեք ան մերժէր տան դուռը բանալ իր առջեւ: Ճիշդ չէ որ ծառաներս մեր Տանտիրոջ առջեւ մեր սիրտին դուռը փակենք: Յիշեմք որ մեր անձերուն տէրը Տէրը ի՛նքն է եւ ո՛չ թէ մենք: *«Գիտցէ՛ք որ դուք չէ՛ք ձեր անձերուն տէրը, այլ Աստուած՝ որ փրկագինով ձեզ գնեց»* (Ս.Կր 6.19): Եթէ Աստուած մեզ փրկագինով գնեց, կը նշանակէ որ մենք Աստուծոյ սեփականութիւնն ենք: Ուրեմն, սեփականութիւնը մենք ենք, իսկ սեփականատէրը՝ Աստուած: Կարելի՞ քան է որ սեփականութիւնը ըմբոստանայ իր սեփականատիրոջ դէմ: Միթէ Աստուած իրաւունք չունի՞ իր ունեցածին հետ իր ուզածին պէս վարուելու (Մտ 20.15):

### Քրիստոս չէ նստած, այլ ոտքի կանգնած է

*«Դրան առջեւ ես՛ ու կը բաղխեմ»*: Քրիստոս մեր սիրտին դրան առջեւ չէ նստած, այլ ոտքի կանգնած է: Մէկը կրնայ մտածել թէ ի՛նչ տարբերութիւն կ'ընէ եթէ Քրիստոս ոտքի կանգնած կը ներկայացուի կամ նստած: Հոգեւոր հայեացք ունեցող մարդուն համար տարբերութիւնը մեծ է: Ինչպէ՞ս մեզ փնտոող Փրկիչը նստած վիճակով մը կրնայ ներկայացուիլ: Ո՞վ կրնայ պատկերացնել զՔրիստոս նստած, երբ անդին, իր արիւնով «գնուած» մարդիկ, իրենք գիրենք աշխարհին ծախած են: Նստիլը անգործ ըլլալու տպաւորութիւնը կը ձգէ: Յաճախ չե՞նք լսեր երիտասարդներուն բերնէն. *«Գործ չկա՛յ, նստած եմք»*: Քրիստոսի համար մի՛շտ գործ կայ սակայն, որովհետեւ կորսուածներ մի՛շտ եղած են եւ պիտի ըլլան: Ան չի՛ կրնար նստիլ եւ սպասել որ գործը իրե՛ն գայ: Ան նախաձեռնող Աստուած է: Ոտքի կանգնած ըլլալը ցոյց կու տայ իր տագնապիլը, ինչպէս նաեւ այն աշխատանքն ու գոհողութիւնը, այն ճիգն ու ջանքը, գոր Քրիստոս ի գործ կը դնէ ի խնդիր մեր փրկութեան:

### Քու Սիրելի՛դ է դրան առջեւ կանգնած



«*Դրան առջեւ եւ՛ ու կը բաղիսեւ՛*»: Սիրելի՛ ընթերցող, պատկերացուր պահ մը, որ տունիդ դրան առջեւ կանգնողն ու բաղիտողը բու ամենասիրելի բարեկամներէդ մին է. պիտի կրնայի՞ր անտարբեր գտնուիլ անոր բաղիտումին դիմաց: Քանի՞ անգամ ներողութիւն պիտի խնդրէիր անկէ եթէ երբեք ժամերով զինք սպասեցուցած ըլլայիր տունիդ դրան առջեւ՝ անձրեւին տակ: Կամ պատկերացուր որ բու երկրիդ թագաւորն է որ կը բաղիսէ տունիդ դուռը. իսկոյն դուռը պիտի չբանայի՞ր անոր եւ ամէն բան պիտի չընէի՞ր անոր հանութիւնը շահելու համար: Ինչո՞ւ Քրիստոսի հետ նոյն ձեւով չես վերաբերիր: Ինչո՞ւ մարդոց նկատմամբ աւելի սէր եւ երկիւղածութիւն ցոյց կու տաս քան Քրիստոսի նկատմամբ: Միթէ Քրիստոս չյայտարարե՞ց թէ ով որ սիրէ ռեւէ մարդ իրմէ աւելի, արժանի չէ իրեն (Մտ 10.37):

### Քրիստոս դրան սեմին է եւ ո՛չ թէ դոնէն հեռու

«*Դրան առջեւ եւ՛ ու կը բաղիսեւ՛*»: «*Առջեւ եւ՛*» բացատրութիւնը ցոյց կու տայ, որ Քրիստոս մի՛շտ դուռին բովն է եւ ո՛չ թէ տասը կամ քսան մեթր անդին: «*Անիկա մօտ է*» մեր սիրտերուն (Ես 55.6), բայց կարծէք տակաւին մեր սիրտերուն մէջ չէ: Բաղիսելու գործողութիւնը մեր սիրտերէն ներս մուտք գործելու իր վառ փափաքին արտացոլացումն է: Աստուած հետեւաբար, մեզմէ հեռու եղող Աստուած մը չէ: Աստուծոյ համար գործածուած «*մօտ է*» բացատրութիւնը, կը պարզէ որ Աստուած քաջատեղեակ է մեր բոլոր տեսակի նեղութիւններէն: Երբ նեղութեան մէջ ենք, յիշենք որ Աստուած «*մօտ*» եղող Աստուած մըն է եւ ո՛չ թէ հեռու եղող Աստուած մը: Նեղութեան ընթացքին օգնութեան կանչէ գԱստուած եւ ան պատասխան պիտի տայ քեզի (Սղ 81.7):

### Քրիստոս՝ մնայուն բաղիտողը

«*Դրան առջեւ եւ՛ ու կը բաղիսեւ՛*» բացատրութիւնը յստակ կը դարձնէ, որ Քրիստոս ժամանակ առ ժամանակ չէ որ մեր սիրտին դրան առջեւ կը կանգնի, այլ՝ միշտ: Մեր սիրտին դրան առջեւ յարատեւօրէն կայնիլը ցոյց կու տայ Քրիստոսի ցուցաբերած ներողամտութիւնն ու համբերատարութիւնը մեզի հանդէպ: Քրիստոս լոկ մեր սիրտին դրան առջեւ կայնող մը չէ սակայն, այլեւ՝ զանոնք անդուլօրէն բաղիտող մը: Եթէ երբեք մեր սիրտին դրան առջեւ յարատեւօրէն կայնիլը ցոյց կու տայ անոր համբերատարութիւնն ու ներողամտութիւնը, միւս կողմէն սակայն, բաղիսելու գործողութիւնը ցոյց կու տայ անոր անչափ սէրն ու գուրգուրալից վերաբերմունքը մեզի հանդէպ:

Քրիստոս Սուրբ Հոգիով է որ կը բաղիսէ մեր սիրտին դուռը: Սուրբ Հոգին ի՛նքն է որ մեր մեղքերուն պժգալիութիւնը կը յայտնէ մեզի որպէսզի մեզ առաջնորդէ Քրիստոսի: Անոնք որոնք կը յամառին փակ

պահել իրենց սիրտին դուռը Սուրբ Հոգիին արթնութեան կոչերուն առջեւ, անոնք կը վտանգեն իրենց յաւիտենականութիւնը (Մր 3.28-29):

Երբ մնայուն կերպով կը մերժենք Սուրբ Հոգիին ձայնին ուշադրութիւն դարձնել, Քրիստոս ստիպուած կը սկսի քիչ մը անլի գօրաւոր կերպով բաղիւսել մեր սիրտին դուռը, այսինքն, կը սկսի տարբեր միջոցներու դիմել մեր ուշադրութիւնը գրաւելու համար: Այդ տարբեր միջոցները միշտ ալ հանելի միջոցներ չեն ըլլար: Այդ տարբեր միջոցներու շարքին են հիւանդութիւնը, դրամական կորուստները, անակնկալ աղէտները եւ տեսակ-տեսակ դժբախտութիւնները: Աստուած կրնայ թոյլ տալ որ լուրջ դժուարութեան մը բաղիւսինք, անով մեր ուշադրութիւնը իրեն դարձնելու համար:

### Քրիստոս մեր սիրտին դուռը չի բանար մեր կամքէն անկախ

Երբ կ'ըսեմ թէ Քրիստոս տարբեր միջոցներու կը դիմէ մեզ իրեն դարձնելու համար, ըսել չեմ ուզեր հարկաւ, որ ան բռնի միջոցներով մեզ ապաշխարութեան կ'առաջնորդէ: Քրիստոս յաւիտենապէս կորսուիլ ուզող մարդը փրկել «չի կրնար»: Մեր սիրտին դուռը Քրիստոսի առջեւ բանալու եւ կամ փակուած պահելու գործողութիւնը մեր ազատ կամքին թողուած է: Ահա թէ ինչո՞ւ Քրիստոս եթէ-ի հարց մը կը դնէ մէջտեղ: *«Եթէ մէկը իմ ձայնս լսէ...»*: Քրիստոս մեր կամքէն անկախ ալ կրնայ մուտք գործել մեր սիրտէն ներս, բայց այդպէս չ'ընեն, որովհետեւ ան կը յարգէ մեր ազատ կամեցողութիւնը: Ան կը սպասէ որ կամաւորաբար եւ սիրալոյսով կերպով բանանք դուռը մեր սիրտին: Ան չի՛ նմանիր մարդու մը որ կը սպառնայ դուռը կոտրել եթէ չբացուի:

Քանի որ Քրիստոս ինքզինքն ոնէ մէկուն չի՛ պարտադրեր, այդ չի՛ նշանակեր որ պէտք է անտեսենք զինքն եւ դուրսը սպասեցնել տանք: Պէ՞տք է արհամարհենք Աստուծոյ անչափ քաղցրութիւնը, ներողամտութիւնը եւ համբերատարութիւնը, երբ գիտենք որ Աստուծոյ քաղցրութիւնն է որ մեզ ապաշխարութեան կը բերէ (Հո 2.4): Քրիստոսի անչափ սէրը մեզի հանդէպ կը ստիպէ զՔրիստոս ոչինչ ստիպելու մեզ: Մեր անձերու փրկութեան համար Աստուած պէտք է ի՛ր բաժինը ընէ եւ մենք ալ մե՛ր բաժինը: Եթէ ճիշդ է որ առանց մեր երկնաւոր Հօր ո՛չ ոք կրնայ Քրիստոսի գալ (Յհ 6.44), միւս կողմէն նաեւ ճիշդ է, որ եթէ ոնէ մէկը ուզէ Քրիստոսի գալ, Քրիստոս գայն պիտի չմերժէ (Յհ 6.37):

### Լսող ականջներ ունենալու անհրաժեշտութիւնը

*«Եթէ մէկը իմ ձայնս լսէ...»*: Մեղքերով ինքնիւր հոգեւոր ականջները բթացուցած մարդը չի՛ կրնար լսել Քրիստոսի ձայնը: Շատ կարեւոր է լսող հոգեւոր ականջներ ունենալ: Փարիսեցիները խուլ չէին բայց չկրցան

լսել Քրիստոսի ձայնը եւ բանալ իրենց սիրտին դուռը, միւս կողմէն, կային մարդիկ որոնք իսկապէս խուլ էին, եւ սակայն, լսեցին Փրկիչին ձայնը (Մտ 11.5, Մր 7.32-33): Քրիստոս գիտէ որ նիւթական ականջ ունեցող ամէն մարդ չէ որ կը լսէ: Ահա թէ ինչո՛ւ Քրիստոս ըսաւ. «Ականջ ունեցողը թող լսէ» (Ղկ 8.8): Լսող ականջ չունեցող մարդը ընդառաջող սիրտ ալ չի կրնար ունենալ: Դուռին բաղխումը չլսող մարդը ինչպէ՞ս կրնայ բանալ դուռը: Եթէ երբեք լսող ականջներ ունինք, անպայման որ պիտի լսենք Քրիստոսի ձայնը որ կ'ըսէ.– «Ո՛վ իմ հոյրս, իմ սիրուհիս, իմ աղանձիս, իմ կատարեալս, բաց ինձի, քանզի իմ գլուխս ցողով լեցուեցաւ ու վարսերս՝ գիշերուան շաղերով» (Երգ 5.2): Վերջին տողը յստակօրէն ցոյց կու տայ մեր Տիրոջ երկարատեւ սպասումը մեզմէ իւրաքանչիւրին դարձին: Ան երկա՛ր ժամանակէ ի վեր դուրսը պահուած կը մնայ: Ժամանակն է որ ներս առնուի:

### Աստուած կը խօսի լսող ականջներուն

«Եթէ մէկը իմ ձայնս լսէ...»: Աստուած գիմք լսել ուզող մարդիկ կը փնտռէ: Երբ պատրաստակամութիւն յայտնենք գիմք լսելու, այն ատեն պիտի սկսի խօսիլ մեզի իր սիրոյն եւ ծրագիրին մասին: Տակաւին, եթէ լսելու փափաք յայտնենք, ան պիտի դառնայ մեր ուսուցիչը: Ան մեզի պիտի սորվեցնէ ինքնիր մասին, մեր անձերուն մասին եւ մեր նմաններուն մասին: Որքան դիպուկ է Կոռնելիոս հարիւրապետին խօսքը ուղղուած Պետրոս առաքեալին. «Պատրաստ ենք լսելու ինչ որ Տէրը հրամայած է ձեզի» (Գրծ 10.33): Սիրելի՛ ընթերցող, դուն ալ Կոռնելիոս հարիւրապետին նման կրնա՞ս ըսել. «Պատրաստ եմ լսելու ինչ որ Տէրը հրամայած է»: Զի՛ բաւեր պատրաստակամութիւն յայտնել լսելու, այլեւ պատրաստ պէտք է ըլլալ մեր սիրտին դուռը բանալու Քրիստոսի առջեւ: Այնքան ատեն երբ չենք բացած մեր սիրտին դուռը իր առջեւ, ան դուրս կայնելով պիտի չխօսի մեզի: Անարգա՛նք է խօսիլ մէկու մը հետ դրան մուտքին առանց գիմք ներս հրաւիրելու:

### Փրկութեան հրաւերը ուղղուած է բոլորին

«Եթէ մէկը...»: «Մէկը» բառը ցոյց կու տայ, որ իւրաքանչիւր մարդ արժէք է Քրիստոսի համար: Աստուած հետաքրքրուած է ամէն մէկ մարդու փրկութեամբ: Քրիստոս ի՛նքն իսկ յայտարարեց որ եթէ իր հարիւր ոչխարներէն միայն մէկը կորսնցնէ, կը ձգէ ինսունհինը ոչխարները արօտավայրին մէջ եւ կ'երթայ կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն (Ղկ 15.4): Քրիստոնեայ մարդը ո՛չ ոք պէտք է անտեսէ: Քրիստոսի նման փրիստոնեայ մարդն ալ պէտք է պատրաստ ըլլայ ձգելու ամէն ինչ եւ երթալու իր կորսուած եղբօր եւ քոջ ետեւէն՝ զայն վերադարձնելու համար Քրիստոսի հօտին:

«Եթէ մէկը...» ըսելով, Քրիստոս ըսել կ'ուզէ «*ոեւէ մէկը...*»: Հրաւերը ուղղուած չէ Լաւոդիկիայի եկեղեցիին անդամներուն միայն, այլ համայն մարդկութեան: Նախասահմանութեան վարդապետութեան հետեւորդները, կ'ուսուցանեն որ Աստուած սկիզբէն սահմանած է թէ որո՞նք դժոխք պիտի նետուին եւ որո՞նք արքայութիւնը պիտի ժառանգեն: Սուրբ Գիրքը սակայն տարբեր բան կ'ուսուցանէ: Հոն կը կարդանք. «*Այդ է բարին եւ այդ կը փափաքի Աստուած, մեր Փրկիչը, որ կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին եւ հասնին նշմարտութեան ցանաչումին, թէ՛ մէկ Աստուած կայ միայն, եւ Աստուծոյ ու մարդոց միջեւ միակ միջնորդ մը՝ Յիսուս Քրիստոս մարդը, որ ինձգիներ իբրեւ փրկագին տուաւ բոլոր մարդոց համար*» (Ա.Տմ 2.3-6): «*Բոլոր մարդիկը*» եւ «*բոլոր մարդոց համար*» բացատրութիւնները ցոյց չե՞ն տար, որ Աստուած նախասահմանած չէ որ ոմանք դժոխք երթան:

Սիրելի՛ ընթերցող, եթէ նախասահմանութեան ժխտական իմաստին հաւատացող մէկն ես, եւ անպայման կ'ուզես ոմանք դժոխք դրկել, մէկ բան գիտցիր սակայն, որ Աստուած «*չ'ուզեր որ ոեւէ մէկը կորսուի, այլ՝ կ'ուզէ որ բոլորն ալ ապաշխարելու առիթ ունենան*» (Ա.Պո 3.9 Հմմտ Եփ 3.6): Աստուծոյ կամեցածին հակառակ բան մի՛ կամենար: Քրիստոս ինձգիներ իբրեւ փրկագին չտուաւ ինքի՛ եւ ինծի՛ համար միայն, այլ համայն մարդկութեան համար: Քրիստոսի փրկարար արեան դէմ աններելի մեղք է որ կը գործեն անոնք՝ որոնք կը հաւատան որ ոմանք նախասահմանուած են դժոխք երթալու:

«*Եթէ մէկը իմ ձայնս լսէ...*»: Աստուած բոլոր մարդոց կարողութիւն տուած է իր ձայնը լսելու, կը բաւէ որ մարդիկ օգտագործեն աստուածապարգեւ իրենց կարողութիւնը եւ դառնան Աստուծոյ: Եթէ Տէր Յիսուսի ոչխարներն ենք, անպայման որ պիտի լսենք անոր ձայնը (Յհ 10.4): Իրաւ ոչխարը իր տիրոջ ձայնը այլ ձայներէ զանազանել գիտցող եւ կրցող ոչխարն է: Աշխարհէն բազմահարիւր ձայներ կը հասնին մեր ականջներուն, բազմաթիւ հրաւերներ կ'ուղղուին մեզի, աշխարհին փարելու բազմահազար առիթներ կ'ընծայուին մեզի: ԶԱստուած սիրող ու փնտրող մարդը, այդ բոլոր ձայներէն կրնայ եւ գիտէ զանազանել Տէր Յիսուսի սրինգին ֆաղցր ձայնը:

## Դուռը բանալը՝ Տիրոջ տանտիրութիւնը ցանչնալ է

«*Եւ դուռը բանայ...*»: Տիրոջ սրինգին ֆաղցր ձայնը լսողը չի կրնար անտարբեր մնալ եւ իր սիրտին դուռը չբանալ անոր առջեւ: Ի՞նչ կը նշանակէ սիրտին դուռը բանալ: Սիրտին դուռը բանալ կը նշանակէ առիթ տալ Քրիստոսի մեր կեանքներէն ներս մուտք գործելու: Դուռը Տիրոջ բանալ, կը նշանակէ ցանչնալ Տիրոջ տիրութիւնն ու իշխանութիւնը: Դուռը բանալը Աստուծոյ վստահիլ է, անոր կամքին առջեւ խոնարհիլ է, մեր կեանքի դեկը անոր յանձնել է, անոր պաշտպանութեան յանձնուիլ է,

անոր թեւերուն հովանաւորութեան տակ ապաւինիլ է, անոր մեր կեանքերուն մէջ ազատութիւն տալ է, անոր հետ հաշտուիլ եւ նոր ուխտ մը կնքել է: Տակաւին ու մանաւանդ, Տիրոջ առջեւ դուռը բանալը զանհկա պատուել ու փառաւորել է: Դուռը մէկու մը երեսին փակ պահելը զանհկա անպատուել է: Դուռ մը միշտ երկու տեղեր կամ երկու անձեր իրարմէ բաժնող իրականութիւնն է: Ուրեմն դուռը բանալ, կը նշանակէ բանդել այն պատը որ մեզ կը բաժնէ Քրիստոսէ:

### Դուռը բանալը՝ որոշումի հարց է

*«Եւ դուռը բանայ...»:* Սիրելի՛ բարեկամ, մեր սիրտին դուռը բանալը որոշումի հարց է: Եթէ իսկապէս կը փափաքես եւ կ'աշխատես սիրտդ բանալու Քրիստոսի առջեւ, գիտցի՛ր, որ ո՛չ ոք եւ ո՛չ մէկ բան կրնայ արգելք հանդիսանալ որ իրականացնես փափաքդ: Այսօր որոշէ սիրտդ յանձնել Քրիստոսի: Հաստատ մնա՛ որոշումիդ վրայ եւ շուտով Տէրը պիտի օրհնէ քեզ: Սիրտդ Տիրոջ չյանձնելու պատճառներ եւ պատրուակներ մի՛ փնտռեր: Խորքին մէջ, Տիրոջ չյանձնուելու որեւէ պատճառ չունիս, բայց ամէն պատճառ ունիս Տիրոջ յանձնուելու:

### Սիրտիդ դուռը բաց աղօթքով

*«Եւ դուռը բանայ...»:* Եթէ երբեք Տիրոջ դառնալ եւ սիրտդ անոր առջեւ բանալ կ'ուզես բայց բանալու կերպը չես գիտեր, քեզ կը հրաւիրեմ որ սիրտի անկեղծութեամբ հետեւեալ աղօթքը ինձի հետ միասին արտասանես. *«Ո՛վ Տէր, դո՛ւն ըսիր, եթէ բանա՛մ ձեր սիրտին դուռը ներս պիտի մտնեմ: Տէր Յիսուս, սիրտիս դուռը բանալ կ'ուզեմ, բայց բանալու կերպը չեմ գիտեր: Բանալ կը ջանամ եւ չեմ յաջողիր: Կ'աղաչեմ քեզի, ո՛վ Տէր, դո՛ւն բաց սիրտս, եւ կամ, օգնէ՛ ինձի որ կարենամ բանալ: Ես կորսնցուցած եմ սիրտիս բանալին, եւ հետեւաբար, ինչպէ՞ս կրնամ բանալ դուռ մը՝ որուն բանալին չունիմ: Օգնէ՛ ինձի բանալին գտնելու եւ քեզի դառնալու: Տէ՛ր, դուն չէի՞ր որ իննսունինը ոչխարները ձգելով, փնտռելու գացիր կորսուած միակ ոչխարը, եւ զայն գտնելով՝ ուսերուդ վրայ դրիր, ուրախացար եւ հրաւիրեցիր որ ուրիշներն ալ քեզի հետ ուրախանան (Ղկ 15.6): Տէր Յիսուս, կ'աղաչեմ, զի՛ս ալ նկատէ կորսուած ոչխար մը եւ նամբայ ելիր զիս փնտռելու վնասկամութեամբ»:*

Շարունակէ՛ աղօթքդ ըսելով. *«Տէ՛ր, միթէ՛ քու անչափ սէրդ չէ՞ր որ դարձի բերաւ անառակ որդին: Միթէ՛ քու սիրոյ մէկ նայուածքը չէ՞ր որ բացաւ Զակէոսի սիրտը: Միթէ՛ խաչին վրայ անհուն ներողամտութիւնդ տեսնելով չէ՞ր որ դարձի եկաւ քեզի խաչակից եղող աջակողմեան աւագակը: Կը խնդրեմ Տէ՛ր, զիս նկատէ այն կորսուած դրամը որ պէտք ունի փնտռուելու եւ գտնուելու քու կողմէդ: Զիս նկատէ այն վիրաւոր մարդը որ գետին ինկած կը սպասէ բարեգուր Սամարացիիդ: Զիս նկատէ*

*Ձակֆէնս մը որ ծառին վրայ բարձրացած ֆեզ տեսնել կ'ուզէ: Օգնէ՛ ինծի որ ոչ միայն Ձակֆէնսի նման ծառ բարձրանամ, այլեւ՝ այս աշխարհին յատուկ բոլոր տեսակի մտահոգութիւններէն ու ցանկութիւններէն վեր բարձրանամ՝ կարենալ ֆեզ տեսնելու համար աւելի մօտէն եւ աւելի յստակ: Ո՛վ իմ երկնաւոր Հայրս, ինչպէս սգաւորը միտքարողի պէտք ունի, այնպէս այ ես, մեղֆերուս իբրեւ հետեւանք սգաւոր դարձածս՝ ֆեզի՛ պէտք ունիմ, ամէն մարդէ եւ ամէն բանէ աւելի»:*

Սիրելի՛ հայրդի, եթէ սիրտի անկեղծութեամբ արտասանեցիր այս աղօթքը, գիտցի՛ր որ դուն այլեւս դարձար Քրիստոսի սեփականութիւնը, իսկ Քրիստոս՝ սեփականատէրդ: Վստահէ՛ Սեփականատիրոջդ եւ ամո՛ւր բռնած մնա՛ անոր ձեռքէն, որպէսզի երբ ան վերադառնայ՝ չմնաս երկրի վրայ, այլ՝ յարութիւն առնող հաւատացեալներուն հետ միասին ամպերու վրայ երկինք յափշտակուիս Տէրը դիմաւորելու համար, եւ այնուհետեւ Տիրոջ հետ միասին ըլլաս յաւիտեան (Ա.Թս 4.16-17):

### Երբ Քրիստոս մուտք գործէ մեր սիրտերէն՝ հոն ապահովութիւն կը տիրէ

*«Ներս պիտի մտնեմ...»:* Դուն Քրիստոսի սեփական տունն ես (Երբ 3.6): Այս իմաստով, տունը դուն ես, իսկ տանտէրը՝ Քրիստոս: Տանտէրը ներս գալ կ'ուզէ: Կարելի՞ քան է Տանտէրը դուրս ձգել: Թոյլ տուր որ Քրիստոս մուտք գործէ սիրտէդ ներս: Երբ սիրտիդ մէջ ունենաս սիրտիդ տանտէրը՝ Քրիստոս, այն ատեն համակ էութիւնդ պիտի ողորդուի ապահովութեան, վստահութեան եւ խաղաղութեան զգացումներով: Հո՛ն ուր խաղաղութեան Իշխանը ներկայ չէ, հոն խոռվութիւնը կ'իշխէ: Հո՛ն ուր Տանտէրը բացակայ է, հոն անապահովութիւնն ու անորոշութիւնն են որ կը տիրեն: *«Եթէ Տէրը չպահպանէ քաղաքը, գուր տեղ կը հսկեն պահապանները»* (Սղ 127.1): Սիրելի՛ ընթերցող, գո՛ւր են ինքնապահպանումի եւ ինքնապաշտպանութեան բոլոր ջանքերդ եթէ երբեք Աստուծոյ պաշտպանութեան չես ապաւինած:

### Քրիստոսի մուտք գործելը՝ մեզ կ'առաջնորդէ նորոգութեան

*«Ներս պիտի մտնեմ...»:* Քրիստոս կ'ուզէ մեր սիրտերէն ներս մուտք գործել, որպէսզի իր ներկայութեամբ սրբէ ու սրբացնէ զանոնք: Երբ Քրիստոս մուտք գործէ մեր կեանքներէն ներս, մեր հոգիները պիտի հրնուին, մեր սիրտերը պիտի նորոգուին, մեր միտքերը յստակատես պիտի դառնան, մեր աշխատանքները պիտի օրհնուին, մեր ուշադրութեան առարկան պիտի դառնայ երկինքն ու երկնայինը, եւ Նսայի մարգարէին բառերով, մեր ոյժը պիտի նորոգուի, արծիւներու

նման բարձրերը պիտի ելլենք, պիտի վազենք ու չթուլնանք, պիտի փախնք ու չյոգնինք (Ես 40.31):

### Քրիստոսի մուտք գործելը՝ արմատական փոփոխութիւն կը յառաջացնէ

Այո՛ սիրելի ընթերցող, երբ Քրիստոս մուտք գործէ սիրտէդ ներս, յեղափոխութիւն մը, տարբերութիւն մը, փոփոխութիւն մը հանդէս պիտի գայ կեանքիդ մէջ: Մի՛ վախնար այն փոփոխութենէն որ կընայ յառաջ գալ սիրտիդ ու կեանքիդ մէջ Քրիստոսի մուտքով: Շատեր վախցած են այդ փոփոխութենէն եւ ատոր համար ալ մերժած են իրենց սիրտերը յանձնել Քրիստոսի: Մարդ արարածը ընդհանրապէս կը սիրէ իր գիտցածին կառչած մնալ: Ան չի՛ սիրեր հրաժարիլ իր գիտցածէն: Դուն սակայն, այդպիսին մի՛ ըլլար եւ այդպէս մի՛ ընէր: Համարձակութիւնը ունեցիր այո՛ ըսելու Քրիստոսով իրականացող փոփոխութեան: Վախնալիքը չփոխուիլն է եւ ո՛չ թէ փոխուիլը: Մի՛ նայիր աշխարհին ու աշխարհիկ կեանքը սիրող մարդոց *«որովհետեւ չեն փոխուիր անոնք ու Աստուծմէ չեն վախնար»* (Սղ 55.19), այլ նայիր այն մեղաւորներուն՝ որոնք անսացին Քրիստոսի ձայնին եւ դարձի եկան եւ նոր սիրտ ու նոր հոգի ստացան (Եզ 36.26):

### Քրիստոսի մուտքը կը դղրդացնէ մեր համակ էութիւնը

*«Ներս պիտի մտնեմ...»:* Խնդրեմ պարզ խօսք մը մի՛ նկատեր այս խօսքը, որովհետեւ պարզ անձ մը չէ մտնողը, այլ փառքի ու զօրութեան թագաւորը՝ Քրիստոս: *«Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ ֆաղաքը դղրդեցաւ»* (Մտ 21.10): Այո՛ սիրելիներ, Քրիստոս կը դղրդացնէ հոն ուր կը մտնէ: Ինչպէս երբ Քրիստոս Երուսաղէմ մտաւ ամբողջ ֆաղաքը դղրդեցաւ, այնպէս ալ երբ մուտք գործէ մեր սիրտերէն ներս, մեր ողջ էութիւնը պիտի դղրդայ, մեր հոգիները պիտի խայտան, մեր խորհուրդները պիտի մաքրուին եւ մեր սիրտերը պիտի օրհներգեն Տէրը:

### Մե՛նք ենք Քրիստոսի իրական տանարները

Ինչպէս երբ լոյսը ծագի խաւարը կը փարատի, այնպէս ալ երբ Քրիստոս մտնէ մեր սիրտերէն ներս, հոն գտնուող ամէն բան որ աստուածահանոյ չէ, դուրս պիտի փախչի մեր սիրտերէն: Յիշեցէ՛ք որ երբ Քրիստոս Երուսաղէմի տանարը մտաւ, դուրս շարտեց արջառ եւ ոչխար ծախողներն ու լումայնափոխները (Յե 2.13-14): Մենք ալ չե՞նք ուզեր որ ան մուտք գործէ մեր սիրտերէն ներս, որպէսզի հոնկէ դուրս շարտէ ամէն տեսակի մեղք որ ոչխարի եւ աղանիի անմեղութեամբ ներս սպրդած է:

Եթէ երբեք Քրիստոս նիւթական տանարին նկատմամբ այնքան բծախնդրութիւն ցուցաբերեց, հապա որքա՛ն աւելի բծախնդիր է աննիւթական տանարներուն նկատմամբ, որ մենք ենք (Ա.Կր 6.19): Մեզմէ իւրաքանչիւրին սիրտը Աստուծոյ Հոգիին տանարն է: Ահաւոր մեղք է փակել Աստուծոյ տանարին դուռը Աստուծոյ դիմաց: Տանարը չի՛ կրնար իր դռները փակած պահել իր Բնակիչին առջեւ (Ա.Կր 3.16-17): Մեզմէ ամէն մէկը իբրեւ տանար, կը կորսնցնէ իր արժէքն ու գօրութիւնը, իր գեղեցկութիւնն ու հմայքը երբ Աստուած չէ անոր բնակիչը:

### Դառնալ սեղանակից Քրիստոսի

«Անոր հետ պիտի ընթրեմ, ան ալ՝ ինծի հետ»: Սիրելի՛ ընթերցող, մեծարուած ու յարգուած պիտի չգգայի՞ր եթէ երբեք առիթը ընծայուէր քեզի երկրաւոր թագաւորի մը կամ իշխանի մը սեղանակիցը ըլլալու: Անշուշտ: Ահաւասիկ Քրիստոս, Տէրը երկինքի ու երկրի, կը խոստանայ քեզ սեղանակից դարձնել իրեն, եթէ երբեք բանաս սիրտիդ դուռը անոր առջեւ: Երբ Քրիստոս մուտք գործէ կեանքէդ ներս, ուրախութեան սեղան մը պիտի սփռէ առջեւդ եւ ինք անձամբ քեզի պիտի սպասարկէ (Ղկ 12.37): Նաեւ ըսեմ, որ սպասարկողն ու սպասարկուածը նոյնինքն Քրիստոս պիտի ըլլայ: Քրիստոս ի՛նք պիտի ըլլայ սեղան սփռողը եւ Քրիստոս ի՛նք պիտի ըլլայ սեղանին վրայ սփռուածը: Քրիստոս իր մարմինն ու արիւնը պիտի տայ քեզի, եւ դուն անոնց ցաշակումով, հաշտուած պիտի ըլլաս երկնաւոր Հօրդ հետ: Այդ հաշտութեան հասնելու համար երկու բան «պայման» է. *առաջին*.– լսել Քրիստոսի ձայնը, եւ *երկրորդ*.– բանալ մեր սիրտին դուռը:

### Ընթրի՛ք խորհրդանիշ հարազատութեան, ընկերակցութեան, եւ ուրախութեան

«Անոր հետ պիտի ընթրեմ, ան ալ՝ ինծի հետ»: Այստեղ ընթրի՛ք պատկերացումն է երբեք իրականութեանց. *առաջին*.– ընթրի՛ք ակնարկութիւն է այն մտերմութեան եւ հարազատութեան, որ գոյութիւն ունի Փրկիչին եւ փրկութիւնը ընդունող հաւատացեալին միջեւ: *Երկրորդ*.– միասնաբար ընթրելը խորհրդանիշ է այն մնայուն հաղորդակցութեան սերտ յարաբերութեան եւ ընկերակցութեան, որ իրականութիւն կը դառնայ երբ մարդ արարածը հաշտուի իր արարիչին հետ: *Երրորդ*.– ընթրի՛ք պատկերացումն է այն մեծ ուրախութեան եւ անհուն երջանկութեան զգացումին որ կ'ողողէ հաւատացեալին սիրտը երբ ան իր սիրտին դուռը կը բանայ խաչէն ցառագայթող շնորհիւ լոյսին առջեւ: Իսկապէս ալ, ուրախութիւնը կը պատէ մեր հոգիները երբ ընդունինք զՔրիստոս մեր կեանքերուն մէջ: Սամարիայի համար կ'ըսուի.



«Ուրախութիւնը մեծ էր այդ քաղաքին մէջ» քանի որ ընդունել էին զՔրիստոս իբրեւ Փրկիչ (Գրծ 8.8): Զակէնս ի՛նքն անուանուեց «ուրախութեամբ ընդունեց Յիսուսը» (Ղկ 19.6): Յորի գիրքին մէջ կը կարդանք, որ ով որ Ամենակարողը դարձնէ իր ոսկին եւ թանկագին արծաթը, այն ատեն Ամենակարողէն ուրախութիւն պիտի ստանայ (Յոր 22.25-26):

### Գահընկէց Քրիստոսը վերստին գահ բարձրացնենք

Սիրելի՛ ընթերցող բարեկամ, Աստուած ի՛նքն էր գահակալը մեր նախահօր եւ նախամօր սիրտերուն: Անոնք զԱստուած գահընկէց հռչակեցին երբ մեղանշեցին: Աստուած մարդեղացաւ իր թագաւորական գահը իր սեփական արիւնով վերստին ձեռն ձգելու վնասկամութեամբ: Ապստամբութի՛ւն է եթէ երբեք մերժենք մեր սիրտին դուռը բանալ մեր սիրտին գահակալին՝ Քրիստոս-թագաւորին առջեւ: Ինչպէս երկրաւոր թագաւորներ կը բանտարկեն եւ կը պատժեն իրենց դէմ ապստամբողները, այնպէս ալ մեր երկնաւոր Տէրը պիտի պատժէ անոնք՝ որոնք կը մերժեն զինք իբրեւ թագաւոր (Մտ 19.27): Ո՞վ է այն ծառան որ թագաւորական պալատին դարպասը կը փակէ թագաւորին առջեւ եւ անպատիժ կը մնայ:

### Մեր սիրտին դուռը բանալը՝ արքայութեան դուռը բանալ է

Եթէ կ'ուզենք որ Քրիստոս իր փառաւոր գալստեան օրը, բանայ մեր առջեւ արքայութեան դուռը, պէտք է որ նախ մե՛նք բանանք անոր առջեւ մեր սիրտին դուռը: Ինքնիր սիրտին դուռը բացողը, արքայութեան դուռն է որ բացած կ'ըլլայ ինքնիր առջեւ: Մտաբերեցէք որ փեսան (Քրիստոս) չբացաւ արքայութեան դուռը հինգ յիմար կոյսերուն առջեւ (Մտ 25.11-12): Անոնք կոչուեցան յիմար, որովհետեւ ո՛չ հաւատք ունէին եւ ո՛չ ալ հաւատքի արտայայտութիւնը եղող գործեր: Արքայութիւնը յիմար մարդոց տեղը չէ, անհաւատ եւ անգործ մարդոց տեղը չէ: Հետեւաբար, մեզմէ պահանջուածը իմաստուն կեցուածքն է, մեր աչքերը մեր հաւատքի հիմնադիրին ու կատարելագործողին յառելն է (Եբր 12.2), մեր հաւատքը կեանքի վերածելն է (Ա.Թս 1.3): Իրական իմաստուն մարդը ան է, որ ուշադրութիւն կը դարձնէ Քրիստոսի ձայնին եւ իր սիրտին դուռը կը բանայ անոր առջեւ: Քրիստոս արժանի է մեր ուշադրութեան: Ան արժանի է մեր կողմէ լսուելու եւ մեր սիրտերէն ներս առնուելու:

«Եթէ մէկը իմ ձայնս լսէ եւ դուռը բանայ...»: Սիրելի՛ ընթերցող, որոշէ այսօր դուն այդ «մէկը» ըլլալ: Բա՛ց սիրտդ՝ սիրտիդ սիրահարին՝ Քրիստոսի առջեւ, եւ շուտով երկինքի երջանկութիւնն ու խաղաղութիւնը պիտի ողողէ համակ էութիւնդ:

## ՓՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ

Փրկութիւնը Աստուծոյ շնորհքին եւ անոր պարգեւած հաւատքին արդիւնքն է, իսկ վարձատրութիւնը՝ հաւատքին արտայայտութիւնը եղող մեր գործերուն արդիւնքը: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «*Աստուծոյ շնորհքովը փրկուեցաք, քանի հաւատացիք: Փրկութիւնը ձեր արժանիքը չէ, այլ՝ Աստուծոյ պարգեւն է: Ձեր գործերով շահուած չէ անիկա, որպէսզի ռեւէ մէկը չպարծենայ*» (Եփ 2.8-9):

Իսկ վարձատրութեան վերաբերեալ ան կ'ըսէ. «*Աստուած իւրաքանչիւրին պիտի հատուցանէ՝ անոր գործերուն համաձայն*» (Հռ 2.6 հմմտ Բ.Կր 5.10, Փլպ 4.17): Ի՞նչ է արդեօք այն հատուցումը կամ վարձատրութիւնը որ հաւատացեալ մարդը պիտի ստանայ իր կատարած գործերուն փոխարէն: Մտ 25.21-ին մէջ կը կարդանք. «*Ապրի՛ս, բարի եւ հաւատարի՛մ ծառայ, քանի այդ փոքրիկ գումարը շահարկելու մէջ հաւատարիմ գտնուեցար, քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ, եկուր եւ մասնակից եղիր տիրոջդ ուրախութեան*»:

Ոմանք մեկնելով այս համարէն, կ'ենթադրեն որ արքայութեան մէջ հաւատացեալները տարբեր-տարբեր պատասխանատուութիւններ պիտի ստանան, եւ այդ ստանձնելիք պատասխանատուութիւնները՝ պիտի ըլլան անոնց վարձատրութիւնը: Ասիկա չի՛ կրնար շիտակ ըլլալ, որովհետեւ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «*Իւրաքանչիւրին գործը դատաստանի օրը պիտի յայտնուի, եւ ատիկա կրակը պիտի յայտնէ, որովհետեւ իւրաքանչիւրին գործին որակը կրակով պիտի փորձուի: Եթէ մէկուն շինածը կրակին դիմանայ՝ ենթական պիտի վարձատրուի. իսկ եթէ այրի՛ ենթական պիտի տուժէ, այսինքն թէեւ անձը ինք պիտի փրկուի, սակայն իր գործերուն համար վարձատրութիւն պիտի չստանայ*» (Ա.Կր 3.13-15): Այս իօսքը հարկաւ կը վերաբերի հաւատացեալներուն միայն:

Առաքեալի այս իօսքին համաձայն, հաւատացեալներ պիտի ըլլան որոնք պիտի փրկուին առանց սակայն վարձատրութիւն ստանալու: Եթէ երբեք արքայութեան մէջ մեր ստանձնելիք պատասխանատուութիւնները պիտի ըլլան մեր վարձատրութիւնը (ինչպէս ոմանք կ'ենթադրեն), այդ պարագային, արքայութեան մէջ հաւատացեալներ պիտի ըլլան որոնք որեւէ պատասխանատուութիւն պիտի չստանան, համաձայն առաքեալի իօսքին. «*...անձը ինք պիտի փրկուի, սակայն իր գործերուն համար վարձատրութիւն պիտի չստանայ*» (Ա.Կր 3.15): Եթէ իսկապէս վարձատրուիլը պատասխանատուութիւն ստանձնել է, այդ պարագային, չվարձատրուիլը՝ արքայութեան մէջ անպատասխանատու մնալ է:

Հետեւաբար, եթէ վարձատրութիւնը պատասխանատուութիւններ ստանձնելը պիտի չըլլայ, հապա ի՞նչ պիտի ըլլայ: Վարձատրութիւնը նոյնինքն Քրիստոսի ներկայութիւնը պիտի ըլլայ: Փրկութիւնը Քրիստոսի հետ ըլլալն է, իսկ վարձատրութիւնը Քրիստոսի ներկայութիւնը խորապէս զգալն ու ապրիլն է: Առաքեալը իօսելով անհաւատներուն

մասին, կ'ըսէ. «Այդպիսիները յաւիտենական մահուամբ պիտի պատժուին, գրկուելով Տիրոջ ներկայութենէն» (Բ.Թ.ս 1.9): Եթէ երբեք յաւիտենական մահը Տիրոջ ներկայութենէն գրկուիլն է, ուրեմն, յաւիտենական կեանքը Տիրոջ ներկայութեան մէջ ըլլալն ու ապրիլն է:

Եթէ վարձատրութիւնը Տիրոջ ներկայութեան մէջ ապրիլն է, այդ պարագային ինչպէ՞ս պէտք է բացատրել առաքելական տուեալ խօսքը. «...անձը ինք պիտի փրկուի, սակայն իր գործերուն համար վարձատրութիւն պիտի չստանայ» (Ա.Կր 3.15): Արդեօ՞ք «վարձատրութիւն պիտի չստանայ» խօսքը կը նշանակէ որ արքայութեան մէջ հաւատացեալներ պիտի ըլլան որոնք Տիրոջ ներկայութիւնը պիտի չգգան եւ պիտի չապրին: Կարելո՞ր է գտնել այս հարցումին պատասխանը:

Ամէն հաւատացեալ պիտի վարձատրուի, այլ խօսքով, պիտի գգայ եւ ապրի Քրիստոսի ներկայութիւնը արքայութեան մէջ, բայց հաւատացեալէ հաւատացեալ պիտի տարբերի այդ գգալու եւ ապրելու տարողութիւնը, որովհետեւ բոլոր հաւատացեալները նոյնքան խոր կերպով չեն սիրած եւ մօտիկ չեն եղած Քրիստոսի: Ո՛րքան մօտիկ եղած ենք Քրիստոսի երկրի վրայ, ա՛յնքան մօտիկ պիտի ըլլանք իրեն արքայութեան մէջ: Այս մօտիկութիւնը մեր վարձատրութիւնն իսկ է:

Ո՛րքան խո՛ր կերպով սիրած ենք Տէր Յիսուսը մեր երկրաւոր կեանքի ընթացքին եւ որքան խո՛ր կերպով փափաքած ենք իր ներկայութեան մէջ ապրիլ, ա՛յնքան աւելի պիտի վարձատրուինք իր արբեցուցիչ ներկայութեամբ: «Վարձատրութիւն պիտի չստանայ» խօսքը հետեւաբար, պարզապէս կը նշանակէ, թէ ենթական Քրիստոսի գգլիսիչ ներկայութիւնը գորեղապէս պիտի չապրի:

Բոլոր հաւատացեալները նո՛յն չափով, նո՛յն ծաւալով, նո՛յն ջերմութեամբ եւ նո՛յն գորութեամբ չէ որ պիտի գգան եւ ապրին Քրիստոսի ներկայութիւնը: Թէ ինչպէ՞ս կարելի է նո՛յն արքայութեան մէջ եղողներ եւ նո՛յն Արքային ներկայութեան կանգնողներ, նոյն հաճոյքն ու ուրախութիւնը չստանան, հետեւեալ օրինակով կարելի է պարզել այդ մէկը. – ենթադրեցէք պահ մը, որ երկու հոգիներ համերգի մը ներկայ կ'ըլլան: Անոնցմէ մին շատ կը սիրէ համերգի ներկայ ըլլալ, իսկ միւսը՝ նուազ կը սիրէ: Հիմա դո՛ւք ըսէք, երկուքը նո՞յն հաճոյքը կը ստանան, հոգեկան նո՞յն գգացումները կ'ունենան: Բնականաբար ո՛չ: Ան որ շատ կը սիրէ համերգը՝ շատ հաճոյք կը ստանայ անկէ, իսկ նուազ սիրողը՝ նուազ հաճոյք կը ստանայ, բայց երկուքին ալ պարագային հաճոյքը կայ:

Նո՛յնը պիտի ըլլայ պարագան, գՔրիստոս շատ թէ քիչ սիրող հաւատացեալներուն: Նոյնինքն Քրիստոս կը մատնանշէ շատ կամ քիչ սիրելու պարագայ մը. «Անոր որ աւելի կը ներուի՝ անիկա աւելի սէր ցոյց կու տայ, իսկ անոր որ քիչ կը ներուի՝ աւելի քիչ կը սիրէ» (Ղկ 7.47): Եկէ՛ք շատ սիրենք Յիսուսը երկրի վրայ, որպէսզի առատօրէն վայելենք իր սէրը երկինքի մէջ ու կշտանանք այդ սիրով:

## ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

«Ի՞նչ» է յաւիտենական կեանքը գոր հաւատացեալը պիտի ժառանգէ երբ Քրիստոս վերադառնայ այս աշխարհ Ֆիզիքապէս: Երբ կը խօսինք յաւիտենական կեանքին մասին, ուրիշ բանի մը մասին խօսած չենք ըլլար եթէ ոչ Քրիստոսի անձին մասին: Յաւիտենական կեանքը Քրիստոսի անձէն տարբեր եղող իրականութիւն մը չէ:

Քրիստոս ի՛նքն է յաւիտենական կեանք խոստացողը եւ Քրիստոս ի՛նքն է խոստացուած յաւիտենական կեանքը: Աստուած ի՛նքն է ժառանգութիւնը յաւիտենական կեանքի ժառանգորդներուն, համաձայն Դաւիթի խօսքին. «Տէրն է իմ ժառանգութիւնս եւ բաժակիս բաժինը» (Սղ 16.5), ինչպէս նաեւ. «Դուն իմ բաժինս ես, ո՛վ Տէր» (Սղ 119.57): Աստուած է բաժին բաժնողն ու բաժնուած բաժինը: Քրիստոս է փրկութիւն շնորհողը եւ շնորհուած փրկութիւնը:

Յաւիտենական կեանքը Քրիստոսի խաչելութեամբ չսկսաւ: Յաւիտենական կեանքը միշտ գոյութիւն ունեցած է որովհետեւ Քրիստոս ի՛նք միշտ գոյութիւն ունեցած է: «Անկէկա նոյնիմէն կեանքն էր, որ յայտնուեցաւ» (Ա.Յհ 1.2): Քրիստոս յայտնուելէ ետք չէր որ կեանք եղաւ կամ կոչուեցաւ, այլ՝ յայտնուելէ առաջ: Առաքեալը չ'ըսեր թէ Քրիստոս կեանք «եղաւ», այլ՝ կեանք «էր»: Քրիստոս մարդ դարձաւ եւ ո՛չ թէ կեանք դարձաւ: Քրիստոս կեանք էր նախքան մարդեղանալը: Հետեւաբար, Քրիստոսի մարմնացումն ու մարդեղացումը նոյնիմէն կեանքին մարմնացումն էր:

Քրիստոս Աստուծոյ կողմէ մեզի յայտնուած եւ տրուած յաւիտենական կեանքն է: Ա՛յս է նաեւ վկայութիւնը Աստուածաշունչին. «Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր: Անկէկա նոյնիմէն կեանքն էր, որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, այսինքն՝ յաւիտենական կեանքին մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի յայտնուեցաւ» (Ա.Յհ 1.1-2):

Յովհաննէս առաքեալին գործածած «Լսեցինք, տեսանք եւ շօշափեցինք» բառերը, ցոյց կու տան այն խոր ու ջերմ յարաբերութիւնը որ առաքեալը ունէր Քրիստոսի անձին հետ: Առաքեալը յաւիտենական կեանքի ժառանգորդը դարձած էր Քրիստոսով, եւ հետեւաբար ան չէր կրնար պատկերացնել կեանք առանց Քրիստոսի: Քրիստոս մեզ չ'առաջնորդեց յաւիտենական կեանքին, այլ՝ իր անձին: Ան իր անձով եւ իր անձին մեզ առաջնորդեց:

Քրիստոս ի՛նքն է յաւիտենական կեանքը, ի՛նքն է յաւիտենական կեանքին յայտնութիւնը, ի՛նքն է յայտնուած յաւիտենական կեանքը: «Ով որ չունի Որդին՝ յաւիտենական կեանք այ չունի» (Ա.Յհ 5.12): Եւ հետեւաբար, ժառանգել յաւիտենական կեանքը, կը նշանակէ ժառանգել Քրիստոսի անձը, ըլլալ Քրիստոսի անձին հետ, հրապուրուիլ եւ արբենալ

անոր սիրալիր դեմքով, անոր փառաբարբոք ներկայութեամբ, անոր պաշտելի տեսքով:

Սուրբ Գրիգոր Նարեկացի իր Աղօթամատեանին 12-րդ գլխուն մէջ կ'ըսէ. *«Ո՛չ թէ տուրփին՝ այլ տուողին կարօտն ունիմ. փառքը չէ՛ որ անձկալի է ինծի, այլ փառաւորուածը՝ համբուրելի. ո՛չ թէ կեանքին փափաքովը, այլ կենարարին յիշատակովն է որ կը նենձներիմ միշտ. ո՛չ թէ վայելքին տարփանքովը կը հեծեմ, այլ պատրաստողին տենչանքովը երկամունքիս խորէն կը նուամ. հանգիստը չէ որ կը փնտոնեմ, այլ հանգչեցնողին երեսը կ'աղաչեմ. ո՛չ թէ հարսնարանին խննոյքով՝ այլ փեսային անձկութեամբը կը մաշիմ»:*

Շատ մարդիկ այն տպաւորութիւնը ունին, որ յաւիտեանական կեանքը Քրիստոսի կողմէ մեզի տրուելիք կամ յանձնուելիք գանձ մը պիտի ըլլայ: Քրիստոս իր գալստեան օրը մեզի յանձնելիք գանձ պիտի չունենայ: Հաւատացեալ մարդուն գանձը Գանձաբաշխը ի՛նք պիտի ըլլայ: Քրիստոս ինքզինք իբրեւ գանձ պիտի շնորհէ իր անձին նկատմամբ սաստիկ պապակ ունեցողներուն: *«Աներեւակայելի գանձ մըն է Քրիստոս»* կը հաստատէ Պօղոս առաքեալ (Եփ 3.8):

Հետեւաբար, Քրիստոս իր քովէն մեզի բան մը տալով չէ որ մեզ պիտի ուրախացնէ եւ կշտացնէ, այլ ինքզինք մեզի տալով: Ո՞ր մէկը աւելի կը նախընտրենք. ընկզմի տեսակաւոր գանձերու շատութեան մէ՞ջ, թէ ընկզմի Քրիստոսի սիրտին ջերմ սիրոյն խորերը: Եթէ երբեք Քրիստոսի կողմէ մեզի տրուածը բարի է, որքա՛ն աւելի բարի է տուողը ի՛նք՝ Քրիստոս: Նիւթական գանձերը չեն կրնար յագեցնել մեր աննիւթական հոգիներուն ծարաւը: Մեր Հոգիներուն ծարաւը մեր հոգիներուն Տէրը ի՛նք միայն կրնայ յագեցնել:

Սիրելի՛ ընթերցող, ինչո՞վ պիտի օգտուէինք եթէ Քրիստոս մեզի շնորհէր կեանք մը ուրկէ ինք բացակայ ըլլար: Հոն ուր Քրիստոս չկայ, հոն ո՛չ կեանք կայ եւ ո՛չ ալ գանձ, ո՛չ ուրախութիւն կայ եւ ո՛չ ալ խաղաղութիւն: Հոն ուր Քրիստոս չկայ, հոն դատարկութիւն է, դառնութիւն է, մահ է, դժոխք է: Աստուած կ'ուզէ որ մեր հայեացքը կեդրոնացնենք իր Որդիին վրայ եւ ո՛չ թէ իր Որդիին կողմէ մեզի տրուածին վրայ: Քրիստոնեայ մարդուն սիրոյն եւ հետաքրքրութեան առարկան պէտք է բարերարն Աստուած ի՛նք ըլլայ եւ ո՛չ թէ Աստուծոյ բարերարութիւնները:

ԶՔրիստոս իբրեւ յաւիտեանական կեանք ժառանգող մարդը, ուրիշ ո՛չ մէկ բանի կարիքը պիտի գգայ: Արժայութեան մէջ ազատութիւն պիտի չփնտոնենք, որովհետեւ Ազատարարը պիտի ըլլայ իշխողը: Խաղաղութիւն պիտի չաղերսենք, որովհետեւ Խաղաղարարը պիտի ըլլայ թագաւորողը: Աւելի՛ն պիտի չուզենք, որովհետեւ Անբաւելին պիտի ըլլայ մեզ բաւարարողը: Արդեօք Անբաւելին պիտի չբաւէ՞ մեզի: Արդեօք անկարօտն Աստուած պիտի չկրնա՞յ մեր բոլոր տեսակի կարօտները գոհացնել: Սիրելի՛ ընթերցող, Քրիստոսի յայտնուելուն կարօտը կը տանջէ՞ քեզ:

## ՄԱՀԸ ՆՈՐ ԾՆՈՒՆԴ ՄԸՆ Է ԴՐԱԽՏԻՆ ՄԷՋ

Մարդը հոգի, միտք եւ մարմին է: Սա ապացուցուելու չի՝ կարօտիր: Ժողովողը կը հաստատէ որ մահուան պահուն մարմինը հողին կը դառնայ ուրկէ առնուեցաւ եւ հոգին կը դառնայ իր տուիչին՝ Աստուծոյ (Ժդ 12.7): Հոգին հողէն չառնուեցաւ ինչպէս մարմինը: Հոգին ծագումը երկնային է, ահա թէ ինչո՛ւ երբ ասիկա բաժնուի մարմինէն՝ իր ծագման վայրը՝ երկինք կ'երթայ: Եղիշէ պատմիչ կ'ըսէ. *«Թէ երկնային է հոգիին բնութիւնը՝ յայտնի է անկէ, որ երբ ան բաժնուի մարմինէն, երկրին ստորին կողմերը չ'իջնէր, այլ կը բարձրանայ իր ծննդավայրը՝ երկինք, եւ հոնկէ կը նայի երկրին վրայ»:*

Երբ երկինքը կը ներկայացուի իբրեւ ծննդավայր մարդուն հոգիին, յստակ է որ ըսել ուզուածը այն է, որ Աստուած է անոր ստեղծիչը: Արդարեւ, Աստուած է ստեղծիչը մեր հոգիներուն եւ մարմիններուն եւ միայն ի՛ր հրամանով անոնք կրնան իրարմէ բաժնուիլ (Ես 57.16): Ի՞նչ կը պատահի մարդոց հոգիներուն երբ անոնք կը բաժնուին իրենց մարմիններէն: Տարբեր բան կը պատահի հաւատացեալ մարդուն հոգիին եւ տարբեր բան՝ անհաւատին հոգիին: Թէ ի՞նչ կը պատահի իւրաքանչիւրին հոգիին՝ աղփատ Ղազարոսին առակը շատ գեղեցիկ կերպով ցոյց կու տայ ասիկա: Ես կը հաւատամ որ երբ Յիսուս պատմեց աղփատ Ղազարոսին առակը, իր հիմնական նպատակը ցոյց տալն էր մեզի, թէ ի՞նչ է որ կը պատահի մահէն ետք հաւատացեալ եւ անհաւատ մարդոց հոգիներուն:

Ահա՛ թէ ի՞նչ կը պատահի: Ղկ 16.22-ին մէջ կը կարդանք. *«Աղփատը մեռաւ եւ հրեշտակները զինք տարին Աքրահամի մօտ»:* Աղփատը առանձին չգնաց դրախտ, այլ՝ հրեշտակները զինք առաջնորդեցին: Այստեղ Քրիստոս երկու բան կը սորվեցնէ մեզի. *անաջին*.- կը սորվեցնէ այն, որ մարդ արարածը իր սեփական նիւթով չի՛ կրնար մուտք գործել դրախտ, այլ մէ՛կը պէտք է առաջնորդէ զինք հոն, եւ *երկրորդ*.- կը սորվեցնէ, որ երբ հաւատացեալ մարդը վախճանի, իր հոգին կը դիմաւորուի հրեշտակներու կողմէ, որպէսզի տարուի դրախտ (եւ ո՛չ թէ արքայութիւն): (Պէտք չէ շփոթել իրարու հետ դրախտն ու արքայութիւնը, ինչպէս նաեւ դժոխքն ու դժոխային վիճակը: Անոնց տարբերութեան մասին կարդալ յաջորդ գլուխին մէջ):

Հիմա գանք տեսնելու թէ ի՛նչ կը պատահի անհաւատ մարդուն երբ ան իր հոգին աւանդէ: Ղկ 16.22-ին մէջ կը կարդանք. *«Մեծահարուստն ալ մեռաւ եւ թաղուեցաւ: Դժոխքին մէջ...»:* Ուշագրաւ է որ վերեւ յիշուած երկու կէտերը հոս չենք գտներ: Անհաւատին հոգին ո՛չ դրախտ կը տարուի եւ ո՛չ ալ բարի հրեշտակներուն կողմէ կը դիմաւորուի: Թէ ո՛ր կը տարուի, բնագիրը կը պատասխանէ. *«Դժոխք»:* Գիտակցաբար գործածեցի «կը տարուի» բացատրութիւնը փոխանակ գործածելու «կ'երթայ» բացատրութիւնը, որովհետեւ, թէպէտ Սուրբ Գիրքը մեզի

չ'ըսեր որ անհաւատ մարդոց հոգիները Սատանային չար ու պիղծ ոգիներուն կողմէ կը դիմաւորուին եւ դժոխք կը տարուին, բայց հաստատ գիտենք որ ասիկա՝ է նշմարտութիւնը: Ինչպէս բարի մարդոց հոգիները բարի հրեշտակներուն կողմէ կը դիմաւորուին եւ կը տարուին դրախտ, այնպէս ալ չար մարդոց հոգիները չար ոգիներուն կողմէ կը դիմաւորուին եւ կը տարուին դժոխք: Ս. Գրիգոր Լուսաւորիչ նաեւ կը հաստատէ, որ երբ անապաշխար մեղաւորները մահանան, չար ու պիղծ ոգիները կը շրջապատեն իրենց հոգիները եւ գանձնք կը տանին դժոխք:

Հարկաւ Ղկ 16.22-ը միակ համարը չէ որ կ'ապացուցանէ թէ երբ արդար մարդը վախճանի՝ իր հոգին դրախտ կը տարուի, կան նաեւ ուրիշ համարներ, յիշենք անոնցմէ ամենագործողը. «*Վստահ եղիր, այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ*» (Ղկ 23.43): Ասիկա խօսք մը չէ, այլ՝ խոստում մը: Քրիստոսի այս խոստումը ուղղուած չէ միայն իրեն խաչակից եղող աջակողմեան աւագակին, այլ նաեւ բոլոր անոնց՝ որոնք գինք կը դաւանին իբրեւ իրենց Տէրն ու Փրկիչը, ինչպէս ըրաւ հաւատացեալ «աւագակը»:

«*Վստահ եղիր, այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ*»: Սա խօսքը կը պարզէ, որ հաւատացեալ մարդուն համար, մահը ուրիշ բան չէ եթէ ոչ նոր ծնունդ մը Աստուծոյ դրախտին մէջ: Մահը ուրիշ բան չէ եթէ ոչ փոխադրուիլ մը երկրաւոր կեանքին տաղտուկէն դէպի Քրիստոսի գիրկը, ուր տաղտուկ չկայ, ուր միայն կատարեալ խաղաղութիւն, կատարեալ հանգիստ եւ կատարեալ ուրախութիւն կայ: Մահը հետեւաբար, մեզ աշխարհէն դէպի աշխարհին ստեղծիչը տանող մանապարհն է: Մահը երկրէն դէպի երկինք տանող կամուրջն է:

Գարեգին Բ. Կաթողիկոս, «Ես յաղթեցի աշխարհին» խորագիրը կրող իր գիրքին մէջ կ'ըսէ. «*Միայն աստուածային ոյժով եւ Քրիստոսեան հայեացքով կարելի է ըմբռնել թէ մահը անցք է եւ ո՛չ վերջակայան, ելից մանապարհ է եւ ո՛չ կենսահանգիստ, շարունակուող էջ մըն է եւ ո՛չ կնքիչ վերջաբան՝ կենաց դպրութեան գրքին մէջ*»: Իսկ Ս. Գրիգոր Նարեկացի կ'ըսէ. «*Վերջին օրը ներկայ կեանքին, կը հանդիսանայ առաջին օրը անդենական կեանքին*»: Այս իմաստով, մահը գերեզմանէն ասդին ու գերեզմանէն անդին գտնուող կեանքերը գիրար կամրջող օղակն է: Մահէն անդին գտնուող կեանքը շարունակութիւնն է մահէն ասդին գտնուող կեանքին: Կեանքը ուրեմն, կանգ չ'առնելով մահուամբ, այլ պարզապէս կը ստանայ նոր իմաստ, նոր նկարագիր, նոր տարագ եւ նոր վիճակ:

Պօղոս առաքեալ մահը ըմբռնեց իբրեւ երթալ եւ Քրիստոսի հետ ըլլալ մը: Ան կ'ըսէ. «*Երկու սուրի մէջ մնացած եմ. մէկ կողմէ՝ կը ցանկամ այս կեանքէն ելլել եւ Քրիստոսի հետ ըլլալ, ինչ որ գերազանցօրէն աւելի նախընտրելի է, բայց միւս կողմէ՝ ձեր սիրոյն՝ աւելի կարեւոր կը համարեմ այս կեանքին մէջ մնալը*» (Փլպ 1.23-24): Մեզ հետաքրքրողը «*կը ցանկամ այս կեանքէն ելլել եւ Քրիստոսի հետ ըլլալ*» բառերն են: Առաքեալը իր այս խօսքով յստակ կը դարձնէ, որ հաւատացեալ մարդուն

համար, մեռնիլ՝ կը նշանակէ Քրիստոսի հետ ըլլալ: Այս իմաստով, մահը կը հանդիսանայ այն դուռը ուրկէ մտնողը ինքզինքն դէմ յանդիման կը գտնէ աշխարհի սեփականատիրոջ՝ Տէր Յիսուս Քրիստոսի առջեւ: Եթէ երբեք երկրի վրայ եղած ենք Աստուծոյ հետ, ապրած ենք Աստուծոյ հետ, բնականօրէն մահէն ետք ալ, պիտի շարունակենք ըլլալ Աստուծոյ հետ, ապրիլ Աստուծոյ հետ, ահա թէ ինչն՝ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «*Ըլլա՛յ կեանքի եւ ըլլա՛յ մահուան մէջ՝ մենք Տիրոջ կը պատկանինք*» (Հո 14.8): Այո՛ սիրելիներ, հաւատացեալ մարդը Քրիստոսի կը պատկանի ըլլայ ան մահէն առիցն թէ մահէն անդին: Գերեզմանը չի՛ կրնար խզել յարաբերութիւնը Աստուծոյ եւ իր մարդուն: Աստուծոյ եւ հաւատացեալ մարդուն յարաբերութիւնը կը սկսի երկրի վրայ եւ կը շարունակուի երկինքի մէջ աւելի՛ գեղեցկօրէն, աւելի՛ ջերմօրէն եւ աւելի՛ իրականօրէն:

Եթէ երբեք Սուրբ Գիրքը կը խօսի յարութեան մասին, կը խօսի անոր համար՝ որ մահ անխուսափելի իրականութիւն մըն է: Եւ սակայն, եթէ երբեք ունենանք մահուան ճշգրիտ հասկացողութիւնը, եթէ ճանչնանք մահուան ինչութիւնը, ատկա պիտի օգնէ մեզի չսարսափելու մահէն, պիտի օգնէ մեզի որ ահ ու դողով չդիմաւորենք զանիկա:

Սիրելի՛ ընթերցող, կը վախնա՞ս մահէն: Մահէն վախնալը բնական երեւոյթ է, կարեւորը սակայն, վախը չվերածուի սարսափի, յուսահատութեան եւ ընկճուածութեան: Եթէ հանգիստը կորսնցնելու չափ կը սարսափիս մահէն, այդ կը նշանակէ, որ տակաւին Աստուծոյ զաւակը չես դարձած: Մի՛ սկնկալեր չսարսափիլ մահէն եթէ երբեք քեզի համար անորոշ է թէ մահէն ետք ո՞ւր պիտի երթաս: Անորոշ բանը մի՛շտ կը մտահոգէ եւ կը սարսափեցնէ մարդ արարածը: Այդ անորոշութենէն ձերբազատելու համար որոշ է որ Քրիստոսի պէտք է գաս:

Խնդրեմ պահ մը մտածէ որ եթէ երբեք այսօր աւանդես հոգիդ, ո՞ւր պիտի երթաս: Այստեղ աչքերդ փակելուդ պէս դուն քեզ կա՛մ դրախտին եւ կա՛մ դժոխքին մէջ պիտի գտնես (Ղկ 16.22): Շատ ափսոս է որ հոգիդ դժոխք նետուի: Դուն քու անձիդ չե՞ս իղնար: Յաւիտենականութիւնը պարզ բան թող չթուի աչքերուդ: Կ'անդրադառնա՞ս թէ ի՞նչ կը նշանակէ յաւիտենական դժոխք: Դժոխք, ուր մահը անմահ է, ուր դադարը՝ դադրած, վիշտը՝ խելագարեցնող, ցաւը՝ աղաղակեցնող, ծարաւը՝ մաշեցնող, կրակը՝ հալեցնող:

Կայ մեծ եւ հզօր Փրկիչ մը որ կ'ուզէ քեզ ազատագրել այս բոլորէն: Վստահէ՛ Յիսուսի: Ան յոյսի Տէրն ու տուիչն է, հետեւաբար, չի՛ կրնար ըլլալ որ յուսախար ընէ քեզ: Ահա սիրտիդ դրան առջեւ կանգնած է ու կը բաղիւն (Յյտ 3.20): Կը բաւէ որ վնոնես սիրտիդ դուռը բանալ իր առջեւ, եւ ան իր յաղթական մուտքը պիտի գործէ սիրտէդ ներս եւ քեզ պիտի դարձնէ յաղթող ընդդէմ մահուան, եւ դուն համարձակութեամբ պիտի կարենաս բացականչել. «*Ո՞ւր է, Մահ, յաղթանակդ. ո՞ւր է Մահ, քու յայթոյցդ*» (Ա.Կր 15.55):



## ԴՐԱԽՏՆ ՈՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ ԴԺՈՒՔՆ ՈՒ ԴԺՈՒՍԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

Նախորդ գլուխին մէջ հաստատեցինք որ երբ հաւատացեալ մարդը ննջէ, իր հոգին կը տարուի դրախտ եւ ո՛չ թէ Աստուծոյ թագաւորութիւն: Ասոր ապացոյցը Քրիստոս կու տայ երբ իրեն խաչակից եղող աւագակին կ'ըսէ. «*Վստահ եղիր, այսօր ինծի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ*» (Ղկ 23.43): Հետաքրքրական է որ աւագակը կը խնդրէ Քրիստոսէ զինք յիշել երբ իր թագաւորութեամբ գայ, իսկ Քրիստոս ճշդում մը կը կատարէ, յիշեցնելով անոր որ զինք թագաւորութեան մէջ յիշելէ առաջ նախ դրախտին մէջ պէտք է յիշէ: Ի՞նչ է տարբերութիւնը դրախտին եւ Աստուծոյ թագաւորութեան: Ոմանք հաստատած են, որ դրախտը Աստուծոյ ներկայութիւնն է, իսկ թագաւորութիւնը՝ նոյնինքն Թագաւորը ինք՝ Աստուած: Խորքին մէջ ե՛լ դրախտը ե՛լ թագաւորութիւնը Աստուծոյ ներկայութեան պատկերացումներն են:

Կարելոր է սակայն հետեւեալը մեր միտքին մէջ ունենալ: Հաւատացեալ մարդը, ինչպէս վերեւ հաստատեցինք, երբ ննջէ, իր հոգին կը տարուի դրախտ եւ ո՛չ թէ Աստուծոյ թագաւորութիւն: Աստուծոյ թագաւորութեան ժառանգորդները պիտի դառնան միայն ա՛յն ատեն՝ երբ Քրիստոս երկրորդ անգամ ըլլալով Տիգրիսապէս յայտնուի եւ իր թագաւորութիւնը հաստատէ երկրի վրայ: Այլ խօսքով, երբ Թագաւորը յայտնուի, ա՛յն ատեն միայն կարելի պիտի ըլլայ ժառանգել Աստուծոյ թագաւորութիւնը:

Երբ կը խօսինք Աստուծոյ թագաւորութիւնը ժառանգելու մասին՝ խօսած չենք ըլլար Աստուծոյ թագաւորութեան անդամ դառնալուն մասին: Թագաւորութիւնը ժառանգելը ուրիշ բան է եւ թագաւորութեան անդամ դառնալը՝ ուրիշ բան: Թագաւորութեան անդամ դառնալը մեր երկրաւոր կեանքի ընթացքին է որ տեղի կ'ունենայ երբ կը յանձնուինք Քրիստոսի, իսկ թագաւորութիւնը ժառանգելը՝ Քրիստոսի երկրորդ գալուստէն ետք է որ պիտի իրականանայ:

Քրիստոսի երկրորդ գալուստէն առաջ ո՛չ ոք կրնայ ժառանգել Աստուծոյ թագաւորութիւնը: Թէպէտ հաստատեցինք որ Աստուծոյ թագաւորութեան անդամ դառնալն ու գայն ժառանգելը իրարմէ տարբեր բաներ են, եւ սակայն, պէտք է յիշեցնել որ անոնք զիրար ամբողջացնող եւ իրարմով պայմանաւորուած իրականութիւններ են, որովհետեւ, եթէ երբեք մեր երկրաւոր կեանքի ընթացքին չանդամագրուինք Քրիստոսի թագաւորութեան՝ պիտի չկրնանք ժառանգել այդ թագաւորութիւնը Քրիստոսի երկրորդ գալուստէն ետք:

Ոմանք կը խորհին ըսելով.– «*Ի՞նչ տարբերութիւն կ'ընէ դրախտին մէջ եղեր ենք թէ Աստուծոյ թագաւորութեան մէջ*»: Կասկածէ վեր է որ անհուն տարբերութիւն կայ Քրիստոսի երկրորդ գալուստէն առաջ մահացող եւ դրախտ տարուող մարդուն վիճակին եւ Քրիստոսի երկրորդ

գալուստէն յետոյ Աստուծոյ թագաւորութիւնը յաւիտենապէս ժառանգող հաւատացեալ մարդուն վիճակին միջեւ: Այդ տարբերութեանց մասին երկա՛ր էջեր կարելի է գրել, բայց այդ մեր ծրագիրին մաս չի կազմեր: Այս հանգրուանին միակ հաստատումը գոր կ'ուզենք ընել, այն է, որ մահէն ետք դրախտ տարուող հաւատացեալ մարդուն հոգիին ուրախութիւնը, փառքը, գօրութիւնը, գեղեցկութիւնը եւ անարատութիւնը, Քրիստոսի երկրորդ գալուստէն եւ Ֆիզիքական յարութենէն յետոյ ո՛չ միայն պիտի բազմապատկուի, այլեւ կատարեալ ու ամբողջական պիտի դառնայ:

Դրախտը ուր կը տարուի հաւատացեալին հոգին, կը ներկայացնէ «վիճակ մը»: Վիճակ մը, ուր հաւատացեալին հոգին «կը գգայ» Քրիստոսի պաշտպանարար եւ ուրախարար սիրոյ ներկայութիւնը: Քրիստոսի երկրորդ գալուստէն յետոյ, ատիկա կը դադրի վիճակ մը ըլլալէ, կը դադրի գգացումի կամ գգալու հարց ըլլալէ, եւ կը վերածուի հաւատացեալին էութիւնը համակող անբացատրելի ապրումի, հրաշափայլ եւ հրաշափառ կեանքի, անծայրածիր խինդի եւ խաղաղութեան, որուն մէջ կ'ընկղմի հաւատացեալը եւ որով յաւիտենապէս «կ'արբի»:

Գալով դժոխային վիճակին եւ դժոխփին, անոնք իրարմէ տարբեր են անով, որ առաջինը Քրիստոսի երկրորդ գալուստէն առաջ եղող իրականութիւն մըն է, իսկ երկրորդը, Քրիստոսի երկրորդ գալուստէն ետք ըլլալիք իրականութիւն մըն է: Աւելի պարզ բացատրութեամբ մը, երբ անհաւատ անձ մը մեռնի, իր հոգին կը մատնուի դժոխային վիճակի մը, իսկ Քրիստոսի երկրորդ գալուստէն, մարդկութեան յարութենէն եւ վերջին դատաստանէն ետք, ան ուղղակիօրէն դժոխք կը նետուի: Անհաւատ մարդուն դժոխային վիճակը անտանելի կը դառնայ եւ սուր հանգամանք մը կը ստանայ Քրիստոսի երկրորդ գալուստէն եւ վերջին դատաստանէն ետք: Կը կարծէ՞ք որ անհաւատին դժոխային վիճակը պիտի չսաստկանայ դատաստանի օրը հրապարակաւ նշաւակուելէ եւ խայտառակուելէ ետք:

Փորձենք օրինակով մը պարզել թէ ինչպէ՛ս մահէն ետք դժոխային վիճակի մը կը մատնուի անհաւատ մարդը, իսկ վերջին դատաստանէն ետք՝ դժոխփի: Ենթադրենք պահ մը որ մարդասպան մը բանտ դրուեցաւ եւ իրեն ըսուեցաւ որ ամիս մը ետք պիտի կախուի: Ի՞նչ հոգեվիճակէ կը կարծէք պիտի անցնի մահուան դատապարտուած մարդը այդ ամսուան ընթացքին: Կասկած չկայ որ ան դժոխային վիճակ մըն է որ պիտի ապրի: Այո՛, դժոխային վիճակ մըն է ատիկա եւ ո՛չ թէ նոյնիմէն դժոխփը: Բանտարկեալին համար «դժոխփը» վրայ հասած կ'ըլլայ երբ մէկ ամսուայ բանտարկութեան ժամանակը իր աւարտին հասնի եւ ինք կախադան բարձրանայ:

Մեր ըսել ուզածը հետեւեալն է, անոնք որոնք առանց դարձի գալու կը մեռնին, անոնց հոգիները «մէ՛կ տեղ» կը բանտարկուին եւ կը սկսին

ապրիլ դժոխային եւ սպասողական վիճակ մը: Այդ սպասողական վիճակը վերջ պիտի գտնէ Քրիստոսի երկրորդ գալուստէն եւ վերջին դատաստանէն ետք միայն: Դատաստանի օրը, դժոխային վիճակին դժոխքն է որ պիտի յաջորդէ: Ինչպէս բանտարկեալը բանտի մէջ դժոխային վիճակ մը կ'ապրի որովհետեւ գիտէ թէ ինչ կը սպասէ իրեն, այնպէս ալ անապաշխարութեամբ վախճանած մարդը՝ կ'ապրի դժոխային վիճակ մը, որովհետեւ գիտէ թէ անաչառ դատաստան մը կայ որ իրեն կը սպասէ:

Ի՞նչ է դժոխքը: Բազմաթիւ բացատրութիւններ առաջարկուած են այս ուղղութեամբ, բայց այդ բոլոր բացատրութիւնները այստեղ յիշելը մեր նիւթի ծիրէն դուրս պիտի բերէ մեզ: Այստեղ կ'ուզեմ պարզապէս մէկ բան յիշեցնել մեր ընթերցողներուն, որ իսկական դժոխքը անմար կրակներու եւ անմահ որդերու մէջ նետուիլը չէ, այլ գրկուիլն է Քրիստոսի ներկայութենէն, ինչպէս առաքեալը կ'ըսէ. *«Այն օրը, այդպիսիները յաւիտենական մահուամբ պիտի պատժուին, գրկուելով Տիրոջ ներկայութենէն եւ անոր փառաւոր զօրութենէն...»* (Բ.Թս 1.9):

Այս համարին համաձայն, յաւիտենական մահ է Տիրոջ ներկայութենէն գրկուիլը: Այո՛, մահ ու դժոխք պիտի ըլլայ յաւիտենականութիւնը ամէն մարդու որ կ'ընդդիմանայ Քրիստոսի կամփին եւ կը մերժէ խոնարհիլ անոր ամենակալ ձեռքին տակ: Եթէ երբեք մահն ու դժոխքը Քրիստոսի ներկայութենէն գրկուիլն է, ապա ուրեմն դրախտն ու արքայութիւնը՝ Քրիստոսի ներկայութեան մէջ ընկղմիլն է:

Մի՛այն Քրիստոս կրնայ մեզ ազատել յաւիտենական մահէն եւ դժոխքէն, որովհետեւ միայն Քրիստոս յայտարարեց ըսելով. *«Մահուան ու դժոխքի բանալիները իմ ձեռքս են»* (Յլտ 1.18): Հետաքրքրական է որ Յայտնութեան Գիրքին մէջ մահն ու դժոխքը իրարմէ անբաժան կը ներկայանան (Յլտ 1.18, 6.8, 20.13, 20.14): Արդարեւ, մահ է դժոխքին մէջ նետուիլը: Դժոխք է յաւիտենական մահը: Հոն ուր չ'իշխեր *«Ն'ս եմ կեանքը»* յայտարարող կեանքի տէրն ու տուիչը՝ Քրիստոս, հոն մահն է որ կը տիրապետէ, դժոխքն է որ կ'իշխէ:

Սիրելի՛ ընթերցող, ականջ մի՛ տար անոնց՝ որոնք կ'ըսեն. *«Դժոխքն ու արքայութիւնը հոս (աշխարհի մէջ) են»*: Մենք համաձայն ենք որ մարդ արարածը կրնայ իր կամքով ինքնիր կեանքը դժոխքի կամ արքայութեան վերածել, բայց այդ չի նշանակեր որ *«դժոխքն ու արքայութիւնը հոս (աշխարհի մէջ) են»*: Ան որ կը մերժէ դժոխքին իրական ըլլալը՝ մերժած կ'ըլլայ նաեւ արքայութեան իրական ըլլալը, որովհետեւ նոյն Սուրբ Գիրքն է որ կը խօսի երկուքին ալ մասին: Մէկուն գոյութիւնը մերժողը միւսին ալ գոյութիւնը պէտք է մերժէ, որովհետեւ Քրիստոս երկուքին ալ գոյութեան մասին յստակ հաստատումներ կը կատարէ: Աստուածաշունչին մէջ ո՛չ ոք Քրիստոսէ աւելի խօսած է դժոխքին եւ յաւիտենական մահուան մասին: Եկէ՛ք հաւատանք Քրիստոսի խօսքերուն եւ դարձի գանք, որպէսզի դառնանք զաւակները յաւիտենական Արքային:

## ԴԱՐՁԻ ԵԿԱԾ ՄԸ ԿՐՆԱՅ ԻՐ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ԿՈՐՄՆՑՆԵԼ

Դարձի եկած մը կրնա՞յ իր փրկութիւնը կորսնցնել: Գտնելու համար այս հարցումին մշտնապէս պատասխանը, նախ պէտք է փորձենք գտնել պատասխանը ուրիշ մէկ հարցումին.– կարելի՞ է դէմ դնել Աստուծոյ շնորհին թէ ոչ: Ե՛ւ Աստուածաշունչը ե՛ւ մարդկային փորձառութիւնը ցոյց կու տան, որ այո՛, կարելի է դէմ դնել Աստուծոյ շնորհին: Փրկութեան հրաւիրող Աստուծոյ շնորհքը անդուլօրէն կը գործէ բոլոր մարդոց մէջ, եւ սակայն, անուրանալի է որ մարդոց ջախջախիչ մեծամասնութիւնը իրենց ապրած կեանքով Աստուծոյ շնորհին դէմ է որ կը դնեն: Եթէ երբեք կարելի է դէմ դնել Աստուծոյ շնորհին, ուրեմն, կարելի է նաեւ, որ դարձի եկած մը իր փրկութիւնը կորսնցնէ:

Աստուածաշունչին մէջ ունինք համարներ ինչպէս նաեւ մարդոց օրինակներ, որոնք կը հաստատեն մեր ըսածը: Ամէնէն ցայտուն օրինակը Դեմասի օրինակն է: Բ.Տմ 4.10-ին մէջ կը կարդանք. *«Դեմասը այս աշխարհը նախընտրելով՝ զիս լքեց եւ Թեսաղոնիկէ գնաց»*: Պօղոս առաքեալ Դեմասը կը յիշէ իբրեւ իր գործակիցը (Փլմ 24 հմմտ Կղ 4.14): Ահաւասիկ մէկը, որ լքեց աշխարհը եւ հետեւեցաւ Քրիստոսի, եւ ապա դարձեալ լքեց զՔրիստոս եւ հետեւեցաւ աշխարհին: Մէկը, որ Քրիստոսի աւետարանը տարածելու աշխատանքին մէջ դարձած էր հաւատարիմ գործակիցը Պօղոսի, մանչցած ու ապրած էր մշտնապէս փրկութիւնը, եւ վերստին անկէ հեռացած: Սա իրողութիւնը չ'ապացուցաներ որ դարձի եկած մը կրնայ վերստին իր փրկութիւնը կորսնցնել:

Եթէ անկարելի ըլլար որ զՔրիստոս մանչցող մը վերստին հեռանար Քրիստոսէ, այդ պարագային Սուրբ Գիրքին մէջ պէտք չէ գտնելիք հետեւեալ հաստատումը. *«Անոնք որոնք մեր Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոսը մանչնալով՝ աշխարհի պղծութիւններէն անգամ մը հեռանալէ ետք վերստին նոյն պղծութիւններուն մէջ կ'իյնան, անոնց վիճակը նախկինէն շատ աւելի գէշ կ'ըլլայ: Աւելի լաւ կ'ըլլար՝ որ անոնք բնաւ մանչցած չըլլային արդարութեան մամբան, քան թէ մանչնալէ ետք՝ հեռանային իրենց աւանդուած սուրբ պատուիրանէն: Ինչքան անոնց կը պատշաճին Առակաց գիրքին սա մշտնապէս առածները. շունը իր փսիածին կը դառնայ. իսկ միւսը՝ խոզը որքան ալ լուսա՝ տիղմին մէջ կը թաւալի»* (Բ.Պտ 2.20-22):

Բնագիրին մէջ գործածուած «մանչնալ» բառը տեսական մանաչողութեան ակնարկութիւնն չէ: Մեկնիչներ միաձայնութեամբ կը հաստատեն, որ «մանչնալ» բառին համար գործածուած Յունարէն «էրիկնօսիս» բառը «ամբողջական մանաչողութիւն» իմաստը ունի: Ուրեմն, այստեղ բնագիրը կ'ակնարկէ այնպիսի մարդոց, որոնք խորապէս մանչնալէ ետք զՔրիստոս եւ ընդունելէ ետք գայն իբրեւ Փրկիչ, անոր հետ սերտ եւ ջերմ յարաբերութիւն մշակելէ ետք, դարձեալ հեռացան անկէ:

Նոյն «նանչնալ» «Էրիկնօսիս» բառը գործածուած կը գտնենք Եփ 4.13, Կղ 2.2, Հո 1.28, Ա.Տմ 2.4-ին մէջ: Յիշենք ասոնցմէ միայն առաջինը. «Մինչեւ բոլորս հասնինք հաւատքի ամբողջական միութեան եւ Աստուծոյ Որդիին նանաչողութեան. այսինքն՝ մինչեւ հաւատքի չափահասութեան, Քրիստոսի կատարեալ նմանութեան» (Եփ 4.13): Շատ հետաքրքրական է, որ այստեղ, Աստուծոյ Որդիին նանչնալ, կը նշանակէ հասնիլ հաւատքի չափահասութեան եւ դառնալ Քրիստոսի կատարեալ նմանութիւնը: Ի՞նչ ցոյց կու տայ այս իրողութիւնը: Ցոյց կու տայ, որ Բ.Պտ 2.20-22-ը կը խօսի այնպիսի մարդոց մասին, որոնք հասնելէ ետք հաւատքի չափահասութեան եւ դառնալէ ետք Քրիստոսի կատարեալ նմանութիւնը, կամաւորաբար վերստին լքեցին զՔրիստոս: Հիմա դո՛ւք ըսէք, սիրելի՛ ընթերցողներ, դարձի եկած մը կրնա՞յ իր փրկութիւնը կորսնցնել, Քրիստոսի արիւնոյ արդարացած մարդ մը կրնա՞յ դարձեալ հեռանալ իր արդարութենէն:

Աստուած կու տայ պատասխանը այս հարցումներուն ըսելով. «Եթէ արդարը իր արդարութենէն դառնայ ու ամբարիշտին ըրած բոլոր գարշութիւններուն պէս անօրէնութիւն գործէ, պիտի ապրի՞: Անոր ըրած արդար գործերէն ո՛չ մէկը պիտի յիշուի. անիկա իր ըրած յանցանքին ու գործած մեղքին համար պիտի մեռնի» (Եգ 18.24): Այս համարը ցոյց չի՞ տար որ Քրիստոսով արդարացած մարդը վերստին կրնայ հեռանալ իր արդարութենէն: Շատ մարդիկ կան որոնք հաւատքի գալէ եւ Սուրբ Հոգիին հաղորդակից դառնալէ ետք, նախընտրած են վերստին աշխարհի հաղորդակցութեան վերադառնալ:

Այս իրողութիւնը չէ՞ որ մատնանիշ կ'ընէ Պօղոս առաքեալ երբ կ'ըսէ. «Անոնք որ անգամ մը լուսաւորուելով մկրտուելէ, երկնային պարգեւները վայելելէ, Սուրբ Հոգիին հաղորդակից դառնալէ, Աստուծոյ բարի խօսքը նաշակելէ եւ հանդերձեալ աշխարհի սքանչելիքներուն նախաճաշակը առնելէ ետք՝ իրենց հաւատքը կը լքեն, այդպիսիները կարելի չէ երկրորդ անգամ ապաշխարութեան բերել» (Եբր 6.4-6): Այս համարը շատ յստակ կերպով ցոյց կու տայ, որ ոեւէ մարդ փրկութեան պարգեւը ընդունելէ ետք, կրնայ վերստին զանիկա կորսնցնել եթէ երբեք լքէ իր հաւատքը: Նման պարագայի մը, «մարդուն վերջը իր նախկին վիճակէն աւելի գէշ կ'ըլլայ» (Մտ 12.45 Հմմտ Ա.Պտ 2.20):

Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Այլեւ Քրիստոսի մաս կը կազմենք, եթէ մինչեւ վերջ անխախտ պահենք սկիզբէն մեր ձեռք բերած վստահութիւնը» (Եբր 3.14): Ի՞նչ է այստեղ ուսուցուածը: Ուսուցուածը այն է, որ ոեւէ մէկը որ կը դառնայ Քրիստոսի եւ կը վստահի անոր, այլեւ Քրիստոսի մաս կը կազմէ: Տուեալ համարին մէջ սակայն բառ մը կայ որ պէտք չէ վրիպի մեր ուշադրութենէն: Այդ բառը «եթէ» բառն է: «Եթէ մինչեւ վերջ անխախտ պահենք...»: Քանի որ «եթէ»ի հարց մը կայ, կը նշանակէ որ կարելիութիւնը կայ կորսնցնելու մեր փրկութիւնը: «Եթէ»-ին ներկայութիւնը թոյլ չի՛ տար որ մենք զմեզ ապահովագրուած նկատենք:

Նոյն իմաստն ու նշանակութիւնը ունի Քրիստոսի հետեւեալ խօսքը. «Ով որ մինչեւ վերջը դիմանայ, անիկա պիտի փրկուի» (Մտ 10.22): Ո՞վ է որ պիտի փրկուի. ան՝ որ մինչեւ վերջը դիմանայ: Բայց ո՞վ կրնայ ըսել որ ինք մինչեւ վերջը պիտի դիմանայ: Դարերու ընթացքին, անհամար թիւով հաւատացեալներ յարուցուող նեղութիւններուն դիմաց՝ հեռացան քրիստոնէական իրենց հաւատքէն: Ահա թէ ինչո՞ւ Պօղոս կ'ըսէ. «*Չըլլայ որ ռել մէկը իր համոզումներուն մէջ խախտի ներկայ նեղութիւններուն պատճառով*» (Ա.Թս 3.3): Այլուր, կ'ըսէ. «*Ով որ կը կարծէ թէ կանգուն է՝ թող զգոյշ ըլլայ որ չհյնայ*» (Ա.Կր 10.12): Առաքեալը պիտի չզգուշացնէր հաւատացեալ մարդը իյնալէ եթէ երբեք իյնալու կարելիութիւնը միշտ բաց չըլլար անոր առջեւ:

Հոս կ'ուզեմ անդրադառնալ շատ կարեւոր կէտի մը: Քրիստոնէական եկեղեցին կ'ուսուցանէ որ Աստուած մարդուն ազատ կամք տուած է: Այս ուսուցումը կը հաստատուի Բ.Օր 30.19-ի վրայ որ կ'ըսէ. «*Այսօր երկինքն ու երկիրը վկայ կը բռնեմ ձեզի, որ կեանքն ու մահը, օրհնութիւնն ու անէծքը ձեր առջեւ դրի: Ուրեմն կեանքը ընտրէ որպէսզի ապրի՜ դուն եւ քու սերունդդ*»: Ինչո՞ւ յիշեցի այս մէկը: Ի՞նչ կապ ունի «ազատ կամք» հասկացողութիւնը գՔրիստոս ֆանչնալուն եւ զանիկա վերստին ուրանալուն հետ: Շատ սերտ կապ ունի:

Աշխարհի մէջ ապրող ամէն մէկ մարդ էակ կրնայ իր սիրտը բանալ Քրիստոսի առջեւ եթէ ուզէ: Կարեւոր նշմարտութիւնը որ մեր միտքէն պտտէ չէ վրիպի հետեւեալն է. մարդ արարծը իր ազատ կամեցողութեամբ կրնայ Քրիստոսի գալ եւ իր ազատ կամեցողութեամբ կրնայ դարձեալ հեռանալ Քրիստոսէ: Դարձի եկող մարդը չի կորսնցներ իր ազատ կամեցողութեան պարգեւը: Քանի որ մարդը ազատ կամք ունի իր դարձի գալէն առաջ եւ քանի որ դարձի գալէն ետք կը շարունակէ պահել իր ազատ կամքը, ուրեմն, Քրիստոսէ հեռանալու վտանգը միշտ ի գօրու է:

Ոմանք կը հաստատեն որ նշմարտապէս դարձի եկած եւ Քրիստոսի սէրը ըմբռնած մարդը չի կրնար հեռանալ Քրիստոսէ: Այս խօսքը մարդուն զգացումին արտաբերումը եղող խօսք մըն է: Որքան ալ թուի որ գեղեցիկ խօսք մըն է ատիկա, սակայն, չի դադրիր Սուրբ Գիորգի ուսուցման հակառակ ըլլալէ: Եթէ երբեք դարձի եկող մարդ մը կորսնցնէր իր ազատ կամքը, այդ պարագային միայն կարելի պիտի ըլլար ըսել, որ գՔրիստոս նշմարտապէս ֆանչնող մը չի կրնար վերստին հեռանալ Անկէ:

Ընթերցող եղբայր, Աստուածաշունչը կը հաստատէ, որ Սուրբ Հոգին կրնայ իջնել մեր վրայ, եւ սակայն, մեր անհնազանդութեան պատճառով կրնայ վերստին հեռանալ մեզմէ: Յիշեցէք որ իջաւ Սաւուղին վրայ (Ա.Թգ 10.10) եւ վերստին հեռացաւ անկէ (Ա.Թգ 16.14): Տրուեցաւ մարդուն (Ծն 2.7 Հմմտ Յոր 27.3) եւ դարձեալ առնուեցաւ անկէ (Ծն 6.3): Իջաւ Սամփսոնի վրայ եւ գորացուց զանիկա (Դտ 13.24-25, 14.6) եւ վերստին լքեց զայն (Դտ 16.20): Կրնանք ուրախացնել զԱստուած (Ես 62.5), ուրախանալ Աստուծով (Սղ 40.16, 70.4), բայց նաեւ կրնանք տրտմեցնել

զայն, ահա թէ ինչո՛ւ Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Մի՛ տրտմեցնէ՛ք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով կնքուեցա՛ք փրկութեան օրուան հասնելու համար»* (Եփ 4.30 Հմմտ Ես 63.10): Կրնանք լեցուիլ Սուրբ Հոգիին կրակով (Գրծ 2.3-4), եւ կրնանք միաժամանակ մարել Սուրբ Հոգիին կրակը մեր մէջ (Ա.Թս 5.19): Ի՞նչ ցոյց կու տան այս բոլոր համարները: Տոյց կու տան, որ մարդը կրնայ դարձի գալ Աստուծոյ, նորոգուիլ անոր Հոգիով, եւ սակայն, վերստին հեռանալ անկէ *«երբ նեղութեան եւ Աստուծոյ խօսքին համար հայածանիք ենթարկուի»* (Մտ 13.21):

Միայն նեղութիւնը չէ որ մեզ կրնայ հեռացնել Քրիստոսէ, այլ նաեւ յանճնապաստանութիւնը: Փրկութիւնը Աստուծոյ պարգեւն է (Եփ 2.8): Ոմանք հաւատնով եւ Աստուծոյ շնորհով այդ պարգեւը ստանալէ ետք վերստին զանիկա կը կորսնցնեն, որովհետեւ անոնք սկզբնական շրջանին իրենց հաւատքի կեանքը կը սկսին ապրիլ Աստուծոյ վստահելով, բայց ժամանակի ընթացքին, հետզհետէ կը սկսին աւելի իրենց կատարած գործերուն ապաւինիլ քան Սուրբ Հոգիին ամենօրեայ ներգործութեան: Այդպիսիները կը մոռնան, որ Աստուած իրենց Սուրբ Հոգին շնորհեց Աւետարանի պատգամին հաւատալուն համար եւ ո՛չ թէ Օրէնքը գործադրելուն համար (Գղ 3.5 Հմմտ Ա.Կր 15.2):

Առաքեալը կը յանդիմանէ այդպիսիները ըսելով. *«Սուրբ Հոգիով նոր կեանք սկսելէ ետք այժմ Օրէնքին պահանջներո՞ւն կը դառնա՛ք»* (Գղ 3.3): Եթէ դարձի եկած մըն ես, զգոյշ եղիր այս ծուղակէն մէջ իյնալէ: Ապաւինիր խաչին վրայ Քրիստոսի կատարած քաւութեան «գործին» փոխանակ պարծենալու ողորմելի գործերովդ: Աշխարհի մէջ ո՛չ ոք կրցած է փրկութեան պարգեւը ստանալ շնորհիւ իր սեփական գործերուն (Եփ 2.9): Աստուած ի՛նքն է որ մեզ *«կ'արդարացնէ իր ճիշտէն պարգեւած շնորհովը, Քրիստոս Յիսուսի փրկագործութեան միջոցաւ»* (Հո 3.24, Հմմտ Եփ 1.7, Գրծ 16.31, Բ.Կր 5.21, Ա.Պտ 1.18-19, Հո 4.16) եւայլն:

Եթէ սիրտիդ դուռը բացած ես Քրիստոսի առջեւ եւ հնազանդութիւն ուխտած ես իրեն, շարունակէ հնազան մնալ իրեն, որպէսզի հեռու մնաս փրկութիւնդ կորսնցնելու վտանգէն: Եթէ Քրիստոսի կամքին հնազանդիլ փափաքող մըն ես, մի՛ մտահոգուիր որ կրնաս փրկութիւնդ կորսնցնել: Բայց զգո՛յշ եղիր որ չնմանիս այն մարդուն որ թագաւորին բանակին զինուորագրուելէ ետք, սկզբնական շրջանին երկիւղածութեամբ կը սկսի հնազանդիլ անոր կամքին, բայց հետզհետէ կը սկսի ինքնանկախօրէն գործելու յանդգնիլ: Այսպիսիներուն համար Սուրբ Գիրքը կ'ըսէ. *«Անոնք ապստամբեցան ու անոր Սուրբ Հոգին բարկացուցին»* (Ես 63.10): Անհնազանդութիւնը ապստամբութիւն է Աստուծոյ դէմ: Անհնազանդութիւնը մեզ կ'առաջնորդէ ամբողջական սպառումի (Յես 5.6): Դարձի եկած հաւատացեալը չի՛ կրնար իր փրկութիւնը կորսնցնել եթէ երբեք Աստուծոյ հնազանդ հոգի մը ունի:

Հետեւաբար, հնագանդէ՛ Աստուծոյ եւ խոնարհէ՛ անոր ձեռքին տակ,  
եւ դուն առ յաւէտ ապահով պիտի ըլլաս, եւ հեռու փրկութիւնդ  
կորսնցնելու վտանգէն:



## ԱՍՏՈՒԱՊՈՒՍՏ ԱՏԵՂԾԵՑ ԱՍՏԱՆԱՆ

Հետեւեալը Սատանային եւ անոր չար ոգիներուն եւ դեւերուն մասին շատ համառօտ ձեռնարկ մըն է: Աստուած Սատանան չէ ստեղծած իբրեւ Սատանայ, ինչպէս ոմանք կ'ենթադրեն: Աստուած զանիկա ստեղծեց իբրեւ ֆերովբէ մը (Եգ 28.14), որուն անունն էր Արուսեակ (Ես 14.12): Արուսեակ ֆերովբէն իր ստեղծումէն քանի՞ օր հարիւր կամ քանի՞ օր հազար տարի ետք ըմբոստացաւ Աստուծոյ դէմ եւ Սատանայի վերածուեցաւ, ո՛չ ոք գիտէ: Բայց մեր միտքին մէջ մէկ բան յստակ պէտք է ըլլայ, որ Աստուած զանիկա չստեղծեց իբրեւ Սատանայ կամ որպէսզի Սատանայ ըլլայ: Մեր միտքը յստակացնելու համար տանք հետեւեալ օրինակը. –

Մայր մը իր թագաւոր որդիին համար ամենայն վստահութեամբ կրնայ ըսել. *«Ես ծնայ զինք»*: Բայց միւս կողմէն շատ լաւ գիտեմք որ մայրը զինք իբրեւ թագաւոր չծնաւ, այլ իբրեւ պարզ մանուկ մը: Ան իր ծնելէն ետք էր որ թագաւոր եղաւ օր մը: Հետեւաբար, ինչպէս թագաւորը իր ծնունդէն ետք էր որ թագաւոր եղաւ, այնպէս ալ Սատանան իր ստեղծումէն ետք էր որ Սատանայ եղաւ: Դարձեալ, ինչպէս մանուկը որ թագաւոր եղաւ չի՛ դադրիր իր մօրը ծնունդը ըլլալէ, այնպէս ալ Արուսեակ ֆերովբէն որ Սատանայի վերածուեցաւ, չի դադրիր Աստուծոյ ստեղծագործութիւնը ըլլալէ:

Արուսեակը մեր այսօրուայ իրականութեան մէջ Փայլածուի եւ երկրի միջեւ գտնուող պայծառագոյն մոլորակն է: Հայերէն լեզուին մէջ Արուսեակին կը տրուի նաեւ «Առաւօտեան Աստղ» անունը: Զմոռնանք որ Սատանան ի՛նք նաեւ կոչուած է *«մեծ աստղ մը որ ջահի մը նման կը բորբոքէր»* (Յյտ 8.10):

Պէտք է յիշել որ հրեշտակները իրե՛նք նաեւ կոչուած են աստղ: Մատթէոս «աստղ» բառը կը գործածէ այն հրեշտակին համար որ մոգերը առաջնորդեց Յիսուս մանուկի ծննդատեղին (Մտ 2.9-10): Աստուած Յոբին կը բացատրէ որ երբ ինք կը ստեղծէր աշխարհը *«առաւօտեան աստղերը մէկտեղ փառաբանութիւն կ'ընէին»* (Յոբ 38.7): *«Առաւօտեան աստղեր»* բացատրութիւնը դարձեալ ակնարկութիւն է հրեշտակներու ամբողջ գունդին: Անոնք «աստղ» կոչուած են իրենց լուսեղէն բնութեան պատճառով: Ես 14.13-ին մէջ նաեւ հրեշտակները կոչուած են աստղ: Հոն կը կարդանք. *«Դուն (իսոյքը Արուսեակին ուղղուած է) սիրտիդ մէջ ըսած էիր. – երկինք պիտի ելլեմ ու իմ աթոռս Աստուծոյ աստղերէն վեր պիտի բարձրացնեմ»*: Արուսեակ ֆերովբէն փորձեց իր աթոռը *«Աստուծոյ աստղերէն վեր»* բարձրացնել, այսինքն՝ փորձեց տիրութիւն եւ իշխանութիւն բանեցնել Աստուծոյ բոլոր հրեշտակներուն վրայ:

Արդէն հաստատեցինք որ Սատանան նախապէս Արուսեակ անունով ֆերովբէ մըն էր (Եգ 28.14): Ան հրեշտակապետներէն գերազանց գօրութիւն եւ իշխանութիւն ունէր: Ան ֆերովբէներուն ու սերովբէներուն մէջ հզօրագոյնն էր: Ա՛յս է որ ցոյց կու տայ Աստուծոյ իսոյքը իրեն

ուղղուած. «*Դուն Աստուծոյ դրահտին՝ Եդեմի մէջ էիր, քու ծածկոցդ ամէնէն պատուական քարերէն էին...*» (Եզ 28.13): «Ամէնէն» բառը կ'ապացուցանէ Արուսեակ քերականին ամենագորեղ եւ ամենափառաւոր քերական եղած ըլլալը:

Աստուած Արուսեակ քերականը կը ներկայացնէ իբրեւ «*սարածուած ու ծածկող քերական մը*», իբրեւ «*հրեղէն քարերուն մէջտեղերը*» շրջող մը (Եզ 28.14): «*Տարածուած ու ծածկող*» բացատրութիւնը ակնարկութիւն է Արուսեակին ունեցած լայնածաւալ իշխանութեան եւ տիրութեան: Իսկ «*հրեղէն քարերուն մէջտեղերը*» շրջիլը պատկերացումն է անոր նախապէս ունեցած մեծ փառքին եւ փայլքին: Աստուածաշունչը երբե՛ք մարդ արարածին համար չի գործածեր «*քերական*» անունը: Եթէ երբեք այս նշմարտութիւնը մեր միտքին մէջ ունենանք, որեւէ կասկած չի մնար, որ «*ծածկող քերական*» բացատրութիւնը, ակնարկութիւն է անկեալ Արուսեակ քերականին:

Տակաւին, Աստուած զանիկա կը կոչէ. «*կատարելութեան կնիք*», «*իմաստութեամբ լեցուած*», եւ «*գեղեցկութեան մէջ կատարեալ*» (Եզ 28.12): Աստուած խօսքը շարունակելով կ'ըսէ. «*Դուն նամբաներուդ մէջ կատարեալ էիր, քու ստեղծուած օրէնք մինչեւ այն օրը, երբ քու վրայ անօրէնութիւն գտնուեցաւ*» (Եզ 28.15): Ի՞նչ էր այն անօրէնութիւնը որ Արուսեակ քերականին վրայ գտնուեցաւ:

Այն անօրէնութեան մասին կը կարդանք Եսայի մարգարէութեան մէջ. «*Ով ատուն ծագող Արուսեակ, ի՛նչպէս երկինքէն ինկար ու մինչեւ գետինը կործանեցար, դուն որ ազգերը նկուն կ'ընէիր: Դուն սիրտիդ մէջ ըսած էիր.– երկինք պիտի ելլեմ ու իմ աթոռս Աստուծոյ աստղերէն վեր պիտի բարձրացնեմ եւ ժողովի լեռը, հիւսիսի բովերը պիտի բնակիմ, ամպերու բարձրութիւններուն վրայ պիտի ելլեմ, Բարձրելոյն պիտի նմանիմ*» (Ես 14.12-14): Հետաքրքրական են Արուսեակին բերնին մէջ գտնուող «*պիտի ելլեմ*», «*պիտի բարձրացնեմ*», «*պիտի բնակիմ*», «*պիտի նմանիմ*» բացատրութիւնները: Այս բոլոր «պիտի»ները ցոյց կու տան Աստուծոյ գահը գրաւելու իր նիգր: Ասիկա՛ էր այն անօրէնութիւնը որ իր վրայ գտնուեցաւ:

Ան ուզեց Աստուծոյ նման ըլլալ: Վերոյիշեալ մէջբերումին վերջին տողը զօրեղապէս կ'ապացուցանէ այս նշմարտութիւնը. «*ամպերու բարձրութիւններուն վրայ պիտի ելլեմ, Բարձրելոյն պիտի նմանիմ*»: Աստուածաշունչը ցոյց կու տայ որ ամպը Աստուծոյ ներկայութեան խորհրդանիշ է. յիշեմք քանի մը օրինակներ. «*Աստուած ամպը իրեն կառք կ'ընէ*» (Սղ 104.3): «*Տիրոջը փառքը ամպին մէջ երեւցաւ*» (Ել 16.10): «*Ամպի մէջ պիտի երեւնամ*» (Դւ 16.2): «*Աստուած ամպերու վրայ կը նստի*» (Բ.Օր 33.26): Հետեւաբար, «*ամպերու բարձրութիւններուն վրայ պիտի ելլեմ*» խօսքը, յստակօրէն ցոյց կու տայ, Արուսեակին աստուածանալու ցանկութիւնը: «*Բարձրելոյն պիտի նմանիմ*» բառերը բացորոշ կերպով նոյն նշմարտութիւնն է որ կը պարզեն:

Արուսեակը փորձեց բայց չկրցաւ Աստուծոյ նմանիլ կամ անոր տեղը գրաւել: Ա՛յս է որ կը պարզէ Աստուծոյ խօսքը իրեն ուղղուած. *«Ով առտուն ծագող Արուսեակ, ի՛նչպէս երկինքէն ինկար ու մինչեւ գետինը կործանեցար»* (Յս 14.12), ինչպէս նաեւ. *«ահա դժոխքը կ'իջնես, գուրիւն խորունկ տեղերը»* (Յս 14.15):

Արուսեակ ֆերովբէն անցեալին միայն մէկ անգամ չէ որ փորձեց Աստուած կամ Աստուծոյ նման ըլլալ, այլ երկու անգամ: Առաջին փորձը կատարեց աշխարհի ստեղծումէն առաջ, որուն մասին խօսեցանք: Երկրորդ փորձը կատարեց Քրիստոսի առաքելութեան սկզբնաւորութեան: Ան Քրիստոսէ պահանջեց որ զինք պաշտէ եւ երկրպագէ: Քրիստոս կտրուկ ձեռով անոր ըսաւ որ մի՛այն զԱստուած պէտք է երկրպագել եւ պաշտել (Մտ 4.9-10): Քրիստոսէ երկրպագութիւն պահանջելը, խորքին մէջ Աստուծոյ փառքը յափշտակելու փորձ մըն է: Իսկ երրորդ անգամ, ժամանակներու աւարտին ան *«Աստուծոյ տանարին մէջ պիտի նստի եւ ինքզինքին համար պիտի յայտարարէ՝ թէ աստուած է»* (Բ.ԹԿ 2.4):

Արուսեակ ֆերովբէն Աստուծոյ դէմ ըմբոստութեան մասնակցեցան հրեշտակներուն մէկ երրորդ մասը: Յայտնութեան գիրքը մեզի կ'ըսէ որ երկինքի մէջ *«տեսնուեցաւ հրեղան մեծ վիշապ մը... որ իր պոչով կը քաշէր կը տանէր երկինքի աստղերուն մէկ երրորդ մասը»* (Յյտ 12.3-4 հմմտ Դն 8.10): Այս «հրեղէն վիշապը» նոյնինքն Արուսեակն էր որ եղաւ Սատանայ *«եւ որ ամբողջ աշխարհը մոլորեցուց եւ երկիր ձգուեցաւ: Անոր հրեշտակներն ալ միասին վար ձգուեցան»* (Յյտ 12.9): *«Աստղերուն մէկ երրորդ մասը»* խօսքը, կը վերաբերի հրեշտակներու մէկ երրորդ մասին, որոնց թիւը հարկաւ չենք գիտեր:

Արուսեակին հետեւող հրեշտակներուն բանակները կազմեցին պիղծ ոգիներուն եւ դեւերուն գունդերը: Այս հրեշտակները *«իրենց տրուած իշխանութեամբ չգոհանալով՝ իրենց սահմաններէն դուրս եկան, եւ Աստուած զանոնք մշտնջենական շղթաներով կապուած կը պահէ խաւարին մէջ, մինչեւ որ դատաստանի մեծ օրը գայ»* (Յդ 6 հմմտ Բ.Պտ 2.4): Այս համարին կապուած կ'արժէ երկու արագ բացատրութիւններ տալ: *Առաջին*.– անկեալ հրեշտակներուն համար կ'ըսուի *«իրենց տրուած իշխանութեամբ չգոհանալով...»*: Այս խօսքը պարզորոշ կերպով ցոյց կու տայ, որ ո՛չ միայն Արուսեակ ֆերովբէն ուզեց ընդարձակել իր իշխանութեան սահմանները, այլ նաեւ իրեն հետեւող բոլոր հրեշտակները: *Երկրորդ*.– անկեալ հրեշտակներուն (պիղծ ոգիներուն եւ դեւերուն) համար գործածուած *«մշտնջենական շղթաներով կապուած»* խօսքը, հարկաւ չի՛ նշանակեր որ անոնք (եւ Սատանան) գուրկ են անհաւատ մարդոց կեանքին միջամուխ ըլլալու իշխանութենէն (հմմտ Բ.Կր 4.4, Բ.ԹԿ 2.9-10): Անոնք սակայն «կապուած» են Քրիստոսի եկեղեցիին կեանքին մէջ. այսինքն՝ անոնք թէպէտ մնայուն կերպով կը պատերազմին հաւատացեալներուն հետ (Եփ 6.12), եւ սակայն, ո՛չ մէկ իշխանութիւն ունին անոնց վրայ:

## Ո՞՞ ՈՒՔ ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԱԾ Է ԴԺՈՒՔԻ ԵՐԹԱԼՈՒ

Որոշ դասակարգի պատկանող մարդոց մօտ կը գտնենք տարօրինակ մտածողութիւն մը, ըստ որուն, «Աստուած նախասահմանած է թէ որո՞նք պիտի փրկուին եւ որո՞նք ոչ»: Աստուածաշունչը սակայն տարբեր բան կ'ուսուցանէ: Ան կ'ուսուցանէ թէ Աստուծոյ փափաքն է, որ բոլոր մարդիկը փրկուին եւ ո՛չ թէ ոմանք միայն: «Ա՛յդ է բարին եւ այդ կը փափաքի Աստուած, մեր Փրկիչը, որ կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին եւ հասնին նշմարտութեան նանաչումին, թէ՛ մէկ Աստուած կայ միայն, եւ Աստուծոյ ու մարդոց միջեւ միակ միջնորդ մը՝ Յիսուս Քրիստոս մարդը, որ ինձգիւնք իբրեւ փրկագին տուաւ **բոլոր մարդոց համար**» (Ա.Տմ 2.3-6): Այլուր, Պօղոս առաքեալ, դարձեալ կը վկայէ որ «Աստուած իր շնորհքը յայտնեց՝ որպէսզի **բոլոր մարդիկ փրկուին**» (Տիտ 2.11): Նո՛յնը կը հաստատէ Պետրոս առաքեալ երբ կ'ըսէ. «Տէրը պարգապէս համբերատարութիւն ցոյց կու տայ ձեզի հանդէպ, որովհետեւ չ'ուզեր որ ոեւէ մէկը կորսուի, այլ՝ կ'ուզէ որ **բոլորն ալ ապաշխարելու առիթ ունենան**» (Բ.Պտ 3.9): Իսկ Յովհաննէ կ'ըսէ. «Անիկա՛ է մեր մեղքերը քաղող **Ջոհր**, որ ինձգիւնք մատուցանեց՝ մեր մեղքերը սրբելու համար. եւ ո՛չ միայն մեր, այլ նաեւ **ամբողջ աշխարհի մեղքերը**» (Ա.Յհ 2.2):

Երբ մէկը կ'որոշէ իր անգիղջ եւ անապաշխար ընթացքին մէջ մնալ եւ այդպէս ալ կը վախճանի, մենք իրաւունք չունինք անոր առած որոշումը վերագրելու Աստուծոյ: Մեծագոյն փաստը որ Աստուած չէ որոշած եւ չ'ուզեր որ մէկը դժոխք երթայ, կը գտնենք Մատթէոսի 25-րդ գլխուն մէջ: Քրիստոս խօսած ատեն յաւիտենական կրակին մասին, կ'ըսէ, որ ատիկա «Սատանային եւ անոր չար հրեշտակներուն համար պատրաստուած է» (Մտ 25.41): Իսկ խօսած ատեն երկինքի արքայութեան մասին, կ'ըսէ, որ ատիկա «աշխարհի սկիզբէն պատրաստուած է» հաւատացեալ եւ օրհնեալ մարդոց համար (Մտ 25.34):

Վերոյիշեալ երկու համարներուն վերաբերեալ, կարելորութեամբ նկատի պէտք է առնել հիմնական երկու կէտեր: *Սոաջին*.-- Աստուածաշունչին մէջ չկա՛յ համար մը որ մեզի ըսէ թէ դժոխքն ու անոր յաւիտենական կրակը պատրաստուած կամ ստեղծուած է որոշ դասակարգի պատկանող մարդոց համար: Տուեալ համարին համաձայն, դժոխքը մի՛այն Սատանային համար պատրաստուած է: *Երկրորդ*.-- Արքայութեան մասին խօսած ատեն Քրիստոս կը գործածէ «սկիզբէն պատրաստուած» բացատրութիւնը, մինչ դժոխքին մասին խօսած ատեն, ան չ'ըսեր «սկիզբէն պատրաստուած», այլ պարգապէս՝ «պատրաստուած»: Երբ մի՛այն արքայութեան համար կը գործածուի «սկիզբէն» բառը, այդ բացորոշ կերպով ցոյց կու տայ, որ Աստուծոյ սկզբնական ծրագիրը կատարելապէս բարին էր: Արքայութեան համար գործածուած «սկիզբէն» բառը թոյլ չի տար ըսելու, որ Աստուած սկիզբէն որոշած է որ որոշ մարդիկ դժոխք նետուին:

Մեր եկեղեցւոյ տեսակետը այն է, որ ամէն մարդ կանչուած է փրկութեան (Ա.Տմ 2.3-4), ամէն մարդ Քրիստոսի արեան գինն է (Ա.Յհ 2.2), ամէն մարդ կրնայ դարձի գալ (Գրծ 3.19, Զբ 1.3, Մդ 3.7), ինկած թէ իյնալու վրայ եղող ամէն մարդ կրնայ վերականգնեցուիլ եւ վերահաստատուիլ Աստուծոյ կողմէ (Սդ 145.14 հմմտ Հո 14.4): Աստուած բոլորի՛ն առիթ կու տայ որ *«դատնան իրենց սխալէն եւ նշմարտութիւնը նանչնան»* (Բ.Տմ 2.25), բոլորի՛ն առիթ կու տայ որ ապաշխարեն (Գրծ 11.18), բոլորի՛ն կ'ուղղէ իր խօսքը ըսելով. *«Արթնցի՛ր, ո՛վ քնացած. դո՛ւրս եկուր մեռելութենէդ, եւ Քրիստոս պիտի լուսաւորէ քեզ»* (Եփ 5.14), բոլորը կը հրաւիրէ իր անձին գալու (Մտ 11.28) եւ կը խոստանայ չմերժել իրեն եկողը (Յհ 6.37):

Ան որ կը մերժէ Քրիստոսի գալ, ի՛նքն է որ ինքզինք նախասահմանած կ'ըլլայ կորսուելու առ յաւէտ եւ ո՛չ թէ Աստուած: Ո՞վ երբեւիցէ եկաւ Քրիստոսի եւ մերժուեցաւ: Ո՞վ բաղիտեց Փրկիչին դուռը եւ չբացուեցաւ իրեն: Ո՞վ խնդրեց եւ չտրուեցաւ իրեն: Ո՞վ փափաքեցաւ հաշտուիլ Աստուծոյ հետ եւ Աստուած մերժեց: Ո՛չ ոքի համար դժոխք նետուելու որոշում տրուած է սկիզբէն: Ո՛չ ոք նախասահմանուած է դատապարտուելու: *«Ո՞վ պիտի դատապարտէ: Յիսուս Քրիստո՞սը, որ մեզի համար մեռաւ՝ բայց մանաւանդ յարութիւն առաւ, եւ հիմա Աստուծոյ աջ կողմն է ու կը բարեխօսէ մեզի համար: Անշուշտ ո՛չ»* (Հո 8.8.34): Մեզի համար յարութիւն առնող Յիսուսը դժուարութիւն պիտի չյարուցանէ մեզի եթէ երբեք ներումի համար դիմենք իրեն:

Ապրած, ապրող եւ ապրելիք բոլոր մարդոց անունները գրուած են կեանքի գիրքին մէջ: Յայտնութեան 3.5-ին մէջ կը կարդանք. *«Ով որ յաղթանակէ՝ այսպէս ներմակ պիտի հագնի. եւ անոր անունը պիտի չջնջեմ կեանքի գիրքէն...»*: «Պիտի չջնջեմ» բացատրութիւնը յստակօրէն ցոյց կու տայ, որ ամէն մարդու անունը կեանքի գիրքին մէջ արդէն գրուած է, բայց որպէսզի շարունակուի գրուած պահուիլ՝ մարդ անհատը պէտք է մղէ հաւատքի բարի պատերազմը: Եթէ երբեք Յյտ 3.5-ը ցոյց կու տայ մարդոց անուններուն արդէն իսկ գրուած ըլլալը, իսկ Ես 44.22-ը ցոյց կու տայ, մարդոց յանցանքներուն եւ մեղքերուն ջնջուած ըլլալը նախքան անոնց դարձը. *«Բու յանցանքներդ՝ մէզի պէս ու բու մեղքերդ ամպի պէս ջնջեցի: Ինծի դարձիր, քանզի քեզ փրկեցի»*: Ուշագրաւ է որ Աստուած չ'ըսեր. *«Ինծի դարձիր, որպէսզի քեզ փրկեմ»*, այլ՝ *«Ինծի դարձիր, քանզի քեզ փրկեցի»*, որ կը նշանակէ, որ Աստուած բոլորս նախասահմանած է փրկութեան:

Նախասահմանութեան հաւատացողները իրենց տեսութիւնը կը հիմնեն Հո 8.28-30-ի վրայ, որ կ'ըսէ. *«Աստուած բարիին համար գործակից կ'ըլլայ անոնց՝ որոնք կը սիրեն զինք եւ իր ծրագիրին համաձայն իրեն կանչուած են: Որովհետեւ, Աստուած զանոնք սկիզբէն կը նանչնար եւ սկիզբէն ալ սահմանեց... եւ սկիզբէն այդ»*

*սահմանուածները նաեւ կանչեց, եւ կանչուածները նաեւ արդարացուց, եւ արդարացածներն ալ փառաւորեց»:*

Տուեալ համարին համաձայն, որո՞նք են անոնք՝ որոնք Աստուծոյ կողմէ սահմանուած են իրե՛ն գալու՝ իրմով արդարանալու եւ փառաւորուելու համար: Այս մարդիկը անոնք են՝ *«որոնք կը սիրեն զինք»*: Անոնք որոնք կը սիրեն զԱստուած՝ իրե՛նց կարգին կը սիրուին Աստուծոյ կողմէ, քանի որ Աստուած ի՛նքն է ըսողը. *«Ես կը սիրեմ զիս սիրողները»* (Առ 8:17): Պարզ է հետեւաբար, որ փրկութեան սահմանուածները զԱստուած սիրող մարդիկն են:

Կարելի՞ քան է որ Աստուած չհանչնայ եւ չարդարացնէ զինք սիրողները: Կարելի՞ քան է որ Աստուած չփրկէ ու չպահէ զինք սիրողները: *«Տէրը բոլոր զինք սիրողները կը պահէ»* (Սղ 145:20): Կարելի՞ քան է որ Աստուած գործակից չըլլայ զինք սիրողներուն: Ամբողջ շեշտը դրրինք աստուածսիրութեան վրայ, որովհետեւ Աստուծոյ ծրագիրն է փրկել զինք սիրողները: Իսկ զԱստուած սիրող մը անկարելի է որ դարձի չգայ Աստուծոյ:

Երբ հանդիպինք զԱստուած չսիրող եւ Աստուծմով չհետաքրքրուող մարդոց, պէտք է մտածենք որ անոնք «նախասահմանուած» են դժոխի բրթալու. ո՛չ ալ պէտք է մտածենք որ անոնց անաստուածսիրութիւնը անոնց «նախասահմանուած» ըլլալուն արդիւնքն է: Անոնց անաստուածսիրութիւնը անոնց նախասահմանուած ըլլալուն արդիւնքը չէ, այլ անոնց ազատ կամքին արդիւնքը: Ո՞վ կը ստիպէ զիրենք չսիրելու զԱստուած: ԶԱստուած սիրելը իրենց կոչումը չէ՞: Ինչո՞ւ տէր չեն կանգնիր իրենց կոչումին:

Սուրբ Գիրքը կը հաստատէ որ Աստուած նախասահմանեց եւ կը նախասահմանէ որ զինք սիրողները փրկուին, բայց բնա՛ւ երբեք չի՛ նախասահմաներ եւ չ՛որոշեր թէ որո՞նք պէտք է զինք սիրեն եւ որո՞նք՝ ո՛չ: Սուրբ Գիրքին մէջ ո՞ւր գրուած է, որ Աստուած նախասահմանեց որ որոշ մարդիկ միայն զինք սիրեն: Աստուածսիրութեան նամբան բա՛ց է բոլոր մարդոց առջեւ անխտիր:

Անոնք որոնք կ'ըսեն. *«Աստուած նախասահմանած է որ ոմանք փրկուին եւ ոմանք ալ կորսուին»*, այդպիսիները զԱստուած մեղադրած կ'ըլլան իբրեւ խտրութիւն դնող եւ կողմնակցութիւն ցուցաբերող մէկը: Պետրոս առաքեալ խօսելով հեթանոսներուն եւ իրենց նկատմամբ Աստուծոյ վերաբերմունքին մասին, կ'ըսէ. *«Աստուած... որեւէ խտրութիւն չդրաւ անոնց եւ մեր միջեւ. այլ որովհետեւ հաւատացին՝ սրբեց անոնց մեղքերը»* (Գրծ 15:9): Այս համարը բացայայտօրէն ցոյց կու տայ, որ Աստուծոյ նպատակը երբե՛ք հեթանոսները կամ անհաւատները յաւիտենական կորուստի մատնելը չէ:

Աստուած խտրութիւն չի՛ դնիր հեթանոսին եւ քրիստոնեային միջեւ, անհաւատին եւ հաւատացեալին միջեւ, կը բաւէ որ անոնք հաւատան Քրիստոսի եւ ընդունին զայն: Նո՛յնը կը պատգամէ Պօղոս առաքեալ.

*«Առանց խտրութեան, բոլոր անոնք որոնք Քրիստոս Յիսուսի կը հաւատան, Աստուծոյ առջեւ կ'արդարանան» (Հո 3.22): Այո՛, Քրիստոսի հաւատացողը՝ կ'արդարանայ, որովհետեւ, «հաւատքին մէջ խտրութիւն չկայ Հրեային ու հեթանոսին միջեւ. բոլորին ալ Տէրը նոյն Տէրն է, որ գթատատ է բոլոր անոնց հանդէպ՝ որոնք զինք կը կանչեն» (Հո 10.12): «Ո՛չ Հրեայի եւ հեթանոսի խտրութիւն կայ, ո՛չ ստրուկի եւ ազատ մարդու, ո՛չ ալ արուի եւ էգի, որովհետեւ Քրիստոսի միանալով՝ բոլորդ ալ մէկ եղաք» (Գղ 3.28):*

Աստուծոյ սիրտին փափաքն է աշխարհի բոլոր մարդոց միջեւ իրագործուած տեսնել եղբայրական մէկութիւն մը (Յե 10.16 Հմմտ Յե 17.11): Աստուծոյ նպատակն է որ տիեզերքի մէջ ապրող իւրաքանչիւր մարդ էակ դառնայ անդամ Քրիստոսի մարմինին: Սուրբ Գիրքն ալ նոյնը կը հաստատէ երբ կ'ըսէ. «Աստուծոյ ծրագիրը սա է, որ Աւետարանին միջոցաւ բոլոր ազգերն ալ Աստուծոյ ժողովուրդին ժառանգակից ըլլան, դառնան նոյն մարմինին անդամ, եւ բաժնեկից այն խոստումին՝ որ Աստուած իրագործեց Քրիստոս Յիսուսով» (Եփ 3.6):

Սիրելի՛ բարեկամ, Աստուած չ'ուզեր որ ոեւէ մէկը զրկուի իր շնորհէն (Եբր 12.15) եւ տալիք յաւիտենական հանգիստէն (Եբր 4.11), ահա թէ ինչո՛ւ ըսաւ. «Ինծի՛ եկէ՛ք դուք **բոլորդ...**» (Մտ 11.28): Հրաւերը ուղղուած չէ ոմանց, այլ՝ բոլորին: Ա՛յս է շիտակը: Բայց մարդիկ «շիտակ խօսողէն կը զգուիին» (Ամս 5.10): Այսպիսի մարդիկ «միշտ կ'ուզեն գիտնալ, բայց երբեք նշմարիտ գիտութեան չեն հասնիր» (Բ.Տմ 3.7):

## ՈՒՐ ՈՐ Է ՁԵՐ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ, ՀՈ՛Ն Է ՁԵՐ ՍԻՐՏԸ

«*Ձեր հարստութիւնը ո՛ր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը*» (Մտ 6.21): Եթէ երբեք մեզի համար հարստութիւնը Աստուածն ու աստուածայինն է, երկինքն ու երկնայինն է, այդ պարագային մեր սիրտերը այդ բոլորին մասին խորհրդածող, այդ բոլորը ցանկացող, այդ բոլորով սնանող եւ յագեցող սիրտեր պիտի ըլլայ: Ուր որ է մարդուն գանձը, հո՛ն կ'ըլլան նաեւ անոր մտածումներն ու զգացումները: Մարդը իր ուշադրութիւնը կը կեդրոնացնէ այն բաներուն վրայ որ կը սիրէ եւ որոնց կապուած է իր ամբողջ սիրտով:

Եթէ կը սիրենք աշխարհի բաները փոխանակ Աստուծոյ ԲԱՆԸ սիրելու, մեր սիրտերը կեդրոնացած պիտի ըլլան գնայունին վրայ. իսկ եթէ կը սիրենք գՔրիստոս, կը սիրենք անոր ծառայել, անոր գործին նուիրուիլ, անոր կամքը կատարել, այդ պարագային, մեր սիրտերուն ուշադրութիւնը կեդրոնացած պիտի ըլլայ երկինքին եւ անոր յաւիտենական արժէքներուն վրայ: Ըսել ուզածս այն չէ, որ մենք պէտք է անտեսենք եւ բնա՛ւ ուշադրութիւն չդարձնենք մեր երկրաւոր կեանքներուն: Երկրաւոր կեանքը Աստուծոյ պարգեւն է: Աստուած չ'ուրախանար եթէ անտեսենք մեր երկրաւոր կեանքերը: Աստուած կ'ուզէ որ մտածենք մեր երկրաւոր կեանքին մասին եւ կազմակերպենք զանիկա: Երկրաւոր կեանքին մասին մտածելը ո՛չ սխալ է եւ ո՛չ ալ մեղք. բայց կը դառնայ սխալ եւ մեղք, երբ կը մերժենք տալ կայսրին ինչ որ կայսրին կը պատկանի եւ տալ Աստուծոյ ինչ որ Աստուծոյ կը պատկանի (Մտ 22.21):

Ի՞նչն է այն «բանը» որ Աստուծոյ կը պատկանի եւ պէտք է Աստուծոյ տալ: Աստուծոյ պատկանող «բաները» մեր անձերն են: Ինքզինք Աստուծոյ չյանձնող մարդը, Աստուծոյ բաժինն է որ Աստուծոյ ձեռքերէն իլած կ'ըլլայ: Բոլոր անոնք որոնք ապաշխարութեամբ Աստուծոյ կը յանձնուին, փրկութեան գանձը ձեռք ձգած կ'ըլլան: Փրկութեան գանձը երկրի վրայ է որ ձեռք կը ձգենք, եւ ապա զանիկա երկինք «կը դրկենք», այսինքն՝ մեր փրկութեան պահպանումը Աստուծոյ կը վստահինք: Ոչինչ կրնայ պատահիլ երկրէն երկինք «դրկուած» որեւէ բանի: Ո՛չ մէկ գող կրնայ կտրել արքայութեան հզօր դուռը եւ մեզ կողոպտել Արքային գիրկէն: Ո՛չ չար ոգիներ եւ ո՛չ ալ չար ոգիներուն իշխանը՝ Սատանան, կրնան մեզ չարախօսել մեր Բարեխօսին ներկայութեան: Մահը չի՛ կրնար մուտք գործել երկինք ուր կեանքի աղբիւրը՝ Քրիստոս կ'ապրի: Ժանգը չի՛ կրնար ոտնձգութիւն ընել երկինքի սահմաններէն ներս, ուր կը գտնուի իրական Ոսկին՝ Աստուած:

Յորի գիրքը կ'ըսէ. «*Ամենակարողը ինչ ունից է եւ ինչ թանկագին արծաթը*» (Յոր 22.25): Եթէ մեր երկրաւոր կեանքի ընթացքին ընդունած ենք զԱստուած իբրեւ մեր ոսկին եւ թանկագին արծաթը (Յոր 22.25), բնականօրէն մեր սիրտերը անոր կապուած եւ անոր սիրով ու խաղաղութեամբ լեցուած պիտի ըլլան երկրի վրայ եղած մեր ատեն թէ



երկինքի մէջ: Երանի՛ անոնց, որոնք զԱստուած կը նկատեն իրենց հարստութիւնը եւ այդ հարստութեան մէջ կը գտնեն իրենց ուրախութիւնն ու երջանկութիւնը: Երանի՛ անոնց, որոնք կ'ընդունին որ «աներեւակայելի գանձ մըն է Քրիստոս» (Եփ 3.8): Այո՛, Քրիստոս պարզապէս գանձաբաշխ մը չէ, այլ բաշխուած գանձն իսկ: Աստուած լոկ հարստացնող մը չէ, այլ հարստութիւնն իսկ: Ուրեմն, նշմարիտ հարստութեան ցանկացողը, Աստուծոյ է որ ցանկացած կ'ըլլայ:

*«Ձեր հարստութիւնը ո՛ւր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը»:* Սիրելի՛ ընթերցող, ո՞ւր է քու հարստութիւնդ: Ի՞նչ բանը քեզի համար կը ներկայանայ իբրեւ գերագոյն արժէք: Ի՞նչ կը փափաքես ամէն բանէ աւելի: Կը փափաքի՞ս մանչնալ գՔրիստոս: Ի՞նչ է կեանքիդ մեծագոյն նպատակը: Ի՞նչ բան քու մտածումներուդ առանցքային բաժինը կը գրաւէ: Ի՞նչ բան առօրեայ քու մտահոգութիւններուդ գլխաւորագոյնը կը կազմէ: Այս հարցումներուն պատասխանը գտնելդ, պիտի օգնէ քեզի գիտնալու թէ ի՛նչ է քեզի համար հարստութիւնը եւ թէ ո՛ւր կը գտնուի սիրտդ: Ի՛նչ բանի որ կը ցանկաս, սիրտդ այդ բանին քով կ'ըլլայ: Եթէ քու ցանկութիւնդ Աստուծոյ հետ ապրիլ եւ ըլլայ է, այդ պարագային սիրտդ անոր մօտ պիտի ըլլայ:

Աստուծոյ յանձնուող սիրտ մը, իր հարստութիւն դիզած կ'ըլլայ երկինքի մէջ, ուր ցեցն ու ժանգը չեն կրնար փնացնել գայն, եւ ո՛չ ալ գողերը կրնան պատը քանդելով ներս մտնել եւ գողնալ (Մտ 6.20): Ո՞ւր է կամ ի՞նչ է այն երկինքը ուր մեր հարստութիւնը պէտք է դիզենք: Երկինքը խիստ բարձրերը գտնուող անծայրածիր պարապութիւն մը ներկայացնող վիճակ մը չէ, ո՛չ ալ տեղ մըն է, ուր ննջող հաւատացեալները կ'երթան եւ կը սպասեն: Երկինքը Աստուծոյ ներկայութեան խորհրդանիշն է: Ո՛ւր որ է Աստուած, հո՛ն է երկինքը: Ո՛ւր որ Աստուծոյ ներկայութիւնը կը փնտոտուի եւ կը վայլեցուի հո՛ն է երկինքը: Ո՛ւր որ Աստուած կը պաշտուի եւ կը սիրուի հո՛ն է երկինքը:

Հետեւաբար, *«երկինքի մէջ հարստութիւն դիզել»*, կը նշանակէ գանիկա դիզել Աստուծոյ քով, անոր գրկին մէջ, անոր տրամադրութեան ներքեւ: *«Երկինքի մէջ հարստութիւն դիզել»*, կը նշանակէ գՔրիստոս շահիլ իբրեւ պաշտպանը մեր յաւիտենականութեան: ԶԱստուած պաշտող մարդը հարստութի՛ւն է որ դիզած կ'ըլլայ երկինքի մէջ: Իր նմանը սիրող մարդը, սիրոյ գա՛նձ է որ ունեցած կ'ըլլայ երկինքի մէջ: Երկինքի մէջ հարուստ եւ հարստութիւն ունեցող պիտի նկատուին բոլոր անոնք՝ որոնք իրենց երկրաւոր կեանքի ընթացքին, զԱստուած ընդունած են իբրեւ իրենց երկնաւոր Հայրը, եւ իրենց նմանը՝ իբրեւ իրենց եղբայրն ու քոյրը:

Եթէ երկինքը մեր գանձատունն է, հոն միայն երկնային եւ յաւիտենական արժէք ունեցող բաներ կրնան դիզուիլ: Երկինքի գանձատան մէջ նիւթական ոսկիին ու արծաթին համար տեղ չկայ: Իրական գանձերը աստուածապարգեւ սէրն ու հաւատքն են: Մեր կողմէ

ցուցաբերուած հաւատքն ու սէրը իբրեւ մեծ հարստութիւն կը դիզուին երկինքի գանձատան մէջ:

Երբ աղփատ մարդու մը ողորմութիւն կու տանք, վիրաւոր սիրտ մը կը սփոփենք, խոցոտուած հոգի մը կ'ամոքենք, երկինքի գանձատան մէջ հարստութիւն դիզած կ'ըլլանք (Մտ 19.21): Երբ կը յաջողինք կորսուած հոգի մը Քրիստոսի առաջնորդել, նշմարտութենէն հեռացած մը նշմարտութեան բերել, անյոյս մը յոյսով գօտեպնդել, աստիճան մեզի համար երկինքի մէջ իբրեւ հարստութիւն պիտի սեպուին: Երբ մեր ստացուածքներուն յափշտակուիլը ուրախութեամբ կ'ընդունինք, երբ կ'անիրաւուինք եւ կը լռենք, կը նախատուինք եւ կը համբերենք, կ'ատուինք եւ կը սիրենք, ասո՛նք ալ հարստութիւններ են, որոնք մեր հաշույն կ'աւելնան երկինքի մէջ: Այնպիսի հարստութիւններ, *«որոնք մնայուն են»* (Եբր 10.34):

Աստուծոյ յանձնուող մարդը մնայուն հարստութիւն կ'ունենայ երկինքի մէջ: Ան որ Աստուծոյ կը յանձնուի, իրեն համար իրական գանձը կը դառնայ երկնայինն ու յաւիտենականը: Եթէ մեզի համար իրական գանձը երկնայինն է, այդ պարագային երկնային սիրտեր կ'ունենանք. սիրտեր, որոնք լեցուն կ'ըլլան Սուրբ Հոգիին զօրութեամբ, աստուածահաճոյ կեանք մը ապրելու վառ փափաքով, երկնային ձգտումներով, եւ Աստուծոյ կամքը կատարելու պատրաստակամութեան կրակով:

Սիրելի՛ ընթերցող հայորդի, բանի որ մեր Տէրը կը հաստատէ, որ մեր հարստութիւնը ո՛ր որ է, հոն կ'ըլլայ նաեւ մեր սիրտը, եւ կ'ուզեմ հարց տալ քեզի, ո՞ր է հարստութիւնդ, ի՞նչ բանի մէջ կը տեսնես ինչ հարստութիւնդ: Աստուծո՞յ մէջ, թէ Աստուծոյ պարգեւը եղող երկրաւոր կեանքիդ պայմաններուն մէջ: Աստուծո՞ւմ եկող փառքի՞ն մէջ, թէ մարդոց կողմէ քեզի համար հիւսուած գեղեցիկ խօսքներուն եւ պայթեցուած ծափահարութիւններուն մէջ: Բարձրեալ Աստուծոյ հետ ունեցած յարաբերութեա՞նդ մէջ, թէ բարձրադիրք մարդոց հետ ունեցած կապիդ մէջ: Իմաստութեանդ եւ գիտութեա՞նդ մէջ, թէ Քրիստոսի մէջ, որուն *«մէջ ծածկուած կը գտնուի Աստուծոյ իմաստութեան ու գիտութեան ամբողջ գանձարանը»* (Կղ 2.3):

Ըսէ՛ ինծի, ո՛վ մարդ, ի՞նչ բանի մէջ կը տեսնես ինչ հարստութիւնդ. առողջութեա՞նդ մէջ, Ֆիզիքական զօրութեա՞նդ մէջ, ունեցուածքի՞դ մէջ, նառախօսութեանդ կարողութեա՞նդ մէջ, մարդոց կողմէ քեզի հանդէպ ցուցաբերուած սիրոյն եւ յարգանքի՞նդ մէջ, քեզմով ուրախացող եւ քեզ ուրախացնող մարդո՞ց մէջ, կամքդ կատարող եւ փափաքներդ իրականացնող անհատներո՞ւն մէջ: Քեզի համար հարստութիւնը մարդոց հետաքրքրութեան եւ պաշտամունքին առարկան դառնա՞լն է, մարդոց կողմէ փնտռուի՞լն է, մեծարուի՞լն է, գնահատուի՞լն է, բարձրացուի՞լն է, փառաւորուի՞լն է:

Այս բոլորը, երկրի վրայ դիզուելիք հարստութիւններ են. հարստութիւններ, որ «ցեցն ու ժանգը կը փնացնեն եւ կամ գողերը պատդ քանդելով ներս կը մտնեն ու կը գողնան» զանոնք (Մտ 6.19): Զուր տեղ չէ որ Քրիստոս կը գործածէ «ցեց», «ժանգ» եւ «գող» բացատրութիւնները: Ցեցը կը փնացնէ հիւսկեղէն եւ հագուստեղէն աշխարհը: Ժանգը կը փնացնէ երկաթեղէն եւ պղնձեղէն աշխարհը: Իսկ եթէ գողին առիթը ընծայուի, ան կը փնացնէ ամէն բան, ներառեալ նոյնիմֆն մարդ արարծը: Մարդուն երկրաւոր կեանքին բոլոր երեսները, անոր հաւաքած ամէն ինչը, եւ նոյնիսկ իր սեփական կեանքը, այս երեքէն մէկով կամ միւսով կրնայ ամբողջապէս փնանալ: Հետեւաբար, Քրիստոսի այստեղ մեզի սորվեցուցածը այն է, որ չդիզենք մեր հարստութիւնը երկրի վրայ ուր ո՛չ մէկ բան ապահով է եւ մնայուն:

Սիրելի՛ ընթերցող, անմտութիւն է հարստութիւն դիզել այնպիսի տեղ մը ուրկէ շուտով պիտի հեռանանք: Անմտութիւն է դիզել այնպիսի հարստութիւն մը, որ մեր դատապարտութեան պատճառ պիտի դառնայ: Քեզ կը հրաւիրեմ, որ կեանքդ, իբրեւ ամենաթանակգին գանձ, յանձնես Քրիստոսի, որպէսզի օր մը, զանիկա քեզի վերադարձնէ աւելի՛ գեղեցկացած, աւելի՛ կատարեալ եւ աւելի՛ սրբուած:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱԺԻՆԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒԷՔ ԿԱՅՍՐԻՆ ԲԱԺԻՆԸ ԿԱՅՍՐԻՆ ՏՈՒԷՔ

Փարիսեցիները գՔրիստոս փորձելու համար, իրենց աշակերտներէն ոմանք դրկեցին անոր, որպէսզի անոր հարցնեն. *«Մեր Օրէնքին համաձայն պէ՞տք է կայսրին տուրք տանք, թէ ոչ»* (Մտ 22.17): Քրիստոս անոնցմէ պահանջեց ցոյց տալ իրեն տուրքի արծաթ դրամ մը: Երբ անոնք բերին դրամը, Քրիստոս ըսաւ. *«Ասիկա որո՞ւն պատկերն ու արձանագրութիւնն է»:* *«Կայսրին»* պատասխանեցին անոնք: Յիսուս եզրակացուց ըսելով. *«Գացէ՛ք եւ ինչ որ կայսրին կը պատկանի՝ կայսրին տուէ՛ք, եւ ինչ որ Աստուծոյ՝ Աստուծոյ տուէ՛ք»:* (Մտ 22.21):

«Աստուած եւ կայսր» բացատրութեան տակ ոմանք հասկցած են «կրօնք եւ պետութիւն», իսկ ուրիշներ, գայն ակնարկութիւն կը նկատեն «երկնաւոր եւ երկրաւոր կեանքերուն»: Երկու բացատրութիւններն ալ մի՛շտ են: Անոնք զիրար չեն հակասեր, այլ կ'ամբողջացնեն: Աստուծոյ կամքին հնազանդող մարդը երբե՛ք ալ պետական իշխանութեանց թշնամութիւն ըրած պիտի չըլլայ: Աստուծոյ գաւակը դարձած *«ամէն մարդ պէտք է հնազանդի պետական իշխանութեանց, որովհետեւ առանց Աստուծոյ թոյլտուութեան իշխանութիւն չի կրնար ըլլալ, եւ գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծմէ կարգուած են»* (Հո 13.1):

Շատ կարեւոր մշմարտութիւն մը կայ որ մեր ուշադրութենէն պէտք չէ խուսափի: Զուր տեղ չէ որ Քրիստոս արծաթ դրամի մը օրինակը կու տայ երբ կը խօսի երկնաւոր եւ երկրաւոր իրականութեանց հանդէպ մեր ունեցած պարտականութեանց մասին: Բոլորս ալ գիտենք որ դրամը երկու երես ունի: Եթէ երբեք ուզենք խորհրդանշականօրէն բացատրել այս իրողութիւնը, կարելի է ըսել, որ դրամին մէկ երեսը կը ներկայացնէ երկնաւոր կեանքը, իսկ միւս երեսը կը ներկայացնէ մեր երկրաւոր կեանքը: Հետեւաբար, Քրիստոս դրամին օրինակը տալով, մեզի սորվեցուցած կ'ըլլայ երկու բան.

*Առաջին*.– Քրիստոնեայ մարդը պարտաւորութիւն ունի ե՛ւ Աստուծոյ նկատմամբ ե՛ւ երկրաւորին նկատմամբ: Առաջալը երբե՛ք չի յանձնարարեր մեզի անտարբեր եւ անպատասխանատու ըլլալ երկրաւոր իշխանութեանց հանդէպ, ընդհակառակը, ան կը պատուիրէ հնազանդիլ անոնց, եւ քայլ մըն ալ անդին անցընելով կ'ըսէ. *«Անոնցմէ (երկրաւոր իշխանութիւններէն) իւրաքանչիւրին հանդէպ ձեր պարտաւորութիւնը կատարեցէ՛ք, տուրքը տալով անոր՝ որուն տուրք պէտք է տաք, մաքսը տալով անոր՝ որուն մաքս պէտք է տաք, հնազանդելով անոր՝ որուն հնազանդութիւն կը պարտիք եւ յարգելով ան՝ որուն յարգանք կը պարտիք»* (Հո 13.7): Ուշագրաւ է որ աշխարհին տրուելիք բաները տուրք, մաքս, հնազանդութիւն եւ յարգանք են, եւ ո՛չ թէ կեանք եւ սիրտ, միտք եւ հոգի: Վերջիններս Աստուծոյ բաժինն են: Աստուծոյ բաժինը Աստուծոյ պէտք է տանք: Մեր կեանքերը Աստուծոյ կը պատկանին երկու

իմաստով: (1) Նախ որովհետեւ ի՛նք մեզ ստեղծած է եւ (2), որովհետեւ իր Որդիին արիւնով մեզ գնեց: Ինչպէս մեզմէ գնուած որեւէ առարկայ ա՛լ մեզի չի պատկանիր, այնպէս ալ մեզմէ գնուած մեր անձերը, ա՛լ կը դադրին մեր սեփականութիւնը ըլլալէ:

*Երկրորդ*.– Վերեւ հաստատեցիմք, որ դրամին երկու երեսները կը ներկայացնեն երկնաւոր եւ երկրաւոր կեանքերը: Ինչպէս կարելի չէ դրամին երկու երեսները իրարմէ բաժնել, այնպէս ալ կարելի չէ մեր երկրաւոր կեանքն ու մեր երկնաւոր կեանքերը իրարմէ անկախ սեպել: Դարձեալ, ինչպէս դրամին մէկ երեսը շարունակութիւնն է միւս երեսին, այնպէս ալ մեր երկնաւոր կեանքը շարունակութիւնը պիտի ըլլայ մեր երկրաւոր կեանքին:

*«Ինչ որ կայսրին կը պատկանի՝ կայսրին տուէք, եւ ինչ որ Աստուծոյ՝ Աստուծոյ տուէք»:* Ի՞նչն է այդ բանը որ Աստուծոյ կը պատկանի եւ հետեւաբար Աստուծոյ պէտք է տալ: Աստուծոյ պատկանող «բանը» մեր անձերն են, մեր սիրտերը, մեր կեանքերը, մեր մարմիններն ու գօրութիւնը, մեր կարողութիւններն ու շնորհքները, մեր ժամանակն ու պատրաստակամութիւնը, մեր սէրն ու վստահութիւնը: Ինքզինք Աստուծոյ տրամադրութեան ներքեւ դնող մարդը, դաւաճան եւ ուրացող պիտի չնկատուի պետական իշխանութեանց ակնոցով: Աստուածասէր եղող մարդը կը յարգուի պետական իշխանութեանց կողմէ եւ կը սիրուի Աստուծոյ կողմէ:

Քրիստոս երբե՛ք կրօնք եւ պետութիւն գիրար հակադրող իրականութիւն իբրեւ չներկայացուց: Քրիստոնէութիւնը որ մեզ երկինքի փառաբացիներ կը դարձնէ, երբե՛ք չ՛արտօնէր մեզի որ ուրանանք մեր պարտականութիւնները իբրեւ երկրափառաբացիներ: Այն մարդը որ լաւ երկրափառաբացի մը չէ, չի կրնար երկնափառաբացիութեան պարգեւը ձեռք ձգել: Երկրաւոր կեանքը Աստուծոյ ժամանակաւոր պարգեւն է մեզի տրուած: Այդ պարգեւին տէր չկանգնող եւ այդ պարգեւը Աստուծոյ փառքին եւ ընկերութեան բարիքին համար չօգտագործող մարդը, պիտի չկրնայ տիրանալ ա՛յն կեանքին, որ երկնաւորն է եւ յաւիտենական:

*«Ինչ որ կայսրին կը պատկանի՝ կայսրին տուէք, եւ ինչ որ Աստուծոյ՝ Աստուծոյ տուէք»:* Եկէք փիչ մը աւելի խորը թափանցենք այս խօսքին: Քրիստոսի ժամանակ ամբողջ Պաղեստինը Հռոմէական կայսրութեան իշխանութեան ներքեւ կը գտնուէր: Կայսրին պատկերն ու արձանագրութիւնը կրող դրամին ներկայութիւնը Պաղեստինի սահմաններէն ներս, ցոյց կու տայ, որ Պաղեստինը կը ղեկավարուէր կայսրին կողմէ հաստատուած օրէնքներով: Հրեաներ պարտաւոր էին հնազանդելու կայսրին հաստատած բոլոր օրէնքներուն: Տուրք գանձելը կայսրին կատարեալ եւ օրինական իրաւունքն էր, քանի որ տուրքը կայսրին պատկերն ու արձանագրութիւնը կը կրէր: Ահա թէ ինչո՛ւ Քրիստոս կայսրին տուրք գանձելու իրաւունքը հարցականի տակ չառաւ:

Փարիսեցիներուն կողմէ դրկուած աշակերտներն ու Հերովդէսի կողմնակիցները փորձեցին գՔրիստոս ծուղակը ձգել: Եթէ երբեք Քրիստոս մերժէր կայսրին տուրք տալու գաղափարը, ան պիտի նկատուէր խոռվարար մը, ինչպէս նաեւ Հռոմէական կայսրութեան դէմ ապստամբութիւն հրահրող մը, իսկ եթէ ըսէր թէ կայսրին պէտք է տուրք վճարել, այդ պարագային ան պիտի մեղադրուէր իբրեւ անհայրենասէր մը, եւ հետեւաբար, անկարելի պիտի ըլլար ընդունիլ անոր խոստացեալ Մեսիան ըլլալը: Հրեայ ժողովուրդը կը հաւատար որ գալիք խոստացեալ Մեսիան նշմարիտ հայրենասէր մը պիտի ըլլար: Հայրենասէր մը, որ քաղաքական յեղափոխութիւն պիտի յառաջացնէր, Հռոմէական տիրապետութեան լուծը պիտի փշրէր, եւ Դաւիթին թագաւորական աթոռը պիտի վերականգնէր: Այլամերժ եւ Նախանձայոյզ Հրեաները փորձեցին այս բոլորը իրականացնել Քրիստոսի օրով եւ Քրիստոսի ձեռքով բայց չյաջողեցան, որովհետեւ Քրիստոս բացարձակապէս առիթ չտուաւ անոնց, եւ իրեն ուղղուած հարցումներուն ան պատասխանեց մեծ նարտարութեամբ:

*«Ինչ որ Աստուծոյ կը պատկանի Աստուծոյ տուէ՛ք»* կ'ըսէ Աստուած: Հրեաներ պէտք չէ մոռնային, որ ինչպէս կայսրը իր իրաւունքը ունէր եւ կը պահանջէր գանիկա, այնպէս ալ Աստուած իր իրաւունքը ունի եւ կը պահանջէ գանիկա: Մարդը Աստուծոյ կը պատկանէր եւ պէտք է վերադառնայ Աստուծոյ պատկանելու: Աստուած մարդը ստեղծեց իր պատկերին եւ նմանութեան համաձայն (Ծն 1.26): Մարդը կորսնցուց իր աստուածային պատկերն ու նմանութիւնը երբ մեղանչեց: Մեղքը դադրեցուց մարդը Աստուծոյ բաժինը ըլլալէ: Հետեւաբար, Աստուծոյ բաժինը Աստուծոյ տալ, կը նշանակէ ջանալ վերականգնել մեր ներսիդին աստուածային աղարտեալ պատկերն ու նմանութիւնը: Այո՛, Աստուծոյ գաւակները պէտք է աշխատին Քրիստոսի՛ նմանիլ, պէտք է տփնիս գԱստուած «շալկել» իրենց ուսերուն վրայ, գԱստուած «կրել» իրենց սիրտերուն մէջ: Ան որ իբրեւ անտաշ քարի կտոր մը կը յանձնուի Աստուծոյ եւ կ'աղաչէ անոր որ զինք տաշէ իր Հոգիով, ան Աստուծոյ պատկանածը Աստուծոյ տուած կը սեպուի:

*«Ինչ որ կայսրին կը պատկանի՛ կայսրին տուէ՛ք, եւ ինչ որ Աստուծոյ՛ Աստուծոյ տուէ՛ք»:* Սա հաստատումով, Քրիստոս ուրիշ կարեւոր նշմարտութիւն մըն ալ կը սորվեցնէ մեզի որ մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի: Քրիստոս չ'ուզեր որ Աստուծոյ պատկանած բաժինը տանք կայսրին եւ կայսրին պատկանած բաժինը տանք Աստուծոյ: Կայսրը պէտք չէ պաշտուի իբրեւ Աստուած եւ ո՛չ ալ Աստուած իբրեւ բռնակալ կայսր մը: Միտ՛իլ է կայսրին հետ վերաբերիլ ինչպէս Աստուծոյ հետ պիտի վերաբերէինք եւ Աստուծոյ հետ վերաբերիլ ինչպէս կայսրին հետ պիտի վերաբերէինք:

Աստուած բռնակալ կայսր մը չէ: Աստուած գուրգուրացող եւ կարեկցող Հայր մըն է: Հայր մը, որ կը սիրէ իր որդիները միշտ իր մօտ

տեսնել, ահա թէ ինչո՛ւ Քրիստոս պատուիրեց Աստուծոյ պատկանածը Աստուծոյ տալ: Ճշմարիտ որդին երբե՛ք չի փափափիր իր երկնաւոր Հօրմէն հեռու մնալ:

Քրիստոս յստակ տարբերութիւն կը դնէ Աստուծոյ եւ կայսրին միջեւ: Մէկուն բաժինը կարելի չէ միւսին տալ: Եկէ՛ք հարց տանք մենք մեզի: Մեզմէ՛ք քանի՞նք Աստուծոյ ընծայուելիք պատիւը իրենց նմաններուն չեն ընծայեր: Օրական քանի՞ անգամ Առաջնահերթը երկրորդական մակարդակի վրայ կը դնենք: Մենք ալ յաճախ մեր սիրած մարդիկը Բարձրեալէն աւելի չե՞նք բարձրացներ: Չե՞ք պատահած որ փառաւորենք անարգը եւ անարգենք Փառաւորը: Չե՞ք պատահած որ կատարենք մեր կամքը գիտնալով հանդերձ որ ատիկա Աստուծոյ կամքին հակառակ է: Այսպէս ընողներ, Աստուծոյ բաժինը ուրիշին է որ կու տան:

Աստուծոյ բաժինն է պաշտուիլն ու երկրպագուիլը, փառաւորուիլն ու մեծարուիլը, օրհներգուիլն ու բարձրացուիլը: Աստուծո՛յ կը պատկանի բացարձակ հնազանդութիւն եւ ամբողջական պատրաստակամութիւն պահանջելու իրաւունքը: Մի՛շտ պէտք է հնազանդիլ մեր մեծաւորներուն, մեր վրայ իշխողներուն, բայց եթէ երբեք անոնք մեզմէ կը պահանջեն ընել բան մը որ հակառակ է Աստուծոյ կամքին, նման պարագայի, *«Աստուծոյ պէտք է հնազանդիլ, քան թէ մարդոց»* (Գրծ 5.29): Աստուածաշունչն ու պատմութիւնը լեցուն է օրինակներովը այն սուրբերուն, որոնք նախընտրեցին նահատակուիլ, քան ուրանալ զԱստուած, որոնք նախընտրեցին մեռնիլ նշմարտութեան համար քան մեռցնել նշմարտութիւնը:

Սիրելի՛ ընթերցող եղբայր, որեւէ կասկած չունիմ որ աշխարհին բաժինը աշխարհին կու տաս, բայց թոյլ տուր հարցնեմք մեզի, որ Աստուծոյ բաժինն ալ Աստուծոյ կու տա՞ս: Աշխարհին մէջ ապրիլդ եւ ծառայելդ երբե՛ք չեն կրնար պատճառ ըլլալ որ չծառայես Աստուծոյ եւ չդառնաս անոր ծառան: Տո՛ւր Աստուծոյ ինչ որ Աստուծոյ կը պատկանի՝ քու անձդ. տո՛ւր աշխարհին ինչ որ աշխարհին կը պատկանի՝ քու լոյս ու բարեբար ներկայութիւնդ:

## ՁԵՌՔԴ ՄԱՃԻՆ ԴՆԵԼԷ ԵՏՔ՝ ԵՏ ՄԻ՝ ՆԱՅԻՐ

«Ան որ ձեռքը մանին կը դնէ եւ ետ կը նայի, յարմար չէ Աստուծոյ թագաւորութեան» (Ղկ 9.62): Սա յայտարարութեամբ, Քրիստոս կո՛չ կ'ուղղէ քրիստոնեայ մարդուն որ կ'որոշէ Աստուծոյ թագաւորութեան անդամագրուիլ, տէ՛ր կանգնելու իր առած որոշումին: Ան որ ամուր կերպով կառչած կը մնայ Աստուծոյ թագաւորութեան հասնելու իր առած որոշումին, ա՛ն միայն արժանի պիտի ըլլայ ժառանգելու երկինքի արքայութիւնը: Հարկաւ առնուած որոշումին ամբօրէն կապուած մնալը գուտ մարդկային ճիշդ մը արդիւնքն է՛: Կը բաւէ որ մարդ գորաւոր փափաք ունենայ անսայթաք կերպով փախելու Քրիստոսի հետեւերով, եւ ահա Սուրբ Հոգին գորավիզ ու պաշտպան պիտի կանգնի անոր:

Աստուծոյ թագաւորութեան գաւակ դարձող մարդը իր կապը միանգամընդմիշտ պէտք է խզէ աշխարհի թագաւորութեան հետ: Աշխարհէն դուրս գալու մասին չէ որ կը խօսիմ: Ընդհակառակը, աշխարհն ու անոր սէրը մեր ներսիդէն դուրս շարտելու մարտակոչ է որ կ'ուղղեմ Քրիստոսի գինուորներուն: Քրիստոնեայ մարդը Քրիստոսի նման պէտք է կարենայ ըսել. «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ» (Յե 18.36): Կարելի բան չէ որ մեր միտքերը մտածեն երկինքին եւ երկնայինին մասին, իսկ մեր սիրտերը ցանկան աշխարհն ու աշխարհայինը: Լուրջ աշխատանքի կը կարօտի մեր միտքերն ու սիրտերը վարժեցնել իրենց ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացնելու երկինքի վրայ:

Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Քանի որ յարութիւն առի՛ք Քրիստոսի հետ, այսուհետեւ ձեր ուշադրութիւնը երկինքէ դարձուցէ՛ք, որովհետեւ հո՛ն է Քրիստոս, Հօր Աստուծոյ կողմը նստած: Երկնաւոր բաներու մասին խորհեցէ՛ք եւ ո՛չ թէ երկրաւոր բաներու. որովհետեւ դու՛ք այս աշխարհին համար մեռա՛ք, որպէսզի Քրիստոսի հետ միասին ապրի՛ք այն կեանքով՝ որ Աստուած վերապահած է ձեզի» (Կղ 3.1-3): Կեանքի Աղբիւրին հետ ծանօթանալէ ետք ո՛չ ոք այլեւս կը փափաքի աշխարհին յատուկ մեռելոտի գործերուն վերադառնալ: Աշխարհի սէրն ու աշխարհի Ստեղծիչին սէրը միեւնոյն սիրտին մէջ չեն կրնար բնակիլ: Միեւնոյն ձեռքը չի՛ կրնար գործածուիլ Քրիստոսապարգեւ եւ աշխարհապարգեւ մաներուն համար:

Սիրելի՛ ընթերցող, եթէ երբեք Քրիստոսի շնորհով ձեռքը փրկութեանդ մանին դրած ես, ալ ետ նայելու մասին մի՛ մտածեր: Առջեւդ նայիր, ուր «հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ» (Մտ 9.37), եւ պատրաստ եղիր Աստուծոյ խօսքին արօրով հերկելու մարդոց ֆարեղէն սիրտերը. հերկելու այնքան եւ այնպէս՝ որ փշրուին այդ սիրտերը Քրիստոսի կամքին դիմաց եւ լուացուին անոր արիւնով: Մշակները միայն եկեղեցականները չեն, այլ բոլոր անոնք՝ որոնց սիրտին եւ հոգիին մէջ փրկութեան շնորհքին լոյսը ծագած է:



*«Ան որ ձեռքը մանին կը դնէ եւ ետ կը նայի, յարմար չէ Աստուծոյ թագաւորութեան»:* Իսրայէլի նախահայրերէն շատեր իրենց ձեռքը մանին դնելէ ետք՝ վերստին հեռացան Աստուծմէ (Եր 2.5): Ուրիշներ լաւ պայմաններու տիրանալէ ետք հեռացան Աստուծմէ (Բ.Օր 32.15): Ռոբովամին համար կը կարդանք, որ երբ իր *«թագաւորութիւնը հաստատուեցաւ ու ինք գորացաւ, Տիրոջը օրէնքը թողուց»* (Բ.Մն 12.1): Երեմիա մարգարէն կը վկայէ, որ Աստուծոյ ժողովուրդէն շատեր լքեցին զԱստուած՝ *«կեանքի ջուրին աղբիւրը եւ իրենց գուրբեր փորեցին, ծակոտ գուրբեր, որոնք չեն կրնար ջուր պահել»* (Եր 2.13):

Յանախ փորձութիւնները նաեւ պատճառ կ'ըլլան որ մարդիկ իրենց ձեռքը ետ քաշեն մահէն (Ղկ 8.13): Յուդա Իսկարիոտացին ձեռքը մանին դնելէ եւ Աստուծոյ թագաւորութեան քարոզիչը ըլլալէ ետք, դրամի համար ու դրամով ծախեց Քրիստոսի կողմէ իրեն յանձնուած մահը: Դեմաս որ Պօղոս առաքեալի գործակիցն էր, ձեռքը մանին դնելէ ետք ետ նայեցաւ, դէպի աշխարհ եւ դէպի աշխարհատուր հանգիստը (Բ.Տմ 4.10): Պետրոս առաքեալ խօսելով Յուդայանման եւ Դեմասանման մարդոց մասին կ'ըսէ. *«Անոնք որոնք մեր Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոսը նանչնալով՝ աշխարհի պղծութիւններէն անգամ մը հեռանալէ ետք վերստին նոյն պղծութիւններուն մէջ կ'իյնան, անոնց վիճակը նախկինէն շատ աւելի գէշ կ'ըլլայ: Աւելի լաւ կ'ըլլար՝ որ անոնք բնաւ նանչեցած չըլլային արդարութեան նամբան, քան թէ նանչնալէ ետք՝ հեռանային իրենց աւանդուած սուրբ պատուիրանէն»* (Բ.Պտ 2.20-21):

Երբ մէկը կ'որոշէ ընդունիլ գ'Քրիստոս իբրեւ Տէր եւ Փրկիչ, պէտք է ջանայ մոռնալ իր անցեալը եւ գալիքին նայիլ: Նոյնը կը հաստատէ Պօղոս առաքեալ. *«Կ'աշխատիմ անցեալը մոռնալ եւ գալիքին նայիլ, եւ ուշադիր կերպով կը վագեմ դէպի նպատակակէտ, իբրեւ մրցանալ ստանալու համար յաւիտենական կեանքը, որուն կը հրաւիրէ մեզ Աստուած, Քրիստոս Յիսուսով»* (Փլպ 3.13-14): Գալիքին նայիլ պէտք է սորվինք: Հինին ու անցեալին համար ողբալն ու սգալը ոչինչ կրնան փոխել: Անցեալով տարուիլն ու գրգռուիլը՝ սատանայական յարձակում է:

Թոյլ չտանք որ անցեալին պատահած դէպքերը մեզ անհանգստացնեն եւ մեր խաղաղութիւնը կորսնցնեն: Իր անցեալէն ձերբազատուիլ չկրցող մարդը՝ Քրիստոսով յայտնուած նոր կեանքին ժառանգորդը չի կրնար ըլլալ: Հինէն ազդուողը նորին բերած օրհնութիւնը չի կրնար վայելել: Աստուծոյ երեսին նայողը պէտք է երես դարձնէ աշխարհին: Աստուծոյ դարձող մարդը պէտք է ամենայն համարձակութեամբ կարենայ Աստուծոյ ըսել. *«Մենք այլեւս պիտի չդառնանք քեզմէ»* (Սղ 80.17):

Այո՛, նշմարտապէս Աստուծոյ հետեւիլ ուզող մարդու մը խօսքն է սա խօսքը. *«Մենք այլեւս պիտի չդառնանք քեզմէ»:* Ոչինչ մեզ կրնայ հեռացնել Աստուծմէ եթէ երբեք մօտենանք իրեն առանց պայմանի: Պայմանով կամ պայմաններու շարքով մը Աստուծոյ մօտեցող մարդը, ուշ թէ կանուխ վերստին պիտի լքէ զԱստուած: Չնմանինք այն մարդուն որ

ըսաւ. «Տէ՛ր, պիտի հետեւիմ քեզի, բայց...» (Ղկ 9.61): Մօտենա՛նք Աստուծոյ առանց այս «բայց»ին: «Բայց»ով մօտենալ, կը նշանակէ պայման դնել: Որքա՛ն մարդիկ չեն կրցած մօտենալ Քրիստոսի այս «բայց»ին պատճառով: Ո՛րքան անմտութիւն է գտնելէ ետք Քրիստոսը, անոր ըսել. «Տէ՛ր, պիտի հետեւիմ քեզի, բայց թոյլ տուր նախ երթամ ընտանիքէս հրաժեշտ առնել»:  
 «Նախ երթամ...»: Ինչո՞ւ երթալ եւ ո՞ւր երթալ Քրիստոսի հանդիպելէ ետք: «Բայց» եւ «նախ երթամ...» ըսողները, կարծէք ըսել կ'ուզեն. «Տէ՛ր, պիտի հետեւիմ քեզի, բայց հիմա սիշոյ ժամանակը չէ, տակաւին ուրիշ ընելիքներ ունիմ»: Այս տեսակի մտածողութիւն հակառակ է Սուրբ Գիրքին, որ կը հաստատէ «հիմա՛ է փրկութեան օրը» (Բ.Կր 6.2):

Սիրելի՛ ընթերցող, ետ մի՛ նայիր երբ Աստուած քեզ դէպի առաջ նայելու եւ քալելու կոչ կ'ուղղէ: «Մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէ՛ք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի կարենա՛ք զինք նանչնալ» (Կղ 3.9-10): Քու անցեալդ մոռնալը քեզ կ'առաջնորդէ նորոգութեան, իսկ նորոգութիւնը՝ աստուածնանաչողութեան: Անգամ որ սկսար դէպի առաջ քալել, դժուարութեանց որ հանդիպիս, նախկին կեանքիդ մասին մի՛ մտածեր որպէսզի հոն դառնալու փափաքը չբռնկի ներսիդիդ:

Ո՛հ, չըլլայ որ նմանիս այն Իսրայէլացիներուն, որոնք Եգիպտոսէն ելլելէ ետք, երբ կերակուրի համար նեղութիւն կրեցին Սինայի անապատին մէջ, տրտնջացին եւ ըսին. «Եգիպտոսի մէջ մեր ձրի կերած ձուկերը, վարունգները, սեխերն ու պրասները, սոխերն ու սիտորները միտքերնիս կու գան» (Թւ 11.5): Ասոնք բոլորը իրենց ձեռքը մանին դնելէ ետք ետ նայողներուն խումբին կը պատկանին: Ի՛նչ ցաւալի երեւոյթ է, որ մարդ արարածը սոխ ու սիտորի համար հեռանայ Աստուծմէ եւ փափաքի նախկին կեանքին վերադառնալ:

Նման սխալ մը կը գտնենք Իսրայէլի առաջին թագաւորին՝ Սաւուղի կեանքին մէջ: Աստուած հրամայած էր անոր որ Ամադեկացիներուն վրայ յարձակի եւ բնաջնջէ ամէն ինչ, մարդ թէ անասուն, բայց Սաւուղ խնայեց «Ագագը (Ամադեկի թագաւորը) եւ ոչխարներուն ու արջառներուն աղէկներն ու գէրերը...» (Ա.Թգ 15.9): Սաւուղ իր ձեռքը ետ քաշած չեղա՞ւ մանէն երբ ոչխարի ու արջառի համար անհնազանդ գտնուեցաւ Աստուծոյ պատուէրին: Կ'արժէ՞ ոչխարի ու արջառի համար խախտել Աստուծոյ օրէնքը եւ խոցոտել անոր սիրտը:

Ահաւոր բան է մեր ձեռքը մանէն ետ քաշել եւ ուրանալ զԱստուած սոխ ու սիտորի համար (Թւ 11.5), ոչխարի ու արջառի համար (Ա.Թգ 15.9), «բուռ մը գարիի եւ պատառ մը հացի համար» (Եզ 13.19): Սիրելի՛ ընթերցող, մի՛ մտածեր թէ դուն նման բաներու համար չես ուրանար զԱստուած, այլ քաջութիւնը ունեցիր մտածելու այն բոլոր իրականութիւններուն մասին՝ որոնց համար ձեռքդ մանէն ետ կը քաշես:

Սողոմի եւ Գոմորի կործանումին առիթով, Աստուծոյ խօսքը ուղղուած Ղովտին եւ անոր կնոջ, ուղղուած է մեզմէ իւրաքանչիւրին. «Նտիդ մի՛ նայիր» (Ծն 19.17): Ղովտին «կիներ ետին նայեցաւ ու աղի արձան եղաւ» (Ծն 19.26): Ետին նայիլը, նախկին մեղսալից կեանքին հանդէպ սիրոյ արտայայտութիւն է: Հետաքրքրական է որ Աստուած ո՛չ միայն ետին նայիլը արգիլեց, այլ նաեւ ուշանալն ու տնտնալը (Ծն 19.16):

Որպէսզի մեր ձեռքը մանին դնելէ ետք, ետ չնայինք, եկէք «մեր աչքերը յտեսնէ Յիսուսի, մեր հաւատքի հիմնադիրին ու կատարելագործողին» (Եբր 12.2), որպէսզի արժանի ըլլանք մեր երկնաւոր Հօր թագաւորութեան ժառանգորդները դառնալու: Ամէն:

## ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵԶԻ ԶԳԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

*«Խաղաղութիւն կը թողում ձեզի. Իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խոռովիք ու մի՛ վախճա՛ք» (Յե 14.27):*

Այսօր երբ կը դիտենք աշխարհը, կը տեսնենք որ ատիկա դարձած է մտահոգիչ: Ամէն կողմ պատերազմ եւ ամէն երկրի մէջ իրարանցում կայ: Գրեթէ ամէն մարդու մօտ կը գտնենք մտահոգութեան, դժգոհութեան եւ գրպարտութեան ալիքներ: Անորոշութիւնը որոշապէս հանդէս կու գայ ամէն տեղ: Մարդիկ ո՛չ միայն դարձած են անհանդուրժող եւ աններողամիտ, այլ նոյնիսկ չեն ուզեր հանդուրժողութեան եւ ներողամտութեան մասին խօսք լսել: Մեղքը իր թակարդին մէջ առած է Աստուծմէ հեռու գտնուող ամէն մարդ: Քրիստոսի եկեղեցին աշխարհի մէջ ըլլալով, անմասն չէ այս փորձութիւններուն: Անբարշտութիւնն ու թերահաւատութիւնը կ'ալեկոծեն եկեղեցւոյ կեանքը նաեւ:

Եկեղեցին կարիքը ունի Քրիստոսապարգեւ խաղաղութեան որպէսզի կարենայ հեռու վանել իրմէ մեղքին խոռվութիւնը: Քրիստոսապարգեւ խաղաղութեամբ միայն եկեղեցին կրնայ յաղթող եւ նուաճող ըլլալ: Քրիստոսապարգեւ խաղաղութեամբ միայն եկեղեցին կրնայ կենդանի եւ կենդանարար, ապրող եւ ապրեցնող իրականութիւն դառնալ աշխարհի մէջ: Քրիստոսապարգեւ խաղաղութեամբ է որ եկեղեցին կը դառնայ Աստուծոյ թագաւորութեան նախագահիքը երկրի վրայ:

Մէկը կրնայ հարց տալ. *«Եկեղեցին կրնա՞յ իր խաղաղութիւնը պահել երբ կեանքի բազմաբնոյթ փոթորիկներով շրջապատուած է»:* Այս հարցումին պատասխանը կը գտնենք Մատթէոսի Աւետարանին 8-րդ գլխուն մէջ: Հոն կը կարդանք. *«Զօրաւոր փոթորիկ մը ելաւ լինին վրայ, այնքան՝ որ ալիքները գրեթէ նաւակը կը ծածկէին: Բայց Յիսուս կը բնանար» (Մտ 8.24):* Փոթորիկներու գիրկին մէջ ըլլալ եւ բնանալ: Ի՞նչ հրաշալի երեւոյթ: Ինչպէս Քրիստոս փոթորիկին գիրկին մէջ ըլլալով կրցաւ ամենայն խաղաղութեամբ բնանալ, այնպէս ալ Քրիստոսի եկեղեցին կրնայ անդորրութեամբ դիմակալել կեանքի փոթորիկները երբ Քրիստոսի խաղաղութիւնը կը կրէ իր մէջ:

Նագովրեցիներուն Առաջնորդը իր առաջնորդութեան մականը մէկդի պիտի դնէր շուտով: Ժամանակը հասած էր որ տասներկու առաքեալներուն Նաւապետը նաւուն ղեկը յանձնէր կեանքի մրրիկներուն: Այնքան ատեն երբ առաքեալները Քրիստոսի նիւթական ներկայութիւնը ունէին իրենց հետ, անոնք իրենք գիրենք վստահութեան, ապահովութեան եւ զօրութեան զգացումներով տոգորուած կը զգային: Եւ ինչո՞ւ իրենք գիրենք ապահով չզգային երբ իրենց կողքին ունէին ապահովութիւն ներշնչող աշխարհի Փրկիչը: Ամէն անգամ երբ լինեն ու ծովերը փոթորկէին, անոնք կը դառնային խաղաղութեան Իշխանին եւ կ'ըսէին. *«Տէ՛ր, փրկէ՛ մեզ, որովհետեւ կը կորսուինք»:* Ամէն անգամ երբ

նիւթական հացի կարօտ ըլլային, կը դառնային կեանքի Հացին ու կ'ըսէին. «Տէ՛ր, հաց չունիմք»: Ամէն անգամ երբ ուզէին հիւանդ մը բժշկել եւ չկրնային, մարդկութեան բժիշկին դիմելով հարց կու տային. «Տէ՛ր, մենք ինչո՞ւ չկրցանք բժշկել զայն»: Ի վերջոյ, ամէն անգամ երբ իրենց հաւատքի կեանքին մէջ առաւել եւս խորանալու կարիքը զգային, իրենց հայեացքը կ'ուղղէին իրենց հաւատքի հիմնադիրին եւ կ'ըսէին. «Տէ՛ր, աւելցո՛ւր մեր հաւատքը»:

Հիմա որ Իշխանը խաղաղութեան, Հացը կեանքի, Բժիշկը մարդկութեան, Հիմնադիրը հաւատքի՝ Քրիստոս, իր հրաժեշտի խօսքը կ'արտասանէ, իր առաքեալներն ու հետեւորդները իրենք գիրենք լճուած եւ անօգնական կը զգան: Անապահովութեան հեղձուցիչ ցանցը իր սեւ թելերուն տակ կ'առնէ գիրենք: Հալածանքներու եւ նեղութեանց մղձաւանջը կը տանջէ գիրենք: Եւ անոնք պահ մը կը զգան որ շրջապատուած են երեւելի եւ աներեւոյթ թշնամիներով, վտանգալից երեւոյթներով, անորոշ կացութեամբ եւ դժուարին պայմաններով:

Նման անել կացութեան դիմաց, Քրիստոսի բոլոր հետեւորդները, բայց մանաւանդ իր տասներկու առաքեալները կարիք ունէին Քրիստոսապարգեւ խաղաղութեան: Այսպիսի խաղաղութիւն մը միայն կրնար գիրենք կանգո՛ւն պահել խորտակիչ փորձութեանց դիմաց, ամո՛ւր պահել տկարացնող մեղքին առջեւ: Քրիստոս իր հետեւորդներուն չտուաւ աշխարհային խաղաղութիւն մը, բոստական խաղաղութիւն մը, այլ տուաւ ի՛ր խաղաղութիւնը, իր անձին խաղաղութիւնը, իր սեփական խաղաղութիւնը: Ահա թէ ինչո՛ւ ան ըսաւ. «*Իմ խաղաղութիւնս է որ կու տամ՝ ձեզի*»: Քրիստոս իր գաւակներուն կը շնորհէ այն խաղաղութիւնը որ իր հոգիին մէջ կը թագաւորէ, այն խաղաղութիւնը որ իր սիրտին մէջ կ'ապրի, այն խաղաղութիւնը որ իր ամբողջ էութիւնը կը համակէ: Այս խաղաղութիւնը Քրիստոսի գօրութիւնն էր եւ Քրիստոսի եկեղեցիին գօրութիւնը պէտք է դառնայ: Այս խաղաղութիւնն էր որ գՔրիստոս յաղթող եւ անյաղթահարելի դարձուց եւ այս խաղաղութեա՛մբ է միայն որ Քրիստոսի եկեղեցին կրնայ յաղթական կեանք մը ապրիլ:

Քրիստոս յստակ տարբերութիւն կը դնէ իր տուած խաղաղութեան եւ աշխարհի տուած խաղաղութեան միջեւ: Ան կ'ըսէ. «*Իմ խաղաղութիւնս... այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է*»: Այո՛, Քրիստոսի պարգեւած խաղաղութիւնը տարբեր է աշխարհի տուած խաղաղութենէն: Աշխարհ խաղաղութի՛ւն է, խաղաղութի՛ւն է կ'ըսէ երբ խոռվութիւններ եւ խոռվարարներ կը վիտան մեր կեանքներուն մէջ: Արդարութի՛ւն է, արդարութի՛ւն է կը բացականչէ երբ անարդարութեան բոսոր ամպն է որ կ'անձրեւէ ուժգին: Յո՛յս կայ, յո՛յս կայ կը գոչէ, բայց յուսահատութենէն եւ յուսախաբութենէն գատ ուրիշ բան հնձել չի տար մեզի:

Աշխարհ կու տայ իր լաւագոյնը, իր լաւագոյնով լաւագոյնս վատթարացնելու մեր կեանքը: Աշխարհ կու տայ իր գեղեցկագոյնը իր գեղեցկագոյնով տգեղացնելու գեղեցկութիւնը մեր կեանքին: Աշխարհ կու

տայ խնդու՛մ որուն աւարտը լացի ովկիհանոսն է: Կը պարգեւէ հաճոյ՛ք որուն պտուղը կսկիծն է: Քրիստոսի խաղաղութիւնը, սակայն, «աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է»: Քրիստոսապարգեւ խաղաղութիւնը օր ըստ օրէ անո՛ղ խաղաղութիւն է: Անոր տուած ուրախութիւնը օրէ օր աւելի՛ կը կրկնապատկուի: Անոր շնորհած ոյժը աւելի՛ կը մեծնայ: Անոր ներշնչած հաւատքը աւելի՛ կ'անի, եւ այսպէս, Քրիստոս իր տուածներով մեզ կ'առաջնորդէ գօրութենէ գօրութիւն, յաղթանակէ յաղթանակ, նուաճումէ նուաճում, փառքէ փառք, եւ երկինքէ երկինք:

Քրիստոսի տուած խաղաղութիւնը «աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է», որովհետեւ աշխարհ "խաղաղութիւն" ըսելով, կը հասկնայ պատերազմներու դադարում եւ պետութեանց հաշտեցում: Պատերազմներու դադարումով ժամանակաւոր խաղաղութիւն կարելի է ձեռք գտնել, բայց այդ խաղաղութիւնը անձնական չ'ըլլար, այսինքն, ուղղակիօրէն մեր անձերուն վերաբերող խաղաղութիւն մը չ'ըլլար: Պատերազմներու աւարտումով իրագործուած խաղաղութիւն մը չի՛ դադրեցներ մեր հոգիին խռովքը, մեր սիրտին տագնապը, մեր միտքին ալեկոծումը: Քրիստոս չի՛ խոստանար խաղաղութիւն հաստատել երկրի վրայ, աշխարհի մէջ, բայց կը խոստանայ խաղաղութիւն հաստատել մեր սիրտերուն եւ հոգիներուն մէջ:

Այն խաղաղութիւնը որուն մասին կը խօսի Քրիստոս այստեղ, արդիւնքն է Աստուծոյ հետ մեր հաշտութեան: Աստուծոյ հետ չհաշտուած մարդուն համար չկայ խաղաղութիւն: «Ամբարիշտները խաղաղութիւն պիտի չունենան» կ'ըսէ Աստուած (Յս 57.21): Այո՛, մեղքը խռովութեամբ կը լեցնէ մեր հոգիները: Ինչպէս երկու երկիրներու միջեւ խաղաղութիւն կ'ըլլայ երբ անոնք դադրին իրարու դէմ պատերազմելէ եւ հաշտուին իրարու հետ, այնպէս ալ Աստուծոյ եւ մեր միջեւ խաղաղութիւն կ'ըլլայ երբ դադրինք Աստուծոյ դէմ պատերազմելէ եւ հաշտուինք իր հետ իր Որդիին արիւնին միջոցաւ:

Ոմանք կը խորհին որ մարդ արարածը գերերկրային սիրտ պէտք է ունենայ որպէսզի կարենայ ապրիլ խաղաղ կեանք մը: Այսպէս մտածողներ պէտք է յիշեն որ Աստուածաշունչ մատեանը չի՛ խօսիր գերերկրային սիրտ ունենալու մասին, այլ նո՛ր սիրտ եւ նո՛ր հոգի ունենալու մասին: Եզեկիէլի մարգարէութեան մէջ կը կարդանք. «Զեզի նոր սիրտ պիտի տամ ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի դնեմ: Զեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ եւ ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ: Իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ եւ դուք իմ օրէնքներս եւ պատուիրաններս պիտի գործադրէք» (Եզ 36.26-27): Աստուած կը խոստանայ իր Սուրբ Հոգիով օծուն հոգի՛ տալ մեզի, իր սիրով լեցուն սի՛րտ շնորհել մեզի: Սիրտ մը եւ հոգի մը, որոնք Աստուծով լիցփաւորուիլ, կշտանալ եւ արբենալ կը փափաքին: Սիրտ մը եւ հոգի մը, որոնց համար հաճոյք է երկինքին նայիլը, երկնայինը բաղձալը, Աստուծոյ մասին խորհիլը, Աստուծոյ մէջ հանգչիլն ու զԱստուած իրենց մէջ հանգչեցնելը:

## ՈՏՆԼՈՒԱՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽՈՂ ՊԱՆԸ

Ոսնլուայի արարողութիւնը կանխող պահը կը ներկայացնէ Քրիստոսի սիրոյն կրկնապատկուիլը եւ աշակերտներուն մարմաջը «տէր» եւ «մեծ» կոչուելու: Յովհաննէս առաքեալ կ'արձանագրէ, որ երբ Յիսուս գիտցաւ որ «*հասած է ժամը, երբ այս աշխարհէն իր Հօրը քով պիտի երթայ, սիրեց անոնք որոնք այս աշխարհի մէջ իրեն հետեւորդ էին եւ ծայր աստիճան սիրեց զանոնք*» (Յհ 13.1): Սիրեց զանոնք, որովհետեւ անոնք իր Հօրը պարգեւն էին իրեն տրուած (Յհ 17.11): Սիրեց, որովհետեւ անոնք իր բարեկամներն էին (Յհ 15.14): Սիրեց, որովհետեւ անոնց միջեւ կար երեք տարիներու ընկերութիւն, սիրալիր յարաբերութիւն եւ խոր մտերմութիւն: Իր սէրը հանդէպ իր աշակերտներուն կրկնապատկուեցաւ երբ սկսաւ մտածել թէ պիտի բաժնուէր իր ամենասիրելիներէն: Մեզմէ ո՞վ չի տանջուիր եւ հոգեկան յուզում մը չ'ապրիր երբ ստիպուած է իր սիրելիներէն բաժնուելու:

Ո՛չ ոք Յիսուսի չափ սիրած է մարդիկը: Ո՛չ ոք Յիսուսի նման ապրած է հոգեկան խոռով մը բաժանումի մը պահուն: Յիսուս բոլորէս աւելի գիտէր ու կը հասկնար թէ ի՛նչ կը նշանակէ բաժնուիլ սիրելիներէ: Այո՛, գիտէր, եւ այս գիտակցութիւնն էր որ կը խոռովեցնէր ու կը տագնապեցնէր զինք, որովհետեւ ան աշխարհի մէջ երբ անոնց հետ էր, ի՛նք կը պահէր զանոնք (Յհ 17.12), բայց հիմա ստիպուած էր «առանձին» թողուլ իր աշակերտները փորձութիւններով լի այս աշխարհին մէջ: Ո՞վ կրնայ իր սիրելին վտանգալից տեղ մը ձգել եւ հանգիստ միտքով ու խաղաղ հոգիով բաժնուիլ անկէ:

Շատ հետաքրքրական է որ Քրիստոս «*գիտնալով հասած է ժամը, երբ այս աշխարհէն իր Հօրը քով պիտի երթայ*», իր ուշադրութիւնը փոխանակ ինքնիր անձին, իր չարչարանքներուն, իր խաչելութեան ու մահուան վրայ կեդրոնացնելու, ընդհակառակը, կը կեդրոնացնէ իր աշակերտներուն վրայ, առաւել սէր ցոյց տալով անոնց հանդէպ, անոնց ոտքերը լուալով, թելադրելով որ չխոռովին, իրար չանցնին, հաւատան Աստուծոյ եւ հաւատան իրեն (Յհ 14.1):

Հետաքրքրական կոչեցի այս երեւոյթը, անոր համար, որ երբ մարդ արարածը կ'անդրադառնայ որ իր մահուան վայրկեանը կը մօտենայ, կը սկսի մտածել ի՛նքնիր մասին եւ ո՛չ թէ ուրիշին մասին: Ան կը մտածէ իր ապրած կեանքին մասին, մահուան մասին եւ մահէն ետք ըլլալիքին մասին: Քրիստոս սակայն այդպէս չըրաւ եւ այդպիսին չեղաւ: Քրիստոս մահուան սեմին կանգնած ուրիշին մասին կը մտածէր:

Տեղին է սա իրողութեան հետ համեմատել հետեւեալը: Քրիստոս ո՛չ միայն երբ իր մեռնելու օրը մօտեցաւ իր ուշադրութիւնը կեդրոնացուց ուրիշին վրայ, այլ նոյնիսկ խաչին վրայ եղած ժամանակ: Ընդհանրապէս մարդ արարածը որ մահամերձ վիճակի մէջ կը գտնուի, ներումէն զատ ուրիշ բան չի խնդրեր Աստուծմէ, եւ զանիկա կը խնդրէ ի՛ր անձին համար

եւ ո՛չ թէ ուրիշին համար: Քրիստոսի վերաբերմունքը հիմնովին տարբեր եղաւ: Քրիստոս խաչին վրայ չըսաւ. «Հա՛յր, ներէ՛ ինձի», այլ ըսաւ. «Հա՛յր, ներէ՛ անոնց...» (Ղկ 23.34): Ան գինք խաչողներուն մասին մտածած ատեն, մտածեց նաեւ իրեն խաչակից եղող աջակողմեան աւագակին մասին. «Վստահ եղիր, այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ» (Ղկ 23.43): Պէտք չէ մոռնալ նաեւ, որ ան մտածեց իր մօրը եւ իր սիրելի աշակերտին՝ Յովհաննէսի մասին (Յհ 19.26–27):

Ճի՛շդ է որ Քրիստոս մնայուն կերպով կը մտածէր իր աշակերտներուն մասին, եւ սակայն, ան մտածումի սահմաններուն մէջ չմնաց: Ան սկսաւ խօսիլ իր աշակերտներուն իր մատնութեան եւ մահուան մասին, որպէսզի ձեռով մը գիրենք նախապատրաստած ըլլար գալիքին: Քրիստոսի նման աշակերտները իրե՛նք ալ տրտմած ու խոռված էին (Յհ 14.1), որովհետեւ ամբողջապէս համոզուած էին եւ կ’անդրադառնային որ իրենց սիրելի Տէրն ու Վարդապետը պիտի բաժնուէր իրենցմէ: Քրիստոս ո՛չ միայն խօսքով փորձեց փարատել անոնց տրտմութեան մտախուղը, այլ նաեւ գործնական կերպի մը դիմելով: Այդ գործնական կերպը՝ անոնց ոտքերը լուալն էր:

Ո՛հ, սիրելի՛ ընթերցող, չմտածենք թէ աշակերտներուն ոտքերը լուալը ինչպէ՞ս կրնար անոնց հոգիներուն վիշտը մեղմացնել: Այո՛ կրնար: Կրնար, որովհետեւ իրենց ոտքերուն լուացումը խորապէս մեծ տպաւորութիւն պիտի թողուր իրենց վրայ, եւ ա՛յս է ինչ որ ցոյց կու տայ Պետրոս առաքելին արտայայտութիւնը. «Տէ՛ր, դո՞ւն իմ ոտքերս պիտի լուաս» (Յհ 13.6): Այո՛, սիրելի՛ Պետրոս, Տէրը ի՛նքն է որ մեր ոտքերը կը լուայ: Տէրը ի՛նքն է որ իր սեփական վիշտն ու թախիծը մոռցած իր երկրաւոր կեանքի այս վերջին օրերուն, կը խոնարհի մեր ոտքերուն առջեւ եւ կը լուայ գանոնք, որպէսզի իր մահէն, յարութենէն ու համբարձումէն ետք, մնայուն կերպով յիշենք իր անչափ սէրը մեզի հանդէպ, եւ միտքարուհիմք ու ֆաջալերուհիմք այդ սիրով, լեցուհիմք ու հարստանանք այս սիրով, եւ մանաւանդ, օրինակ առնենք անօրինակ իր սէրէն, հեզութենէն ու խոնարհութենէն:

Աշակերտները այս հանգրուանին ամէն բանէ աւելի պէտք ունէին Քրիստոսի խոնարհութեան այս օրինակին, որովհետեւ ամէն անգամ երբ Քրիստոս կը խօսէր իր մահուան եւ այս աշխարհէն վերցուելուն մասին, վէճ մը կը ծագէր անոնց միջեւ թէ ո՞վ պիտի նկատուէր անոնց մէջ մեծը, ո՞վ պիտի ըլլար Քրիստոսի յաջորդը: (Տե՛ս Մտ 17.22–23 եւ 18.1, Ղկ 22.22 եւ 24, Մր 9.31 եւ 34, Ղկ 9.44 եւ 46):

Քրիստոս իր աշակերտներուն ոտքերը լուաց անոնց միջեւ մեծութեան վէճ ծագելէն անմիջապէս յետոյ: Հետաքրքրական է անդրադառնալ ոտնուայէն ետք Քրիստոսի արտասանած հետեւեալ խօսքին. «Լա՛ւ գիտցէ՛ք, թէ ծառան իր տիրոջմէ մեծ չէ եւ ոչ ալ դրկուածը՝ գինք դրկողէն: Եթէ ասիկա գիտէ՛ք, երանելի պիտի ըլլա՛ք՝ եթէ գործադրէ՛ք զայն» (Յհ 13.16–17): Ինչի՞ մասին է որ Քրիստոս կը խօսի այստեղ:



Քրիստոս որո՞նց կ'ակնարկէ երբ կը գործածէ «*ծառայ*» եւ «*տէր*», «*ղրկուած*» եւ «*ղրկող*» բացատրութիւնները: Յստակ է որ «*ծառայ*» եւ «*ղրկուած*» բացատրութիւններով Քրիստոս կ'ակնարկէ աշակերտներուն, իսկ «*տէր*» եւ «*ղրկող*» բացատրութիւններով կ'ակնարկէ ինքզինքին:

Քրիստոս կ'ուզէր սորվեցնել իր աշակերտներուն որ ի՛նքն էր իրենց Տէրը եւ ի՛նքն էր գիրեմք զրկողը, եւ հետեւաբար, աւելորդ էր իրենց համար վիճիլ թէ ո՞վ պիտի ըլլար իրենց մէջ «*տէր*», «*ղրկող*» կամ «*մեծ*»: Քրիստոս անուղղակիօրէն սորվեցուց իր աշակերտներուն, որ մեծութեան համար վիճիլ, կը նշանակէր ուրանալ իր (Քրիստոսի) միակ մեծը ըլլալուն հանգամանքը: Անոնք պէտք էր ընդունէին եւ ճանչնային զՔրիստոս իբրեւ իրենց միակ «*Տէրը*», միակ «*մեծը*» եւ գիրեմք միակ «*ղրկողը*»: Եթէ ընդունէին եւ ճանչնային զՔրիստոս իբր այդպիսին, անոնք երանելի պիտի նկատուէին, ահա թէ ինչո՛ւ Քրիստոս ըսաւ. «*Եթէ ասիկա գիտէք, երանելի պիտի ըլլաք՝ եթէ գործադրէք զայն*»:

Սոյն նախադասութեան երկրորդ կէտը կարելոր մշմարտութիւն մը կը պարզէ մեր առջեւ: «*Երանելի պիտի ըլլաք՝ եթէ գործադրէք զայն*»: Այս բառերը ցոյց կու տան, որ չի բաւեր գիտնալ որ Քրիստոս Տէր է, այլ պէտք է ընդունիլ անոր տիրութիւնը եւ հնազանդիլ անոր: Օր մը սեւամորթ մը ներմակամորթի մը կը հարցնէ. «*Ո՞վ է Յիսուս քեզի համար*»: Ճերմակամորթը կը պատասխանէ. «*Յիսուս Փրկիչ է*»: Իսկ քեզի՛ համար ո՞վ է Քրիստոս կը հարցնէ ներմակամորթը սեւամորթին: Սեւամորթը կը պատասխանէ. «*Յիսուս Փրկիչս է, Յիսուս ազատարարս է*»: Ուրիշ բան է ըսել. «*Յիսուս Փրկիչ է*» եւ բոլորովին ուրիշ բան՝ «*Յիսուս Փրկիչս է*»: Աշխարհի մէջ ո՛չ ոք փրկուած է եւ ո՛չ ոք պիտի փրկուի պարզապէս Քրիստոսի Փրկիչ ըլլալը գիտնալով կամ յայտարարելով: Փրկուողները պիտի ըլլան անոնք՝ որոնք ընդունած են զՔրիստոս իբրեւ իրենց անձերուն Փրկիչը եւ ապրած են փրկուած ըլլալու ուրախութիւնը:

Երբ աշակերտները կը վիճէին մեծութեան մասին, երբ իրենց միտքերուն մէջ «*առաջնորդողի*» եւ «*ղրկողի*» դիրք ունենալու երազներ կը հիւսէին, երբ անոնցմէ ո՛չ ոք կը մտածէր խոնարհութեան մասին, յանկարծ Քրիստոս ոտքի ելաւ «*մէկ կողմ դրաւ իր վրայի հագուստը եւ դենջակ մը առնելով՝ մէջքին կապեց: Ապա ջուր առնելով՝ լեցուց կոնքին մէջ եւ սկսաւ աշակերտներուն ոտքերը լուալ եւ մէջքին կապած դենջակով սրբել*» (Յհ 13.4-5): Քրիստոս, որուն ոտքերուն առջեւ կը խոնարհի եւ պէ՛տք է խոնարհի ամբողջ աշխարհ, հիմա ի՛ր կարգին խոնարհեցաւ իր աշակերտներուն ոտքերուն առջեւ եւ անոնց ոտքերը լուալով՝ լուացած եղաւ մարդկային մեր բնութիւնը: Պատկերացուցէք պահ մը, Աստուած մարդուն ոտքը լուաց: Ասկէ աւելի ի՞նչ կրնար ընել Քրիստոս: Ի՞նչ պէտք էր ընել եւ չըրաւ (Յս 5.4):

Խորքին մէջ աշակերտները իրե՛նք պէտք էր լուային Քրիստոսի ոտքերը, որովհետեւ ինչպէս տեսանք, Քրիստոս իրենց Տէրն էր, իսկ իրեմք՝ Քրիստոսի ծառաները: Քրիստոսի ժամանակ եւ անկէ առաջ

ամենաբնական երեւոյթներէն մէկն էր ծառայի մը համար լուալ իր տիրոջ ոտքերը (Ղկ 7.44, ԾՆ 18.4): Իսկ այստեղ Քրիստոս «ստիպուած» ի՛նք կը լուար իր աշակերտներուն ոտքերը, քանի որ անոնք տակաւին պատրաստ չէին ծառայ անունը իրենց վրայ առնելու, այլ բոլորն ալ «տէր» եւ «մեծ» ըլլալու մասին կը մտածէին: Աւետարաններուն մէջ բնաւ չենք կարդար որ աշակերտներէն մէկը կամ ընդհանրապէս ոեւէ մէկը լուացած ըլլայ Քրիստոսի ոտքերը: Արդարեւ, անոնք ինչպէ՞ս կրնային լուալ Քրիստոսի ոտքերը, ինչպէ՞ս կրնային խոնարհիլ անոր ոտքերուն կամ ոեւէ մարդու մը ոտքին առջեւ, երբ իրենց նպատակը դէպի ոտքերը խոնարհիլը չէր, այլ դէպի գլուխ բարձրանալը, գլուխ ըլլալը, առաջնորդողի դիրք ունենալը:

Սիրելի՛ ընթերցող, հոգեբանութեան եւ մտածումի այն բոլոր հանգրուանները որոնցմէ անցան առաքեալները, կ'անցնի եւ կրնայ անցնիլ ոեւէ հաւատացեալ մարդ: Զգո՛յ՛ջ ըլլանք: Զըլլայ որ Քրիստոսի մասին քիչ մը բան սորվելով, կամ Քրիստոսի հետ որոշ մտերմութիւն մը հաստատելով, սկսինք մտածել, որ մենք այլեւս արժանի ենք ոտքերու սահմաններէն, մեր նմաններուն ոտքերը լուալու աստիճաններէն վեր բարձրանալ, դէպի գլուխ եւ դէպի իշխանութիւն: Մենք աշխատինք խոնարհիլ Աստուծոյ առջեւ, եւ Աստուած ինք երբ յարմար ժամանակը գայ՝ մեզ պիտի բարձրացնէ (Յկ 4.10, Ա.Պտ 5.6):

## ՈՏՆԼՈՒԱՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԱՆ ԻՄԱՍՏՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Այն երկխոսութիւնը որ տեղի ունեցաւ Յիսուսի եւ Պետրոս առաքեալի միջեւ առաւել հարստացուցին եւ իմաստալից դարձուցին ոտնլուայի արարողութիւնը: Յիսուս սեղանէն ելլելով, դենջակ մը առաւ եւ մէջքին կապեց եւ սկսաւ իր աշակերտներուն ոտքերը լուալ: Երբ հասաւ Պետրոսի կարգը, ան մերժեց որ Քրիստոս իր ոտքերը լուայ: Քրիստոս անոր ըսաւ. *«Եթէ ոտքերդ չլուամ՝ ինձի հետ բաժին պիտի չունենաս»* (Յի 13.8): Քրիստոսի այս խօսքը կարեւոր նշմարտութիւն մը կը պարունակէ: Ոեւէ մէկը չի՛ կրնար բաժին եւ ժառանգութիւն ունենալ Քրիստոսի հետ առանց լուացուելու Քրիստոսի կողմէ: Ոեւէ մէկը չի՛ կրնար յարաբերութիւն եւ հաղորդակցութիւն, բարեկամութիւն եւ ընկերակցութիւն մշակել Քրիստոսի հետ եթէ թոյլ չտայ որ Քրիստոս իր շնորհով լուայ զինք, ներէ իր մեղքերը, սրբէ իր անօրէնութիւնները, եւ ջնջէ իր յանցանքները:

*«Եթէ ոտքերդ չլուամ՝ ինձի հետ բաժին պիտի չունենաս»*: Քրիստոսի այս խօսքը ուղղուած է մեզմէ իւրաքանչիւրին: Ի՞նչ կը նշանակէ ոտքերը լուալ: Ոտքերը մեր մարմինի անդամներուն մէջ կը ներկայացնեն այն բաժինը, որ մեզ կը կապէ նիւթական այս աշխարհին: Հետեւաբար, ոտքերը լուալ կը նշանակէ մաքրել մեր կապերն ու յարաբերութիւնները այս աշխարհին հետ: Քրիստոս չ՛ուզեր որ իր հետեւորդները աշխարհիկ կեանք ապրող մարդուն վերաբերմունքը ընդօրինակեն: Քրիստոս իր աշակերտներուն ոտքերը լուալով, անոնց եւ մեզի սորվեցուցած եղաւ, որ իր կամքն է որ մաքուր եւ աստուածահաճոյ կեանք մը ապրինք այս աշխարհին մէջ: Նման կեանք մը ապրիլը անկարելի է եթէ թոյլ չտանք որ Քրիստոս լուայ ու սրբէ մեր հոգիներուն մեղքերը:

Սիրելի՛ ընթերցող, *«Մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերը ներելու»* (Մր 2.10, Մտ 9.6, Ղկ 5.24): Ան կրնայ մեր վրայ մաքուր ջուր սրսկել եւ մեզ մաքրել (Եզ 36.25): Ան կրնայ ձիւնէն աւելի ներմկցնել մեզ եւ մեզի պարգեւել մաքուր սիրտ եւ ուղիղ հոգի (Սղ 51.7, 10): Ան կրնայ մեր մարմինէն դուրս հանել քարեղէն սիրտը եւ անոր փոխարէն մեզի շնորհել մարմնեղէն սիրտ (Եզ 11.19, 36.26): Հետեւաբար, կատարեալ անմտութիւն է Պետրոսի նման թոյլ չտալ որ Քրիստոս լուայ եւ սրբէ մեզ: Արքային կողմէ չմաքրուողը չի՛ կրնար մտնել արքայութիւն: Աստուծոյ կողմէ չմաքրուողը չի՛ կրնար դառնալ բնակարան Աստուծոյ:

Պետրոս առաքեալի առարկութիւնը. *«Երբե՛ք դուն իմ ոտքերս պիտի չլուաս»*, անպայմանօրէն խոնարհութեան արտայայտութիւն իբրեւ պէտք չէ ըմբռնել, որովհետեւ եթէ իսկապէս իր ըրածը խոնարհութեան արդիւնք ըլլար, Քրիստոս անոր պիտի չըսէր. *«Եթէ ոտքերդ չլուամ՝ ինձի հետ բաժին պիտի չունենաս»*: Այս խօսքը խոնարհ մարդու ըսուելիք խօսք չէ: Անոր մերժողական կեցուածքը կարելի է վերագրել տգիտութեան,

որովհետեւ Քրիստոս անոր ըսաւ. *«Ինչ որ կ'ընեմ՝ դուն հիմա չես հասկնար, բայց յետոյ պիտի հասկնաս»* (Յհ 13.7):

Թէպէտ հաստատեցինք որ Պետրոս առաքեալի անթոյլատու կեցուածքը տգիտութեան արդիւնք էր, բայց մեր ուշադրութենէն պէտք է վրիպի որ Քրիստոս ի՛նքն էր որ տգիտութեան վերագրեց Պետրոսին առարկութիւնը եւ ո՛չ թէ Պետրոս ինք: Քրիստոս կը սպասէ որ խոնարհաբար ընդունինք իր կամքը եւ թոյլ տանք որ գործէ մեր կեանքերուն մէջ, նոյնիսկ եթէ երբեք անոր գործելակերպը բոլորովին տարբեր ըլլայ մեր գործելակերպէն եւ տարօրինակ թուի մեզի ինչպէս տարօրինակ թուեցաւ Պետրոսին: Աստուած ի՛նքն իսկ կը յայտարարէ որ իր խորհուրդները տարբեր են մեր խորհուրդներէն եւ իր ցամբաները տարբեր են մեր ցամբաներէն (Յս 55.8):

Առաքեալը չհասկցաւ խորհրդանշական իմաստը Քրիստոսի կատարածին եւ մերժեց հնազանդիլ անոր կամքին եւ վերստին պնդեց ըսելով. *«Երբե՛ք դուն իմ ոտքերս պիտի չլուսաս»* (Յհ 13.8): Մարդ արարածին բնութեան յատուկ է մերժել իր չհասկցածը: Ամէն անգամ երբ Քրիստոս բան մը կը կատարէ մեր կեանքերուն մէջ, եւ չենք հասկնար թէ ինչո՛ւ եւ ինչպէ՛ս կը կատարէ, մտաբերեմք իր խօսքը. *«Ինչ որ կ'ընեմ՝ դուն հիմա չես հասկնար, բայց յետոյ պիտի հասկնաս»*: Իսկապէս ալ, շատ բաներ կան որոնք կը պատահին մեր կեանքին մէջ, բայց սկզբնական շրջանին անոնց ճշգրիտ իմաստն ու նպատակը կը վրիպի մեր ուշադրութենէն, Քրիստոս սակայն, հաստատապէս կ'ըսէ որ ժամանակ պիտի գայ երբ պիտի հասկնանք մեր կեանքին մէջ պատահածներուն իմաստն ու նշանակութիւնը: Այստեղ մեր առջեւ կը պարզուին հիմնական հինգ ճշմարտութիւններ. –

1– Պետրոս առաքեալ չհասկցաւ եւ չփորձեց հասկնալ ոտնլուայի արարողութեան ետին կանգնող աստուածային նպատակը. Քրիստոս չարդարացուց անոր կեցուածքն ու վերաբերմունքը: Ընդհակառակը, ան կիսովին յանդիմանեց զանիկա: Հոսկէ կը սորվինք այն, որ պէտք է փորձենք հասկնալ թէ Աստուած ի՛նչ բան կ'ուզէ սորվեցնել մեզի մեր կեանքին մէջ պատահող դէպքերով: Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Ձանազէ՛ք հասկնալ՝ թէ Աստուած ի՛նչ կ'ուզէ ձեզմէ»* (Եփ 5.10): Իսկ Սողոմոն կը հաստատէ որ *«Տէրը փնտոնողները ամէն բան կը հասկնան»* (Առ 28.5):

Սուրբ Հոգին կ'օգնէ որ Աստուծոյ գաւակները որոշ չափով մը հասկնան գիրենք շրջապատող երեւոյթները եւ օգտուին անոնցմէ: Ոչինչ կը պատահի Աստուծոյ գաւակին կեանքին մէջ առանց նպատակի: Աստուած կրնայ օգտագործել եւ կ'օգտագործէ մեզ շրջապատող փորձութիւնները, անոնցմով իր ծրագիրը իրականացնելու համար, անոնցմով մեզ ձեռքազատելու համար մեր յոռի մէկ բնաւորութենէն կամ սովորութենէն: Աստուած այնպէս կ'ընէ՝ որ դժուարութիւնները որոնց կը բաղիս հաւատացեալ մարդը, դառնան առիթ եւ պատճառ, քայլ մը եւս մօտենալու իրեն եւ քիչ մը աւելի նմանելու իր Որդիին: Ճշմարիտ

հաւատացեալ մարդը զինք շրջապատող երեւոյթներուն մէջ կը տեսնէ եւ պէտք է տեսնէ Աստուծոյ մատր, Աստուծոյ դաստիարակչական նպատակը:

2- Եթէ երբեք բաներ կը պատահին որ չենք հասկնար թէ ինչո՛ւ եւ ինչպէ՛ս կը պատահին, ասիկա պատճառ մը պէտք չէ ըլլայ որ մերժենք անոնց իրականութիւնը եւ ըմբոստանանք անոնց դէմ: Մեր կեանքին մէջ շատ բաներ կան որ ամէն օր կը պատահին եւ որոնց պատահումին պատճառը չենք կրնար ըմբոսնել, եւ սակայն, մեզմէ ոեւէ մէկը անոնց դէմ չ'ըմբոստանար եւ զանոնք չի' մերժեր: Երբ կը տեսնենք որ ծառի մը ճիւղը շարժեցաւ հովին պատճառով, մեզմէ ո՞վ կրնայ գիտնալ թէ այդ հովը ե՞րբ, ուրկէ՞ եւ ինչպէ՞ս սկզբնաւորուեցաւ: Ո՛չ ոք: Այս մեր անգիտութիւնը սակայն պատճառ չի կրնար ըլլալ որ մերժենք հովին իրականութիւնը: Պէտք չունիմ օրինակները բազմացնելու: Զեզմէ իւրաքանչիւրը կրնայ յիշել բազմաթիւ բաներ, որոնք կը պատահին իր կեանքին մէջ, եւ որոնք սակայն անհասկնալի եւ անըմբոսնելի կը մնան իրեն համար:

3- Ուշագրաւ է որ երբ Քրիստոս Պետրոս առաքեալին մօտ տգիտութիւն եւ անհասկացողութիւն տեսաւ, չհրաժարեցաւ անոր ոտքերը լուալու իր ծրագիրէն: Հոսկէ կը սորվինք այն, որ Աստուած կը գործէ մեր կեանքին մէջ առանց ակնկալելու եւ սպասելու որ հասկնանք ամէն ինչ որ կ'ընէ: Աստուած չ'ըստասեր որ ամէն ինչ հասկնանք որպէսզի սկսի գործել: Ան կը գործէ ըսելով. *«Ինչ որ կ'ընեմ՝ դուն հիմա չես հասկնար, բայց յետոյ պիտի հասկնաս»*: Մեր անգիտութիւնը կամ տգիտութիւնը չէ որ զԱստուած անգործութեան կը դատապարտէ, այլ մեր անհաւատութիւնը: Աստուած պիտի չդատապարտէ մեզ, մեր կեանքը լեցնող դէպքերն ու երեւոյթները հասկնալու մեր անկարողութեան համար, բայց վստահաբար պիտի դատապարտէ մեզ մեր անհաւատարմութեան, անհաւատութեան եւ անհնազանդութեան համար:

4- Մեր անգիտութիւնը պէտք չէ խախտէ մեր հաւատքը հանդէպ Քրիստոսի: Երբ կ'անգիտանանք դժբախտ պատահարի մը պատահումին պատճառը, պէտք չէ հարցականի տակ առնենք Աստուծոյ հաւատարմութիւնը հանդէպ մեզի: Բոլորս ալ գիտենք որ Յոբ ի՛նչ տեսակի նեղութիւններու հանդիպեցաւ (Յոբ 1.13-19, 2.7-8): Գիտենք նաեւ որ Յոբ բնա՛ւ չհասկցաւ թէ ինչո՛ւ այդ բոլորը իրեն պատահեցան. ահա թէ ինչո՛ւ Աստուծոյ ըսաւ. *«Յայտնէ ինձի թէ ի՛նչ բանի համար ինձի հետ կը վիճիս»* (Յոբ 10.2): Իսկ հետը վիճող իր երեք բարեկամներուն ըսաւ. *«Հասկցուցէ՛ք ինձի, թէ ի՞նչ բանի մէջ սխալեք եմ»* (Յոբ 6.24): Հակառակ որ ան չէր գիտեր իրեն պատահած թշուառութեանց պատճառը, բայց ան բնա՛ւ չմեղանչեց Աստուծոյ դէմ (Յոբ 1.22, 2.10): Ճշմարիտ քրիստոնեայ մարդը երբ սկսի բաղիւնը նեղութեանց ալիքներուն, Յոբի նման պէտք է ըսէ. *«Թէեւ անհկա զիս սպաննէ, ես անոր պիտի յուսամ»* (Յոբ 13.15):

5- Պետրոս առաքելալ խորհեցաւ որ Քրիստոս կ'ընէր այնինչ որ պէտք էր ընել: Ան փորձեց սրբագրել իր Ուսուցիչը: Գալով մեզի, մենք ալ արդեօք յաճախ չի՞ պատահիր որ չհաւնինք Քրիստոսի կատարածը եւ յանդգնինք մեր «իմաստութեամբ» օգտակար դառնալ իրեն: Քանի՛ անգամներ աղօթքի պահուն փորձած ենք «խել տալ» Աստուծոյ: Շատ մը գործեր աղօթքով Աստուծոյ կը յանձնենք, բայց միւս կողմէն միջամուխ կ'ըլլանք անոր գործերուն: Կ'աղօթենք եւ աղօթքի ընթացքին Աստուծոյ կը ստրվեցնենք իր ընելիքը: Կը մշտենք անոր գործն ու գործի եղանակը: Անմտութիւն է մտածել որ կրնանք օգտակար դառնալ Աստուծոյ: Ամենագէտին գիտութի՞ւն պիտի ստրվեցնենք:

*«Դուն հիմա չես հասկնար»:* Ո՞վ կրնայ հասկնալ Քրիստոսի գործը իր սկզբնական հանգրուանին: Շատ յաճախ մեր կեանքներուն մէջ կը պատահին բաներ, որ օրեր, շաբաթներ, ամիսներ եւ նոյնիսկ տարիներ ետք միայն կը գիտնանք թէ ինչո՞ւ ատոնք պատահեցան: Միջամուխ չըլլանք մեր կեանքներուն մէջ Քրիստոսի կատարած գործերուն: Ան գիտէ թէ ի՞նչ կ'ընէ: Մե՛նք է որ շատ անգամ չենք գիտեր եւ չենք հասկնար անոր կատարածը:

Երբ Քրիստոս Պետրոսի ըսաւ որ իրեն հետ բաժին պիտի չունենայ եթէ երբեք թոյլ չտայ որ իր ոտքերը լուայ, այն ատեն Պետրոս պատասխանեց ըսելով. *«Տէ՛ր, ուրեմն ո՛չ միայն ոտքերս լուա, այլ նաեւ ձեռքերս եւ գլուխս»* (Յհ 13.9): Պետրոս տակաւին կը շարունակէ չհասկնալ թէ ի՞նչ էր որ կը պատահէր: Եթէ երբեք հասկցած ըլլար պատահածը, Քրիստոսի պիտի չըսէր. *«Լուա նաեւ գլուխս»*, որովհետեւ ստրված պիտի ըլլար որ գլուխը Քրիստոս ի՛նքն է եւ Գլուխը լուացուելու պէտք չունէր, որովհետեւ անիկա լուացուած ու մահուր է ի յաւիտենից, ժամանակներէն առաջ: Ահա թէ ինչո՞ւ Քրիստոս անոր ըսաւ. *«Ան որ լուացուած է՝ մահուր կ'ըլլայ, հետեւաբար միայն ոտքերը լուայ պէտք է»* (Յհ 13.10): Քրիստոս կը մերժէ լուայ Պետրոս առաքելալի գլուխը, որպէսզի ստրվեցուցած ըլլայ անոր եւ բոլոր առաքելալներուն, որ ի՛նքն է *«Գլուխը մարմնին, այսինքն՝ եկեղեցիին»* (Կղ 1.18, Եփ 1.22, 4.15, 5.23) եւ չկա՛յ ուրիշ Գլուխ (Ես 45.5), չկա՛յ ուրիշ Աստուած (Ես 46.9, Մր 12.32), չկա՛յ ուրիշ Վեմ (Ես 44.8, Ա.Կր 3.11, Ա.Պտ 2.4):

*«Ան որ լուացուած է՝ մահուր կ'ըլլայ»:* Սիրելի՛ ընթերցող, դուն ալ լուացուած ես Քրիստոսի արիւնով, մահրուած ես մեղքերէդ, ներմակ պարեգօտ ստացած ես երկնաւոր Հօրմէդ, դարձած ես ժառանգորդ Աստուծոյ *«եւ ժառանգակից Քրիստոսի»* (Հո 8.17): Զըլլայ որ դուն ալ մաս կազմես մարդոց այն խումբին, որոնք իրենք գիրենք մահրուած եւ սրբուած կը զգան, եւ հետեւաբար, կարիքը չեն զգար Քրիստոսի գալու եւ մահրուելու: Յիսուս ջուրով լուաց իր աշակերտներուն ոտքերը, նախապատկերացնելու համար այն մշտարիտ մահրութիւնը, հոգեւոր մահրութիւնը, որ պիտի շնորհուէր իր արիւնով, բոլոր խնդրողներուն,

բոլոր փնտոողներուն, բոլոր բաղոողներուն: Մաքրութիւնը ջուրով սկսաւ, բայց արիւնով ամբողջացաւ եւ իր կատարելութեան հասաւ:

Ճի'շդ է որ Քրիստոս եղաւ միակը որ լուաց իր աշակերտներուն ոտները, բայց չուզեց միակը մնալ, ահա թէ ինչո՛ւ անոնց ըսաւ. «*Եթէ ես՝ որ Տէր եւ Վարդապետ եմ՝ լուացի ձեր ոտները, դուք ալ պարտաւոր էք իրարու ոտները լուալ*» (Յե 13.14): Ի՞նչ է այստեղ ըսել ուզուածը: Այստեղ ըսել ուզուածը այն է, որ յետէ մէկը որ Քրիստոսով կը հասնի հոգեւոր բիրեղացումի եւ սրբութեան, պարտաւորութիւն պէտք է սեպէ ուրիշներն ալ առաջնորդելու Քրիստոսի, որպէսզի անոնք եւս հոգեւոր բիրեղացումի եւ սրբութեան պարգեւը ստանան Քրիստոսէ:

Զուր տեղ չէ որ Քրիստոս այստեղ ինքզինք Տէր եւ Վարդապետ կը կոչէ: Քրիստոս ոտնլուայի արարողութեամբ, կ'ուսուցանէ մեզի, որ նշմարիտ տէրը, տիրողն ու տիրապետողը չէ, հրահանգներ եւ հրամաններ արձակողը չէ, եւ ո՛չ ալ նշմարիտ վարդապետը լոկ վարդապետողն ու ճատ խօսողն է, յորդորներ եւ իրատականներ տուողն է, այլ իրական տէրը ան է, որ իր դիրքը կ'օգտագործէ իր նմաններուն հոգեւոր փրկութեան եւ անումին համար: Իրական տէրը ծառայող մարդն է: Իրական վարդապետը միայն իր ձայնը լսելի դարձնողը չէ, այլ նաեւ լսողն է ձայնը աղփատին եւ լքուածին:

Այստեղ «տէր» բացատրութիւնը ակնարկութիւն է բարձր դիրքի եւ պաշտօնի, իսկ «վարդապետ» բացատրութիւնը ակնարկութիւն է հրահանգ արձակելու եւ ուղղելու այն իրաւասութեան, որ այդ բարձր դիրքին եւ պաշտօնին վրայ եղող մարդուն կը պատկանի: Հետեւաբար, Քրիստոսի սորվեցուցածը այն է, որ քրիստոնեայ մարդը ի՛նչ դիրքի եւ պաշտօնի վրայ ալ գտնուի, ի՛նչ հանգամանքի եւ կարողութեան տէր մարդ ալ ըլլայ, այդ բոլորը պէտք է նկատէ Աստուծոյ կողմէ իրեն ընծայուած առիթ եւ պատեհութիւն, ծառայելու իր նմանին:

Քրիստոս իր աշակերտներուն ոտները լուալով լուացած ու մաքրած եղաւ անօրէնութիւնը մարդկային ցեղին: Ան իր այս արարքով եղաւ խոնարհութեան մեծագոյն դասատուն: Ան թէպէտ այս հանգրուանին իր յաւիտենական փառքին մէջ մտնելու կը պատրաստուէր, բայց ասիկա պատճառ մը չեղաւ որ ան հպարտանար եւ դադրէր նման մարդասիրական արարքներ կատարելէ: Թող աշխարհասէր մարդիկ օրինակ առնեն մեր սիրելի Փրկիչէն, որպէսզի երբ բարձր դիրքերու հասնին կամ հասնելու վրայ ըլլան, չսկսին իրենց նմանը անտեսել:

Ո՛վ մարդ, քանի որ Տէրդ եւ Աստուածդ յանձն առաւ ծնրադրել ոտներուդ առջեւ եւ լուալ զանոնք ջուրով, չե՞ս ուզեր դուն ալ ծնրադրել իր առջեւ եւ ապաշխարութեանդ արցունքներով լուալ անոր ոտները քու գործած ահաւոր մեղքերուդ համար:

## ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՆՊԱՏԱԿԸ ՍԻՐԵԼՆ Է

Մեր Քրիստոնեական կեանքին նպատակը սիրելն է եւ ո՛չ թէ սիրուիլը: Չենք կրնար մարդոց ստիպել որ մեզ սիրեն: Մերը ստիպողութիւն չի նանչնար: Սիրուելու համար պէտք է սիրել: Ուրիշներուն կողմէ սիրուիլը՝ արդիւնքն է ուրիշները մեր սիրելուն: Սիրելը մեր պարտականութիւնն է, իսկ սիրուիլը՝ մեր իրաւունքը: Իր պարտականութիւնը չկատարող մարդը իրաւունք չունի իր իրաւունքը պահանջելու ուրիշներէն:

Սիրելը մեր պարտականութիւնն է ուրիշին հանդէպ, մինչ սիրուիլը՝ ուրիշին պարտականութիւնն է մեզի հանդէպ: Մենք պէտք չէ հետաքրքրուինք թէ ուրիշը իր սիրելու պարտականութիւնը կ'ընէ՞ մեզի հանդէպ, թէ՛ ոչ: Մենք միայն մե՛ր պարտականութեամբ պէտք է հետաքրքրուինք, եւ նայինք որ իսկապէս կը սիրե՞նք մեր նմանները: Ուրիշին պարտականութիւնը ուրիշին ձգենք, իսկ մենք, մեր պարտականութիւնը լաւագոյնս ընելու մասին մտածենք: Եթէ իւրաքանչիւրս միայն իր պարտականութեան ուշադրութիւն դարձնէ, աշխարհի մէջ պարտական ու պարտապան մարդ չի մնար:

Քրիստոսի պատուէրն է որ գԱստուած սիրողը պէտք է իր եղբայրն ալ սիրէ (Ա.Յի 4.21): Քրիստոնէութիւնը աստուածսիրութեան եւ մարդասիրութեան կրօնք է: *«ՁԱստուած եւ ընկերը սիրելը միեւնոյն են. երկու ալ են որ կը բոխին միեւնոյն աղբիւրէն. երկու ծաղիկ են որ կը փթթին միեւնոյն ցօղունի վրայ»* ըսած է գրիչ մը: Կարելի չէ՛ սիրել գԱստուած եւ չսիրել Աստուծոյ կողմէ եւ Աստուծոյ որդիները ըլլալու համար ստեղծուած մարդիկը: Կարելի չէ՛ պաշտել խաչեալ Փրկիչը եւ չսիրել մարդը՝ որուն սիրոյն համար ան խաչուեցաւ: Կարելի չէ՛ ընդունիլ գՔրիստոս եւ մերժել մարդը՝ որուն ընդունելու համար է որ ան աշխարհ եկաւ: Ի վերջոյ, կարելի չէ՛ պատուել գՔրիստոս եւ անպատուել մարդը՝ որուն աստուածային պատիւ շնորհելու համար, Քրիստոս, հրաժարեցաւ իր աստուածային փառքէն ու պատիւէն:

Ինչպէս ծառան անարգողը անոր տէրը անարգած կ'ըլլայ, նմանապէս ալ մարդը անարգողը գԱստուած է որ անարգած կ'ըլլայ, որովհետեւ մարդը Աստուծոյ ծառան է: Յիշեցէ՛ք չար մշակներուն առակը. մշակները ծառաները ձեծելով, անարգած չեղա՞ն անոնց տէրը, որ նոյնիման Աստուած էր: Իսկ Աստուած, իր գալստեան օրը պիտի չպատժէ՞ զանոնք (Մտ 21.33-41): Մեզմէ ո՞վ պիտի յանդգնէր իշխանի մը սիրած ծառան ձեծել եւ զինք ետ իշխանին քով դրկել: Ո՛չ միայն անոր ծառային պիտի չհամարձակէինք վնաս մը հասցնել, այլ նոյնիսկ անոր ունեցած մէկ անասունին: Եթէ զգուշութեամբ պիտի վերաբերէինք իշխանի մը անասունին հետ հետ, հապա որքա՞ն աւելի զգուշութեամբ պէտք է վերաբերինք մեր եղբայրներուն եւ քոյրերուն հետ:



Աստուած սիրելը ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ սիրոյն համար մարդը սիրելը: Չի՞ պատահիր որ երբեմն սիրեմք այս կամ այն մարդը՝ մեր այս կամ այն բարեկամին սիրոյն համար: Վատահաբար: Եւ պէտք չէ՞ սիրեմք մեր նմանները, մեր մեծ Բարեկամին՝ Քրիստոսի սիրոյն համար: Քրիստոս մարդիկը իր բարեկամները կոչեց (Յհ 15.14-15): Քրիստոսի բարեկամներուն թշնամութիւն ընողը Քրիստոսի է որ թշնամութիւն ըրած կ'ըլլայ: Ո՛չ ոք կրնայ բարեկամ մնալ Քրիստոսի հետ, եթէ թշնամի դառնայ Քրիստոսի բարեկամներուն՝ մարդոց:

Պահ մը ենթադրէ որ սեփական գաւակիդ արիւնով ֆու բարեկամներէդ մէկուն կեանքը փրկեցիր, պիտի չվշտանայի՞ր եթէ ուրիշ մը ֆու գաւակիդ արիւնով փրկուած բարեկամդ խոցոտէր: Վատահաբար: Եւ ինչո՞ւ. որովհետեւ անոր կեանքը ֆու գաւակիդ մահը արժեց: Նոյնն է պարագան Աստուծոյ եւ մեր: Աստուած ալ կը վշտանայ երբ կոշտ կերպով վարուիմք մեր նմաններուն հանդէպ, որովհետեւ ան իր Որդին գոհեց անոնց համար: Ինչպէս պտուղը անարգողը անարգած կ'ըլլայ ծառը, այնպէս ալ մարդը անարգողը անարգած կ'ըլլայ գԱստուած, որովհետեւ մարդը Աստուծոյ սիրոյն պտուղն է:

Եթէ երբեք Աստուծոյ հետ սիրալիր յարաբերութեան մէջ ենք, անխուսափելիօրէն մեր նմաններուն հետ ալ սիրալիր յարաբերութեան մէջ կ'ըլլանք: Սիրող սիրտ մը կը բացուի դէպի Աննմանը եւ դէպի իր նմանը: Աստուծոյ հետ մեր ունեցած սիրոյ ջերմ յարաբերութեան յաջողութիւնը, պայմանաւորուած է ուրիշներուն հետ մեր ունեցած սիրոյ ջերմ յարաբերութեան յաջողութեամբ: Այլ խօսքով, իր նմանին հանդէպ անկեղծ սէր չունեցողը, Աստուծոյ հանդէպ ալ անկեղծ սէր չի կրնար ունենալ: Աստուծոյ կողմէ մեր ներսիդին դրուած սէրը, Աստուծոյ սէրը փնտոող եւ Աստուծոյ սիրոյն կարօտ մարդոց կը պատկանի: Տա՛նք մարդոց այնինչ որ մարդոց կը պատկանի: Տա՛նք առանց խտրութիւն դնելու անոնց միջեւ:

Նմանիմք ամպին որ իր անձրեւը կը թափէ ե՛ւ բարեգործ ե՛ւ չարագործ մարդոց վրայ: Նմանիմք ծառին որ իր պտուղը կու տայ զինք փափայողին եւ զինք ֆարկոծողին հաւասարապէս: Մեզ սիրողներուն սիրելը մեր պարտականութիւնն է, իսկ մեզ չսիրողներուն սիրելը՝ մեր կոչումն է: Բարեկամները սիրելը մարդկային է, իսկ օտարները սիրելը՝ աստուածային եւ աստուածայնացնող: Մեմք Աստուծոյ որդիները ըլլալով աստուածայինն է որ ցոյց պէտք է տանք: Պէտք է մնայուն կերպով յիշեմք որ մեր չսիրած մարդիկը Աստուծոյ համար սիրելի են: Աստուած կրնայ հաւնիլ մեր չհաւնածներուն: Կրնայ տեսութեան գալ մեր կողմէն անտեսուածներուն:

Մարդիկ մեզի համար կրնան սիրելի չըլլալ, բայց Աստուծոյ համար երբեք ալ այդպէս չեն: Սէրը կը պահանջէ որ ակնածանքով մօտենանք բոլորին, որովհետեւ անոնք Յիսուսի արեան գինն են: Մարդիկ դժբախտաբար շատ աւելի գգուշութեամբ կը վերաբերին իրենց ունեցած

թանկագին առարկաներուն հետ, քան իրենց նմաններուն հետ, որոնք նմաններն են Աստուծոյ: Մեզմէ ո՞վ պիտի համարձակէր անարգանքով վերաբերիլ թագաւորի մը գաւակին հետ: Ո՛չ միայն պիտի չհամարձակէինք անարգանքով վերաբերիլ թագաւորի մը գաւակին հետ, այլ նոյնիսկ անոր ծառային կամ ստրուկին հետ: Ինչո՞ւ յարգալից կերպով կը վերաբերինք երկրաւոր թագաւորի մը ծառային հետ, իսկ Աստուծոյ գաւակներուն հետ յանախ անյարգալից կերպով կը վերաբերինք: Մեզմէ ո՞վ իր ծառան կը սիրէ եւ կը պատուէ իր որդիէն աւելի: Ինչպէս մեր գաւակները մեր ծառաներէն աւելի կը սիրենք, այնպէս ալ աւելի ակնածանք պէտք է ունենանք Աստուծոյ գաւակներուն նկատմամբ քան երկրաւոր թագաւորի մը ծառաներուն նկատմամբ:

Ինչպէ՞ս կրնանք չսիրել մեր նմանը՝ որուն սիրոյն համար Աննմանը մեզի նման դարձաւ: Ամէն մարդ կ'ուզէ որ բոլորը զինք սիրեն: Հետեւաբար, սիրենք բոլորը եթէ կ'ուզենք որ բոլորը մեզ սիրեն: Սիրուիլը մարդոց իրաւունքն է եւ մենք իրաւունք չունինք մարդոց իրաւունքը չտալու մարդոց: Ո՞ւր է մարդասիրութեան մեր կրակը Աստուծոյ սէրը ընդունածներուս կեանքին մէջ: Եթէ կը դժուարանանք մեր նմանները սիրել, ատիկա ապացոյց մըն է, որ Քրիստոսի սէրը չունինք մեր սիրտերուն մէջ: Նման պարագայի պէտք է սէր խնդրենք Աստուծմէ: Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. *«Սէր ուզեցէ՛ք Աստուծմէ, ո՛վ մարդիկ որովհետեւ սէրն է միայն որ կեանքի մէջ կը զգացնէ թէ դու՛ք լեցուն էք, լեցուն այնքան՝ որ չէ՛ք կրնար չպարպուիլ, չէ՛ք կրնար ձեր գեղուն քաժակէն չհրամցնել ու չխմցնել նաեւ ուրիշներուն»*:

Եթէ սէր ունինք Քրիստոսէ եւ Քրիստոսով, չենք կրնար չսիրել Քրիստոսաբար: *«Ահա այսպէ՛ս կը զանազանուին Աստուծոյ որդիներն ու Աստանային որդիները. – Ով որ իր եղբայրը չի սիրեր՝ Աստուծոյ որդի չէ»* (Ա.Յհ 3.10): Ինչպէս երբ մէկը չսիրէ իր եղբայրը, հայրը զինք հարազատ որդի չի նկատեր, նոյնպէս ալ երբ մենք չսիրենք մեր եղբայրը, չենք կրնար Աստուծոյ սիրելի՛ եւ հարազատ գաւակները ըլլալ: Եթէ երբեք *«Աստուած սէր է»* (Ա.Յհ 4.8), այս կը նշանակէ որ սէր ունեցող մարդը զԱստուած է որ ունի իր սիրտին մէջ:

Սիրելի՛ ու սիրո՞ղ Աստուծոյ մը գաւակ եղողը՝ սիրելի՛ ու սիրո՞ղ գաւակ մը պէտք է ըլլայ: Ինչպէս վարդը վարդ է իր բոյրով ու տեսքով, այնպէս ալ քրիստոնեան քրիստոնեայ է իր սիրով: Սէրը սիրտի անուշահոտութիւնն է: Զսիրող սիրտ մը կը փարշահոտի: Սիրող սիրտը, իր անուշահոտութեամբ կ'առիւնքէ մարդոց հոգիները:

Մեզմէ իւրաքանչիւրը ինքզինք թող ըմբռնէ իբրեւ դեսպանը Տէր Յիսուսի սիրոյն: Քաղցր ըլլանք մեր նմաններուն հետ, որպէսզի առիթ մը տուած ըլլանք անոնց փանջնալու Աստուծոյ փաղցրութիւնը: Սիրենք բոլորը մեր բոլոր սիրտով, որպէսզի բոլորը գիտնան, որ այն Աստուածը որուն կը պաշտենք եւ կը սիրենք՝ սիրոյ Աստուած է, սիրող Աստուած է, սիրտի Աստուած է:

## «ԱՍՏՈՒԱԾ ԱՅՆՔԱՆ ՍԻՐԵՑ ԱՇԽԱՐՀԸ...»

*«Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ» (Յհ 3.16):*

*«Աստուած... սիրեց աշխարհը»:* Երբ Սուրբ Գիրքը կը հաստատէ թէ Աստուած սիրեց աշխարհը, յստակօրէն ցոյց կու տայ, որ Աստուած չսիրե՛ց աշխարհի մէկ մասը միայն, չսիրե՛ց մարդկութեան որոշ մէկ խաւը միայն, չսիրե՛ց Հրէաստանն ու Հրեայ ժողովուրդը միայն, այլ սիրեց ողջ աշխարհը, համակ մարդկութիւնը: Ճի՛շդ է որ Քրիստոս աշխարհ գալով իր առաքելութիւնը իրագործեց Պաղեստինի ու Հրէաստանի մէջ, բայց Աստուծոյ սէրը Քրիստոսով յայտնուած ու յայտարարուած, Պաղեստինի ու Հրէաստանի նեղ սահմաններէն ներս չպարփակուեցաւ, այլ անոր նեղ սահմաններէն դո՛ւրս եկաւ, ժայթփեց՛աւ, ի՛ր թելերուն տակ առնելու համար ամբողջ մարդկութիւնը:

Աստուծոյ սէրը տեղատարափօրէն անձրեւեց համայն մարդկութեան վրայ, այնպէ՛ս մը անձրեւեց, որ ամէ՛ն մարդ թրջուեցաւ, ամէ՛ն ծարաւ յագեցուեցաւ, զԱստուած փնտոող ամէ՛ն հոգի ցնծութեամբ երգեց Քրիստոսով իրեն շնորհուած փրկութեան համար: Քրիստոսի սիրոյն յորդառատ անձրեւումի՛ն դիմաց մարդկային ամէ՛ն սիրտ մոմի՛ պէս կը հալի Աստուծոյ կամփին առջեւ, մարդկային ամէ՛ն հոգի ջուրի՛ պէս կը թափի Աստուծոյ ոտքերուն առջեւ: Երբ մարդ արարածը սորվի Մարիամի նման Քրիստոսի ոտքերուն բով նստիլ (Ղկ 10.39), ա՛յն ատեն միայն պիտի սկսի խորապէս գիտակցիլ, թէ ինք պէ՛տք ունի Քրիստոսի ջերմ ներկայութեան, եւ թէ իր կեանքը դա՛ոն ու դատա՛րկ է առանց անոր:

*«Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը...»:* Տակաւին, Աստուած *«սիրեց աշխարհը»* բացատրութիւնը, կը սորվեցնէ մեզի որ աշխարհի մէջ ապրող ամէ՛ն մէկ մարդ անձնապէս արժանի դարձաւ Աստուծոյ սիրոյն: Աստուած Քրիստոսի արեան գի՛նը կը նկատէ իւրաքանչիւր անհատ: Աստուած կը հետապնդէ փրկութիւնը ամէ՛ն մէկ մարդու: Ամէ՛ն մէկ մարդ Աստուծոյ սիրոյն եւ հետաքրքրութեան առարկան է, որովհետեւ ամէ՛ն մէկ մարդ Քրիստոսի արեան գինն է: Եւ մենք իբր այդպիսի՛ն պէտք է դիտենք եւ յարգենք մեր նմանները: Աստուած մեզ արժէք կը նկատէ եւ մենք իրաւունք չունի՛նք զիրար անարժէք նկատելու: Աստուծոյ զաւակներուն հայեացքը Աստուծոյ հայեացքէն տարբեր պէտք չէ՛ ըլլայ:

Աստուած ո՛չ ոք կ'անտեսէ: Աստուած անտեսանելի է բայց կը տեսնէ անտեսուածը: Աստուած ամենագոր է բայց կը տեսնէ ամենատկարը: Բարձրեալ է բայց կը տեսնէ խոնարհը: Աստուածաշունչն ալ նո՛յնը կը հաստատէ. *«Թէպէտ Տէրը բարձր է, բայց խոնարհը կը տեսնէ»* (Սղ 138.6): Իսկ Յոբի գիրքը կ'ըսէ. *«Աստուած հզօր է, բայց մէ՛կը չ'արհամարհեք...»* (Յոբ 36.5): Այսպիսի Աստուած մը արժանի է մեր բերանները իրեն համար փառաբանական երգերով եւ ալելուիաներով բա՛ց տեսնելու:

Երբ կը կարդանք «Աստուած... սիրեց աշխարհը» բառերը, այն տպաւորութիւնը պէտք է ունենանք որ աշխարհ արժանի էր Աստուծոյ սիրոյն եւ այդ էր պատճառը որ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց: Աշխարհի մէջ ոչինչ կար զԱստուած հրապուրող: Մարդկային ցեղին նախանձելի վարքն ու բարքը չէր որ զԱստուած մղեց իր Որդին աշխարհ դրկելու: Մարդոց սէր ու հաւատքը չէր որ Երկնաւորը երկիր իջեցուց:

Աշխարհ ո՛չ միայն Աստուծոյ սիրոյն արժանի չէր, այլեւ՝ աստուածային այդ սիրոյն հակասող եւ հակադրուող էր: Ո՛ր չ մէկ պատճառ կար որ *Աստուած այնքան սիրէր աշխարհը*, բայց հազար ու մէկ պատճառ կար որ Աստուած բնա՛ւ «չսիրէր» աշխարհը: Բայց եթէ երբեք Աստուած սիրե՛ց աշխարհը հակառակ աշխարհի ապերախտ ու դաւաճան կեցուածքին, այդ պարզապէս ցոյց կու տայ երկու բան.–

1.– Աստուծոյ սէրը կախեալ չէ իրեն հանդէպ մեր ունեցած վերաբերմունքէն կամ մեր ինչպիսի՛ անձնաւորութիւն ըլլալէն: Աստուած իրեն թշնամութիւն ընողները սիրող Աստուած է: Բայց բնականօրէն իր սէրը հանդէպ զինք սիրողներուն տարբեր սէր է, որովհետեւ աստիկա հայրական սէր է (Առ 8.17): Աստուած չ՛սպասեր որ աշխարհ սիրէ զինք որպէսզի ի՛նքն ալ սկսի սիրել աշխարհը: Աստուած սիրե՛ց մեզ մեր նախնան գոյութիւնը: Սիրե՛ց մեզ երբ տակաւին մեղք չէինք գործած, եւ շարունակեց սիրել մեզ երբ մեղք գործեցինք: Այո՛, Աստուած չսիրեց մեզ որովհետեւ բարի էինք կամ բարեգործ եւ ո՛չ ալ դադրեցաւ մեզ սիրելէ երբ չար ու չարագործ դարձանք: Ո՛չ մեր բարի ըլլալը կրնայ զԱստուած աւելի՛ մօտեցնել մեզի եւ ո՛չ ալ մեր չար ըլլալը կրնայ զԱստուած աւելի՛ հեռացնել մեզմէ: Աստուած կը սիրէ մեզ եւ կը մօտենայ մեզի ո՛չ թէ որովհետեւ բարի ենք, այլ որովհետեւ ի՛նքն Սէ՛ր է: Սէրը մի՛շտ կը սիրէ: Սէրը մի՛շտ կը մօտենայ: Սէրը մի՛շտ կը նախաձեռնէ:

2.– Աստուած կը սիրէ եւ չի կրնար չսիրել որովհետեւ սէրը Աստուծոյ բնութիւնն է: Երբ Աստուած կը սիրէ՝ խորքին մէջ ինքզինքն է որ կ'ըլլայ: Կարելի չէ պատկերացնել Աստուած հեռու սէրէն: Եթէ հեռացնենք սէրը մարդէն՝ մարդը կը շարունակէ մարդ մնալ, բայց եթէ հեռացնենք սէրը Աստուծմէ՝ Աստուած կը դադրի Աստուած ըլլալէ: Տաճարները բնութիւնն է կրակին: Ո՞վ կրնայ տաճարները հեռացնել կրակէն: Ինչպէս կարելի չէ տաճարները հեռացնել կրակէն, այնպէս ալ կարելի չէ սէրը հեռացնել Աստուծմէ: «*Աստուած սէր է*» (Ա.Յհ 4.8) կը հաստատէ սիրոյ առաքեալը՝ Յովհաննէս: Յանախ լսած ենք քարոզիչներ կ'ըսեն. «*Սէրը Աստուծոյ բնութեան մաս կը կազմէ*»: Սիա՛լ է այս հաստատումը: Սէրը բան մը չէ որ Աստուծոյ բնութեան մաս կը կազմէ: Սէրը Աստուծոյ բնութիւնն իսկ է: Առաքեալը չ'ըսեր. «*Աստուած սէր ունի*» այլ կ'ըսէ. «*Աստուած սէր է*»: Սէր ունենալը տարբեր է, սէր ըլլալը՝ տարբեր: Արդեօք «*Ես ջուր ունիմ*» ըսելը եւ «*Ես ջուր եմ*» ըսելը նո՞յն բաներն են: Ըսել ուզածս այն է, որ Աստուած սէր է՝ եւ ո՛չ թէ սէր ունեցող մը:

Եւ այդ սէր-Աստուածն էր որ իր սէր-Որդին տուաւ աշխարհին: Աստուած գՔրիստոս տուաւ մարդոց որպէսզի մարդիկ Քրիստոսի նամբով իրենք գիրենք տան Աստուծոյ: Քրիստոս խոովութեան եւ խոովարարներու ձեռքը յանձնուեցաւ, որպէսզի դառնայ Աստուծոյ հաշտութեան ձեռքը կարկառուած դէպի մարդը: Մեզմէ ո՞վ սիրայօժար իր որդին կրնայ յանձնել ապերախտ եւ ուրացող մարդոց ձեռքը: Ո՞ր հայրը կամ մայրը կրնայ սիրայօժար կերպով յանձն առնել իր որդիին արեամբ հաշտուիլ իր թշնամիին հետ: Ո՞ր թագաւորը իր դաւաճան մէկ զինուորը գերութենէ ազատագրելու համար իր սիրասուն որդին թշնամիներուն կը յանձնէ: Ո՞չ մէկ մարդ կրնայ նման բան ընել: Աստուած սակայն շա՛տ աւելին ըրաւ:

Աստուած սիրե՛ց մարդկութիւնը երբ անոնք կ'ատէին զինք: Սիրե՛ց, երբ անոնք մահուան դատապարտուած էին: Սիրեց եւ հետաքրքրուեցաւ իրմով չհետաքրքրուողներով: Իր բարեբարի եւ հաշտարարի ձեռքը երկարեց անոնց երբ տակաւին անոնք թշնամական վերաբերմունք կը ցուցաբերէին իրեն հանդէպ (Հո 5.10): Աստուած երբ որոշեց իր Որդիին նամբով գալ եւ հանդիպիլ մարդոց, չորոշեց որովհետեւ մարդիկը զինք կը փնտռէին, այլ որովհետեւ ի՛նք կը փնտռէր զանոնք:

«Մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ»: Աստուած իր Միածինը տուաւ: «Միածին» բառը կը թագմանուի երկու ձեւով. (1) միակ ծնունդ, այսինքն՝ թէ Քրիստոս իր Հօրը միակ Որդին է եւ թէ Հայրը չունի ուրիշ որդիներ որոնք իրեն էակից եւ բնութեանակից են: Եւ (2) մէկէ ծնած, այսինքն՝ մէկ Աստուծմէ ծնած, ի յաւիտենից: Այս բացատրութիւնները տուի, ըսելու համար թէ Աստուած չունէր բազմաթիւ որդիներ որոնք իրեն բնութեանակից ըլլային եւ որոնցմէ մէկը աշխարհ ղրկէր, այլ՝ ունէր միայն մէկ Որդի, եւ իր այդ մէկ հատիկ Որդին էր որ աշխարհ ղրկեց: Աստուծոյ համար մեծ սիրոյ արտայայտութիւն պիտի ըլլար աշխարհ ղրկել հրեշտակ մը որպէսզի մեռներ մեզի համար, շատ աւելի մեծ սիրոյ արտայայտութիւն պիտի ըլլար եթէ երբեք ունենար տասը որդիներ եւ անոնցմէ մին աշխարհ ղրկէր, իսկ ունենալ միայն մէկ Որդի եւ զանկա մահուան յանձնել՝ գեղեցկագոյն, անսահման եւ անբացատրելի սիրոյ արտայայտութիւն է:

Աստուած իր անսահման սէրը մեզի հանդէպ չարտայայտեց իր Որդին ղրկելով, այլ՝ իր Որդին տալով: «Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը որ մինչեւ իսկ իր միածին Որդին ՏՈՒԱԻ»: Այո՛, Աստուած տուաւ իր Որդին: Զբաւարարուեցաւ ղրկելով զայն, այլ տուաւ զայն: Այստեղ «տուաւ» կը նշանակէ գոհաբերեց, ընծայաբերեց, մահուան մատնեց: Հին Կտակարանի մէջ յիշուած նահապետներէն ու մարգարէներէն, թագաւորներէն ու հովիւներէն, առաջնորդներէն ու քահանաներէն ո՛չ ոքի համար կ'ըսուի թէ Աստուած տուաւ զայն: Բոլորին համար անխտիր կը գործածուի «Աստուած ղրկեց» բացատրութիւնը: Միայն Քրիստոսի համար է որ կը գործածուի տուաւ բացատրութիւնը:

«Տուաւ» բատարութեան մէջ մենք կը տեսնենք Աստուծոյ անհուն սէրը: Քրիստոս որ իր Հօրը ուրախութեան եւ սիրոյ առարկան էր, տրուեցաւ մեզի, որպէսզի մե՛ր ալ ուրախութեան եւ սիրոյ առարկան դառնայ: Քրիստոս Աստուծոյ կողմէ մարդկութեան տրուած մեծագոյն պարգեւն է: Տրւելու լինելու կատարեալ էր եւ նպատակաւոր: Ի՞նչ էր այդ նպատակը: «...որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ»: Յովհաննէս իր առաջին նամակին մէջ նո՛յնը կը հաստատէ. «Աստուած իր միածին Որդին դրկեց աշխարհ, որպէսզի անով կեանք ունենանք» (Ա.Յհ 4.9): Ուրեմն, Քրիստոս իր գոհագործական մահուամբ երկու նպատակ կը հետապնդէր. (1) մեզ փրկել յաւիտենական կորուստէն, եւ (2) մեզի պարգեւել յաւիտենական կեանքով:

*Առաջին*.– մեզ փրկել յաւիտենական կորուստէն: Աստուած երբեք պարտաւոր չէր իր Որդիին արիւնը թափելու մեզ յաւիտենական կորուստէն փրկելու համար: Ան իր պարտականութիւնը լիովին կատարած էր մեզի հանդէպ: Ան ամէն կերպերու դիմած էր մարդիկը դաստիարակելու եւ ուղղութեան բերելու համար, բայց անոնք մերժեցին անսալ Աստուծոյ: Մարդկութիւնը իր անհնազանդութեան պատճառով ամբողջապէս արժանի էր առ յաւետ կորսուելու: Ոչի՛նչ կար որ Աստուած պէտք էր ըսէր եւ չըսաւ: Ոչի՛նչ կար որ Աստուած պէտք էր ընէր եւ չըրաւ: Նո՛յնը կը հաստատէ Աստուած ի՛նք. «Իմ այգիիս ուրիշ ի՞նչ պէտք էր ընէի, որ ես անոր չըրի» (Ես 5.4): Հետեւաբար, Աստուծոյ միջամտութիւնը մարդկային ցեղէն ներս, Աստուծոյ պարգեւն էր եւ ո՛չ թէ պարտաւորութիւնը:

*Երկրորդ*.– մեզի պարգեւել յաւիտենական կեանքով: Ի՞նչ է կամ ո՞վ է յաւիտենական կեանքը: Յաւիտենական կեանքը կեանքի Արարիչէն տարբեր բան մը չէ, իսկ կեանքի Արարիչը Քրիստոս ի՛նքն է (Յհ 1.4): Երբ գ՛րիստոս կը կոչենք կեանքի արարիչ, պէտք է այն տպաւորութիւնը ունենանք որ կեանքը Քրիստոսի անձէն տարբեր մըն է: Քրիստոս ըսաւ. «Ե՛մ եմ կեանքը» (Յհ 14.6, 11.25): Յովհաննէս առաքեալ նաեւ գ՛րիստոս կը ներկայացնէ իբրեւ յաւիտենական կեանք «որ Հօրը հետ էր եւ այժմ՝ մեզի յայտնուեցաւ» (Ա.Յհ 1.2): Աստուծոյ Որդին ունեցողը կեանք ունի, «իսկ ով որ չունի Որդին՝ յաւիտենական կեանք ալ չունի» (Ա.Յհ 5.12):

Սիրելի՛ ընթերցող, ունի՞ս Որդին սիրտիդ մէջ: Դարձած ես ժառանգորդ յաւիտենական կեանքին: Աստուած ա՛յնքան սիրեց քեզ, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի եթէ անոր հաւատաս չկորսուիս, այլ յաւիտենական կեանք ունենաս: Աստուած սիրեց եւ տուաւ: Սէրը կու տայ: Կը սիրե՞ս գԱստուած: Եթէ կը սիրես, սէրդ արտայայտելու համար ի՞նչ կու տաս անոր: Աստուծոյ ուզածը ուրիշ բան չէ եթէ ոչ սիրող. «Որդեա՛կ իմ, բոլ սիրող ինձի՛ տուր» (Առ 23.26): Զե՞ս վստահիր սիրող Աստուծոյ: Վստահէ՛ Աստուծոյ եւ ան յուսախար պիտի չընէ քեզ: Երբ Աստուծոյ ձեռքերուն մէջ ես, գիտցի՛ր որ ապահով ձեռքերու մէջ ես, յաւիտենապէս ապահով, ամբողջապէս ապահով:

## «ԵՐԲ Կ'ԱՂՕԹԵՍ՝ ՄՏԻՐ ՍԵՆԵԱԿԻ»

Քրիստոս *«Մտի՛ր սենեակդ, գոցե՛ր դուռը եւ ծածուկ կերպով աղօթե՛  
ֆու երկնաւոր Հօրդ»* (Մտ 6.6) խօսքով, մեզ կը հրաւիրէ անկեղծ եւ խոր  
յարաբերութեան մէջ մտնելու Աստուծոյ հետ: Իսկ անկեղծ եւ խոր  
յարաբերութիւնը՝ սիրտի յարաբերութիւնն է: Այլ բացատրութեամբ մը,  
Յիսուս կոչ կ'ուղղէ իւրաքանչիւրիս մեր աղօթքները բղիթեցնելու մեր  
սիրտի խորերէն: Սիրտէ բղիթած աղօթքը կը սրբէ մեզ: Եզնիկ Կողբացի  
կ'ըսէ. *«Այն աղօթքը որ սիրտէն կը բղիթի՝ պատարագի փրկութիւն կը  
գործէ»*: Սրտաբուղիս աղօթքը կենդանի պատարագ մըն է:

Աղօթքը մեր սիրտերուն յարաբերիւն է Աստուծոյ սիրտին հետ:  
Որեւէ յարաբերութիւն որ անկեղծ սիրտի անկեղծ սիրով չէ յատկանշուած՝  
անվաւեր է: Աստուած մեզ խորապէս սիրող Աստուած մը ըլլալով կը  
սպասէ որ մեր աղօթքի պահերը խորունկ սիրոյ արտայայտութիւն ըլլան:  
Աստուած անհուն սէր է: Աղօթել Աստուծոյ կը նշանակէ բացուիլ անոր  
անհուն սիրոյն: Իսկ Աստուծոյ անհուն սիրոյն բացուիլ ուզողը՝  
անհունօրէն պէտք է բացուի:

Աղօթքի պահը Տէր Յիսուսի սիրով արբենալու եւ Տէր Յիսուսը մեր  
սիրով արբեցնելու պահն է: Եթէ երբեք կը ձանձրանանք աղօթքի պահուն,  
այդ կը նշանակէ որ հեռու ենք Քրիստոսի սէրէն: Ուրեմն նախ պէտք է  
աղօթել, որ Աստուած մեզի աղօթել, աղօթքը սիրել եւ աղօթքի ընթացքին  
իր ներկայութիւնը զգալ եւ ապրիլ ստրվեցնէ: Եթէ կը սիրենք զՔրիստոս,  
անպայման որ աղօթքի պահը սիրոյ պահ պիտի ըլլայ: Ո՞վ է այն մարդը  
որ իր սիրած մարդոց հետ անհամ եւ անբոյր պահեր կ'անցընէ:

Ինչպէս մեր սիրած մարդոց հետ մեր անցուցած պահերը սիրոյ  
պահեր կ'ըլլան, այնպէս ալ Քրիստոսի հետ մեր անցուցած պահերը  
անխուսափելիօրէն սիրոյ պահեր պիտի ըլլան, եթէ իսկապէս կը սիրենք  
զՔրիստոս: Ո՛չ ոք իր սիրած բարեկամին հետ անհամ պահեր կ'անցընէ:  
Եթէ երբեք Քրիստոս մեր բարեկամն է (Յե 15.14), մեր աղօթքի պահերը իր  
բարերարութեամբ պարուրուելու եւ իր բարութեամբ ողողուելու  
գեղեցկագոյն պահեր պիտի ըլլան:

Ինչպէս մեր կեանքի ընթացքին մեր ունեցած ֆաղքը եւ անոյշ  
պահերը կը սիրենք որ երկար տեւեն, այնպէս ալ եթէ երբեք մեր աղօթքի  
պահերը ֆաղքը եւ անոյշ են մեզի համար, պիտի փափաքենք զանոնք ա՛լ  
աւելի երկարել եւ ո՛չ թէ զանոնք շուտ մը վերջացնելու մասին մտածել:

*«Մտի՛ր սենեակդ, գոցե՛ր դուռը...»*: Քրիստոսի ըսել ուզածը այն չէ,  
որ մենք աղօթելու համար պէտք է մեր նիւթական սենեակները ֆաշուիսի  
եւ դոնները փակենք ու կղպենք: Եթէ Քրիստոսի ըսել ուզածը այս ըլլար,  
ան ինքզինքին հակասած պիտի ըլլար, որովհետեւ ինք շատ յանախ  
կղպուած դոններով սենեակներու մէջ չաղօթեց, այլ՝ ամայի վայրերու մէջ  
(Մր 1.35) եւ երբեմն ալ լեռներու վրայ (Մր 6.46):

Հետեւաբար, աղօթքի սենեակը կրնայ որեւէ տեղ ըլլալ: Կարելի է առանձնանալ ծառի մը ցիւղերուն շուրջն տակ, պարտեզի մը մէկ լուռ անկիւնը, կամ գետակի մը ափին: Կրնանք Աստուծոյ հետ առանձնանալ եւ աղօթել նոյնիսկ երբ շրջապատուած ենք մարդոցմով, երբ ինքնաշարժի մէջ ենք, երբ մեր պարտականութիւնները կը կատարենք:

*«Մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուռը եւ ծածուկ կերպով աղօթէ...»:* Հիմնական նշմարտութիւնը զոր Քրիստոս կ'ուզէ որ մենք ըմբռնենք այն է, որ աղօթքի նպատակը Աստուծոյ հետ տեսնուիլը պէտք է ըլլայ եւ ո՛չ թէ մարդոց կողմէ տեսնուիլը: Սենեակի մէջ թէ սենեակէ դուրս աղօթենք ոչինչով կ'օգտուինք եթէ երբեք մեր նպատակը մարդոց կողմէ փառաւորուիլն է: Աստուած կը ծածկուի բոլոր անոնցմէ որոնք ծածուկ կերպով աղօթել չեն գիտեր: Տեսնուիլ եւ տեսանելի ըլլալ ուզողները երբեք ալ Անտեսանելիին աղօթել չեն կրնար: Անտեսանելիին աղօթողը անտեսանելիօրէն պէտք է աղօթէ: Աստուած ինքզինքն ներկայութիւն չի՛ դարձնէր աղօթողին կեանքին մէջ եթէ երբեք աղօթողը ի՛նք, կը ջանայ ինքզինքն իբրեւ աղօթող ներկայութիւն ցանցնել:

*«Մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուռը...»:* Աղօթքի կանգնողը պէտք է գոցէ իր սիրտին, հոգիին ու միտքին դռները աշխարհի ձայնին դիմաց որպէսզի կարենայ զանոնք բանալ Աստուծոյ ձայնին դիմաց: *«Գոցէ՛ դուռը»* բացատրութիւնը ո՛չ միայն պահուան մը համար աշխարհի տաղտուկէն կտրուելու կոչ մըն է, այլեւ՝ հրաւեր մը միանգամընդմիջտ փուլ բերելու բոլոր այն կամուրջները որոնք մեզ աշխարհին հետ յարաբերութեան մէջ կը դնեն:

*«Մտի՛ր սենեակդ...»:* Սենեակը մտնել կը նշանակէ իջնել խորը մեր սիրտերուն եւ հո՛ն փնտռել զԱստուած: ԶԱստուած պէտք չէ փնտռել մեր սիրտերէն դուրս: Աստուած ո՛չ երկինքի մէջ եւ ո՛չ ալ ձեռագործ տաճարներու եւ եկեղեցիներու մէջ բնակող Աստուած է (Գրծ 7.48): Աստուծոյ համար իրական տաճարը մե՛նք ենք, մեր սիրտերն են (Ա.Կր 3.16-17): Մե՛նք ենք Քրիստոսի տունը (Եբր 3.6): Քրիստոս տանտէրն է մեր սիրտերուն: Տանտէրը տան մէջ պէտք է փնտռել:

*«Մտի՛ր սենեակդ...»:* Սա խօսքը համագոր է ըսելու. *«առանձնացիր Աստուծոյ հետ»:* Քրիստոս կը սպասէ որ մեր աղօթքի պահերը, Աստուծոյ հետ եւ Աստուծոյ մէջ առանձնանալու պահեր ըլլան: Խիստ անհրաժեշտ է որ ամէն օր մենութեան պահ մը անցընենք Աստուծոյ հետ: Երանի՛ անոնց որոնք կեանքի այս բազմազբաղուածութեան մէջ մենութեան պահեր կը ստեղծեն անժամանակ Աստուծոյ հետ ժամանակ անցընելու համար:

Որքա՛ն տաքուկ են կատարեալ առանձնութեան մէջ Աստուծոյ հետ անցուած պահերը: Որքա՛ն խաղաղեցնող են խաղաղութեան իշխանին՝ Քրիստոսի հետ ապրուած աղօթքի ժամերը: Որքա՛ն հոգեւորապէս անեցնող եւ բիւրեղացնող են Աստուծոյ հետ անցուած ջերմեռանդ աղօթքի վայրկեանները: Կատարեալին հետ ամէն օր մենիկ պահ մը ունենալը մեզ կատարելութեան կ'առաջնորդէ:



## Ի՞՞ՆՉ Է՞՞ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՒՆԸ ՇՆՈՐՀՔԻՆ ԵՒ ՕՐԷՆՔԻՆ

Այս եւ յաջորդ յօդուածը խտացումն են գանազան առիթներով Օրէնքին եւ շնորհին տարբերութեանց մասին մեր արտասանած խօսքերուն: Յօդուածներուն պարբերութիւնները երբեմն անկապակից կերպով կը ներկայանան:

Օրէնքն ու շնորհքը հիմնովին կը տարբերին իրարմէ, որովհետեւ անոնք տարբեր նպատակներով տրուեցան մեզի: Օրէնքը տրուեցաւ հիմնական երեք նպատակներով.–

1.– Օրէնքը *«տրուեցաւ որպէսզի մարդիկ իրենց յանցանքները նանչնան...»* (Գդ 3.19): Իսկ շնորհքը յայտնուեցաւ, *«որպէսզի բոլոր մարդիկ փրկուին»* (Տիտ 2.11): Զուր տեղ չէ որ Օրէնքին մասին խօսած ատեն Սուրբ Գիրքը կը գործածէ «տրուեցաւ» բացատրութիւնը, իսկ շնորհքին մասին խօսած ատեն՝ «յայտնուեցաւ» բացատրութիւնը: Օրէնքը տուուչութեան հետ կապ ունի, իսկ շնորհքը՝ ինքնատուուչութեան հետ: Շնորհքին յայտնուիլը Աստուծոյ յայտնուիլն է:

2.– *«Օրէնքը մեր ինամակալ դաստիարակը եղաւ, մեզ Քրիստոսի առաջնորդելով, որպէսզի հաւատով արդարանանք»* (Գդ 3.24): Օրէնքը առաջնորդողի դերը ունի: Ան մեզ Քրիստոսի կ'առաջնորդէ, իսկ շնորհքը մեզ Քրիստոսաբար կ'առաջնորդէ: Թէպէտ Օրէնքը մեզ չի կրնար արդարացնել, բայց կրնայ մեզ առաջնորդել միակ Արդարին եւ Արդարացնողին:

3.– Օրէնքը տրուեցաւ որպէսզի հանդէս գայ մեղքին նշմարիտ ինքնութիւնը: *«Օրէնքով է որ կը գիտնանք թէ ի՞նչ է մեղքը»* (Հո 3.20 հմմտ 7.7): Օրէնքը մեղքը մեղքի վերածեց (Հո 5.13): Օրէնքը կը պահանջէ հեռու մնալ մեղքէն, բայց շնորհքն է որ ատել կու տայ մեղքը:

Օրէնքը կը խօսի մեղքին մասին, բայց շնորհքն է որ կը յայտնէ մեղքին պղծութիւնն ու գազրելիութիւնը մեր հոգիներուն առջեւ:

Օրէնքը կրնայ մեզ որոշ մեղքերէ եւ յանցանքներէ հեռու պահել բայց չի կրնար ներել մեր գործած մեղքերն ու յանցանքները:

Օրէնքը մեզի կու տայ այն բանը որուն արժանի ենք, իսկ շնորհքը մեզի կու տայ այն բանը (փրկութիւնը) որուն արժանի չենք:

Օրէնքը մեր յանցաւոր ըլլալը կը հրապարակէ, իսկ շնորհքը յանցանքներէն մեր ազատագրուած ըլլալը կը ծանուցէ:

Օրէնքը կրնայ մեզ յանձնապաստան դարձնել, իսկ շնորհքը Աստուծոյ ապաստանի կը սորվեցնէ:

Օրէնքը կը խօսի Աստուծոյ նամբուն մասին, իսկ շնորհքը կը խօսի Աստուծոյ մասին իբրեւ նամբայ:

Օրէնքը մեզ կը կանգնեցնէ Աստուծոյ առջեւ իբրեւ «անողորմ» դատաւորի, իսկ շնորհքը Աստուծոյ ողորմութեան եւ ողորմած ըլլալուն փառաբանութիւնն է որ կը կատարէ:

Օրէնքը մեր անկարող ըլլալը կը յայտնէ, իսկ շնորհքը մեր ներսիդին թափցուած մեր կարողութիւնները հանդէս կը բերէ:

Օրէնքը մեր տկար ըլլալն ու մեր տկարութիւնները կը հրապարակէ, իսկ շնորհքը կ'օգնէ մեզի յաղթանակ տանելու մեր տկարութիւններուն վրայ:

Օրէնքը կը խօսի յաղթանակ տանելու մասին, բայց շնորհքն է որ յաղթանակով կը պսակէ:

Օրէնքը կը պատուիրէ սիրել մեր թշնամիները (Ղկ 6.27, Մտ 5.44), իսկ շնորհքը զանոնք բարեկամներու կը վերածէ:

Օրէնքը Աստուծոյ պահանջն է մարդէն, իսկ շնորհքը Աստուծոյ պարգեւն է մարդուն:

Օրէնքը կը հրահանգէ, իսկ շնորհքը Օրէնքին հրահանգածը ի գործ դնելու կարողութիւն կը շնորհէ: Օրինակ.– Օրէնքը կը պատուիրէ սիրել զԱստուած ամբողջ սիրտով (Մր 12.30), բայց շնորհքը ի'նքն է որ կ'օգնէ մեզի սիրելու զԱստուած ամբողջ սիրտով:

Օրէնքը կը պահանջէ բացարձակ հաւատարմութիւն ցուցաբերել Աստուծոյ նկատմամբ, բայց շնորհքն է որ գորութիւն կը պարգեւէ մեզի բացարձակ հաւատարիմ ըլլալու եւ մնալու:

Օրէնքը կը դատապարտէ անտիրբերը, բայց զանոնք սրբել չի կրնար. զանոնք սրբողն ու սրբացնողը Քրիստոսի շնորհքն է:

Օրէնքը կը պատուիրէ ապրիլ սրբութեան կեանք մը, բայց շնորհքն է որ մեզ սրբութեան կ'առաջնորդէ:

Օրէնքը յանցապարտ կը յայտարարէ անիրաւ մարդը, բայց անկարող կը մնայ ձերբագատելու մարդը անիրաւութիւն գործելու իր տրամադրութենէն: Շնորհքն է որ կ'ազատագրէ մարդը չարիք գործելու իր տրամադրութենէն:

Օրէնքը կը թելադրէ ներել մեր նմանը (Ղկ 6.37, 17.4, Մտ 18.21-22), բայց Աստուծոյ շնորհքով ներուած մա'րդը միայն կրնայ ներել իր նմանը:

Օրէնքը մեզ անէծքի կ'ենթարկէ, ահա թէ ինչո՛ւ «Քրիստոս Օրէնքի անէծքէն մեզ ազատեց, ինք մեր տեղը անէծքի առարկայ դառնալով» (Գղ 3.13), իսկ շնորհքը մեզ կ'առաջնորդէ Աստուծոյ օրհնութիւնը ժառանգելու (Գղ 3.18):

Օրէնքը իր վախճանին հասաւ Քրիստոսով (Հո 10.4), իսկ շնորհքով՝ մեղքով վախճանած մարդուն առջեւ կեանքի նոր ցամբայ բացուեցաւ

*«Օրէնքը կ'ըսէ կատարէ', շնորհքը կ'ըսէ կատարուած է: Օրէնքը անէծքի տակ կ'առնէ, շնորհքը կ'օրհնէ: Օրէնքը կը սպաննէ մեղաւորը, շնորհքը կ'ապրեցնէ զայն: Օրէնքը ամէն բերան Աստուծոյ առջեւ կը գոցէ, մինչ շնորհքը փառաբանութեամբ կը բանայ փրկուածներուն շրթունքները: Օրէնքը լաւագոյն կեանքը կը դատապարտէ, մինչ շնորհքը կը փրկէ ամէնէն ինկած մեղաւորը: Օրէնքը կը պահանջէ պարտքերու ամբողջական վճատում, մինչ շնորհքը կը յայտարարէ բոլոր պարտքերուն ամբողջապէս վճատուած ըլլալը» Մ. Բ. Տ.:*

Օրէնքը կը խօսի արդարութեան մասին բայց շնորհքն է որ մեզ կ'արդարացնէ: Աստուածաշունչը չի տար անունը ոեւէ մէկ անձի որ արդարացած եւ փրկուած ըլլայ օրէնքներու գործադրութեամբ: *«Եթէ փորձէ՛ք Օրէնքի գործադրութեամբ արդարանալ՝ ա՛յլ Քրիստոսի հետ ձեր կապը կտրած կ'ըլլա՛ք եւ գրկուած՝ անոր շնորհքէն»* (Գղ 5.4): Օրէնքին ապաւինիլն ու կապուիլը կը խզէ մեր կապը Անկապելիին հետ, մինչ շնորհքին ապաւինիլը՝ մեզ կը դարձնէ շնորհալի գաւակները Աստուծոյ:

Օրէնքը բարեգործ ըլլալ կը յանձնարարէ, բայց շնորհքն է որ մեր ներսիդին ամէն բարի տրամադրութիւն կը ցանէ:

Օրէնքը կատարելութիւն կը պահանջէ մեզմէ (Մտ 5.48), բայց չի կրնար *«որեւէ բան կատարելութեան հասցնել»* (Եբր 7.19): Աստուծոյ շնորհքն է որ մեզ կատարելութեան կը հասցնէ:

Օրէնքը կը հաստատէ որ եթէ յանցաւոր մը արժանի է ծեծի, իր գործած յանցանքին համեմատ գաւազանով պէտք է ծեծ ուտէ (Բ.Օր 25.2), մինչ շնորհքը կը ներէ մեր բոլոր յանցանքները եւ կը ջնջէ *«մեր օրինազանցութեան համար մեզի դէմ արձակուած դատապարտութեան վնիորը, զայն իսախախտին գամելով»* (Կղ 2.13-14):

Օրէնքը կը դատապարտէ մեզ եւ անէծքի ենթակայ կը պահէ նոյնիսկ եթէ մէկ մեղք գործած ըլլանք (Գղ 3.10 հմմտ Յկ 2.10), իսկ շնորհքը հակառակ մեր գործած անթիւ գագրելի մեղքերուն, մեզ կ'արդարացնէ Քրիստոսի արիւնով եւ անոր շնորհքին միջոցաւ (Եփ 1.7-8, 2.4-5):

Աստուծոյ շնորհքին ապաւինիլը՝ զԱստուած պատուել ու փառաւորել է, իսկ Օրէնքին ապաւինիլը՝ քու սեփական նիգերուդ վստահիլ է, եւ հետեւաբար, քու անձդ փառաբանել է:

## ՇՆՈՐՀՔԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ ՕՐԷՆՔԷՆ

Աստուծոյ Օրէնքը անարգելը Աստուծոյ շնորհքը անարգելուն հետ չի նոյնանար: Աստուծոյ շնորհքը անարգող մարդուն պատիժը անհունօրէն աւելի մեծ պիտի ըլլայ, որովհետեւ ան Քրիստոսի արեան դէմ է որ մեղանշած կը սեպուի: Նոյնը կը հաստատէ Պօղոս առաքեալ. *«Եթէ Մովսիսական Օրէնքը խախտողը «երկու կամ երեք հոգիի վկայութեամբ մահուան կը դատապարտուի» առանց գթութեան, որքա՛ն աւելի ծանր պատիժի արժանի պիտի համարէ՞ այն անձը՝ որ ոտնակոխ կ'ընէ Աստուծոյ Որդին, կ'արհամարհէ Նոր Ուխտին կնքումին համար թափուած արիւնը, որով Քրիստոս գին՞ սրբեց, եւ կ'նարգէ շնորհքները պարգեւող Սուրբ Հոգին»* (Եբր 10.28-29):

Ո՛րքան տարբերութիւն կայ Մովսէսի եւ Քրիստոսի միջեւ, ա՛յնքան տարբերութիւն կայ Մովսիսապարգեւ Օրէնքին եւ Քրիստոսապարգեւ շնորհքին միջեւ: Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Մովսիսական Օրէնքը պարզապէս գալի՞ք նոր կարգերուն շուքը, այսինքն՝ մօտաւոր նմանութիւնը միայն կը ներկայացնէ եւ ո՛չ թէ անոր հարազատ պատկերը»* (Եբր 10.1): Ինչպէս մարմինի մը շուքը անհունօրէն տարբեր է մարմինէն, այնպէս ալ Քրիստոսի շնորհքը անհունօրէն տարբեր է Օրէնքէն:

Աստուած *«Սուրբ Հոգիին միջոցաւ մեզ վերանորոգեց»* (Տիտ 3.5): Օրէնքը պահող մարդը կրնայ բարի ու բարեգործ, ազնիւ եւ համեստ մէկը ըլլալ, առանց սակայն Սուրբ Հոգիին բերած նորոգութիւնը ապրած ըլլալու: Քրիստոնեայ մարդը, սակայն, խոնարհ եւ ուրիշներուն օգտակար եղող մարդը չէ, այլ Սուրբ Հոգիէն ծնած եւ Աստուծոյ զաւակը դարձած մարդն է:

Յաճախ մեր սիրած մարդոց կապակցաբար տեղի կամ անտեղի հաստատումներ կ'ընենք ըսելով. *«Այս ինչ մարդը շատ բարի մարդ է, անոյ՞ մարդ է...»*: Բայց այդ բոլորը ի՞նչ արժէք կը ներկայացնեն երբ այդ (այսպէս կոչուած) *«բարի եւ անոյ՞ մարդը»* չէ ապրած Սուրբ Հոգիին բերած նորոգութիւնը:

*«Ապացոյցը, թէ մենք Աստուծոյ միացած կը մնանք եւ Աստուած՝ մեզի, նոյնինքն իր Հոգին է, որ Աստուած մեզի տուաւ»* (Ա.Յհ 4.13): Աստուծոյ միացած ըլլալուն եւ Աստուած մեզի միացած ըլլալուն ապացոյցը ո՛չ մեր բարի կամ բարեգործ ըլլալն է եւ ո՛չ ալ մեր ազնիւ կամ հեզ ըլլալն է, այլ Սուրբ Հոգին մեր ներսիդին ունենալն է:

Հեթանոսներուն մէջ ալ ազնիւ եւ բարեգործ մարդիկ կան: Աստուծոյ ուզածը սակայն, բարեգործութեան կեանք մը ապրելուն կողմին, նաեւ սուրբ կեանք մը ապրիլն է: Առաքեալներն ալ բարի եւ անձնագոհ մարդիկ էին, բայց անոնց կեանքը բոլորովին յեղաշրջուեցաւ եւ լուսակերպուեցաւ միայն ու միայն Հոգեգալստեան օրը, երբ Սուրբ Հոգին ստացան:

Պօղոս առաքելու նախնական գործիստոս նախնայր կը պարծենար որ Օրէնքը անթերի կերպով գործադրող մը եղած էր (Փլպ 3.6-7): Բայց յետոյ ան իր օրինապահութիւնը ոչնչութիւն սեպեց, որպէսզի Քրիստոսը շահի եւ կատարելապէս անոր միանայ (Փլպ 3.8-9): Հոսկէ կը սորվինք այն, որ ոեւէ մէկը որ պատրաստ չէ ոչնչութիւն նկատելու իր օրինապահութիւնը, իր գործերն ու իրագործումները, չի կրնար շահիլ գործիստոս եւ անոր միանալ:

*«Իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ ու դուք իմ օրէնքներուս մէջ պիտի փալէք...»* (Եզ 36.27): Աստուծոյ Հոգին է որ Աստուծոյ պատուիրանները պահելը կարելի կը դարձնէ: Աստուծոյ Հոգին է որ Աստուծոյ պատուիրանները աւելի փաղցր կ'ընէ քան մեղքը: Սուրբ Հոգին չունեցողին համար, Աստուծոյ պատուիրաններն ու օրէնքները բեռ են:

Աստուած փրկութեան պարգեւը կու տայ մեզի ո՛չ թէ որովհետեւ արժանի ենք փրկութեան, այլ որովհետեւ ի՛նք մեզ արժանի կը տեսնէ: Պատեառը թէ ինչո՛ւ Աստուած մեզ արժանի կը տեսնէ փրկութեան, այն է, որ մենք իր Որդիին արեան գինն ենք:

Աստուած կրնայ ուրիշ պարգեւներ ալ տալ մեզի: Հաւատացեալներ շատ աւելի կը խօսին Աստուծմէ իրենց ստացած պարգեւներուն մասին, քան Աստուծոյ մասին՝ որ տուիչն է այդ պարգեւներուն: Մեր պաշտամունքի առարկան Պարգեւատուն պէտք է ըլլայ եւ ո՛չ թէ պարգեւը:

Տրուածը վկայութիւն մը չէ մեր մասին այլ վկայութիւն մըն է Տուողին մասին: Երբ մէկը մեզի թանկագին պարգեւ մը կու տայ, այդ չի նշանակեր որ մե՛նք թանկագին անձ մըն ենք անպայմանօրէն, այլ կրնայ նշանակել որ տուողը ի՛նք թանկագին անձ մըն է:

Փրկութիւնը Աստուծոյ պարգեւն է (Եփ 2.8): Մեզմէ ոեւէ մէկը չի կրնար ըսել որ ինք արժանի է մեղքերու փառութեան եւ փրկութեան: Աստուած մեր յանցանքները կը ջնջէ եւ մեզ կը փրկէ ի՛ր փառքին համար եւ ո՛չ թէ մեր փառաւոր ըլլալուն համար: Աստուած ի՛նքն ալ նոյն բանը չի՞ հաստատեր երբ կ'ըսէ. *«Ե՛ս եմ, ե՛ս եմ, որ քու յանցանքներդ ինծի համար կը ջնջեմ եւ քու մեղքերդ ալ պիտի չյիշուին»* (Ես 43.25):

Փրկութիւնը Օրէնքին արդիւնքն է, այլ՝ շնորհքին: Յաւիտենական կեանքը ժառանգելու համար, յաւիտենական փառութեան պէտք է արժանացած ըլլանք: Օրէնքը յաւիտենական փառութիւն չի կրնար պարգեւել, եւ հետեւաբար, յաւիտենական կեանք ալ չի կրնար պարգեւել: Քրիստոսի շնորհքն է որ յաւիտենական փառութիւն կը պարգեւէ: Երբայցեցիներուն նամակը խօսելով Հին Կտակարանի գոհերուն մասին կ'ըսէ. *«Տարուէ տարի մատուցուող այդ գոհերը պարզապէս կը ծառայեն՝ մարդոց մեղքերը իրենց յիշեցնելու, որովհետեւ ցույցերու եւ նոխազներու արիւնը բնաւ չի կրնար մեղքերը ջնջել»* (Եբր 10.3-4): Քրիստոսի՛ արիւնը միայն կրնայ մարդուն մեղքերը ջնջել (Եփ 1.7, Հո 5.9, Ա.Յի 1.7 եւայլն):

Հարկաւ վերոյիշեալ ըսուած բոլոր խօսքերը երբեք չեն նշանակեր որ Օրէնքը խոտելի եւ տկար բան մըն է: Ս. Նիլդէ իր «Զարչարանաց ճառ»ին

մէջ կ'ըսէ. «Ո՛չ թէ Օրէնքը տկար է, այլ դուք չպահելով Օրէնքը՝ տկարացուցիք գայն, որովհետեւ հաւատքով չէիք»: Իսկ Պօղոս առաքեալ, կ'ուսուցանէ թէ «Օրէնքը ինք սուրբ է եւ պատուիրանն ալ սուրբ է, արդար ու բարի» (Հո 7.12): Մեծագոյն փաստը որ Օրէնքը բարի եւ արդար է, այն է, որ անիկա մեզ սխալ տեղ եւ սխալ կերպով չ'առաջնորդեր: Օրէնքը սուրբ է բայց մեզ սրբել չի կրնար: Օրէնքը արդար է բայց մեզ արդարացնել չի կրնար: Օրէնքը բարի է բայց չի կրնար մեզ երկինքի բարութեան ժառանգորդները դարձնել:

Սխալը Օրէնքին մէջ չի կայանար: Սխալը կը կայանայ այն վստահութեան մէջ, որ մենք կը դնենք մեր օրինապահութեան վրայ: Խորքին մէջ Օրէնքը կամ օրինապահութիւնը չէ որ մեզ կը սպաննեն, այլ մեղքն է որ բարի պատուիրանին միջոցաւ մեզի «մահ պատճառեց, նախ՝ որպէսզի մեղքին ի՛նչ ըլլալը յայտնուի, եւ ապա՝ պատուիրանին միջոցաւ մեղքին առաւել ծանրութիւնը յայտնուի» (Հո 7.13):

Այլուր Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Մահուան խայթոցը մեղքն է. իսկ մեղքը իր ոյժը Օրէնքէն կ'առնէ: Բայց փա՛նք Աստուծոյ, որ մեզի յաղթանակ պարգեւեց մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (Ա.Կր 15.56-57): Բացայայտ է որ մեզի յաղթանակ պարգեւողը Յիսուս Քրիստոսի շնորհքն է եւ ո՛չ թէ Օրէնքը: Քրիստոսով մենք յաղթանակ տարինք Օրէնքին վրայ:

Եթէ Քրիստոսով մենք յաղթանակ տարինք Օրէնքին վրայ, այդ կը նշանակէ, որ մենք Օրէնքին պարտուածութեամբ է որ յաղթող դարձանք: Եթէ չկրնայինք Քրիստոսի շնորհքին ապաւինելով յաղթել Օրէնքին, երբե՛ք ալ յաղթող պիտի չկոչուէինք:

Ի՞նչ է իմաստը «մեղքը իր ոյժը Օրէնքէն կ'առնէ» խօսքին: Մեղքին ծանրակշիռ ազդեցութիւնը հանդէս կու գայ միայն ա՛յն ատեն երբ այդ մեղքը արգիւող օրէնք մը կայ: Այսինքն, եթէ «ցանկալը» արգիւող օրէնք մը չկար, այդ պարագային «ցանկալը» մեղք պիտի չնկատուէր: Ահա թէ ինչն'ու առաքեալը կ'ըսէ. «Զէի գիտնար ի՛նչ է ցանկութիւնը, եթէ Օրէնքը չըսէր՝ «Մի՛ ցանկար»: Մեղքը առիթէն օգտուելով՝ պատուիրանին միջոցաւ ամէն տեսակի ցանկութիւն առաջացուց իմ մէջս. եթէ Օրէնքը չըլլար՝ մեղքը մեռած պիտի մնար» (Հո 7.7-8):

Սիրելի՛ ընթերցող, գիտնալէ ետք թէ Աստուծոյ շնորհքը անհունօրէն աւելի մեծ է քան Աստուծոյ Օրէնքը, չե՞զ ուզեր վստահիլ Աստուծոյ շնորհքին, որ յայտնուեցաւ Քրիստոսի յայտնութեամբ: Թոյլ մի՛ տար որ Սատանան օրէնքներու գործադրութեամբ փրկութիւն ձեռք ձգելու վստահութիւն ներշնչէ բեզի: Փրկութիւնը Փրկիչին պարգեւն է եւ ո՛չ թէ արդիւնքը օրինապահութեանդ:

Վստահէ՛ Փրկիչիդ եւ ո՛չ թէ փրկութեան կարօտ անձիդ գործերուն: Քրիստոս միակ արդարն ու արդարացնողն է: Միակ արդարացնողին վստահիլը կ'արդարացնէ բեզ: Արդարութիւնդ Օրէնքի գործադրութենէն չի՛ գար, այլ՝ Քրիստոսի հանդէպ ունեցած հաւատքէդ (Փլպ 3.9):

## ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆԷՆ ԴԷՊԻ ԽՈՐԸ ԻՋՆԵԼ

Աստուծոյ մարդուն կեանքը մակերեսային չէ՛ ու չի՛ կրնար ըլլալ: Սուրբ Հոգիին պարգեւած կեանքը խորունկ եւ խորհրդաւոր կեանք մը կ'ըլլայ: Աստուծոյ Հոգին կ'օգնէ մեզի ամենօրեայ ան արձանագրելու մեր հոգեւոր կեանքին մէջ: Սուրբ Հոգիով է որ օր ըստ օրէ կը խորանանք մեր աստուածսիրութեան եւ մարդասիրութեան մէջ, մեր հաւատքին եւ հաւատարմութեան մէջ:

Աստուած խորունկութեան Աստուած է: Աստուած չի՛ սիրեր մակերեսայնութիւնն ու ծանծաղութիւնը: Աստուած խոր սէր ըլլալով, կը սպասէ, որ մեր սէրն ու կապուածութիւնը իրեն՝ ըլլան խոր սիրոյ արտայայտութիւն: Եթէ Աստուծոյ սէրը մեզի հանդէպ անհուն չըլլար՝ ան անհունապէս իր սիրելի Որդին մեզի համար խաչ պիտի չբարձրացներ: Աստուծոյ սէրը չափ չունի որովհետեւ Աստուած ի՛նք չափ չունի: Անչափն Աստուած անչափօրէն կը սիրէ մեզ: Անչափօրէն մեզ սիրողը անչափօրէն պէտք է սիրուի մեր կողմէ: Նման սէր մը մակերեսային չի՛ կրնար ըլլալ: Անչափ սէրը խորունկ սէրն է: Մակերեսային սիրով մը զԱստուած սիրող մարդը զԱստուած անարգած կ'ըլլայ:

Աստուածաշունչը լի է օրինակներով որոնք մեզ կը հրաւիրեն հրաժարելու մակերեսայինէն եւ իջնելու դէպի խորը: Յիշեմք անոնցմէ միայն հինգը եւ հոգեւոր խորհրդածութիւն կատարենք անոնց շուրջ:

1- Աստուած Մովսէսին կ'երեւի «անկէզ մորենիին» պատկերով: Երբ Մովսէս նշմարեց որ մորենին կրակով կը վառէր բայց չէր սպառեր, ինքնիրեն ըսաւ. «*Հիմա երթամ ու այս մեծ տեսարանը տեսնեմ՝ թէ ինչն<sup>ը</sup> համար մորենին չ'այրիր*»: Երբ Աստուած տեսաւ որ Մովսէս «անկէզ մորենին» տեսնելու կու գար, անոր ըսաւ. «*Մովսէ՛ս, Մովսէ՛ս,*» եւ անկէկա պատասխանեց. «*Ահա հոս եմ*» (Ել 3.2-4):

Մովսէս տարօրինակ բան մը տեսաւ եւ ուզեց գիտնալ թէ ի՞նչ էր իր տեսածը: Տեսնելով եւ դիտելով միայն չգոհացաւ: Միայն տեսնելն ու դիտելը մակերեսայնութիւն է, կրաւորականութիւն է: Իր տեսածին հանդէպ հետաքրքրութիւն ցոյց տուաւ: «*Հիմա երթամ ու այս մեծ տեսարանը տեսնեմ*»: Զօրաւոր փափաք մը ունեցաւ գիտնալու իր տեսածին մասին: Դէպի առջեւ գնաց: Մօտեցաւ «անկէզ մորենիին»: Աւելի խորը իջաւ: Մակերեսայինէն դէպի խորը իջնելու, խորքը նանչնալու, խորհուրդը գիտնալու սքանչելի օրինակ մը չէ՞ ասիկա:

Առաջին անգամ հոս էր որ Աստուած Մովսէսին հանդիպեցաւ: Աստուած ուզեց հանդիպիլ Մովսէսին, բայց միաժամանակ Մովսէս ի՛նք նաեւ ուզեց հանդիպիլ իրեն: Մեմք ալ Մովսէսի նման չե՞նք ուզեր քիչ մը առջեւ երթալ «մեծ տեսարանը» տեսնելու համար: Մեծ սէր եւ մեծ սիրտ ունեցողները միայն Աստուծոյ «մեծ տեսարանը» կրնան տեսնել: Առանց «*քիչ մը աւելի առջեւ*» երթալու կարելի չէ հանդիպիլ Աստուծոյ: Մովսէս «*քիչ մը աւելի առջեւ*» երթալու փափաք ունէր:

Աստուած մեր առջեւն է իր «մեծ տեսարանով» բայց մենք է որ չենք տեսներ կամ տեսնել չենք ուզեր: Մեղքը կը կուրցնէ մարդ արարածը: Խնդրենք Աստուծոյն որ մեր աչքերը բանայ որպէսզի տեսնենք զինք մեր կեանքերուն մէջ, տեսնենք իր սքանչելիքները, իր օրհնութիւնները, իր փառքն ու գեղեցկութիւնը, իր գօրութիւնն ու գօրակցութիւնը, իր գործն ու գործակցութիւնը, տեսնենք մեզի համար իր ըրածները, իր պարգեւածները, իր պատրաստածները: Այս բոլորը կը կազմեն Աստուծոյ «մեծ տեսարանը»: Նման տեսարանի մը ականատես վկաները չենք կրնար ըլլալ եթէ երբեք «*Քիչ մը առջեւ երթալու*» փափաք չունինք: Մովսէս չըսաւ. «*Հիմա կենամ...*», այլ «*Հիմա երթամ...*»: Իր տեղը կեցող մարդը պիտի գրկուի Աստուծոյ «մեծ տեսարանը» տեսնելու պարգեւէն:

2- «*Քիչ մը աւելի խորը տար նաւակը եւ ձուկ որսալու համար ձեր ուռկանները նետեցէ՛ք*» (Ղկ 5.4) հրահանգեց Քրիստոս Պետրոսի: Այս համարը մակերեսայինէն «*Քիչ մը աւելի խորը*» երթալու գեղեցկագոյն օրինակն է: Ինչպէս Պետրոս երբ աւելի խորը տարաւ նաւակը՝ արդիւնքի հասաւ, այնպէս ալ մենք մեր հաւատքի եւ սիրոյ «նաւակները» քիչ մը աւելի խորը պէտք է տանինք որպէսզի առատ արգասիք ձեռք ձգենք: Պետրոս առաքեալ եւ ուրիշներ, որոնք ցարտար ձկնորսներ էին, ամբողջ գիշեր մը փորձած էին ձուկ բռնել, եւ սակայն, չէին յաջողած բան մը բռնել, բայց երբ Քրիստոս միջամտեց՝ մեծ քանակութեամբ ձուկ բռնեցին, «*այնքան որ իրենց ուռկանները կը պատռէին*» (Ղկ 5.6): Մենք ալ չխնդրե՞նք Քրիստոսի միջամտութիւնը մեր կեանքի նաւակէն ներս:

Սիրելի՛ ընթերցող, Քրիստոս նոյն խօսքը այսօր քեզի ալ կ'ըսէ. «*Քիչ մը աւելի խորը տար նաւակդ եւ ձուկ որսալու համար ուռկանդ նետէ՛ք*»: Եթէ երբեք կ'ուզես որ քու ալ պարապ ուռկանդ պատռելու չափ լեցուի, հնազանդէ՛ իրեն ինչպէս Պետրոս առաքեալ հնազանդեցաւ: Ի միտ առ որ երբ Քրիստոս միջամտէ քու կեանքէդ ներս՝ ուռկանդ միշտ լեցուն պիտի ըլլայ: Մի՛ վախնար քիչ մը աւելի խորը երթալու: Քրիստոս քեզ առանձին չի դրկեր եւ պիտի չդրկէ «*Քիչ մը աւելի խորը*»: Քրիստոս Պետրոսն ու իրեն հետ եղողները առանձին չդրկեց «*Քիչ մը աւելի խորը*»: Ան անոնց հետ գնաց:

Անհամար են Աստուածաշունչի մէջ այն համարները որոնք ցոյց կու տան թէ երբ Աստուած ոեւէ մէկը առաքելութեան մը դրկէ՝ կ'ընկերանայ անոր: Աստուած մակերեսային կեանք վարող մարդուն չ'ընկերակցիր: Շատե՛ր աշխատանք կը տանին արքայութեան ժառանգորդները դառնալու համար, բայց քիչեր գայն պիտի ժառանգեն (Ղկ 13.24): Այդ քիչերուն աշխատանքը խորք ունեցող աշխատանք է: Որքա՛ն կը պատշաճի մարգարէին խօսքը անոնց՝ որոնց աշխատանքը խոր հաւատքի արդիւնք չէ. «*Աշխատանք քափեցին, բայց օգուտ պիտի չտեսնեն*» (Եր 12.13):

3- Քրիստոս արգիլեց շատախօսութիւն ընել աղօթքի ընթացքին եւ թելադրեց մտնել մեր սենեակները, գոցել դուռը եւ ծածուկ կերպով աղօթել մեր երկնաւոր Հօր (Մտ 6.6-7): Մեր սենեակները մտնելը, սիրտով



աղօթելն է, աղօթական մեր կեանքին մէջ խորանալն է: Քրիստոս շրթներուն մակերեսայնութենէն սիրտի խորը իջնելու կոչ է որ կ'ուղղէ մեզի: Խորունկ աղօթքները սիրտի եւ սիրոյ խորերէն բխող աղօթքներն են եւ ո՛չ թէ մեր շրթներէն:

Սիրտի խորերէն չաղօթող մարդուն վերաբերեալ, Սուրբ Գիորգը կ'ըսէ. *«Դուն անոնց բերնին մօտ ես բայց անոնց սիրտէն հեռու ես»* (Եր 12.2): Այս խօսքը ցոյց չի՞ տար որ Աստուած կը զգուի մակերեսայնութենէն: Մեր սենեակները մտնելը եւ դուռը գոցելն ու աղօթելը, Աստուծոյ հետ մենիկ պահ անցընելու եւ իր սիրոյն մէջ խորանալու հոյակապ հրաւեր մըն է: Իսկ Աստուծոյ հետ մենիկ պահ անցընել փափաքիլը ինքնին խոր սիրոյ վկայութիւն մըն է: Նման մենիկ պահերն են որ մեզ կ'առաջնորդեն խորապէս ճանչնալու գԱստուած: Անհամար է թիւը այն մարդոց որոնք առանձնութեան մէջ Աստուծոյ ձայնը լսելով՝ աւելի սիրած եւ կապուած են անոր:

4- Քրիստոս ներկայացուցած ատեն սերմնացանին առակը, կ'ըսէ. *«Հատիկներէն ոմանք ժայռոտ տեղ ինկան, ուր շատ հող չկար, եւ քանի հողը խորունկ չէր՝ անմիջապէս բուսան. բայց երբ արեւը ելաւ՝ այրեցան, եւ որովհետեւ արմատ չունէին՝ չորցան»* (Մտ 13.5-6): Պէտք չկայ մասնագէտ երկրագործ ըլլալու գիտնալու համար, թէ խորունկ հողի մէջ չինկած սերմը դատապարտուած է անպտուղ մնալու: Խորունկ հողի մէջ ինկած սերմերն են որ զօրաւոր արմատներ կ'ունենան եւ պտուղ կու տան, *«ոմանք մէկի տեղ հարիւր, ուրիշներ՝ վաթսուն եւ կամ երեսուն»* (Մտ 13.8): Այս առակը մեր հաւատքին մէջ խորանալու եւ զօրեղապէս արմատանալու կոչ մը չէ՞ որ կ'ուղղէ մեզի: Ինչպէս հողին մակերեսին վրայ մնացող սերմը մարդոց ոտքի կոխան եւ կամ թռչունի կեր կ'ըլլայ, այնպէս ալ իրենց հաւատքի սերմերը մակերեսին վրայ ձգողները, Աստանային ու անոր չար ոգիներուն համար կեր կը դառնան:

Խորունկ հաւատքը չէ՞ որ կրնայ լեռները տեղափոխել (Մտ 17.20): Խորունկ հաւատքը չէ՞ որ աջակողմեան աւազակին դիմաց բացաւ դրախտին դուռը (Ղկ 23.43): Քանանացի կնոջ խորունկ հաւատքին պատճառով չէ՞ որ բժշկուեցաւ անոր աղջիկը (Մտ 15.28): Խորունկ հաւատքը չէ՞ որ թթենին արմատախիլ ընելով ծովուն մէջ կը տնկէ (Ղկ 17.6): Տակաւին, Աբրահամին պատրաստակամութիւնը իր որդին գոհելու խորունկ սիրոյ արդիւնք չէ՞ր: Յովսէփին համբերատար եւ ներողամիտ կեցուածքը ամէն տեսակի անիրաւութեանց դիմաց խոր սիրոյ եւ հաւատքի արտայայտութիւն չէ՞ր: Մովսէս խորապէս գԱստուած սիրելուն համար չէ՞ր որ յանախ կ'առանձնանար Աստուծոյ հետ: Դաւիթին պայքարիլը Գողիաթին դէմ Աստուծոյ հանդէպ խոր վստահութեան ապացոյց մը չէ՞ր: Յոբին տոկալը ամէն տեսակի կորուստի խոր հաւատարմութեան ու հաւատքի արդիւնք չէ՞ր: Այրի կինը իր ամբողջ ապրուստը դրաւ գանձանակին մէջ (Ղկ 21.4). ասիկա Աստուծոյ հանդէպ խոր հաւատքի եւ վստահութեան զարմանալի վկայութիւն մը չէ՞ր:

Ինչպէս գորաւոր փոթորիկին դիմաց խորունկ արմատներ չունեցող ծառը չի կրնար կանգուն մնալ, այնպէս ալ գորաւոր փորձութիւններու դիմաց, կը գայթիւն այն հաւատացեալները որոնք խոր հաւատքի տէր մարդիկ չեն:

5- Անդրեաս եւ Յովհաննէս եկան Յիսուսի եւ հարցուցին. *«Ռաբբի՛, ո՞ւր կը մնաս»*: *«Եկէ՛ք եւ տեսէ՛ք»*, պատասխանեց Յիսուս: *«Անոնք գացին եւ տեսան թէ ո՛ւր կը մնար, եւ այդ օրը անոր մօտ մնացին»* (Յհ 1.38-39): Աշակերտները հարցում հարցնելու սիրոյն չհարցուցին Յիսուսի թէ ո՛ւր կը բնակէր: Վստահ եղէ՛ք որ եթէ հարցում հարցնելու սիրոյն հարցուցած ըլլային, Յիսուս անոնց պիտի չըսէր. *«Եկէ՛ք եւ տեսէ՛ք»*:

Հարցում հարցնելու սիրոյն հարցում հարցնելը մակերեսայնութիւն է: Աշակերտներուն նման մենք ալ չե՞մք հետաքրքրուած թէ Յիսուս *«ո՞ւր կը մնայ»*: Եթէ իսկապէս հետաքրքրուած ենք Քրիստոսով եւ անոր *«բնակութեան վայրով»*, անպայման պիտի լսենք Քրիստոսի հրաւերը. *«Եկէ՛ք եւ տեսէ՛ք»*: Եթէ աշակերտներուն հարցումը խոր եւ անկեղծ հետաքրքրութեան արդիւնք չըլլար, անոնք մակերեսային պատասխան մը ստացած պիտի ըլլային, եւ ո՛չ թէ *«Եկէ՛ք եւ տեսէ՛ք»*-ի կոչ մը, որ խորագոյն սիրոյ արտայայտութիւն էր:

Աստուածասէր մարդը պէտք է հրաժարի մակերեսայնութենէն ու տափակութենէն: Ինչ որ կ'ընենք պէտք է խոր սիրոյ եւ հաւատքի արտայայտութիւն ըլլայ, այլապէս, ոչինչով պիտի օգտուինք: Ծովապահուծի՞ւն է որ կ'ընենք, մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք անոր խորունկութեան վրայ եւ ո՛չ թէ տեսողութեան: Ողորմութի՞ւն է որ կու տանք, պէտք է գիտնանք որ Աստուած (միայն) մեր տուածին քանակին չէ որ կը նայի, այլ նաեւ մեր տուած եղանակին: Յիշեցէ՛ք որ Աստուած ընդունեց այրի կնոջ երկու լուման (Ղկ 21.1-4), մինչ Անանիայի եւ Սափիրայի տուած մեծ գումարը՝ մերժեց (Գրծ 5.1-5): Ընդունեց մաքաւորին կարնաբան աղօթքը, իսկ Փարիսեցիին երկարաբան աղօթքը՝ մերժեց (Ղկ 18.9-14): Ընդունեց Աբելն ու անոր ընծան, իսկ Կայէնն ու անոր ընծան՝ մերժեց (Ծն 4.4-5):

Սիրելի՛ ընթերցող, ի՛նչ տեսակի բարի գործ ալ ընենք՝ անոր մէջ դնենք սէր եւ սիրտ: Աստուած չ'ուրախանար երբ մեծ գործեր ընենք, այլ երբ փոքր գործեր մեծ սիրով ընենք: Ինչ որ խորք չունի՝ իմաստ չունի, իսկ ինչ որ իմաստէ գուրկ է՝ ժամանակաւոր է:

Մէկդի թողունք մակերեսայնութիւնը, որպէսզի չըլլայ թէ մեզի պատշաճեցուի մարգարէին խօսքը. *«Բոլոր սիրտով ինձի չդարձաւ, հապա ստութեամբ դարձաւ»* (Եր 3.10): Ողբալի բա՛ն է ստութեամբ դառնալ նշմարիտ Աստուծոյ:

Եկէ՛ք իջնենք խորը մեր սիրտերուն, հոն՝ զԱստուած փնտռելու, գտնելու, անոր հետ հաշտութիւն կնքելու, անով ուրախանալու եւ անոր ուրախութիւնը դառնալու հիմա ու յաւիտեան: Ամէն:

## ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՊԱՇՏՊԱՆՆ Է

Անսահման ուրախութեամբ կը լեցուին մեր սիրտերը երբ կը լսենք, որ անսահման Աստուած կու գայ իւրաքանչիւրիս անձնական պաշտպանը դառնալու (Սղ 59.17): Որքա՛ն լաւ է ապաւինիլ մշտաբթուն պահապանի մը (Սղ 121.4): Ի՛նչ հրեռանք է պաշտպանութիւնը վայելել աշխարհին յաղթած անպարտելի Տիրոջ մը (Յհ 16.33): Որքա՛ն ապահով պէտք է զգանք մենք զմեզ, որ Տէր Յիսուսի նման մեր մագերն անգամ համրած Աստուած մը ունինք (Մտ 10.30): Աստուած մը, որ գիտէ թէ ի՛նչ բաներու պէտք ունինք (Մտ 6.32), որ իրեն դիմողը չ՛ուզեր *«անօթի տուն դրկել»* (Մտ 15.32), որ բնաւ չի՛ մերժեր ոեւէ մէկը որ իրեն կու գայ (Յհ 6.37), որ բնաւ չի՛ դադրիր մեզի համար գործելէ (Յհ 5.17), մեզի համար բարեխօսելէ (Եբր 7.25 հմմտ Ա.Յհ 2.1), մեզի համար աղօթելէ (Յհ 17.20, Ղկ 22.32):

Վստահի՛նք Տէր Յիսուսի սիրոյն: Ան մեզի հանդէպ իր ունեցած մեծ սիրոյն համար մեզ պիտի փրկէ, միայն թէ հաւատարիմ մնանք իրեն մինչեւ վերջ: Առիթ տանք անոր որ իր սէրը յայտնէ մեզի հանդէպ: Ճիշդ հիմա, ան մեր կողմին է՝ մեզ պաշտպանելու համար: *«Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ»* (Հո 8.31): *«Ես ձեր կողմէն եմ»* (Եզ 36.9), կը յայտարարէ երկրին ու երկինքին արարիչը: Ո՛վ հաւատացեալ, Աստուած մե՛ր կողմէն է եւ ո՛չ թէ աշխարհին կողմէն: Տագնապեցնող եւ վրդովեցնող դէպքերով ու դէմքերով լեցուն այս աշխարհին մէջ, մեզմէ ո՞վ չ՛ուզեր զԱստուած ունենալ ի՛ր կողմէն, ի՛ր կողմին, իրե՛ն համար եւ ի՛ր մէջ: Ինչպէս մարդիկ կը ցանկան իրենցմէ աւելի զօրաւորներն ու հարուստները իրենց կողմին ունենալ, այնպէս ալ նշմարիտ ֆրիստոնեաներս, պէտք է ինդրենք Աստուծմէ մե՛ր կողմին ըլլալ փորձութիւններով լի կեանքի պայքարին դիմաց:

Քրիստոս փորձութեանց եւ նեղութեանց ընթացքին, մեզ կ' 'առնէ իր սիրոյ թելերուն տակ: Այս նշմարտութիւնը պատկերացնելու համար է որ Քրիստոս ըսաւ. *«Քանի՛ անգամ ուզեցի որդիներդ հաւաքել, ինչպէս հաւր իր ձագերը կը հաւաքէ իր թելերուն տակ. բայց դո՛ւք երուսաղէմի բնակիչներ, չուզեցիք»* (Ղկ 13.34):

Սիրելի՛ ընթերցող, չըլլայ որ մե՛նք ալ Քրիստոսի թելերուն տակ հաւաքուիլ մերժողներուն շարքին կը պատկանինք: Միայն նեղութեան ատեն Քրիստոսի դիմողները՝ տարբերութիւն չունին հաւու մը ձագերէն, որովհետեւ անոնք ալ միայն փորձութեանց ժամանակ է որ կը վազեն իրենց մօրը թելերուն տակ ապաստան գտնելու:

Քրիստոս այս օրինակը կու տայ, ցոյց տալու համար իր մեծ հոգածութիւնը մեզի հանդէպ: Դիտէ՛՛ ցուտիկներուն կեանքը երբ երկինքը կը կայծակէ, կ'որոտայ եւ անձրեւ կը տեղացնէ, եւ պիտի տեսնես թէ ինչպէ՛ս անոնք կը վազեն դէպի իրենց մայրը, անոր թելերուն տակ պաշտպանութիւն եւ ապահովութիւն գտնելու: Աւելի հետաքրքրականը

այն է, որ Բուսիկները իրենց մօր թելերուն տակ մտնել էտք, կը սկսին Բոուողել, կարծէք իրենց այդ Բոուողիւնով, իրենց ուրախութիւնն ու շնորհակալութիւնը յայտնելու իրենց մօր՝ անոր շնորհած սիրոյ պաշտպանութեան համար:

Քրիստոս մեզի համար շա՛տ աւելին կ'ընէ: Սարսափազդու պատահարներու դիմաց հաւը կրնայ լքել իր ձագուկները, մայրը՝ իր գաւակները, բայց Քրիստոս ո՛չ միայն մեզ չի՛ լքեր դժուարութեանց դիմաց, այլ՝ աւելի՛ կը մօտենայ մեզի, աւելի՛ կը զգացնէ իր ներկայութիւնը: Կրնայ պատահիլ որ բոլոր ձագերուն համար տեղ չըլլայ իրենց մօրը թելերուն տակ, բայց Քրիստոսի պարագային այդպիսի բան չի՛ կրնար ըլլալ: Ի՛նքն էր որ վկայեց ըսելով. *«Հօրս տան մէջ շատ տեղ կայ. եթէ այդպէս չըլլար՝ չէի ըսեր ձեզի, թէ կ'երթամ եւ ձեզի համար տեղ կը պատրաստեմ»* (Յհ 14.2):

Մեր պարագաներէն մեզի ամենասիրելի եւ ամենամօտիկ եղողները վստահաբար մեր ծնողներն են: Մայրը մինչեւ մահսիրով կապուած կը մնայ իր գաւակներուն: *«Միթէ կինը իր կաթնկեր մանուկը կրնա՞յ մոռնալ, այնպէս որ իր արգանդին պտուղին վրայ չգթայ. թէեւ անոնք մոռնան, բայց ես ինչ պիտի չմոռնամ»* (Ես 49.15): Աստուած մօր մը օրինակը կու տայ, ցոյց տալու համար իր անչափ սէրը մեզի հանդէպ: Բայց Աստուծոյ սէրը կ'անդրանցնի մեր ծնողներուն սէրը:

Աստուած մօր մը օրինակը կու տայ, բայց միաժամանակ կը հաստատէ որ մեր ծնողները կրնան մեզ մոռնալ, բայց ինք՝ բնա՛ւ (Ես 49.15): Մեր հայրն ու մայրը կրնան մեզ թողուլ, բայց Աստուած մեզ պիտի ընդունի (Սղ 27.10): Մեր ծնողները կրնան թմրիլ ու քնանալ, բայց Աստուած մեր մշտարթուն պահապանն է (Սղ 121.4): Աստուած մեզ մօր մը նման կը միտիթարէ եւ կը հանգստացնէ (Ես 66.13): *«Աստուած մեր ապաւէնն ու գօրութիւնն է. նեղութիւններուն մէջ միշտ պատրաստ է օգնելու»* (Սղ 46.1): Երբ ցաւի ու վիշտի մէջ ըլլանք, մեր սիրելիները, մեր ընկերները, մեր ազգականները, կրնան հեռու կենալ մեզմէ (Սղ 38.11): Բայց Աստուած այդպէս չ'ընէր: Ան մեզի ապաւէն կ'ըլլայ նեղութեան ժամանակ (Սղ 37.39):

Ապաւինի՛նք Աստուծոյ պաշտպանութեան: Հաւատարիմ ըլլանք Աստուծոյ Մովսէսի նման (Թւ 12.7) եւ Աստուած մեզ պիտի պաշտպանէ: Երբ Ահարոն եւ Մարիամ համարձակեցան Մովսէսի դէմ խօսիլ՝ Աստուած անձամբ վինեցաւ անոնց հետ, եւ պաշտպանեց Մովսէսը՝ պատժելով Մարիամը (Թւ 12.8-10): Աստուած պաշտպանեց Մովսէսն ու Յեսուն Ամաղէկացիներուն դէմ (Ել 17.8-16): Պաշտպանեց Աբրահամը Ամարփաղ, Արիովք, Քոդոզագոմոր եւ Թադգաղ թագաւորներուն դէմ (Ծն 14.1-16): Պաշտպանեց Ղովտը չար Սոդոմացիներուն դէմ (Ծն 19.10-11): Պաշտպանեց Յակոբը Ասորի Լաբանին դէմ (Ծն 31.24, 29): Պաշտպանեց Յովսէփը իր եղբայրներուն դէմ (Ծն 50.20): Պաշտպանեց Դաւիթը Գողիաթին դէմ (Ա.Թգ 17.40-54): Պաշտպանեց Յովնաթանը

Փղշտացիներուն դէմ (Ա.Թգ 14.6-23): Պաշտպանեց Դաւիթը Սաւուղին դէմ (Ա.Թգ 24.13-19): Պաշտպանեց Եղիան Յեզաբելին դէմ (Գ.Թգ 19.1-8): Պաշտպանեց Եզեկիան եւ Երուսաղէմի բնակիչները Ասորեստանի Սենեֆերիմ Թագաւորին դէմ (Բ.Մն 32.22): Պաշտպանեց Դանիէլը առիւծներուն դիմաց (Դն 6.22): Պաշտպանեց Սեդրակը, Միսաֆն ու Արեդնագովը բորբոքած կրակի հնոցին մէջ (Դն 3.28-30):

Աստուած այսօր ալ պատրաստ է մեզ պաշտպանելու, որովհետեւ, *«Յիսուս Քրիստոս նոյնն է միշտ-երէկ, այսօր եւ յաւիտեան»* (Եբր 13.8): Աստուած չի՛ փոխուիր (Մդ 3.6): Ան միշտ մեր կողմին եղած է եւ միշտ պիտի ըլլայ: ԶԱստուած իր կողմին ունեցող մարդը կը նմանի անասան լերան մը: Յովսափատ Թագաւոր աղօթելով կ'ըսէ. *«Ո՛վ մեր հայրերուն Տէր Աստուածը... մէկը չի կրնար քեզի դէմ դնել»* (Բ.Մն 20.6): Քանի որ մէկը չի կրնար Աստուծոյ դէմ դնել, ուրեմն Աստուծոյ մարդուն ալ դէմ ո՛չ ոք եւ ո՛չ մէկ բան կրնայ դէմ դնել: Ո՛չ միայն մեզի դէմ դնող մը պիտի չըլլայ, այլ նոյնիսկ մեզի վախցնող անգամ պիտի չըլլայ (Մֆ 4.4): Պիտի յաջողինք գետին գարնել առիւծի նման մարդիկ՝ որոնք մեզ գետին գարնել կ'ուզեն (Սդ 17.11-13): Պիտի չվախնանք նոյնիսկ եթէ սպառազինուած բանակ մը մեզի դէմ ելլէ (Սդ 27.3): Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ վախնալ, երբ Աստուծոյ նման թիկնապահ մը ունինք (Ես 52.12): Լսեցէ՛ք Աստուծոյ սփանչելի խօսքն ու խոստումը. *«Ինչպէս առիւծը... իր որսին համար կը մոնչէ... այնպէս ալ զօրքերու Տէրը Սիօն լերան համար ու անոր բլուրին համար պատերազմելու պիտի իջնէ»* (Ես 31.41):

Ո՛հ սիրելի՛ ընթերցող, հոգիդ չի՞ հրնուիր երբ կը լսես որ Տէրը ի՛նքն է, որ մեզի համար պատերազմելու կ'իջնէ: Սիրող չի՞ բերկրիր երբ կը տեսնես, որ Աստուած առիւծի նման մեզ պաշտպանելու կու գայ: Այսօր իսկ յանձնուինք իրեն: Մեր կեանքերը անոր ձեռքերուն մէջ դնե՛նք: Դնե՛նք այնպէս՝ ինչպէս Եբրայեցիները դրին կարմիր ծովուն մէջէն ցամաքով անցած ատեննին: Մեր ձեռքերը երկարենք անոր: Երկարենք այնպէս՝ ինչպէս Պետրոս առաքեալ երկարեց երբ ջրամոյն կ'ըլլար: Այո՛, Տէր Յիսուս Քրիստոս իր ձեռքերը երկարելով մեզ ջուրերուն խորերէն դուրս բերող մեծ Աստուած է:

Ո՞վ պիտի կրնայ խեղդել մեզ եթէ Քրիստոս՝ս է մեր ազատարարը: Ո՞վ պիտի յաջողի մոլորեցնել մեզ եթէ Քրիստոս՝ս է դեկավարը մեր կեանքի նաւերուն: Ո՞վ մեզ պիտի մատնէ յաւիտեանական մահուան եթէ երբեք դաւանած ենք Անմահը իբրեւ մեր կեանքը: Ո՞վ կարող պիտի ըլլայ սասանեցնել մեզ եթէ Քրիստոս-վէմին վրայ հիմնուած ենք: Ո՞վ պիտի փորձէ անհանգստացնել մեզ եթէ Տէր Յիսուսի սիրտին մէջ է որ կը հանգչինք: Ո՞վ կրնայ անպաշտպան թողուլ մեզ, երբ Աստուած է յայտարարողը. *«Զեռէ՛ղ պիտի բռնեմ ու քեզ պիտի պաշտպանեմ»* (Ես 42.6): Ասիկա Աստուծոյ խոստումն է իրեն ապաւինողներուն: Հաւատա՛ իր խոստումին, որպէսզի քու Փրկիչիդ համար օրհներգող վկայ մը ըլլաս: Ան արժանի է օրհներգուելու քու կողմէդ, հիմա ու յաւիտեան: Ամէն:

## ԶՓԱԽԶԻՆՔ ԱՍՏՈՒԾՄԷ

Զփախչինք Աստուծմէ: Եւ ինչո՞ւ փախչինք Աստուծմէ որ մեզի բարիք ընելու համար է որ մեզի կը մօտենայ (Եր 32.41): Ինչո՞ւ փորձենք հեռանալ Տիրոջմէն որ կ'ուզէ մեզ հանգստացնել այնպէս՝ ինչպէս մայր մը կ'ուզէ իր տղան հանգստացնել (Ես 66.13): Ինչո՞ւ լքենք զԱստուած որ կը կամենայ մեզ պաշտպանել իր որսը պաշտպանող առիւծի նման (Ես 31.4): Ինչո՞ւ թողունք կեանքի ջուրին աղբիւրը՝ Աստուած, եւ մեզի համար փորենք ծակոտ գուրբեր որոնք չեն կրնար ջուր պահել (Եր 2.13):

Աստուծմէ փախչելու եւ իրմէ ազատելու խորհուրդը մեր միտքի ծայրէն անգամ պէտք չէ անցընենք: Մեր նիգը պէտք ըլլայ Աստուծոյ ձեռքով ազատիլ եւ ո՛չ թէ Աստուծոյ ձեռքէն ազատիլ: Աստուծոյ ձեռքը մեզ իսպառ նուազ դատաւորի մը ձեռքը չէ, այլ մեզի համար եւ մեր փոխարէն իսպառ Տէր Յիսուսի ձեռքն է ատիկա: Առանց Աստուծոյ ձեռքին՝ չկայ ազատութիւն Աստուծոյ ձեռքէն:

Ի՞նչ դժբախտութիւն է որ մարդիկ փորձեն փախչիլ իրենց ազատութեան համար դէպի իրենց երկարող ձեռքէն: Պետրոս առաքեալ կ'ընկղմէր երբ *«Յիսուս անմիջապէս ձեռքը երկարելով բռնեց զայն»* (Մտ 14.31): Ինչո՞ւ փորձենք փախչիլ Քրիստոսէ որ մեզ տեսակ-տեսակ ընկղմումներէ ազատել կ'ուզէ: Ազատութի՞ւն է որ կը փնտոենք: Յիշե՛նք ազատարար Յիսուսին խօսքը. *«Եթէ Որդին ձեզ ազատէ, այն ատեն իրապէս ազատ պիտի ըլլաք»* (Յհ 8.36):

Ազատի՞լ կ'ուզենք մեզ մահէն ազատել ուզող Յիսուսէն: Հեռանա՞լ կ'ուզենք մեզ երկինքին մօտեցնողէն: Մերժե՞նք Բարձրեալն Աստուած որ կ'ուզէ մեզ բարձրացնել իր ուսերուն վրայ: Երե՞ս դարձնենք իր երեսը մեր վրայ փայլեցնել ուզող Փրկիչին: Ինչո՞ւ մերժենք զԱստուած որ կը ցանկայ մեզ ցանկապատել եւ մեր ցանկութիւնը դառնալ: Ինչպէս առանց ցանկապատի պարտէզ մը ենթակայ է ամէն տեսակի ոտնձգութիւններու, այնպէս ալ Աստուծմով չցանկապատուած մարդը, մնայուն կերպով երթակայ է սատանայական ամէն տեսակի յարձակումներու:

Ըսէ՛ ինձի, ո՞վ փորձեց փախչիլ Աստուծմէ եւ յաջողեցաւ: Աստուած Սաւուղը ընտրեց իբրեւ թագաւոր բայց Սաւուղ պահուրտած էր կարասիներուն մէջ: Սաւուղ փորձած էր փախչիլ Աստուծոյ կողմէ իրեն տրուած պաշտօնէն: Մարդիկ փնտոեցին Սաւուղը բայց չգտան: Երբ ինդրեցին Աստուծմէ որ օգնէ իրենց որպէսզի կարենան գտնել զանիկա, Աստուած ըսաւ. *«Անիկա կարասիներուն մէջտեղը պահուրտած է»* (Ա.Թգ 10.22): Սաւուղ չկրցաւ ծածկուիլ Աստուծոյ տեսողութենէն: Արդեօք մենք ալ երբեմն չե՞նք փորձեր Աստուծոյ տեսողութենէն ծածկուելու համար տեսակ-տեսակ «կարասիներու» մէջ պահուրտիլ:

Յովնան մարգարէն ալ փորձեց փախչիլ Աստուծմէ բայց չյաջողեցաւ: Աստուած ուզեց զինք Նինուէ դրկել որպէսզի այդտեղի ժողովուրդը ապաշխարութեան հրաւիրէր, *«բայց Յովնան ելաւ որ Տիրոջ երեսէն»*

*Թարսիս փախչի»* ծովու քամբով (Յվն 1.2-3): Աստուած փոթորկեցուց ծովը: Նաւին մէջ եղողները վիճակ ձգեցին գիտնալու համար թէ փոթորիկը որո՞ւ պատճառով եղած էր: Վիճակը Յովնանին ելաւ: Մարդիկ Յովնանը ծով նետեցին: Աստուած հրամայեց կէտ ձուկի մը որ Յովնանը կլլէ (Յվն 1.17): Յովնան երեք օր կէտ ձուկին փորին մէջ մնաց: Ան աղօթեց, խոստովանեցաւ իր մեղքը եւ խոստացաւ Տիրոջ հնազանդիլ (Յվն 2.5, 7-10):

Յովնանին անհնազանդութիւնն էր որ ծովը փոթորկեցուց: Քննե՛նք մենք զմեզ: Կրնայ պատահիլ որ մեր ալ անհնազանդութիւնը Աստուծոյ բարկութիւնը բորբոքէ օր մը: Ինչպէս Աստուած Յովնանը դրկեց Նինուէացիներուն որպէսզի զիրենք ապաշխարութեան հրաւիրէր, այնպէս ալ մեզ դրկած է ամբողջ աշխարհ որպէսզի իրեն համար վկայենք (Գրծ 1.8, Մտ 28.19-20): Յովնանի նման մենք ալ յանախ չե՞նք փորձեր փախչիլ Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարտականութիւններէն:

Յիշեցէ՛ք Մովսէսին օրինակը: Աստուած ուզեց Մովսէսը փարաւունին դրկել որպէսզի ազատ արձակէր Իսրայէլացիները: Մովսէս խուսափելու համար աստուածատուր առաքելութենէն, պատրուակեց թէ «*ծանրախօս ու ծանրալեզու*» մէկն էր: Անոր պատրուակը մերժուեցաւ: (Ել 4.10-17): Նոյնն է պարագան մեզմէ իւրաքանչիւրին: Յանախ առաքելութեան մը կը կանչուինք Աստուծոյ կողմէ, եւ սակայն, փոխանակ զայն ի կատար ածելու միջոցի մը մասին մտածենք, ընդհակառակը, կը մտածենք անկէ փախչելու կերպի մը մասին: Եթէ ծառաներն ենք Աստուծոյ, պէտք է հնազանդիւնք իրեն: Եթէ ծառայ մը ունէիր որ կը մերժէր հնազանդիլ քեզի եւ կամքդ կատարել, պիտի չբարկանայի՞ր անոր եւ զինք գործէ պիտի չարձակէի՞ր: Ահա նոյնպիսի վերաբերմունք կրնայ որդեգրել Աստուած մեզի հանդէպ եթէ շարունակենք ընդդիմանալ իր կամքին:

Զկա՛յ մէկը որ Աստուծոյ ձեռքէն կարենայ ազատիլ (Ես 43.13) եւ ո՛չ ալ մէկը որ կարենայ մեզ ազատել Աստուծոյ ձեռքէն (Յոր 10.7): Կա՞յ արդեօք կերպ մը որով կարելի է ազատիլ Աստուծոյ ձեռքէն: Անշուշտ: Աստուծոյ ձեռքէն ազատելու միակ կերպը Աստուծոյ ձեռքերուն յանձնուիլն է: Այսպէս ըրաւ Դաւիթ մարգարէ: Աստուծոյ ձեռքը գիշեր ու ցերեկ հալածեց Դաւիթը մինչեւ որ Դաւիթ Աստուծոյ դարձաւ, խոստովանեցաւ իր մեղքերը եւ ներում ստացաւ (Սղ 32.3-5):

Ինչպէս ոստիկանութիւնը կը շարունակէ հալածել փախուստի դիմած մահապարտ մարդը մինչեւ որ զայն բռնէ եւ պատժէ, նմանապէս ալ Աստուած պիտի շարունակէ մեղապարտները հետապնդել, մինչեւ որ բռնէ զանոնք, մեծ տարբերութեամբ մը սակայն, ո՛չ թէ պատժելու համար զանոնք, այլ անոնց պատիժը իր վրայ առնելու (Ես 53.5):

Դարձեալ, ինչպէս ոստիկանութենէ փախչող աւագակը եթէ ոստիկանութեան յանձնուի, նուազ պատիժ կը ստանայ, կամ բոլորովին կը ներուի անոր յանցանքը, նոյնպէս ալ Աստուծմէ փախչող մեղաւորը, եթէ Աստուծոյ յանձնուի՝ ներում կը գտնէ: Նոյնը կ'ուսուցանէ Աստուծոյ

իօսւք. «Դարձի՛ր, ո՛վ ապստամբ Իսրայէլ, կ'ըսէ Տէրը, իմ բարկութիւնս ձեր վրայ չեմ թափեր. քանզի ես ողորմած եմ, յաւիտեան ոխ չեմ պահեր» (Եր 3.12): «Քու յանցանքներդ՝ մէզի պէս ու քու մեղքերդ ամպի պէս ջնջեցի: Ինծի՛ դարձիր, քանզի քեզ փրկեցի» (Ես 44.22):

Մենք պէտք է աշխատինք Սատանայէն փախչիլ եւ ո՛չ թէ Աստուծմէ: Ենթադրենք պահ մը որ ծովը կը լողայինք եւ յանկարծ կը նշմարենք որ կէտանկ մը մեր աջ կողմէն դէպի մեր կողմը կը սուրայ, իսկ մեր ձախ կողմը նաւ մը կայ: Ի՞նչ պիտի ընէինք նման պարագայի մը: Դէպի կէտանկի՞նք կողմը պիտի փորձէինք լողալ, թէ դէպի նաւուն կողմը: Վստահաբար նաւուն: Այդ կէտանկը Սատանան ի՛նքն է, որ մեզ կլլել կ'ուզէ (Ա.Պտ 5.8), իսկ նաւը՝ Քրիստոս: Ո՛չ ոք ազատաբար ձգելով դէպի գինք կլլել ուզող կէտանկին կողմը կը վագէ: Ո՛չ ոք տաք եւ հեղձուցիչ օդէն ազատելու համար ինքզինք կրակին գիրկը կը նետէ, երբ անդին «կենսատու ջուրի գետեր» իրեն կը սպասեն (Յհ 7.38):

Զփախչինք Աստուծմէ՝ մեր պաշտպանէն ու պահապանէն: Ո՞վ է այն մարդը որ ինքնիր պաշտպանէն պաշտպանուիլ կը փորձէ: Ո՞վ այն անձը որ ինքնիր պահապանէն պահպանուիլ ու պահուրտիլ կ'աշխատի: Կարելի՞ քան է մերժել Աստուծոյ ձեռքին պաշտպանութիւնը երբ պատերազմի մէջ ենք երկինքի տակ գտնուող չար ոգիներուն, իշխանութիւններուն եւ պետութիւններուն, այս խաւար աշխարհի տիրակալներուն դէմ (Եփ 6.12):

Քանի որ հոգեւոր պատերազմի մէջ ենք, չե՞նք ուզեր Աստուծոյ նման անպարտելի թիկնապահ մը ունենալ (Ես 52.12), գորաւոր ախոյեան մը (Եր 20.11), մեր ձեռքերը պատերազմի վարժեցնող մը (Բ.Թգ 22.36): Քանի որ պատերազմի մէջ ենք Սատանային դէմ, ուրեմն, ապաւինիմք Աստուծոյ: Դուն քու սեփական ուժովդ չես կրնար յաղթել (Ա.Թգ 2.9): Յաղթողն ու յաղթանակել տուողը Աստուած ի՛նքն է (Ա.Թգ 17.47): Պատերազմը գորաւորներունը չէ (Ժդ 9.11), այլ՝ Աստուծոյ գորութեան ապաւինողներուն:

Սիրելի՛ ընթերցող, մարդիկ կան որոնք կը փորձեն փախչիլ Աստուծմէ, որովհետեւ կը կարծեն որ Աստուած կրնայ իրենց դժբախտութեան պատճառ դառնալ: Սակայն Աստուած որ երջանկութիւնն ու երջանկացնողն է, ինչպէ՞ս կրնայ դժբախտութեան պատճառ դառնալ: «Ամենակարողէն ուրախութիւն պիտի ստանաս» (Յոր 22.26): Աստուծմէ ուրախութիւն կը ստանանք եւ ո՛չ թէ տրամութիւն: Աստուած կը միտքարէ մեզ եւ ո՛չ թէ սուգի կը մատնէ (Ես 51.12):

Աստուած մեր երջանկութիւնը առնելու համար չէ որ կը մօտենայ մեզի, այլ մեր երջանկութիւնը դառնալու համար: Եթէ երբեք մեր ոտքին մէջ միտուած սուր մը ունէինք եւ տեսնէինք որ Յիսուս մեզի կը մօտենար որպէսզի սուրը մեր ոտքէն դուրս հանէր, անմտութիւն ըրած պիտի չըլլայի՞նք եթէ փորձէինք անկէ փախչիլ, կարծելով որ ան կու գար սուր մը եւս միտելու մեր ոտքին մէջ:



Արդէն իսկ խոցոտուածին խոցոտելը՝ անգթութիւն է: Իսկ Աստուած անգութ չէ, այլ՝ կատարեալ գթութիւն եւ գորով (Բ.Մն 30.9, Սղ 86.15, 145.8): Ըսել ուզածս այն է, որ մենք արդէն իսկ մեղքերով խոցոտուած ենք եւ Աստուած այդ մէկը շատ լաւ գիտէ: Հետեւաբար, ինչպէ՞ս թոյլ կու տանք մենք մեզի մտածելու որ Աստուած մեղքի սուրով խոցոտուածներուս կու գայ անգամ մը եւս խոցոտելու: Այդ ձեւով մտածողները, գթառատն Աստուած անգութ էակի մը տեղ դրած կ'ըլլան:

Ո՞վ կրնայ ամէնուրեք Աստուծմէ մը փախչիլ: Կրնա՞նք փախչիլ տեղ մը ուր Աստուած չկայ: Սաղմոսագիրքը կը պատասխանէ ըսելով. *«Ո՞ւր երթամ՝ քու Հոգիէդ ու քու երեսէդ ո՞ւր փախչիմ: Եթէ երկինք ելլեմ, դուն հոն ես, եթէ դժոխք իջնեմ, դարձեալ հոն ես»* (Սղ 139.7-8): Աստուած իրմէ փախչողներուն կ'ըսէ. *«Մէկը ծածուկ տեղեր կրնա՞յ պահուրտիլ, որ ես գանձեալ չտեսնեմ: Միթէ երկինքն ու երկիրը լեցնողը ես չեմ»* (Եր 23.24): Երկինքն ու երկիրը լեցնող Աստուածորդին մե՞զ ալ կրնայ լեցնել: Միթէ Աստուած իր լեցունութենէն բան մը պիտի կորսնցնէ՞ եթէ մեզ լեցնէ: Միթէ պիտի աղփատանա՞յ եթէ հոգեւորապէս մեզ հարստացնէ:

Սիրելի՛ ընթերցող, *«գիտցի՛ր ու տե՛ս թէ գէշ ու դատն բան մըն է, որ քու Տէր Աստուածդ կը թողու...»* (Եր 2.19): Աստուած չի՛ հեռանար մեզմէ եթէ զԱստուած մեզմէ հեռացնող յամառութիւն ցոյց չտանք: Յամառ մարդուն հետ ո՛չ Աստուած կրնայ գործել եւ ո՛չ ալ մարդը: Յամառները Աստուծոյ դէմ կոռուող մարդիկ են: Զկոռի՛նք մեր մեղքերուն դէմ կոռուող Աստուծոյ Հոգիին դէմ: Մեր կեանքին դեկը Սուրբ Հոգիին յանձնենք: Յաւիտեանական կեանքին հասնելու համար, Աստուծոյ յաւիտեանական Հոգին պէտք է առաջնորդէ մեզ: Մենք անսխալական առաջնորդի մը պէտք ունինք, որովհետեւ *«եամբայ կայ, որ մարդուն շիտակ կ'երեւնայ, բայց անոր վերջաւորութիւնը մահ է»* (Առ 14.12):

Եթէ Աստուծոյ դառնանք Աստուած ալ մեզի պիտի դառնայ (Զբ 1.3) եւ մենք Աստուծմով լեցուն բաժակներու պիտի նմանինք: Իւրաքանչիւրս բաժակ մըն է Աստուծոյ ձեռքին մէջ: Ամօ՞թ է մեզի եթէ Աստուծոյ ձեռքին մէջ եղած բաժակներս պարապ ըլլանք: Աստուծոյ ձեռքը պարապ բաժակ չի՛ տրուիր: Ի՞նչ պիտի ընենք եթէ Աստուած նայի իր ձեռքին մէջ եղած բաժակներուս եւ գանոնք հաւատք պարպուած տեսնէ: Ի՞նչ պիտի ընենք եթէ Աստուած սկսի Կենաց Գիրքին մէջ արձանագրուած անունները աչքէ անցընել եւ հոն չհանդիպի մեր անունին: Ըսէ՛ք ինծի, ի՞նչ պիտի ընենք...:

Այն ինչ որ կրնանք ընել հիմա՛ է որ պէտք է ընենք. դառնալ մեր դարձին սպասող Քրիստոսի, լեցուելու համար անոր սիրով եւ ապրիլու համար անոր ներկայութեան մէջ այժմ եւ յաւիտեանս: Ամէն:

## ԱՌԱՋԻՆ ՄԵՂՔԻՆ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ

«Պարտեզին մէջ *հու ձայնդ լսեցի ու վախցայ, որովհետեւ մերկ էի ու պահուեցայ*» (Ծն 3.10): Այս համարը ցոյց կու տայ, որ մեղքի իբրեւ հետեւանք երեք բաներ յառաջացան Ադամի եւ անոր ընդմէջէն մարդկային ցեղի կեանքին մէջ.– վախ, մերկութիւն եւ պահուրտուք:

1- *Վախ*: Այնքան ատեն երբ Ադամ եւ Եւա մեղք չէին գործած, վախ ըսուածը գոյութիւն չունէր անոնց կեանքին մէջ: Ինչո՞ւ եւ ի՞նչ բանէ վախնային երբ Աստուած իրենց հետ էր գորաւոր ախոյեանի մը պէս (Եր 20.11): Ինչո՞ւ վախնային երբ Աստուած իրենց կողքին էր լերան մը նման (Սղ 125.2): Ինչո՞ւ երկնչէին երբ ունէին Աստուծոյ նման աննինջ պահապան մը (Սղ 121.4), անպարտելի թիկնապահ մը (Ես 52.12):

Եթէ Աստուած այս բոլորն է, ուրեմն Ադամ եւ Եւա իրաւունք ունէին վախնալու երբ մեղք գործեցին: Զգուելի է մեղքը որ պատճառ կը դառնայ որ մարդը վախնայ իր թիկնապահէն՝ Աստուծմէ: «*Կ'ուզե՞ս իշխանութենէն չվախնալ: Բարի՛՛ք գործէ...*» (Հո 13.3): Ադամ եւ Եւա բարին չէր որ գործեցին երբ պատուիրանագանց եղան, ահա թէ ինչո՞ւ վախցան Վերին Իշխանութենէն: Խաղաղութեան Իշխանը՝ Քրիստոս (Ես 9.6), չ'ուզեր խոտվարարներ տեսնել իր իշխանութեան սահմաններէն ներս: Մեղք գործելը՝ խոտվութիւն յառաջացնել է: Ահա թէ ինչո՞ւ Ադամ եւ Եւա երբ մեղք գործեցին՝ հեռացուեցան Աստուծոյ «*իշխանութեան սահմաններէն*» ուր միայն խաղաղասէրներ կրնան ապրիլ:

Աստուծոյ ներկայութեան մէջ միայն ապահովութիւն կայ: Աստուծոյ ներկայութեան մէջ ապրող մարդը գուրկ է ամէն տեսակի վախէ: Վախը մեր կեանքերուն մէջ հանդէս կու գայ երբ Աստուծոյ Հոգին լքէ մեզ, իսկ փաշտութիւնը հանդէս կու գայ երբ դառնանք Աստուծոյ եւ վերստին ստանանք Սուրբ Հոգին: Վախկո՛տ է մարդը առանց Սուրբ Հոգիին պարգեւած փաշտութեան: Տկա՛ր է մարդը առանց Սուրբ Հոգիին շնորհած գորութեան: Աստուածաշունչին մէջ Սուրբ Հոգին կը ներկայանայ որպէս փաշտութիւն եւ գորութիւն պարգեւող Անձ: Պօղոս առաքեալ կ'ըսէ.– «*Աստուած իր Հոգին մեզի տուաւ՝ որպէսզի մեր վախկոտութիւնը յաղթահարենք եւ գորանանք...*» (Բ.Տմ 1.7): Քրիստոս նաեւ իր աշակերտներուն ըսաւ.– «*Երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, գորութեամբ պիտի լսեցուիք...*» (Գրծ 1.8): Այո՛, գորութեամբ, համարձակութեամբ, կորովով եւ եռանդով կը լսեցուինք երբ Սուրբ Հոգին իջնէ մեր վրայ: Սուրբ Հոգին ի՛նքն է որ Աստուծոյ ներկայութեան կանգնելու համարձակութիւն կը պարգեւէ մարդ արարածին: Սուրբ Հոգին ի՛նքն է որ Աստուծոյ խօսքը հրապարակելու փաշտութիւն կը ներշնչէ: Առանց Սուրբ Հոգիին ո՛չ կրնանք Աստուծոյ առջեւ կանգնիլ եւ ո՛չ ալ մարդոց առջեւ:

2- *Մերկութիւն*: «*Վախցայ, վասն զի մերկ էի...*» (Ծն 3.10): Սա խօսքը ցոյց կու տայ, որ մեղաւոր մարդը մե՛րկ մարդ է: Մեղքը մեզ հոգեւորապէս մերկ կը կանգնեցնէ մեր հոգիներու Տեսուչին ու Տիրոջ

անջել: Դարձի չեկած եւ գՔրիստոս իր սիրտին մէջ չունեցող մարդը մե՛րկ մարդ է: Խօսքը հոգեւոր մերկութեան մասին է: Ինչպէս ֆիզիքապէս մերկ եղող մարդը ենթակայ է բնութեան հարուածին եւ մարդոց ձողկումին, այնպէս ալ հոգեւորապէս մերկ եղող մարդը, ենթակայ է Սատանային եւ անոր պիղծ ոգիներուն ծաղրանքին եւ հեզմանքին առարկան դառնալու: Այո՛, Սատանան կը ծաղրէ հոգեւորապէս մերկ եղող մարդը:

Մեղքը մերկացուց Ադամն ու Եւան իրենց արդարութեան եւ սրբութեան պատմունանէն: Անոնք մերկացան աստուածնաւաչողութեան իրենց պարգեւէն, Աստուծոյ գիտութենէն, փառքէն, գօրութենէն, եւ մանաւանդ, Աստուծոյ Հոգիէն: Աստուած անտարբեր չմնաց մեր նախահօր եւ նախամօր այս մերկութեան դիմաց: Ան աշխարհ դրկեց իր Որդին որ Ադամական մեր մերկութիւնը ծածկելու համար՝ մերկացաւ խաչին վրայ: Ո՛չ ոք կրցած է եւ ո՛չ ոք պիտի կրնայ աներկիւղ կանգնիլ Աստուծոյ ներկայութեան եթէ երբեք ինքնիր մերկութիւնը չծածկէ Քրիստոսի արդարութեամբ: Այս իրողութեան գիտակցելով է որ Պօղոս առաքեալ կոչ կ'ուղղէ մեզի մեր վրայ հագնելու Տէր Յիսուս Քրիստոսը (Հին Թրգ. Հո 13.14): Քրիստոս ի՛նքն նաեւ կ'ըսէ. «Ճերմակ հագուստներ առ՝ հագնելու համար, որպէսզի մերկութեանդ ամօթը ծածկես» (Յյ 3.18): Մեղքը ամօթահար վիճակի կ'ենթարկէ մեզ: Յաւիտեանական ամօթը պիտի պատէ այն անձը որ Աստուծոյ դատաստանին կը բերուի առանց իր վրայ առած ըլլալու Գառնուկին արեամբ ներմկցուած հագուստը:

Ի վերջոյ, մերկ մարդը անպաշտպան մարդն է: Երբ Ադամ եւ Եւա մեղանչեցին Աստուծոյ դէմ, Աստուծոյ Սուրբ Հոգին հեռացաւ իրենցմէ եւ իրենք դադրեցան Աստուծոյ պաշտպանարար ներկայութիւնը վայելելէ: Ադամ եւ Եւա իրենց մեղանչումէն առաջ ո՛չ միայն Աստուծոյ պաշտպանութիւնը կը վայելէին, այլեւ անոր առաջնորդութիւնը, ընկերակցութիւնը, բարեկամութիւնը, մտերմութիւնն ու գործակցութիւնը: Այս բոլորը չէին կրնար շարունակուիլ երբ մեղքը իրբեւ պատնէշ հանդէս եկաւ Աստուծոյ եւ նախամարդուն միջեւ: Մէ՛կը պէտք էր որ մեղքի այդ պատնէշը փուլ բերէր: Այդ մէկը եղաւ Քրիստոս ի՛նքն: Մեղքով իրարմէ հեռացած ու խորթացած Աստուած եւ մարդ, Քրիստոսով վերստին իրարու մօտեցան եւ մտերմացան:

3- *Պահուրտութիւն*: Ադամ եւ Եւա երբ մեղանչեցին Աստուծոյ դէմ «պարտէզին ծառերուն մէջ պահուեցան» (Ծն 3.8): Հոսկէ կը սկսի Աստուծմէ մարդուն փախչելու պատմութիւնը: Մեղքը Աստուծոյ ցանկալի ներկայութիւնը դարձուց անցանկալի: Մեղքը խորթութիւն մը յառաջ բերաւ Աստուծոյ եւ մարդուն միջեւ: Մեղքը կործանեց այն սիրալիր յարաբերութիւնը որ կար Արարիչին եւ արարուածին միջեւ: Մեղքը իլեց նախամարդուն սիրտէն Աստուծոյ ներկայութեան կանգնելու համարձակութիւնն ու փափաքը: Մեղքով անարգուածը՝ փառքով Փառաւորուածին ներկայութեան չի կրնար կենալ: Միակ Վէմին (Ես 44.8) դէմ մեղանչողը՝ վէմին մէջ մտնել պիտի ուզէր (Ես 2.10):

Ասիկա մարդուն առաջին պահուրտիլն էր Աստուծմէ: Մեղքը Աստուծոյ եւ մարդուն յարաբերութիւնը վերածեց դատաւորի եւ դատապարտեալի յարաբերութեան: Ո՞ր յանցապարտը պիտի չուզէր պահուրտիլ դատաւորին երեսէն: Ո՞ր զինուորը պիտի յանդգնէր կանգնիլ թագաւորի մը ներկայութեան եթէ երբեք ոսնակոխ ըրած էր անոր հաստատած օրէնքները: Ահաւասիկ ա՛յս էր պատճառը թէ ինչո՛ւ Ադամ չուզեց եւ չկրցաւ Աստուծոյ առջեւ կանգնիլ:

Ադամէն սկսեալ, մարդ արարածը սկսաւ Արարիչէն փախչիլ փոխանակ դէպի Արարիչը փախչելու: Մարդիկ Աստուծմով ազատելու փոխարէն՝ Աստուծմէ ազատելու մասին սկսան խորհիլ: Եթէ պահ մը մարդիկ անդրադառնան թէ Աստուած որքա՛ն կը սիրէ զիրենք, թէ Աստուած իրենց մեղքերով չէ որ հետաքրքրուած է, այլ իրենցմով, եւ թէ Աստուած սրտագինս կը փափաքի ձիւնի պէս ցերմկեցնել զիրենք (Ես 1.18), վստահաբար, ալ պիտի չփախչին Աստուծմէ, այլ պիտի դառնան իրենց Հովիւին՝ իրենց հոգիներու Տեսուչին՝ Քրիստոսի (Ա.Պտ 2.25):

Սիրելի՛ ընթերցող, տեսնա՛մ առաջին մեղքին երեք հետեւանքները՝ վախ, հոգեւոր մերկութիւն եւ պահուրտուի: Եթէ կ'ուզես ձերբազատիլ վախի զգացումէդ՝ յանձնուէ Աստուծոյ Սուրբ Հոգիին, որովհետեւ միայն ի՛նք կրնայ քեզ զօրութեամբ լեցնել: Եթէ կը փափաքես ազատագրուիլ հոգեւոր մերկութենէդ՝ ձեռքդ երկարէ պարարտ հորթին՝ Քրիստոսի արիւնով սրբուած լաւագոյն պատմունանին, որ կրնայ քեզ մերկութենէդ մերկացնել: Եթէ կը ցանկաս չպահուրտիլ եւ չփախչիլ Աստուծոյ ներկայութենէն՝ մի՛ փորձեր «ծառերուն տերեւներուն» ետին պահուրտիլ, այսինքն՝ ինքնարդարացումի մի՛ դիմեր, ինչպէս Ադամ եւ Եւա ըրին, այլ պատասխանէ Աստուծոյ «Ո՛ւր ես Ադամ» (Ծն 3.9) հարցումին՝ խոստովանելով մեղքերդ Աստուծոյ:

«Ո՛ւր ես Ադամ» հարցումին մասին, կարդա՛ յաջորդ գլուխին մէջ:

## Ո՞ՒՐ ԵՍ ԱՌԱՄ

*«Ո՞ւր ես Ադամ»*: Աստուծոյ սէրը հանդէպ մարդ արարածին աւելի՛ մեծ է քան մարդուն սէրը հանդէպ Աստուծոյ, ահա թէ ինչու, Աստուած է որ նամբայ ելաւ փնտոելու համար մարդը եւ ո՛չ թէ մարդը՝ Աստուած: Աստուած նայեցաւ դէպի երկիր երբ ո՛չ ոք հետաքրքրուած էր երկինքով: Աստուած գթաց մեր վրայ երբ մենք անգթութիւն կը ցուցաբերէինք իրարու եւ իր նկատմամբ:

Աստուած է որ Աստուած եւ մարդ հաշտութեան նախաձեռնութիւնը կատարեց: Մեզմէ ո՞վ խնդրեց Աստուծմէ որ իր Որդիին արիւնով մեզ իրեն հետ հաշտեցնէ: Աստուածաշունչը կը վկայէ որ *«Աստուած ինքն էր որ Քրիստոսի միջոցաւ աշխարհը հաշտեցուց իրեն հետ»* (Բ.Կր 5.19): Քրիստոս ինքն է որ կորսուած ոչխարներս կը փնտոէ (Ղկ 15.4-7): Ինքն է որ կորսուած դրամը (մարդը) կը փնտոէ (Ղկ 15.8-10): Սատանան մեզ կը փնտոէ մեզ խարբալելու համար (Ղկ 22.31), մինչ Քրիստոս մեզ կը փնտոէ մեզ փրկելու համար այդ խարբալումէն (Ղկ 19.10):

*«Ո՞ւր ես Ադամ»*: Աստուած տեղի մասին չէ որ կը հարցնէ, այլ այն դժբախտ եւ նեղ կացութեան մասին, այն հոգեւոր աղէտին մասին՝ որուն մէջ Ադամ ինկաւ իր գործած մեղքին պատճառով: Աստուած գիտէր թէ մեղքը ինչ բանի առաջնորդած էր Ադամը, բայց Ադամ ինքն էր որ կ'անգիտանար այդ մէկը: Ադամ եթէ գիտնար մեղքին արդիւնքները եւ անոր ձգած թոյնը, իսկոյն պիտի ուզէր դառնալ Աստուծոյ, ազատած ըլլալու համար անկէ:

*«Ո՞ւր ես Ադամ»*: Սա հարցում մը չէր, այլ՝ լուրջ հարց մը: Ադամին ու Եւային մեղանչումով, վիհ մը յառաջացած էր Արարիչին ու արարածին միջեւ: Երկինք եւ երկիր սկսած էին հեռանալ իրարմէ: Դադրեցուեցաւ այն սիրալիր յարաբերութիւնը որ գոյութիւն ունէր հրեղէններուն եւ հողեղէններուն միջեւ: Անմահութեան նամբան փակուեցաւ անմահութեան համար ստեղծուած մարդոց առջեւ (Մն 3.24): Աստուած եկաւ Ադամին որպէսզի անոր հետ միասին լուծէր այս հարցը, սակայն, Ադամ կարծեց որ հարցը լուծուած պիտի ըլլար եթէ կարենար պահուրտիլ պարտեզին ծառերուն մէջ եւ թոյլ չտալ որ Աստուած տեսնէր զինք: Ադամ տակաւին չէր գիտեր որ Աստուած ամենատես Աստուած է:

Աստուած, *«Ո՞ւր ես Ադամ»* հարցումով, կարծէք ըսել կ'ուզէր. *«Տե՛ս Ադամ թէ ինչ ըրաւ մեղքը քեզի: Նայի՛ր թէ ո՛ւր էիր եւ ո՛ւր հասար, ինչ էիր եւ ինչ եղար: Զիս փնտոող մըն էիր, դարձան ինձմէ փախչող մը: Իմ ուրախութեանս առարկան էիր, իսկ հիմա դարձար իմ տրտմութեանս առարկան: Երեսս փնտոող եւ հետս ընկերութիւն ընող մըն էիր, իսկ հիմա դաւաճանի նման երես չունիս ինձի նայելու: Գործակիցս էիր, բայց ուզեցիր ինձի մրցակից դառնալ, կարծելով որ կրնաս աստուած ըլլալ ծառին պտուղէն նաշակելով (Մն 3.5), եւ մոռցար որ "ինձմէ գատ ուրիշ*

Աստուած չկայ" (Յս 45.21), եւ թէ ո՛չ ոք ինծի հաւասար է կամ կրնայ ինծի հետ բաղդատուիլ» (Յս 46.5):

Նդիշէ պատմիչ «Մեկնութիւն արարածոց» իր գործին մէջ, կ'ըսէ. «Աստուած կ'ողբայ ըսելով.– «Ո՞ւր ես Ադամ». իր այս հարցումով, կարծէ՛ք Աստուած ըսել կ'ուզէ՛ ո՛հ, Ադամ, նայիր ի՛նչ փառքէ դէպի ինչպիսի՛ անարգութիւն ինկար: Երկնայինդ եւ անմահդ՝ երկրային եւ մահկանացու եղար: Կ'ողբամ զքեզ Ադամ, որովհետեւ իմ պատկերովս քեզ ստեղծեցի: Ո՛չ դուն քեզի խնայեցիր եւ ո՛չ ալ իմ պատկերէս պատկանեցար»:

«Ո՞ւր ես Ադամ» հարցումին, Ադամ պատասխանեց. «Պարտէզին մէջ քու ձայնդ լսեցի ու վախցայ...» (Մն 3.10): Կարելոր նշմարտութիւն մը կայ որ մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի: 8-10 համարներուն մէջ մեզի երկու անգամ կ'ըսուի որ Ադամ եւ Եւա Տէր Աստուծոյ ձայնը լսեցին: Ի՞նչ բանի պատկերացումն է Աստուծոյ ձայնը լսելը: Այստեղ, «լսել» կը նշանակէ «ճանչնալ»: Անոնք կը ճանչնային Աստուծոյ ձայնը: Ի՞նչ ցոյց կու տայ Աստուծոյ ձայնը ճանչնալը: Տոյց կու տայ, որ Ադամ եւ Եւա շատ մօտիկ էին Աստուծոյ. անոնց միջեւ կար փոխադարձ ճանաչողութիւն, կար բարեկամութիւն, մտերմութիւն, անկեղծութիւն եւ հարազատութիւն: Անոնք իրարու հետ կը վերաբերէին այնպէս՝ ինչպէս հարազատ հայր մը եւ որդի մը պիտի վերաբերէին իրարու հետ: Անոնք իրարու ներկայութիւնը փնտոող եւ իրարու ներկայութեամբ զուարմացողներ էին:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ խօսելով Ադամին եւ Եւային Աստուծոյ ձայնը լսելուն մասին, կ'ըսէ. «Կը տեսնես թէ որքան մօտ եւ ծանօթ էին Աստուծոյ, որ մինչեւ անգամ ոտնաձայնին անտեղեակ չէին: Այսպէս, Բարեբարը նախ ոտնաձայնը կը հանէր գոջումի առիթ տալով տգէտին, որպէսզի մարդը հասնելով քաւութիւն բերող ոտքերուն, անձամբ պատմէ իր յանցանքները եւ փրկութիւն գտնէ»:

«Ո՞ւր ես Ադամ»: Սիրով բարախուն տող մըն է ասիկա: Ինքնագիտակցութեան մղող խօսք մըն է: Դարձի գալու հրաւեր մըն է: Այս բառերուն մէջ մենք կը տեսնենք Աստուծոյ սիրտին վիշտն ու տագնապը, անոր գորովալից կապուածութիւնը մարդկային ցեղին: Աստուած Ադամն ու Եւան կը փնտոող այնպէս՝ ինչպէս մայր մը իր կորսուած միածին զաւակը պիտի փնտոող: Աստուած չփնտոող Ադամը որպէսզի դատապարտէր զանիկա իր ըրածին համար, այլ որպէսզի վերականգնէր զանիկա:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կ'ըսէ. «Աստուած չուզեց ամբաստանող ըլլալ եւ ահաբեկելով յարձակիլ, այլ խաղաղարար ձեւով զիջեցաւ, ըսելով թէ՛ «ո՞վ ըսաւ քեզի թէ մերկ ես», որովհետեւ կ'ուզէր ներելով՝ իրեն մօտեցնել, որպէսզի Աստուծոյ քաղցրութիւնը զանոնք ապաշխարութեան բերէ»: Աստուած իր «Ո՞ւր ես Ադամ» հարցումով, կ'ուզէր որ Ադամ անդրադառնար իր գործած մեղքին, դարձի գար եւ ներում խնդրէր:

Թէպէտ Ադամ պատասխանեց *«Ո՞ւր ես»* հարցումին, բայց պատասխանը Աստուծոյ ակնկալած պատասխանը չէր: Վստահաբար Աստուած կը սպասէր որ Ադամ եւ Եւա խոստովանէին իրենց մեղքը եւ ներում խնդրէին: Ճիշդ էր որ ե՛լ Ադամ ե՛լ Եւա խոստովանեցան թէ կերան արգիլեալ ծառին պտուղէն, բայց անոնք մերժեցին յանձն առնել պատասխանատուութիւնը իրենց արարփին: Ադամ իր գործած մեղքին պատասխանատուութիւնը Եւային վրայ նետեց (Ծն 3.12), իսկ Եւա՝ Օձին վրայ (Ծն 3.13):

Սիրելի՛ ընթերցող, եթէ Աստուած հետաքրքրուած չըլլար Ադամով եւ Եւայով եւ զանոնք չսիրէր, պիտի չերթար անոնց ետեւէն, այլ պիտի ձգէր զանոնք իրենց ֆակատագիրին: Անոնց ետեւէն երթալու գործողութիւնը, ցոյց կու տայ, որ Աստուած կը սիրէ մեղաւոր մարդը, մտահոգ է անոր յաւիտենականութեամբ: Նո՛յնը ուսուցանեց Քրիստոս կորսուած ոչխարին առակով երբ ըսաւ. *«Ենթադրեմք որ ձեզմէ մէկը հարիւր ոչխար ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը արօտավայրին մէջ եւ չ'երթար կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն»* (Ղկ 15.4):

Եթէ Աստուած չփնտռէր մարդը՝ մարդը առ յաւէտ կորսուած պիտի ըլլար: Աստուած չի դադրիր փնտռելէ մարդը *«մինչեւ որ գտնէ զայն»*: Քանի որ Աստուած քեզ փնտռող Աստուած մըն է, ան անպայման կը գտնէ քեզ, միայն թէ երբ գտնէ քեզ, մի՛ ընէր Ադամին ըրածը, այսինքն՝ մեղաւորութեանդ եւ յանցագործութեանդ պատասխանատուութիւնը ուրիշին վրայ մի՛ նետեր, այլ ընդունէ մեղապարտ ըլլալդ եւ քաւութիւն հայցէ մարդկային ցեղին Քաւիչէն:

Աստուած քեզ պիտի չարդարացնէ եթէ փորձես ուրիշը դատապարտել դուն քեզ արդարացնելու համար: Ա՛յս էր պատճառը թէ ինչո՛ւ Ադամ եւ Եւա չարդարացան: Յաջորդ գլուխին մէջ կարդա՛ ադամական այն մեղքին մասին՝ որ ամէն մարդ կը գործէ, եւ թող ատիկա մարտահրաւեր մը ըլլայ քեզի նոյն մեղքը չգործելու:

## ՄԵՂՔԸ ԶՈՐ ԱՄԷՆ ՄԱՐԴ ԿԸ ԳՈՐԾԷ

Այն ինչ որ մեր նախահայրն ու նախամայրը ըրին, բոլոր դարերուն բոլոր մարդիկը ըրին, եւ այսօր ալ կը շարունակեն նոյնը ընել: Ի՞նչ էր այդ բանը: Ե՛ւ Ադամ ե՛ւ Եւա երկուքն ալ իրենց մեղանշումին պատճառը ուրիշը նկատեցին: Ադամ իր մեղանշումին պատճառը Եւան նկատեց (Ծն 3.12), իսկ Եւա զինք խաբելու գործողութիւնը օձին վերագրեց ըսելով. *«Օձը զիս խաբեց եւ ես կերայ»* (Ծն 3.13):

Մարդ արարածին համար միշտ ուրի՛շն է յանցաւորը, միշտ ուրի՛շն է պատճառը, միշտ ուրի՛շն է մեղադրելին եւ այսպէս: Մարդիկ չեն վարանիր իրենք գիրենք արդարացնելու համար արդար մարդիկը իբրեւ անարդար հրապարակելու: Եւ սակայն, ինչպէս մուրին հետ խաղցողը չի կրնար ներմկիլ, այնպէս ալ ուրիշը մեղադրելով ո՛չ ոք կրնայ անմեղութիւն ձեռք ձգել: Ո՞վ ուրիշը անուանարկելով կրնայ լաւ անուն շահիլ: Ո՞վ իր նմանը յանցապարտ յայտարարելով Աստուծոյ առջեւ անպարտ կրնայ մնալ:

Մարդիկ իրենց գորումին եւ դժբախտութեան պատճառը իրենց անձերէն դուրս կը փնտոնեն: Ծառի մը տապալումին պատճառը երբեք ծառէն դուրս պէտք չէ փնտոնել: Ծառը կրնայ տապալիլ միայն ա՛յն ատեն, երբ իր ներսիդին որդ ունի: Երբ որդը ծառէն դուրս հանուի՝ ծառը իր առողջութիւնը կը վերագտնէ: Քննե՛նք մեր անձերը: Մենք ալ չունի՞՞նք մեր ներսիդին որդեր որոնցմէ պէտք է ձերբագատիմք, որպէսզի անոնք մեզ չտապալեն: Հարկաւ նիւթական որդի մասին չէ խօսքը: Նախանձի ու ատելութեան որդը, անհանդուրժողութեան ու աններողամտութեան որդը շատ աւելի գէշ է քան իրական որդը: Իրական որդը քիչ մը դեղով կարելի է ծառէն դուրս բերել, բայց նախանձի ու ատելութեան որդէն ձերբագատիլը՝ անկեղծ ապաշխարութեան առատ արցունք կը պահանջէ:

Զիրար այսպէսն ու յանցաւոր հանելը նուազ ահարկու մեղք մըն է համեմատաբար այն մե՛ծ մեղքին, որ է՝ գԱստուած յանցաւոր հանելը: Եթէ երբեք Աստուած յանցաւոր կը նկատէ մարդիկը երբ անոնք գիրար կը մեղադրեն փոխանակ խոնարհաբար իրենց մեղքերը խոստովանելու, ո՞րքան աւելի յանցաւոր պիտի սեպէ անոնք՝ որոնք զինք մեղաւոր եւ յանցապարտ կը նկատեն: Այդպիսիներուն Աստուած կ'ըսէ. *«Դուն քեզ արդարացնելու համար զիս յանցաւոր պիտի հանես»* (Յոբ 40.8):

Խորքին մէջ Ադամին կատարած մեղադրանքը աւելի Աստուծո՛յ կ'ուղղուի քան Եւային: Ադամ չ'ըսեր. *«Կինը զիս խաբեց»* ինչպէս կինը պիտի ըսէր օձին համար, այլ կ'ըսէ. *«Այն կինը, որ ինձի հետ ըլլալու տուիր, ա՛ն ինձի տուաւ ծառէն ու ես կերայ»* (Ծն 3.12): Կարծէք Ադամ ըսել կ'ուզէր. *«Ո՞վ Տէ՛ր, եթէ Եւան ինձի չտայիր՝ ես այս մեղքը պիտի չգործէի: Ուրեմն, դո՛ւն ես մեղք գործելուս պատճառը»*:

Քանի ուրիշը չմեղադրելու մասին է որ կը խօսինք, զգո՛յ՛շ ըլլանք ուրեմն չմեղադրելու Ադամն ու Եւան: Մենք իրենցմէ լաւ չենք: Անոնք



չէին գիտեր թէ ի՛նչ է մեղքը: Գալով մեզի, մեզմէ ո՞վ չի գիտեր թէ ի՛նչ է մեղքը: Անոնք չունէին օրինակ մը որուն կարենային հետեւիլ որպէսզի հեռու մնային մեղքէն: Իսկ մենք ո՛չ միայն օրինակ մը կամ երկու օրինակներ ունինք, այլեւ՝ հազարաւոր օրինակներ, որոնք կու գան Աստուածաշունչ մատնանէն եւ մարդկային ցեղի փորձառութենէն, եւ որոնք ամէն իմաստով կ'օժանդակեն մեզի նանչնալու մեղքը եւ զգուշանալու անկէ:

Աղամին կողմէ գԱստուած պահարակելու գործողութիւնը տակաւին կը շարունակուի, բայց այս անգամ ներկայ դարուս աղամներով: Քանի՛ քանի՛ մարդիկ երբ իրենք զիրենք դէմ յանդիման գտնեն ծանր փորձութեան մը, հարցականի տակ կ'առնեն Աստուծոյ ներկայութիւնը: Քանի՛նե՛ր իրենց ապրած թշուառութեան պատճառաւ կը մերժեն հաւատալ Աստուծոյ բարի ու բարեբար ըլլալուն: Քանի՛նե՛ր չկրնալով իրենց փափաքներուն եւ երազներուն իրականացման հասնիլ սկսած են կասկածով նայիլ Աստուծոյ եւ անոր խոստումներուն:

Դժուարին պահու մը ընթացքին *«Ո՞ւր է Աստուած»* բացականչելը՝ գԱստուած մեղադրել է: Աղէտի մը ներկայութեան *«Ինչո՞ւ Աստուած բան մը չ'ըներ»* ըսելը՝ ինքնին աղէտ մըն է: Մէկը կրնայ արկածի մը ընթացքին իր մէկ ոտքը կորսնցնել եւ ըսել. *«Ո՞ւր էր Աստուած: Ինչո՞ւ չազատեց»*: Այդպէս ըսողին, իմ կարգիս կ'ըսեմ. *«Բարեկա՛մ, Աստուած թեզի հետ էր երբ արկածի հանդիպեցար, այլապէս՝ դուն կրնայիր երկու ոտքերդ կորսնցնել»*: Ըսել ուզածս այն չէ, որ տեղի ունեցող բոլոր պատահարները մենք կրնանք հասկնալ: Աստուծոյ գործելակերպն ու մտածելակերպը յաճախ մեր միտքի հասողութենէն վեր կը մնան (Ես 55.8-9): Դժուար է մեզի համար ըմբռնել Անըմբռնելիին գործելակերպը: Թէպէտ ամէն բանի պատճառն ու պատասխանը չենք կրնար գիտնալ, եւ սակայն, միւս կողմէն գիտենք որ ոչինչ կը պատահի առանց պատճառի (Եզ 14.23):

Սիրելի՛ հաւատացեալ, եկուր որոշեմք ձերբազատիլ գԱստուած կամ մեր նմանը մեղադրելու ախտէն: Յիշեմք Յիսուսի խօսքը. *«Ինչո՞ւ եղբորդ աչքին մէջ եղած շիւղը կը տեսնես եւ չես անդրադառնար թէ աչքիդ մէջ գերան կայ»* (Մտ 7.3): Քրիստոս իր այս խօսքով, մեզ կը հրաւիրէ որ մեր դատաւորի հայեացքը սեւեռենք մեր անձերուն վրայ փոխանակ ուրիշներուն վրայ:

Մատնացոյց չընենք մարդոց ախտերը երբ մեր մատները իրենք տեսակ-տեսակ ախտերով բռնուած են: Պզտիկ սխալներու համար մեծ խոշորացոյցներ պէտք չէ օգտագործել եւ ո՛չ ալ մեծ սխալներու համար՝ պզտիկ խոշորացոյցներ: Դժբախտութիւն է որ մարդիկ այլոց գործած պզտիկ սխալները կը վերագրեն նախանձի եւ ատելութեան, իսկ իրենց գործած մեծ սխալները՝ տգիտութեան կամ անուշադրութեան: Երանի՛ թէ բոլոր քրիստոնեաներս օրինակ առնենք Քրիստոսէ եւ սորվինք մեզ խաչողներուն մեղքը վերագրելու տգիտութեան ինչպէս ըրաւ Քրիստոս,

երբ ըսաւ. «Հա՛յր, ներէ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ի՛նչ կ'ընեն» (Ղկ 23.34):

Ահաւոր բան է դատապարտել ուրիշի մը թեթեւ տկարութիւնը, երբ անդին մեղքը գորեղապէս կը գործէ մեր սիրտերուն մէջ: Սխալը ուրիշին սխալը տեսնելուն մէջ չի կայանար, այլ ուրիշին սխալը տեսնելուն կողմին, մե՛ր ալ սխալը չտեսնելուն մէջ կը կայանայ: Սարգիս Շնորհալի Վարդապետ կ'ըսէ. «Ուրիշներու փոքրիկ փուշը կը ջանամ քաշել, իսկ իմիններս, լի անտառախիտ մոլախոտով, ուր մինչեւ իսկ վայրի գազաններ բոյն կրնան դնել, կ'անտեսեմ»: Պէտք է անտեսեմք մեր սխալները եւ ուրիշներու սխալներուն «տեսութեան երթ-անք»:

Եթէ երբեք սխալ ու մեղք է մեր անձերուն նկատմամբ իի՛ստ եւ անգուր ըլլալը, ո՛րքան աւելի սխալ է ուրիշներուն հանդէպ իիստ ըլլալը:

## Ի՞ՆՉ ԲԱՆԻ ՄԷՁ ԿԸ ԿԱՅԱՆԱՐ ԱԴԱՄԻՆ ԵՒ ԵՒԱՅԻՆ ՍԽԱԼԸ

Չարը ինչպե՞ս կրցաւ խաբել Ադամն ու Եւան: Վստահաբար մէկ անգամ անոնց հետ խօսելով չէր որ խաբեց գանոնք: Չարը բազմիցս խօսած ըլլալու էր անոնց հետ: Անկասկած որ անոնք ալ երկա՛ր ատեն մտածելէ ետք ծառին կապակցաբար Օճին ըսածներուն մասին, ի վերջոյ տեսան եւ համոզուեցան որ «*ծառը աղէկ էր կերակուրի համար, եւ հանելի՛ աչքերուն եւ փափափելի իմաստուն ընելու համար*» եւ ատոր պտուղէն առնելով կերան (Ծն 3.6):

Ո՞վ է այն մարդը որ մէկ անգամէն մեղքի մը մէջ կ'իյնայ: Ո՛չ ոք: Ոեւէ մարդ չի կրնար որեւէ չարիք գործել առանց նախապէս մտածած ըլլալու այդ չարիքին մասին: Եթէ յանկարծ մէկու մը ներսիդին գէշ ցանկութիւն մը արթննայ եւ այդ անձը երկար ժամանակի համար մտածէ ատոր մասին, ցանկութիւնը յղանալով՝ մեղքին ծնունդ չի՞ տար, իսկ մեղքը երբ իր լրումին հասնի՝ մահուան պատճառ չ'ըլլար (Յկ 1.15):

Ի՞նչ էր հետեւաբար Ադամին եւ Եւային սխալը: Անոնց հիմնական սխալը այն էր, որ անոնք չպայքարեցան Չարին խորհուրդներուն դէմ: Անոնց միտքը ընդդիմացող միտք մը չէր: Անոնք պէտք էր որ շատ կտրուկ կեցուածք մը որդեգրէին Չարէն եկած խորհուրդներուն նկատմամբ: Առաջին իսկ վայրկեանէն անոնք պէտք էր որ մերժողական գորաւոր կեցուածք ցուցաբերէին Չարին չար առաջարկներուն դիմաց: Պօղոս առաքեալ ալ նոյն բանը կ'ըսէ. «*Բնաւ առիթ մի՛ տա՛ Սատանային*» (Եփ 4.27): Ի՞նչ է Սատանային առիթ տալը եթէ ոչ անկէ եկած տգեղ մտածումներուն գրկաբաց ընդունումը եւ անոնց մասին խորհրդածելը:

Ի՞նչ է այն հիմնական դասը որ մենք կը սորվինք Ադամին եւ Եւային փորձառութենէն: Կը սորվինք այն, որ որեւէ չար խորհուրդ որ մեր միտքը կու գայ, իսկոյն պէտք է հեռու վանենք գանիկա մեզմէ եւ առիթ չտանք որ տեղ գտնէ մեր ներսիդին: 4-րդ դարու Հայրապետ՝ Յովհան Ոսկեբերան կ'ըսէ. «*Մենք չենք կրնար արգիլել որ թոչունները թոչին մեր գլխուն վերել, բայց կրնանք արգիլել որ անոնք բոյն շինեն մեր գլուխներուն վրայ*»: Ոսկեբերանին ըսել ուզածը այն է, որ մենք չենք կրնար արգիլել որ չար մտածումներ գան մեզի, եւ սակայն, կրնանք արգիլել որ ատոնք բոյն հաստատեն մեր սիրտերուն եւ միտքերուն մէջ: Չար մտածումին «բարի եկար» ըսելն ու հիւրնկալելը մեր ձեռքն է: Սատանան երբե՛ք չի կրնար ստիպել մեզ որ մեղք գործենք: Մեզ ստիպելու ո՛չ մէկ իշխանութիւն ունի:

Աստուած կը սպասէ որ պայքարինք Սատանային կողմէ մեզի առաջարկուած վատորակ խորհուրդներուն դէմ: Սատանան կը սարսափի պայքարող մարդոցմէ: Չպայքարող մարդը որքան ալ բարի կեանք մը ապրի չի մտահոգեք Սատանան: Առանց պայքարի չկայ յաղթանակ, իսկ յաղթել տուողը Աստուած է (Ա.Թգ 17.47): Աստուած պայքարողներուն

նամբով է որ կը պայքարի եւ ո՛չ թէ պայքարէն փախչողներուն նամբով: Աստուած կ'ուրախանայ եւ պատուրուած կը գգայ երբ կը տեսնէ որ իր գաւակները կը պայքարին Չարին դէմ եւ կը յաղթեն անոր: Աստուծոյ գաւակին չի՛ վայելեր տկարութիւն եւ պարտութիւն: Աստուած յաղթող Աստուած է եւ կը սպասէ որ իր գաւակները յաղթող գաւակներ ըլլան: Տկար քրիստոնեան Քրիստոսի պատիւ չի բերեր:

Սատանային պայքարը Աստուծոյ դէմ ուղղուած պայքար մըն է: Ինչպէս ոեւէ թագաւոր անտարբեր չի գտնուիր իր զինուորներուն նկատմամբ երբ անոնք կը պատերազմին զինք եւ իր թագաւորութիւնը փրկելու համար, այնպէս ալ երբ մենք կը պայքարինք Աստուծոյ թագաւորութեան եւ փառքին համար, քաջ գիտնանք որ Աստուած մեզ առանձին պիտի չթողու մեր պայքարին մէջ (Ա.ԹԳ 2.9):

Սատանան սուտ խօսեցաւ երբ Եւային ըսաւ թէ աստուածներու պէս պիտի ըլլաք եթէ ուտէք արգիլեալ ծառին պտուղէն (Ծն 3.5): Չարը օրական հազարաւոր սուտ խոստումներ կը շոյլէ մեր դիմաց: Քրիստոս Սատանային համար կ'ըսէ թէ *«ստախօս մըն է եւ սուտին հայրը»* (Յհ 8.44): Ան սուտը իբր նշմարիտ կը ներկայացնէ, վշտաբերը իբր ուրախաբեր կը հրապարակէ, թունաւորը իբր բուրեան կը պատկերացնէ: Եղիշէ իր *«Մեկնութիւն արարածոց»* գործին մէջ խօսելով Եւային նկատմամբ Սատանային ցուցաբերած վերաբերմունքին մասին, կ'ըսէ. *«Սատանան ոսկի բաժակով թոյն մատուցանեց Եւային»:*

Պօղոս առաքեալ կը հաստատէ որ Սատանան կը կուրցնէ անհաւատին միտքը, այնպէս որ ան չի կրնար տեսնել նշմարտութիւնը (Բ.Կր 4.4): Նո՛յնը պատահեցաւ Եւային: Ծն 3.6-ին մէջ արգիլեան ծառին համար գործածուած են երեք բառեր.– աղէկ, հանելի եւ փափաքելի: Տեսէ՛ք, թէ ինչպէս Սատանան կարող է գէշ բանը իբրեւ աղէկ բան, տհաճը իբրեւ հանելի եւ փստմնելին իբրեւ փափաքելի ներկայացնել:

Ո՛վ ընթերցող, հանելի ի՞նչ բան կայ պատուիրանագանցութեան մէջ: Ո՞ւր է մեղքին փափաքելիութիւնը երբ մեր ներսիդին Աստուծոյ ներկայութեան կանգնելու ամէն փափաք կը մեղցնէ: Եղիշէ կ'ըսէ. *«Այնքան ատեն երբ Եւա հանոյ՛ք կը ստանար Աստուծոյ օրէնքէն, ծառը գեղեցիկ չէր երեւեր իրեն, բայց երբ հեռացաւ Աստուծոյ օրէնքէն՝ ծառը սկսաւ դեղին երեւնալ եւ անհանելին՝ հանելի: Եւ երբ ցանկութիւնը ունեցաւ աստուածանայու, ծառը աւելի՛ գունաւոր եւ հանելի թուեցաւ քան ինչ որ էր իր բնական գեղեցկութիւնը»:*

Կրթենք մեր միտքերը մտածելու աստուածահանոյ բաներու մասին, որպէսզի Չարը առիթ չկարենայ գտնել իր պիղծ խորհուրդներու կարթը նետելու մեր մտածումներու աշխարհին մէջ: Եթէ երբեք Եւային ուշադրութիւնը ամբողջապէս Աստուծոյ ու անոր պատուիրաններուն գործադրութեան վրայ կեդրոնացած ըլլար՝ անոնք մեղք պիտի չգործէին: Հետեւաբար, եկէ՛ք մեր հայեացքը սեւեռած պահենք Քրիստոսի վրայ, որպէսզի կարենանք ետ մղել Չարին հարուածները (Եփ 6.13):

## ԱՍՏՈՒԱԾ ԳՈՐԾԻ ՄԱՐԴՈՑ Է ՈՐ ԳՈՐԾԱԿԻՑ Կ'ԸԼԼԱՅ

Մեզմէ ոեւէ մէկը կասկած պէտք չէ ունենայ թէ մի'այն Աստուծոյ շնորհիով կրնանք փրկուիլ, եւ թէ *«փրկութիւնը մեր արժանիքը չէ, այլ՝ Աստուծոյ պարգեւն է: Մեր գործերով շահուած չէ անիկա, որպէսզի ոեւէ մէկը չպարծենայ»* (Եփ 2.8-9): Օրէնքի գործադրութեամբ արդարանալ ուզողներուն, առաքեալը կ'ըսէ. *«Եթէ փորձէ՛ք Օրէնքի գործադրութեամբ արդարանալ՝ ա՛յլ Քրիստոսի հետ ձեր կապը կտրած կ'ըլլա՛ք եւ զրկուած՝ անոր շնորհէ՛ն»* (Գղ 5.4 Հմտ շն 3.24, Բ.Տմ 1.9, Տիտ 2.11, Ա.Պտ 1.13):

Մենք չե՛նք ուրանար գործերուն կարելորութիւնը, բայց կը ձաղկենք մեր գործերով փրկուիլ աշխատելու ամէն ջանք: Աբրահամ գործի՛ մարդ էր, բայց Սուրբ Գիրքը խօսելով անոր կատարած գործերուն մասին կ'ըսէ. *«Հաւատքը անոր գործերուն ընկերացաւ»* (Յկ 2.22): Այո՛, մեր գործերը պէ՛տք ունին մեր հաւատքի ընկերակցութեան: Ինչպէս որոտումը առանց անձրեւի ընկերակցութեան օգուտ մը չունի, այնպէս ալ մեր գործերը առանց հաւատքի ընկերակցութեան ոչինչով կ'օգտեն մեզի: Փոշի՛ է մարդուն գործը առանց հաւատքի: Ինչպէս փոշին չի՛ կրնար կենալ մրրիկին առջեւ, այնպէս ալ մարդուն գործերը առանց հաւատքի հովանաւորութեան պիտի չկրնան դատաստանի օրը պարծիլ:

Սոյն յօդուածին սկսման կերպը կրնայ ըլլալ այն տպաւորութիւնը ձգեց, որ գործի ու հաւատքի մասին է որ պիտի խօսիմ, եւ սակայն, գործի ու հաւատքի մասին չէ որ պիտի խօսիմ, այլ Աստուածաշնչական մէջբերումներով ցոյց պիտի տամ թէ ինչպէս Աստուած գործի՛ մարդոց է որ գործակից կ'ըլլայ եւ ո՛չ թէ անգործ նստած մարդոց:

Ոմանց մօտ կը գտնենք այն համոզումը, թէ *«պէտք է դադրիմք գործելէ որպէսզի Աստուած սկսի գործել»*: Այս խօսքը Աստուծոյ շնորհիով փրկուած մարդու խօսք չէ: Շնորհքը անգործութեան չի՛ դատապարտեր մեզ, այլ՝ գործի կը մղէ (Տիտ 2.12): Շնորհքը շնորհքին օգտագործումով միայն կը բիրեղանայ եւ կը պտղաբերի: Նո՛յնը կ'ըսէ Պօղոս առաքեալ. *«Աստուծոյ ինձի տուած շնորհքը ապարդիւն չեղաւ, որովհետեւ բոլոր առաքեալներէն աւելի ե՛ս աշխատեցայ...»* (Ա.Կր 15.10):

Առաքեալը Աստուծոյ շնորհքը ընդունելէ ետք անգործ չնստաւ: Ան յստակօրէն կը յիշէ, որ շնորհիւ իր ժրաջան աշխատանքներուն էր որ Աստուծոյ *«շնորհքը ապարդիւն չեղաւ»*: Պարզ է հետեւաբար, որ չաշխատողին կեանքին մէջ՝ Աստուծոյ շնորհքը կը դառնայ ապարդիւն: 12-րդ դարու վարդապետ՝ Սարգիս Շնորհալի, կ'ըսէ. *«Ապերախտ չըլլանք այս աշխարհին մէջ մեր Երախտաւորին հանդէպ եւ ամէն բան անկէ ունենալ չուզենք, այլ մեր բարեգործութեամբ նպաստենք անոր շնորհքներուն»*: Այս խօսքը ցոյց կու տայ երկու բան. առաջին.– բարեգործութեան կեանք մը չապրող մարդը ապերախտ գտնուած կ'ըլլայ Աստուծոյ նկատմամբ, եւ երկրորդ.– մեր բարեգործութիւնները կը

բազմապատկեն Աստուծոյ շնորհները մեր կեանքներուն մէջ: Աստուծոյ շնորհով փրկուած մարդը գործի՝ մարդ պէտք է ըլլայ: Անգործութիւնը անշնորհութիւն է: Աստուծոյ շնորհքը կը գործէ գործողներուն կեանքին մէջ: Աստուած կ'աշխատի աշխատողներուն կեանքին մէջ: Տանք քանի մը օրինակներ Աստուածաշունչէն.–

1– Երբ Մովսէս եւ Յեսու պիտի կոուէին Ամաղէկի դէմ, չմտածեցին ծալապատիկ նստիլ եւ սպասել որ Աստուած պատերազմի իրենց փոխարէն: Մէկ կողմէն Մովսէս ձեռքերը բարձրացուցած կ'աղօթէր եւ գԱստուած օգնութեան կը կանչէր, իսկ միւս կողմէն, Յեսու կը կոուէր եւ սուրի բերնէ կ'անցընէր Ամաղէկը (Ել 17.11-13): Արդ, ո՞վ յաղթեց Ամաղէկին: Աստուած, թէ՛ Մովսէս եւ Յեսու: Երբքը միասնաբար: Մովսէս աղօթեով գԱստուած Յեսուին պատերազմակից դարձուց եւ այդպէս յաղթեցին: Մովսէս գԱստուած օգնութեան կանչեց եւ Աստուած պատերազմի դաշտ իջաւ Յեսուին օգնելու: Աստուած չի՛ պատերազմիր պատերազմէն փախչողի մը քամբով: Սիրելի՛ ընթերցող, բանանք մեր աչքերը եւ նայինք մեր չորս կողմը: Անհամար է թիւը մեր կեանքներուն մէջ վիստացող Ամաղէկներուն: Մեր ձեռքերը բարձրացնենք դէպի Աստուած ինչպէս Մովսէս բարձրացուց, որպէսզի կարենանք չարին դէմ կոուիլ ինչպէս Յեսու կոուեցաւ: Քրիստոնեայ մարդուն կոչումը չէ՞ ունենալ Մովսէսին աղօթող սիրտը եւ Յեսուին պատերազմող ձեռքը:

2– Պետրոս առաքեալ կ'ըսէ. *«Արթուն եւ պատրաստ եղէք, որովհետեւ ձեր թշնամին՝ Սատանան առիւծի պէս մոնչելով կը շրջի եւ կլլելու համար մէկը կը փնտռէ»* (Ա.Պտ 5.8): Արթուն եւ պատրաստ ըլլալը, պատերազմական քակտի վրայ եղող մարդուն պարտականութիւնն է: Առաքեալը արթուն եւ պատրաստ ըլլալու մասին է որ կը խօսի եւ ո՛չ թէ քննալու կամ անգործ նստելու մասին: Ինչպէ՞ս կարելի է անգործ մնալ երբ մեր դիմաց առիւծի պէս մոնչող Սատանայ մը ունինք: Ո՞վ կրնայ մոնչող առիւծի մը ներկայութեան անտարբեր մնալ: Յիշենք մանաւանդ որ մոնչող առիւծը՝ Սատանան, «ազատ» արձակուած է:

Մէկ համար անդին առաքեալը կ'ըսէ.– *«Հաստատուն հաւատեով դէմ դրէք անոր»* (Ա.Պտ 5.9): Հոս առաքեալը միայն հաւատքի մասին չէ՛ որ կը խօսի, այլեւ՝ դէմ դնելու մասին: Իսկ դէմ դնելը ծալապատիկ նստելով չ'ըլլար: Այս համարին մէջ, հաւատքն ու հաւատեով դէմ դնելը միասնաբար կը յիշուին: Անկարելի է հաւատալ առանց դէմ դնելու եւ կամ դէմ դնել առանց հաւատալու: Հաւա՛տքն է որ մեր ներսիդին կը գորացնէ Չարին դէմ դնելու ոգին: Պէտք է դէմ դնել Սատանային մի՛շտ ապաւինելով Աստուծոյ շնորհքին, եւ ապաւինիլ Աստուծոյ շնորհքին մի՛շտ դէմ դնելով Չարին:

3– *«Մրցադաշտին վրայ վազքի մասնակցողներուն օրինակը գիտէք չէ՞: Վազելը՝ բոլորն ալ կը վազեն, բայց մրցանակը մէկ հոգի կը շահի: Դուք ալ այնպէս վազեցէք՝ որ մրցանակին հասնիք»* (Ա.Կր 9.24): Արդեօք առաքեալը *«Այնպէս վազեցէք՝ որ մրցանակին հասնիք»* խօսեով, խաղաղ

եւ հանգիստ կեանք մը ապրելու կո՞չ է որ կ'ուղղէ մեզի, թէ՛ վազելու կոչ մը: Յստակ է որ վազելու կոչ մը: Իսկ վազելը՝ քրտնիլ, տֆնիլ, գլորիլ եւ վերստին կանգնիլ չ'ե՞նթաղրեր: Աստուծոյ շնորհով փրկուած մարդուն կեանքը անդադար վազքի կեանք մըն է: Սիրելի՛ բարեկամ, չվախնանք վազելու ու ֆալելու Քրիստոսով մեր առջեւ բացուած հաւատքի ցամաքուն վրայ: Բնա՛ւ չմտահոգուինք որ կրնանք թուլնալ, յոգնիլ եւ ընկրկիլ, որովհետեւ Աստուծոյ շնորհով փրկուած մարդոց *«ոյժը պիտի նորոգուի եւ անոնք արծիւներու պէս թեւերով վեր պիտի ելլեն, պիտի վազեն ու չթուլնան, պիտի ֆալեն ու չյոգնին»* (Յս 40.31):

Պօղոս առաքեալ որ բոլորէս անլի Սուրբ Հոգիով լեցուած եւ բոլորէս անլի աշխատած ու չարչարուած էր, կ'ըսէ. *«Ես այսպէս կը վազեմ, ահա, եւ ո՛չ թէ անորոշ ուղղութեամբ. կը մրցիմ կոփամարտիկի մը պէս, որ օդը չի ծածեր: Բայց ինձգիմքս սեղմումներու կ'ենթարկեմ ու կը զսպեմ, որպէսզի չըլլայ թէ ես ինքս մրցանակէն զրկուիմ, ես՝ որ ուրիշներուն կը ֆարոգեմ»* (Ա.Կր 9.26-27): Առաքեալը ուրիշներուն ֆարոգելն ու ինձգիմքին ուշադրութիւն դարձնելը իրարմէ չի գատեր: *«Ինձգիմքս սեղմումներու կ'ենթարկեմ»* իսօսքը, անգործ նստած մարդու մը կեանքին պատկերացումը չէ: Եթէ Պօղոս առաքեալ փրկութիւնը կորսնցելու մտավախութիւնը ունէր, հապա մենք ի՞նչ ըսենք եւ ի՞նչ ընենք: Նստի՞նք եւ սպասենք որ Աստուծոյ շնորհքը գործէ մեր կեանքներուն մէջ:

4- *«Ո՛չ տնկողը կարեւորութիւն մը կը ներկայացնէ, ո՛չ ալ ջրողը, այլ անեցնողը՝ Աստուած»* (Ա.Կր 3.7): Առաքեալը իր այս իսօսքով չի՛ հերքեր կարեւորութիւնը տնկողին եւ ջրողին, այլ կը շեշտէ առաջնահերթութիւնը անեցնողին՝ Աստուծոյ: Բնականօրէն պատիւը անլի Անեցնողին է որ կ'երթայ քան տնկողին եւ ջրողին, բայց եթէ տնկուած ու ջրուած քան չկայ, Անեցնողը ի՞նչ քան պիտի անեցնէ: Հետեւաբար, Աստուած եւ մենք միասնաբար պէտք է գործենք, մէկս միւսին հետ եւ մէկս միւսին կողմին:

5- Երբ Քրիստոս կը իսօսի արքայութեան մասին, զայն կը նմանցնէ մանանեխի հատիկի մը որ մարդ մը առնելով կը ցանէ իր արտին մէջ (Մտ 13.31-32): Բոլորս ալ գիտենք որ հատիկ մը որպէսզի ծլի, անի, ծաղկի եւ պտուղ բերէ, մեծ աշխատանքի կը կարօտի: Զրուիլ, դեղուիլ, մաքրուիլ, շուրջը փորուիլ եւ այլ բաներ կը պահանջէ: Քրիստոսի ըսել ուզածը այն է, որ արքայութեան համար աշխատանք պէտք է տանինք: Ինչպէս հատիկը հետեւողական խնամքով միայն կրնայ հետզհետէ անիլ եւ կատարելութեան հասնիլ, այնպէս ալ անդու աշխատանքով միայն երկինքի արքայութիւնը կատարեալ ներկայութիւն կը դառնայ մեր կեանքներուն մէջ:

6- Քրիստոս *«բարի եւ հաւատարիմ ծառայ»* կոչեց այն մարդը, որ հինգ հարիւր ոսկի դրամին կողմին հինգ հարիւր եւս շահեցաւ (Մտ 25.21), իսկ *«չար ու ծոյլ ծառայ»* կոչեց անոր՝ որ ո՛չ մէկ ցիւց թափած էր իրեն տրուած դրամը շահարկելու համար (Մտ 25.26): Բացայայտ է հետեւաբար, որ Քրիստոսի հայեացքով, անգործութիւնն ու ծուլութիւնը

չարիք են: Աստուծոյ կողմէ տրուած դրամը խորհրդանիշ է Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարգեւներուն եւ շնորհքներուն, ձիրքներուն եւ կարողութիւններուն, հարստութեան ու իմաստութեան, եւ ամէն տեսակի առաւելութիւններուն: Աստուծոյ կողմէ մեզի տրուած շնորհքները պէտք է գերեզմանենք մեր սիրտերուն մէջ, այլ զանոնք պէտք է օգտագործենք Աստուծոյ փառքին համար, որպէսզի անոր լիառատ շնորհքէն մենք բոլորս շնորհքի վրայ շնորհք ստանանք (Յհ 1.16):

Եթէ չօգտագործենք աստուածատուր մեր շնորհքները, անոնք օր մը կրնան լիովին խլուին մեր ձեռքերէն, ինչպէս Քրիստոս ինքն իսկ առակին աւարտին կ'ըսէ. *«Չունեցողէն պիտի առնուի ունեցած փոքր բաժինն ալ»* (Մտ 25.29): Աստուած կ'ողորմի անոնց՝ որոնք կը գործեն Աստուծոյ ողորմութեան ապաւինելով: Անգործութիւնը կը «զարմացնէ» զԱստուած: Յիսուս անգործ նստածներուն հարցուց. *«Ինչո՞ւ ամբողջ օրը պարսպ կեցեր է՞ հոս»* (Մտ 20.6): Այս հարցումը ուղղուած է ոեւէ մարդու որ անգործ նստած կը սպասէ որ Աստուած գործէ իր փոխարէն:

Վերեւ յիշուած բոլոր բացատրութիւններով, երբե՛ք ըսել չենք ուզեր որ Աստուած առանց մեզի բան մը չի՛ կրնար ընել: Աստուած առանց մեզի ամէն բան կրնայ ընել (Ես 40.13-14: 43.13), մե՛նք է որ առանց իրեն բան մը չենք կրնար ընել (Յհ 15.5): Փաստօրէն, յիշեցէ՛ք առաքեալներուն վիճակը Քրիստոսի յարութենէն եւ խաչելութենէն ետք: Անոնցմէ ո՞վ կրցաւ Աւետարանը փարոզել Սուրբ Հոգիին գօրութեամբ լեցուելէ առաջ: Անոնք բոլորը ահով լեցուած իրենց պատեաններուն մէջ փաշուած էին: Սուրբ Հոգին ստանալէ ե՛տք միայն իրենց ահը փարատեցաւ եւ դարձան գործակիցներն ու վկաները Քրիստոսի: Առաքեալները Տիրոջ գործակցութեամբ Աւետարանը փարոզեցին (Մր 16.20): Աստուած չի՛ գործակցիր գործէն փախչողին հետ:

Ոեւէ մարդ որ Քրիստոսի փրկութեան ժառանգորդը դառնայ, անպայմանօրէն պիտի ուզէ եւ աշխատի որ ուրիշներն ալ դառնան: Դո՛ւք ըսէք, ծալապատիկ եւ անգործ նստած մարդը, Յիսուսի աշխարհ բերած փրկութիւնը կրնա՞յ տարածել իր շրջապատին մէջ: Միթէ բարին գործելը չէ՞ որ հոգեկան գոհունակութիւն կու տայ մեզի: Հոգեկան ի՞նչ գոհունակութիւն կրնայ ունենալ անգործ նստած մարդը: Աստուած երբեք պիտի չուզէր որ իր շնորհքով փրկուած մարդը չաշխատէր ուրիշներու փրկութեան համար:

Սիրելի՛ ընթերցող, եթէ կ'ուզես գործել Աստուծոյ համար եւ Աստուծոյ գործը, եթէ կ'ուզես դառնալ Աստուծոյ գործակիցը եւ զԱստուած դարձնել գործակիցդ, նախ թոյլ տուր որ Քրիստոսի արիւնը եւ Աստուծոյ Սուրբ Հոգին գործեն սիրտիդ մէջ՝ քեզ հաշտեցնելու համար մեր երկնաւոր Հօրը հետ:



## ԽԱՉԻ ՃԱՄԲԱՆ՝ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՃԱՄԲԱՆ Է

«Ա՛ն խաչդ եւ հետեւէ՛ ինծի» (Մր 10.21): Դառն կը հնչէ մեր ականջներուն, բայց Յիսուսի նպատակը մեր կեանքը դառնացնել չէ: Խաչը չի՛ դառնացներ մեր կեանքը, այլ՝ մեր կեանքի դառնութիւնները կը փաղցրացնէ: Զի՛ թշուառացներ մեր կեանքը, այլ՝ մեր կեանքի թշուառութիւնները կը փարատէ: Զ՛առաջնորդեր մեզ անտանելի կեանքի մը, ընդհակառակը, կ՛առաջնորդէ մեզ տանելու կեանքի անտանելի կարծուած կացութիւնները:

Ոմանք կը խորհին, որ խաչը անձկութեան նշան է, եւ սակայն, խաչը անձկութեան նշան չէ, այլ անձկութեան յաղթահարելու նշան: Խաչը փորձութեան նշան չէ, այլ փորձութեան եւ փորձիչին յաղթելու նշան: Քրիստոս խաչո՛վ նզմեց Սատանային գուլիը: Ուրիշ բանով մը չի՛ ջարդուիր Սատանային գուլիը: Քրիստոս իր խաչը տուաւ մեզի՛ անով մեզ յաղթող դարձնելու համար ինքզինք անյաղթահարելի կարծող Սատանային դէմ: Խաչը կը յաղթէ մեզ եթէ մերժենք գայն եւ յաղթող կը դարձնէ եթէ ընդունինք գայն:

Սուրբ Գրիգոր Նարեկացի, իր Աղօթամատեանին 94-րդ գլխուն մէջ խօսելով խաչով Սատանային դէմ տարուած յաղթանակին մասին կ՛ըսէ. «Դո՛ւն, ով Տէ՛ր, Երի՛ճովի եղջերափողէն գերազանց այս գործի՛ճով հարթեցիր եւ տապալեցիր Բելիարին բռնութիւնը: Այս փայտէ պարսատիկով քարեր արձակեցիր Գողիաթին դէմ. նոր դայիսոն մը ըրիր գայն, վկայ Սատանային ահարկու կործանումին, որովհետեւ մեղճին խորացած արմատները այս մեքենայով խլեցիր ու իմ մոռցած պարտականութիւններս ասոր միջոցաւ յիշեցուցիր ինծի»:

Սատանան չի՛ կրնար իր շուքին տակ առնել անոնք՝ որոնք խաչին շուքին տակ կը հանգչին: Զի՛ կրնար իր առջեւ ծունկի բերել անոնք՝ որոնք ծունկի եկած են խաչին առջեւ: Զի՛ կրնար յաղթել Քրիստոսի սէրէն յաղթուածները: Զի՛ կրնար արատաւորել Քրիստոսի խաչէն հոսող արիւնով սրբուածները: Զի՛ կրնար մահացնել խաչով անմահութիւն գտած Աստուծոյ զաւակները:

Խաչի կեանքէն պէտք չէ վախնանք: Խաչի կեանքէն վախցողը Սատանան ի՛նք պէտք է ըլլայ եւ ո՛չ թէ մենք: Քրիստոս խաչո՛վ սպաննեց մեղքը եւ ազատագրեց մեղաւորը: Խաչո՛վ հալածեց մեզ հալածող Սատանան եւ սրբեց մեր անունը Կենաց Գիրքէն սրբել ուզող մեղքը: Խաչո՛վ մշտաշարժ Սատանան անշարժութեան դատապարտեց եւ մեղքով անշարժ դարձած մարդուն սիրտը առ Աստուած շարժեց:

Խաչով, ան Տէրը դարձաւ անտիրական մարդուն: Խաչը տիրական գորութիւն կը շնորհէ Տիրոջ ապաւինողներուն: Զօրութի՛ւն է խաչը երբ գորութիւն առնելու համար է որ կ՛երթանք անոր: Քա՛ղցր է խաչը երբ փաղցր Յիսուսին հետեւելու փաղցր ակնկալութեամբ կը կրենք գանիկա:

Օրհնութի՛ւն է խաչը երբ օրհնակարօտ մեր հոգին է որ մեզ անոր կ'առաջնորդէ:

Պէտք է մտածել որ խաչը միայն վիշտի խորհրդանիշ է: Վիշտի խորհրդանիշ է այո՛, բայց մանաւանդ, վիշտի ցամաքով շահուած անվիշտ յաւիտենականութեան մը խորհրդանիշն է: Խաչը տառապանքի նշան է այո՛, բայց միաժամանակ, այդ տառապանքով ձեռք բերուած անտառապանք կեանքին աղբիւրն է: Քրիստոս չ'ուզեր որ խաչին մէջ միայն ցաւ ու կսկիծ տեսնենք, այլ նաեւ ու մանաւանդ, ան կ'ուզէ որ մեզ մեր ցաւերէն եւ կսկիծներէն ազատագրող իր սէրը տեսնենք:

Ինչպէս գործողութեան մը ենթարկուողը գործողութեան մէջ միայն տանջանք չէ որ կը տեսնէ, այլ այդ տանջանքին յաջորդող իր Ֆիզիքական առողջութիւնը, այնպէս ալ իւրաքանչիւր քրիստոնեայ մարդ, խաչով իրեն եղած գործողութեան մէջ միայն ցաւ պէտք չէ տեսնէ, այլ այդ ցաւէն յառաջանալիք իր հոգեւոր առողջութիւնն ու ազատագրութիւնը:

Դարձեալ, ինչպէս հողագործը իր ցանած ու տնկած ատեն, ո՛չ թէ իր թափած քրտինքին մասին է որ կը մտածէ, այլ այն արգասիքին մասին որ արդիւնքը պիտի ըլլայ իր թափած քրտինքին, նոյնպէս ալ մենք չմտածենք միայն խաչին ցամաքուն վրայ մեր կրած նեղութիւններուն մասին, այլ նաեւ ու յատկապէս, խորհիմք այն յաւիտենական երջանկութեան մասին, որ մեզի կը սպասէ այդ ցամաքուն աւարտին:

Քրիստոս յաղթող դարձաւ խաչով որովհետեւ յաղթող դարձաւ խաչին: Քրիստոս խաչին մէջ միայն կսկիծ չտեսաւ, այլ այդ խաչի ցանապարհի աւարտին, ան տեսաւ իր եւ համակ մարդկութեան հրաշափառ յարութիւնը: Քրիստոս խաչին մէջ տեսաւ ամբողջ տիեզերքին փրկութիւնը: Տեսաւ իր Հօրը ծրագրիւն եւ կամքին ամբողջական կատարումը, տեսաւ արդարութեան վերականգնումը, խաղաղութեան հաստատումը, Աստուած եւ մարդ յարաբերութեան վերսկսումը: Հետեւաբար, չմտածենք այն չարչարանքին մասին որ խաչով կ'ունենանք, այլ մտածենք այն անհուն ուրախութեան մասին, որ հրաշալի յարութեան իբրեւ հետեւանք, պիտի գտնենք խաչի ցանապարհի աւարտին:

Խաչի ցանապարհի աւարտին յարութեան լո՛յսն է որ կը շողայ դատարկ գերեզմանին մէջ: Խաչեալը իրենց գերեզմաններէն դո՛ւրս պիտի բերէ իր խաչին հետեւորդները: Չկա՛յ յարութիւն առանց խաչելութեան: Քրիստոս յարուցեալ ըլլալէ առաջ նախ եղաւ խաչեալ: Քրիստոնեայ մարդը չի՛ կրնար յարուցեալ ըլլալ առանց խաչեալ ըլլալու: Քրիստոսի նմանելու համար անհրաժեշտօրէն Գողգոթայի ցանապարհէն պէտք է անցնիմք: Անցընելու համար առանձին չենք. Քրիստոս մեզի հետ է՝ մեզ անցընելու եւ մեզի հետ անցնելու համար: Քրիստոս ո՛չ միայն մեզ անցընողն ու մեզի հետ անցնողն է, այլեւ մեր անցքն է: Այլ իօսքով, Քրիստոս ի՛նքն է մեր ցանապարհը եւ ի՛նքն է մեր ցանապարհորդակիցը: Ի՛նքն է մեզ առաջնորդողը եւ ի՛նքն է ան՝ որուն կ'առաջնորդուինք:

Խաչի ֆամբան արցունքով ցանելու ֆամբան է, բայց անոր պիտի յաջորդէ ցնծութեամբ հնձելու պահը (Սղ 126.5): Խաչի ֆամբուն վրայ քափուած արցունքը սուգի ու տրտմութեան արցունքը չէ՛, յուսահատութեան եւ անշուածութեան արցունքը չէ՛, այլ յաւիտենական ուրախութիւն աղբերացնող արցունքն է, դժոխքին կրակը շիջեցնող արցունքն է, Աստուծոյ շնորհքն ու օրհնութիւնը մեր հոգիներուն մէջ հեղացնող արցունքն է:

Յամախ ըսուած է որ իսաչը գոհողութեան նշան է: Այո՛, գոհողութեան նշան է, որովհետեւ Քրիստոս յանձն առաւ կամաւորապէս անոր վրայ գոհուիլ: Սիրելի՛ ընթերցող, կը վախնա՞ս յանձն առնելու գոհողութիւն մը: Մտահոգութիւնը կը պատէ՞ էութիւնդ երբ գոհուելու կոչ կ'ուղղուի քեզի:

Անուրանալի իրականութիւն է, որ գոհուելու վախցող մարդը ոչինչ կրնայ իրագործել իր կեանքի ընթացքին: Մեծ իրագործումներ մեծ գոհողութեանց արդիւնք են: Չե՞ս ուզեր քեզի համար գոհուող Փրկիչին սիրոյն քիչ մը գոհողութիւն յանձն առնել: Կը նեղուի՞ս երբ քեզ նեղացնեն Յիսուսի հետեւորդը ըլլալուդ համար: Անարգա՞նք կը նկատես Քրիստոսի համար անարգուիլը, թէ՛ փառք: Փա՛ռք ու պարծա՛նք պէտք է նկատես փառքի Թագաւորին համար անարգուիլը եւ ո՛չ թէ նախատինք ու սկարութիւն:

Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Քա՛ւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի իսաչէն զատ ուրիշ բանով պարծենամ»* (Գղ 6.14): Եթէ իսաչը սկարութեան նշան ըլլար՝ Պօղոս առաքեալ պիտի չպարծենար անով: Ո՛չ ոք սկար բանով մը կը պարծենայ: Տկարներն ու վախկոտները ո՛չ իսաչով կրնան պարծիլ եւ ո՛չ ալ իրե՛նք կրնան իսաչին պարծանքը դառնալ:

Առաքեալը ո՛չ միայն իսաչով կը պարծենար, այլ ի՛նք ի՛ր կարգին իսաչին պարծանքը դարձեր էր: Ան իսաչը պատուող մը չէր միայն, այլ իսաչը իր պատիւը համարող մը: Մեզմէ քանի՞նք իսաչ շալկելը Աստուծոյ պարգեւը կը սեպեն: Քանի՞նք Քրիստոսի իսաչը կրելը պատիւ ու փառք կը նկատեն: Խաչո՛վ կազմուեցաւ մեր յաւիտենական փառքը եւ միայն իսաչո՛վ կարելի է ժառանգորդը դառնալ յաւիտենական փառքին:

Խաչը շալկելը պայքարելու պատրաստակամութիւն յայտնել է: Ան որ պատրաստ չէ պայքարելու, իրաւունք չունի իսաչը շալկելու: Խաչը գէնք է գոր շալկողը պարտի պատերազմի դաշտ իջնել պայքարի: Զպայքարողը չի՛ յաղթեր եւ չյաղթողը չի՛ պսակուիր (Յլտ 2.17):

## ԿՐՕՆՔԸ ՄԵՐ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՉԻ՞ ԿԱՇԿԱՆԴԵՐ ԵՐԲ ՕՐԷՆՔՆԵՐ ԿԸ ՍԱՀՄԱՆԷ

Երբեմն մարդիկ առարկութիւն կ'ընեն ըսելով.՝ «*Կրօնքները օրէնքներ եւ պատուիրաններ կը սահմանեն, այս արդեօք ազատութեան կաշկանդում չի՞ նշանակեր*»: Այս խօսքը օրէնքի, կարգ ու կանոնի ներկայութիւնը չսիրող մարդու խօսք է: Օրէնքը սիրող ոեւէ մարդ նման խօսք չ'ըսեր: Աստուած օրէնքներ կը սահմանէ ո՛չ թէ մեր ազատութիւնը կաշկանդելու համար, այլ պահպանելու համար գայն:

Հոն ուր օրէնք չկայ, հոն ուր կարգ ու կանոն չկայ, հոն միայն անկարգութիւնն ու անկանոնութիւնը կրնան տիրել: Իսկ հոն ուր անկանոնութիւնը կը տիրէ, հոն չի՛ կրնար ազատութիւն ըլլալ: Անկանոնութիւնը կը կաշկանդէ մարդուն ազատութիւնը: Միթէ իսլամի գործեր գործողները չե՞ն որ կ'ատեն լոյսը (Յհ 3.20): Միթէ օրինագանց մարդիկը չե՞ն որ կ'անհանգստանան օրէնքի, կարգ ու կանոնի ներկայութենէն, եւ կը փափաքին զանոնք վերցուած տեսնել:

Ինչպէս կառավարութեան կողմէ հաստատուած օրէնքները սիրելի են արդար մարդուն համար, այնպէս ալ Աստուծոյ պատուիրանները սիրելի են Սուրբ Հոգիով արդարացած մարդուն համար: Դարձեալ, ինչպէս ստահակ մարդիկն են որ կը սուկան կառավարութեան կողմէ հաստատուած օրէնքներէն, նոյնպէս ալ չարագործ մարդիկն են, որ կը նեղանան Աստուծոյ պատուիրաններէն: Առաքեալն ալ նոյն բանը կը հաստատէ երբ կ'ըսէ. «*Իշխողները վախ չեն պատճառեր բարիք գործողներուն, այլ միայն չարագործներուն: Դուն կ'ուզե՞ս իշխանութենէն չվախնալ: Բարի՛ք գործէ, եւ անկէ գովասանք կը լսես*» (Հո 13.3 Հմմտ Ա.Պտ 2.14):

«*Մի՛ գողնար*» պատուիրանը գողցողին ուղղուած է եւ ո՛չ թէ չգողցողին: Զգողցող մարդը «*մի՛ գողնար*» պատուիրանէն չ'անհանգստանար: Պատուիրանները մեր հանգիստին համար են եւ ո՛չ թէ մեր հանգիստը խանգարելու համար: Հոգեւոր մարդը իր հանգիստն ու իսողադութիւնը կը գտնէ Յիսուսի սիրոյ պատուիրաններուն մէջ: Ո՞վ է այն աշխատունակ եւ նախանձելի վարք ու բարք ունեցող աշակերտը որ կ'ատէ իր դպրոցին օրէնքները եւ կ'ընդվզի անոնց դէմ: Ինչպէս աշխատունակ աշակերտին համար հաճոյք է իր դպրոցին օրէնքներուն հնազանդիլը, նոյնպէս ալ իր ֆրիստոնէական հաւատքին մէջ աշխատասէր եղող մարդուն համար հաճոյք է Աստուծոյ պատուիրաններուն հնազանդիլը:

Երբ մայր մը իր գաւակին ֆանի մը պատուէրներ կու տայ, արդեօք անոր ազատութիւնը կաշկանդելու՞ համար կու տայ: Երեւակայեցէ՛ք պահ մը որ մայր մը իր անչափահաս գաւակներուն ազատութիւն տար իրենց ուզածը ընելու տան մէջ, չէ՞ք կարծեր որ այդ տունը կրնար կործանիլ ֆանի մը օրէն: Ի՞նչ պիտի ըլլար դպրոցի մը վիճակը եթէ երբեք տնօրէնը

միայն երկու օրուայ համար ամեն տեսակի ազատութիւն տար ուսանողութեան: Ի՞նչ պիտի ըլլար գինուորական բանակի մը ճակատագիրը եթէ երբեք ո՛չ մէկ օրէնքի ենթակայ ըլլար: Աղէտաբեր կացութիւն մը պիտի չտիրէ՞ր: Կարգ ու կանոն չունեցող նման բանակի մը կարելի՞ է վստահիլ ֆաղափ մը պաշտպանութիւնը կամ գրաւումը:

Ինչպէս թշնամիին համար դիւրին է կարգ ու կանոնի չհետեւող բանակ մը պարտութեան մատնել, այնպէս ալ շատ դիւրին է Սատանային համար յաղթել այն ֆրիստոնեաներուն, որոնք Աստուծոյ սիրոյ պատուիրանները բեռ կը նկատեն: Երբ բանակ մը իր անօրէնութեամբ իր եւ իր ֆաղափին կորստեան պատճառ կը դառնայ, ո՞րք մնաց իր ազատութիւնը: Կրնա՞ք պատկերացնել թէ ի՞նչ պիտի ըլլար վիճակը համալսարանի մը, ընտանիքի մը, եկեղեցւոյ մը, հաստատութեան մը, կազմակերպութեան մը, կամ որեւէ բանի մը որ օրէնք չունենար:

Եթէ երբեք մարդը վայրենի եւ անօրէն դարձած է հակառակ որ գոյութիւն ունին օրէնքներ, պատուիրաններ, կարգ ու կանոն, ամէն տեղ եւ ամէն բանի համար, հապա ի՞նչ պիտի ըլլար մարդկութեան վիճակը եթէ այդ բոլորը չըլլային: Ի՞նչ պիտի ըլլար մարդոց ճակատագիրը եթէ երբեք ֆանի մը ժամուան համար դատարաններն ու դատաւորները, ոստիկաններն ու ոստիկանատուները մէջտեղէն վերցուէին, եւ ազատութիւն տրուէր մարդոց իրենց ուզածը ընելու այդ ֆանի մը ժամուան ընթացքին:

Ինչո՞ւ համար չենք մեղադրեր պետական կառոյցները եւ բոլոր տեսակի կազմակերպութիւններն հաստատութիւնները որոնք կարգ ու կանոններ կը սահմանեն, օրէնքներ կը ճշդեն իրենց եւ ժողովուրդին համար: Օրինակ, ինչո՞ւ չենք ֆննադատեր մարդասպանութիւնը դատապարտող օրէնքը: Ինչո՞ւ չենք այպաներ պետութիւնները իրենց համար անձնական սահմանադրութիւններ կազմելուն համար: Ինչո՞ւ չենք մեղադրեր մեր նման մարդը որ օրէնքներ կը սահմանէ եւ կը մեղադրենք անմեղն Աստուած օրէնքներ սահմանած ըլլալուն համար: Միթէ օրէնսդիրն Աստուած իրաւունք չունի՞ օրէնք, կարգ ու կանոն սահմանելու: Աստուած իր ստեղծած աշխարհին համար իրաւունք չունի՞ օրէնքներ ճշդելու: Աստուած իր ստեղծած մարդուն համար պատուէրներ կամ թելադրութիւններ չի՞ կրնար ընել կամ պէտք չէ՞ ընէ: Անարգել կերպով գործող Աստուծոյ համար արգիլուած է չարիքը արգիլող օրէնքներ սահմանելու:

Ամէն բան որ օրէնքի համաձայն կ'ընթանայ աւելի արդիւնաւէտ եւ ապահով կը դառնայ: Բնութիւնը անգամ իր օրէնքները ունի: Օրինակ, օրէնքը կը պահանջէ որ ծառ մը որպէսզի աւելի արգասաբեր ըլլայ պէտք է տնկուած ըլլայ պարարտ հողի մէջ. եթէ ժայռանման հողի մը մէջ տնկուած ըլլայ, չի՞ կրնար սպասուած արդիւնքը տալ: Գիտենք որ Լուսինը Երկրին շուրջ կը թաւալի մօտաւորապէս 27 օրուայ ընթացքին: Ի՞նչ պիտի պատահէր եթէ երբեք Լուսինը Երկրին շուրջ թաւալէր 127

օրուայ ընթացքին փոխանակ 27 օրուայ ընթացքին: Նման պարագայի մը, մեզմէ ո՞վ կը մեղադրէ Լուսինը կարգապահ ըլլալուն համար: Կարելի է օրինակները բազմացնել:

Շատ մը պարագաներու մէջ օրէնքին կը հետեւին կամայ թէ ակամայ, իսկ երբ Աստուածաշունչին մէջ արձանագրուած օրէնքներուն եւ պատուիրաններուն մասին է խօսքը, ապշեցուցիչ յանդգնութեամբ մը կ'ըսենք. *«Աստուած մեզ ազատ ստեղծեց: Ուզենք իր օրէնքները կը պահենք, չուզենք՝ չենք պահեր: Աստուած բան մը չի՛ պարտադրեր մեզի»*: Այսպէս կ'ըսենք եւ մենք մեզի թոյլ կու տանք անպատասխանատու վերաբերմունք գուցաբերելու Աստուծոյ հաստատած օրէնքներուն նկատմամբ:

Աստուծոյ օրէնքը խախտող մարդը կրնա՞յ նաեւ խախտել իր անձին եւ իր ընտանիքին կապուած օրէնքները: Ո՞վ է այն մայրը որ օրէնքը խախտելով իր մէկ ամսու գաւակին միս կը կերցնէ: Ո՞վ է այն արեւահար մարդը որ կիզիչ արեւին տակ կենալ կը սիրէ: Երկու պարագաներուն ալ, մայրը իր գաւակին կեանքը իսկ արեւահարը ինքնիր կեանքը խնայելու համար, կասկած չկայ որ պիտի նախընտրեն օրէնքին կառչած մնալ: Ինչո՞ւ համար մարդիկ իրենց եւ իրենց պարագաներուն երկրաւոր կեանքը փրկելու համար օրէնքին կը կառչին, իսկ երբ իրենց յաւիտենական կեանքին եւ Աստուծոյ պատուիրանները պահելու մասին ըլլայ խօսքը, անոնք կ'ըսեն. *«Աստուած մեզի ազատութիւն տուած է իր ազատութիւնները պահելու կամ ոչ»*:

Այսպէս արտայայտուողներ թող գիտնան որ Աստուծոյ կողմէ իրենց պարգեւուած ազատութեամբ կը խոցոտեն Աստուծոյ սիրտը: Երեւակայեցէք պահ մը որ մարդու մը նուէր մը տուած ենք եւ այդ մարդը մեզմէ առած նուէրը մեր երեսին կը նետէ: Մեզմէ ո՞վ անհանգիստ պիտի չըլլար նման պարագայի մը: Ճի՛շդ է որ Աստուած ազատ կամք տուած է մեզի, եւ սակայն, կը յիշեցնէ մեզի ըսելով. – *«Ձեր ազատութիւնը չարիք գործելու պատրուակ թող չդառնայ»* (Ա.ՊՏ 2.16): Չարիք գործող մարդը երբեք ալ ազատ չի՛ կրնար ըլլալ:

Մեղքի ստրուկ դարձած մարդը ո՛չ ազատ է եւ ո՛չ ալ Ազատարարին գաւակ: Իրական ազատութիւնը Տէր Յիսուս Քրիստոսի հետ ըլլալն ու ապրիլն է: Տէր Յիսուսէն հեռացողը ազատութենէն է որ հեռացած կ'ըլլայ: Մեր ազատութիւնը պատճառ պէտք է ըլլայ որ Աստուծոյ մօտենանք եւ ո՛չ թէ Աստուծմէ հեռանանք: Ազատութիւն չէ այն ազատութիւնը որ մեզ կը հեռացնէ մեր Ազատարարէն: Աստուծոյ կամքին կատարումը մեր ազատ կամեցողութեան գաղափարին չի՛ հակասեր:

Ոմանք կանգ կ'առնեն Աստուծոյ հետեւեալ խօսքին վրայ. – *«Երկինքն ու երկիրը վկայ կը բռնեմ ձեզի, որ կեանքն ու մահը, օրհնութիւնն ու անէծքը ձեր առջեւ դրի, ուրեմն կեանքը ընտրեցէ՛ք որպէսզի ապրիք»* (Բ.Օր 30.19) եւ կ'առարկեն, որ Աստուած իր այս խօսքով ընտրելու կարելիութիւն է որ կը պարգեւէ մեզի: Ճի՛շդ է որ Աստուած իր այս

խօսւոյն ընտրելու կարելիութիւն է որ կը պարգեւէ մեզի, բայց միւս կողմէն, կոչ կ'ընէ ընտրելու այնինչ որ ի նպաստ մեզի է. «*Կեանքը ընտրեցէ՛ք որպէսզի ապրի՛ք*»: Մահուան ցամաքն ընտրողը չի՛ կրնար ըսել թէ ինք կ'ապրի: Ո՞ւր կը մնայ մեր հոգեւոր եւ յաւիտեանական ազատութիւնը երբ կամովին մահուան ցամաքն կ'ընտրենք: Մենք չենք ստեղծուած մահուան համար, այլ յաւիտեանական կեանքին համար: Եթէ երբեք ընտրենք բան մը որուն համար չենք ստեղծուած, կը կորսնցնենք մեր ազատութիւնը: Թէ ի՞նչ բանի համար ստեղծուած ենք, Պօղոս առաքեալ կը պատասխանէ ըսելով. «*Աստուծոյ նոր ստեղծագործութիւնն ենք մենք, քանի Քրիստոս Յիսուսի միացած ենք. ստեղծուած՝ կատարելու համար այն բարի գործերը, որոնց համար Աստուած սկիզբէն մեզ պատրաստեց, որպէսզի անոնցմով լեցնենք մեր կեանքը*» (Եփ 2.10):

Սիրելի՛ ընթերցող, եթէ երբեք Յիսուս Քրիստոսով դարձած ես Աստուծոյ նոր ստեղծագործութիւնը, անոր օրէնքներուն մէջ թշուառութիւն չէ որ պիտի տեսնես, այլ հրաշքներ (Սղ 119.18): Ճի՛շդ է որ Քրիստոսով մենք դարձանք շնորհիւ որդիներ, բայց շնորհիւ որդիներ ըլլալ չի նշանակեր զանց ընել Աստուածադիր օրէնքներն ու պատուիրանները: Օրէնքը խախտողը՝ անպատուած կ'ըլլայ զԱստուած (Հո 2.23): Թէ՛ օրէնքներն ու թէ՛ շնորհքը Աստուծոյ կողմէ տրուած են: Անոնք զիրար չեն հակասեր: Աստուած ինքզինք հակասած կ'ըլլայ եթէ երբեք զիրար հակասող երկու բաներ պարգեւէ մարդկութեան:

Որպէսզի դադրիմք Աստուծոյ պատուիրաններն ու օրէնքները բեռ նկատելէ, պէտք է ընդունինք Քրիստոսի փրկութեան շնորհքը մեր սիրտերուն մէջ, որովհետեւ Քրիստոսի շնորհքն է որ Աստուծոյ պատուիրանները մեղրէն աւելի անոյշ (Սղ 119.103) եւ ազնիւ ոսկիէն աւելի սիրելի կը դարձնէ (Սղ 119.127):

Աստուծոյ Սուրբ Հոգիէն չվերածնած մարդը չի կրնար Աստուծոյ օրէնքներուն համաձայն կեանք մը ապրիլ, ահա թէ ինչո՛ւ Աստուած կ'ըսէ. «*Իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ ու դուք իմ օրէնքներուս մէջ պիտի քայլէք*» (Եզ 36.27): Աստուծոյ օրէնքները պահելը կը դառնայ կարելի ու մանաւանդ արդիւնաւէտ միայն ա՛յն ատեն, երբ Սուրբ Հոգիով բնակուած ենք: Ոչինչով կ'օգտուինք մեր օրինապահութենէն եթէ երբեք չենք վերածնած Սուրբ Հոգիէն: Հարկաւ այս չի նշանակեր որ Սուրբ Հոգիով առաջնորդուող մարդը ենթակայ է Օրէնքին: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «*Եթէ Դուք Սուրբ Հոգիով կ'առաջնորդուի՛ք՝ կը նշանակէ թէ այլեւս Օրէնքին ենթակայ չէ՛ք*» (Գղ 5.18): Մեր ըսել ուզածը հետեւաբար այն է, որ Սուրբ Հոգիին մարդը եղողը միաժամանակ օրէնքի մարդ կ'ըլլայ, առանց սակայն Օրէնքին գերին դառնալու:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1- Քրիստոս ի՛նքն է եթէ-նեբուդ պատասխանը
- 2- «Ահա ես դրան առջեւ եմ ու կը բաղիսեմ»
- 3- Փրկութիւն եւ վարձատրութիւն
- 4- Մահը նոր ծնունդ մըն է դրախտին մէջ
- 5- Դրախտն ու Աստուծոյ թագաւորութիւնը  
դժոխքն ու դժոխային վիճակը
- 6- Յաւիտենական կեանքը
- 7- Դարձի եկած մը կրնա՞յ իր փրկութիւնը կորսնցնել
- 8- Աստուած ստեղծած է Սատանան
- 9- Ո՛չ ոք նախասահմանուած է դժոխք երթալու
- 10- Ո՛րք որ է ձեր հարստութիւնը, հո՛ն է ձեր սիրտը
- 11- Աստուծոյ բաժինը Աստուծոյ տուէ՛ք  
կայսրին բաժինը կայսրին տուէ՛ք
- 12- Զեոքդ մանին դնելէ ետք՝ ետ մի՛ նայիր
- 13- Քրիստոսի մեզի ձգած խաղաղութիւնը
- 14- Ոտնլուայի արարողութիւնը կանխող պահը
- 15- Ոտնլուայի արարողութեան իմաստն ու նպատակը
- 16- Մեր կեանքին նպատակը սիրելն է
- 17- «Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը...»
- 18- «Երբ կ'աղօթես՝ մտի՛ր սենեակդ»
- 19- Ի՞նչ է տարբերութիւնը շնորհքին եւ Օրէնքին
- 20- Շնորհքին գերազանցութիւնը Օրէնքէն
- 21- Մակերեսայինէն դէպի խորը իջնել
- 22- Աստուած մեր պաշտպանն է
- 23- Զփախչի՛նք Աստուծմէ
- 24- Առաջին մեղքին հետեւանքները
- 25- Ո՞րք ես Ադամ



- 26- Մեղքը գոր ամեն մարդ կը գործէ
- 27- Ի՞նչ բանի մէջ կը կայանար  
Աղամին եւ Եւային մեղքը
- 28- Աստուած գործի մարդոց է որ գործակից կ'ըլլայ
- 29- Խաչի ցամբան՝ յաղթանակի ցամբան է
- 30- Կրօնքը մեր ազատութիւնը չի՞ կաշկանդեր  
երբ օրէնքներ կը սահմանէ